

1. ԹԱԳԱՎՈՐԻ ՉԻ ՓԵՄԵՆ

Ըլում ա չի ըլում մի թագավոր ա ըլում, էդ թագավորը իրենք աղջիկ ա ունենում: Վախտը գալիս ա, էդ աղջկերքը մենծանում են, հասնում են իրար եդնա, մենծի վախտը անց ա կենում, միջնեկի վախտն ա, պուճուրն էլ եդնուց հասնում ա: Թագավորը գլխի չի ող աղջկերքը հասել են, նրանց ամուսնանալու վախտն ա: Աղջկերքը միտք են անում, սրտք, թե ոնց անեն, որ իրանց հերը հասկանա, որ իրանց գնալու վախտն ա, իրանց մարդի տա: Իրենք ծմեռուկ են բերել տալի՝ մինը լակ, մինը հասած, մինն էլ խակ, դարգում են հորը, թագավորը գլխի չի, ասում ա. «Էս մինը հասած ա, դարգել են ուտելու, րա էս լակն ու խակը ընչի են դարգել»: Կանչում ա նազիր-վեզիրներուն, ասում ա. — Էս ինչ հանելուկ ա, սըա միտքը ո՞վ կարա րացատրի:

Ավագ վեզիրը, որ պսակվելու տղա ունի, ասում ա. — Թագավորն ապրած կենա, ծմերուկների գաղտնիքն էն ա, ող մենծ աղջկաղ վախտը անց ա կացել, միջնակդ հասել ա, պուճուրն էլ եդնեն հասել ա, ամուսնանալ են ուզում:

Թագավորն ա համա իշնուն ռզիկ, նոր հըսկանում ա, ող աղջկերանցը ամուսնանալ ա պետք: Հրաման ա տալի, որ երգրում ինչքան ազապ, հասած տղա կա, հավաքվեն, որ իրա աղջկերքը փեսացու ընտրեն դրանցից: Նազիր-վեզիրների, պալատականների տղերքը գալի, հավաքվում են, ջերգով կաղնում են, որ որին աղջկերքը ուզեն՝ հերը տա: Մեծ աղջիկը նազըրի տղին ա ուզում, միջնակը վազըրի տղին, պուճուրը ոչ ոքի մտիկ չի անում, տղերքից ոչ մինն ընդրում չի: Դու մի ասա թագավորի բաղը արածելու մի ծի ա գալի, օչ ով դրան բըռնել, յա նստել կարըմ չի,

էդ ծին աղբրի դրաղումը ամեն լուսածագին մորթահան ա ըլում, դառնում ա տղա, աղբրումը լվացվում ա, էլ եդ մորթին դնում ա, դառնում ծի, ըրածում ա: Թագավորի պուճուր աղջիկը սերը գծել ա էդ տղի վրեն, ասում ա. «Իմ դստաթը դա ա», համա ռիսկ չի անում հորն ասի: Համա որ շատ են հարցընում, թե որ տղին կուզի, որ իրա հետ ամուսնանա, ասում ա. — Ես են մեր բաղն արածող ծիուն են ուզում:

Թագավորը ջգրվում ա աղջկա վրեն, համա կարըմ չի աղջկա կամքը կոտրի, ասում ա. — Գլուխըդ քարը, գնա ծիու հետ թավլումը մնա:

Մենծ և միջնեկ աղջկերանցը ամեն մնին մի պալատ ա տալի, պուճուրին գաղ էլ տալիս չի: Աղջիկը գընում ա ծիուն բռնում ա, բերում ա թավլեն, ըտի մի ձեռք տեղաշոր ա գծում, ծին մորթահան ա ուղն. դառնում ա աղա, քշտին քընում: Ըռավողը վեր են կենում, տղեն ասում ա. — Թագավորի աղջուկ. մին ես, մին դու, տի գիդենաս, որ ես աղա եմ, իմ մերը ուշաբ ա, որ ասեցիր իմ թլիսմը կքանդվի, որ մորս ճանգն ընգար՝ քեզ կուլ կտա:

Տղեն ու աղջիկը թո սիրով ապրեն, լաարա-րը տանք թագավորիցը:

Հաղևան թագավորը գորք ա կապըմ, գալի էս թագավորի վրա կռիվ: Նազիր-վազըրի տղերքը, թագավորի փեսեքը, գընում են կռիվ: Պուճուր աղջկա մաղդը՝ ծին էլ ա կռիվ գընում: Կռվի մեջ ծին ավելի շատ ա ջարդ տալի, քան թե մեծ փեսեքը: Չրն կռվից ըրիգունը գալիս ա տուն, կնգանը պատմում ա իրա քաջագործությունները, համա էլի թամբաի ա անում, որ ասես ոչ, որ ես տղա եմ: Թագավորի մենծ աղջկերքը պուճուրին հա էրեսով են տալի, թե իրանց մարդիքը կռվում են, համա ինքը ծիու ուզեց, մարդ չունի, որ էթա կռվի: Էդ պուճուր աղջկա փորը պատռում ա, էլ չի համփեռում, ասում ա. — Էն ծիով կռվսղն էլ իմ մարդն ա:

Ասըն ա թե չէ. տղի թլիսմը քանդվում ա, եդ ա գալի, ասըն ա. — Թագավորի աղջիկ, որ քու նամուսն ըդար էր, մնաս բարով, ես գնացի:

Աղջիկը լաց ա ըլըմ, ասըն ա. «Ճար չկա, եդնուց պախ գնամ գդնեմ»:

Վեր ա կենըմ, ճամփա ընգնըմ, գընըմ. շատ ա գընըմ, քիչ ա գընըմ, մթնում ա մի տեղ ղոնախ ա ըլըմ: Տենըմ ա էդ տան ժողովուրդը սև են հագած: Ասըն ա. — «Էս խի՞ էք սև հագել»: Ասըն են. «Մեր տան տղա ըրեխեն կորավ, գլխի չեյանք, դվորը գնաց, ըտոր տեղը սև ենք հագել»: Տեղ են գծում քընըմ, սղջկա քունը տանըմ չի: Քշերվա մի չախը մին էլ տենըմ ա, պասիցը մի դուռը ռաց ըլավ, մի պառավ կնիկ, մի աղա ըրեխու հետ ներս մտան, պառավը ճիպտը ձեռին ըրեխին բերուց հացի տաշախ կուշտը, ճիպտով տալիս ա ըրեխի գլխին, ասըն ա. — հացից վե կալ. ըրեխեն ուզում ա հաց վեր ունի, էլեդ գլխին տալիս ա, ասըն ա՝ վե դի՛: Ոչ թողում ա վեր ունի, ոչ էլ թողում ա տեղումը կենա: Աղջիկը մտքումն ասըն ա՝ վայ թե էս տղեն սրանց կորած ըրեխեն ա: Բիրդան վեր ա կենըմ, ըրեխի կռիցը ըռնըմ ա, ասըն ա. — Մերա, մերա, լիսը վառեցեք:

Ջաղուն կորչում ա, ըրեխեն մնում ա դրա ձեռին: Լիսը վառում են. — Վա՛յ ես մեր ըրեխեն ա. — վրա են պրծնում պաչաչորում, աղջկանը օխնում:

Ըռավողը աղջիկը վեր ա կենըմ, իրան ճամբեն գընըմ: Գընըմ ա, շատ ա գընըմ, քիչ ա գընըմ, մթնում ա, մի տան ղոնախ ա ըլըմ: Էդ տանը մի պառավ կնիկ օջախի ղլաղին նստած մի կուռը շուն, մեկել կռանը կաաու, մի ճիպտ էլ ձեռին, կատուն ա փշտացնում՝ կատվի գլխին ա տալի, շուն ա հաչում՝ շան գլխին ա տալի: Ասըն ա. — Աղջի ջան, էս շունը տղես ա, կատուն էլ հարսս ա, շուն ու կատու են դառել. էս օխտը տարի ա ես ըրանքներումը սիե էրվում եմ, թողում չեմ, որ գզվեն, ինչ չախը աչքս կայցրի, սրանք կզգեն իրար:

Աղջիկն ասում ա. — Դե որ տիե ա, մերա ջան, դու քնր, ես թռչալ չեմ որ իրար գզեն:

Պառավը օխնում ա աղջկանը, ասում ա. — Եփ էլ գնալիս կըլես, ինձ վե կկացնես, — գլուխը բարձին դնելու քիմին խորը քուն ա մտնում:

Աղջիկը սրսչր լիսը պահում ա, թող չի անում, որ գզվեն, լիսը որ բացվում ա, ղմիշ չի անըմ, օխտը տարվա անքուն պառավին ձեն տա, ասըն ա. «Թո քնի, հողեն սրանց գլուխը, գզվում են՝ թող գզվեն»: Թողում ա, գընըմ: Գընըմ ա մի սարի գլուխ, տենըմ ա հրե մի պառավ կնիկ, մի գունդ կրակ էս ձեռից էն ձեռն ա գծում, էն ձեռից էս ձեռն ա գծում, հետն էլ ասըն ա. — «Ֆլան պառավի տղեն ու հարսը շուն ու կատու, հարսն ու տղեն կատու ու շուն»:

Աղջիկն ասում ա. — Այ պառավ, էդ խի՞ ես թիե անըմ:

Ասըն ա. — Սիե եմ անըմ, որ ֆլան պառավի տղեն ու հարսը շուն ու կատու դառնան, իրար գզեն:

Աղջիկն ասըն ա. — Էս քշերիս նրանց տանն ի, տղեն տղա էր, հարսն էլ հարս էր:

— Շիդա՞կ:

Թե. — Հա:

Կըակը վռագ ձեռից դեն ա գծում, ասըն ա. — Բա էս ես օխտը տարին գուր եմ իմ ձեռները վառել:

Թե. — Եա:

Աղջիկը եդ ա դառնըմ գալի, ասըն ա. «Գնամ տենամ հարս ու տղա են դառել, թե էլ եդ շունն ու կատու են»: Եդ ա գալի պառավի տունը, որ պառավը հըլա քնած ա, հարսն էլ հարս ա, տղեն էլ տղա ա: Պառավին վեր ա կացնըմ: Պառավը վեր ա կենըմ, տենըմ ա տղեն ու հարսը սիրով գրից են անըմ, ասըն ա. — Աղջիկ ջան, էս ո՞նց ըլավ:

Թե. — Սիե, սիե, գնացի անհա սարի գլխին մի պառավ, մի գունդ կրակ էս ձեռից էն ձեռն ա գծըմ, ասըն ա՝ ֆլան պառավի հարսը կատու, տղեն շուն. հաըսը կատու, տղեն շուն: Ես էլ իաբեցի, ասեցի՝ էս քշեր նրա տանն ի, հարսը հարս էր, տղեն էլ տղա: Հսն աստո՞ծ քեզ տա, մերա ջան, ես գնացի:

– Գնա, արջիկ ջան, քեզ բարի ճամբա, ճամբիդ վարդ-մանուշակ բուսնի, դու էլ քո մուրազին հասնես, ոնց դու ինձ իմ մուրազին հասցրիր:

Աղջիկը ճամբա ա ընգընըմ, գընըմ: Շատ ա գընըմ, քիչ ա գընըմ, հասնըմ ա ուշաբի տունը: Ուշաբը տանը չի, տղեն տանն ա:

– Օձն իրան պորտով, դուշն իրան թևով կարալ չէր գա, դու ո՞նց էկար ըստի հասար, թագավորի աղջիկ, – ասըմ ա տղեն:

Ասըմ ա, թե. – Քու սերն ա ինձ բերե:

Տղեն ասըմ ա. – Հեսա մերս տուն կգա, արի քեզ խարի միջին փաթեմ, թաք կացնեմ դռան տակին, հենց ներս մտնի՝ աջ ծիծը ձախ ուսովն ա գծած, ձախ ծիծը՝ աջ ուսովը, դու եմնուցը ծծերից կբռնես, նա ծծերին կրախշի, քեզ բան չի անիլ:

Ուշաբը հենց տուն ա գալի, աղջիկը ծծերը բռնում ա, ուշաբն ասում ա. – Վե թող, եր քու հունարը չի, իմ տղի հունարն ա:

Աղջկանը սիպտակ բուրդ ա տալի, ասըմ ա. – Տաք ջըռնը ենթան լվա, որ սևանա:

Ասպուն ու ինքն էլ սիպտակ բուրդ, քանի լվանում ա, սպիտակում ա: Լաց ա ըլըմ: Տղեն գալիս ա տենըմ, ասըմ ա. – Թագավորի աղջիկ, խի՞ ես լաց ըլըմ:

– Բա լաց չըլեմ, ի՞նչ անեմ, ասում ա արջիկը, – մերըդ էս սիպտակ բուրդը տվել ա, ասել ա՝ տար եմդար լվա, որ սևանա:

Տղեն ասըմ ա. – Դրա հմար լաց մի ըլիլ:

Թլխըմ ա անըմ, բուրդը սևանում ա. – Տար, տուր իրան:

Տանըմ ա, տալիս ա ուշաբին: Ուշաբը մտիկ ա անըմ, ասըմ ա. – Էդ քու հունարը չի, իմ տղի հունարն ա:

Ասըմ ա. – Գնըմ եմ քվորս տուն, գամ տեմամ՝ եմդար լաց ես ըլել, տները արտասուքով ջրջրհանել ես:

Ուշաբը գընըմ ա, արջիկը սկսում ա լաց ըլիլ: Տղեն գալիս ա, ասում ա. – Թագավորի աղջիկ, ինչի՞ ես լաց ըլըմ:

Ասըմ ա. – Աերըդ ասել ա՝ եմդար լաց կըլնես, որ էս տները ջրջրհանես արտա-

սունքով:

– Բա դրա հըմար էլ լաց կըլե՞ն, մի գնա ջուրը բի ստե:

Ջուրը բերել ա տալի, մեջը մի բուռ աղ գծըմ, ասըմ ա. – Վե կալ, ջըրջրնի:

Ուշաբը գալիս ա, տենըմ ա տները ջըրջրնած:

– Էդ քու հունարը չի, իմ տղի հունարն ա, – ասըմ ա ուշաբը:

Աղջկան հաշվի չի առնըմ, մի արծիվ քիր ա ունենըմ, գընըմ ա դրա աղջիկը ուզում ա իրա տղի հմար: Իրեք օր, իրեք քշեր, հըրսանիք տեն անիլ, իրեք փթանոց ճրագը նավթը լցրել ա տվե աղջկա ձեռը, ասել ա՝ իրեք օր, իրեք քշեր, պտի սիե պահես, որ ես իմ հըրսանիքն անեմ: Է՛, իրեք փթանոց ճրագը կարա՞ ձեռին պահի: Տղեն գալիս ա, թլխսմ անըմ, իրեք փթանոցը թեթևանում, դառնըմ ա իրեք կիլոյանոց ճրագ: Աղջիկը լիս ա անըմ, դրանք հըրսանիք են անըմ: Հըրսանիքը որ պրծնում ա, ուշաբը քընըմ ա: Տղեն ասըմ ա. – Թագավորի աղջիկ, մերս օխտը օը քնիլ դի, արի միմ-չի վե կենալը արծվի աղջկանը խեխտենք ու մենք փախսենք:

Բերըմ են էդ աղջկանը խեխտում են, իրանք փախչում:

Օխտն օրը որ թմամում ա, ուշաբը քնիցը վեր ա կենըմ: Վեր ա կենըմ, տենըմ ա ոչ թագավորի աղջիկ կա, ոչ տղեն կա, արծվի աղջիկն էլ խեխտած, տանը վե գծած: Գընըմ ա քվորը ասըմ ա. – Աղջկանըդ խեխտել են, իրենք փախել, կարաս ինձ մեջքիդ դնես եղնե-րուցըն հասցընես:

Ասըմ ա. – Կարալ չեմ, համա իմ ջիգյարի խաթեր կանեմ:

Ասըմ ա. – Ինձ թևերիդ վրա դիր, տար, ես դրանց հախիցը կգամ:

Օխտը օրը թմամում ա, տղեն գիտի, որ մերն ու մոքիրը իրանց եղնուց գալ դեն, աղջկանը ասըմ ա. – Հլա եդ նայի, տես հո եղնեղնուցս օքմի չի գալի:

Աղջիկն ասըմ ա. – Հրե մե դշի դղար րան ա գալի:

Տղեն ասըմ ա. – Էդ ա, մերս ա՛:

Բերըմ ա էդ աղջկանը շինըս ա մի մեջիդ, պատերը մամռակալած մեջիդ, ինքն էլ դառնըմ ա մի մոլլա, միջին նամազ ա անըմ: Ուշաբը գալիս ա, հասնըմ ա, արծվին ասըմ ա. – Հլա ըստի վե դիր:

Արծիվն ասըմ ա. – Ըստի ի՞նչ կա, որ վե դնեն:

Ասըմ ա. – Քու գործը չի, վե դիր:

Վեր ա դընըմ, ուշաբը մտնըմ ա մեջիդը, ասըմ ա. – Մոլլա, ըստիով օքմի չտեհա՞ր անց կենալիս:

Մոլլեն ասըմ ա. – Էս պատերը որ դնեինք շարեինք, են վախտը մի տղա, մի աղջիկ էկան անց կացան:

Արծիվն ասըմ ա. – Էս մեջիդը, այ քիր, հարիր տարվա բան ա, եդ գնանք:

Ուշաբը ելնում ա արծվե շլակը, գընըմ են: Դրանք թո գնան:

Տղեն մեջիդը քանդում ա, դառնըմ են աղա-աղջիկ, գընըմ են: Շատ են գընըմ, քիչ են գընըմ, տղեն ասըմ ա. – Հլա եդ նայի, օքմի չկա էկող եդներնուցըս:

Աղջիկն ասըմ ա. – Հրե մե ոչի դդար բան գալիս ա:

Տղեն թե. – Մերս ա:

Աղջկանը հասած ըտալ ա շինըմ, ինքը դառնըմ բաղմանչի, բաղերը ջըբըմ: Գալիս են հասնըմ: Ուշաբը արծվին ասըմ ա. – Ըստի վե դի:

Ասըմ ա. – Ըստի ի՞նչ կա, որ վե դնեն:

Ասըմ ա. – Վե դի, բաղմանչին կգիղենա, տեհած կըլի: Բաղմանչի, ըստիան օքմի չտեհա՞ր անց կենալիս:

Ասըմ ա. – Էս ըտալը որ գծեինք, են վախտ մի աղջիկ, մի տղա անց կացան:

Խնձորը լավ հասնըմ ա, էդ քանի տարի աղաք են անց կացե:

– Եդ գնանք, ըստի էլ չեն:

Ուշաբին եդ շալակն ա առնըմ, չըրչարվելով եդ տանըմ:

Բաղը քանդվըմ ա, տղա ու աղջիկ են դառնըմ, գընըմ են: Շատ են գընըմ, քիչ են գընըմ,

տղեն աղջկանը ասըմ ա. – Մի եդ նայի:

Աղջիկն ասըմ ա. – Հրե գալիս են:

Աղջկանը շինըս ա յոբու սարի, ինքն էլ դառնըմ ա լոբի, հենց փթաթվում ա սարուն, որ մերը կարենա ոչ մի ասղով ծակի: Ուշաբը քվորը ասըմ ա. – Ըստի վե դի:

Քիրը թե. – Ըստի ի՞նչ կա, որ վե դնեն:

– Վե դի, ըստի են:

Ուշաբը գալիս ա սարուն մտիկ ա անըմ, տենըմ ա՝ տղեն մեկն աղջկանը փթաթվել ա, որ մի ասղու ծակելու տեղ չկա, որ աղջկանը ծակի:

Իրան տղեն էլ հո վնաս չի տալ:

Ասըմ ա. – Որ էդդաղ իրար հետ սերով եք, ասսանից առնեք ձեր կիակը, գնացեք:

Անըծըմ ա, եդ դառնըմ քվորը ասըմ ա. – Այ քիր, շլակի գնանք, տենըմ ես մի ասղի ծակելու տեղ էլ թող չի արե անաստվածը:

Վեր են կենում դրանք կորչում: Տղեն ու աղջիկն էլ գալիս են աղջկա հոր՝ թագավորի պալատը: Թագավորը ուրախանում ա, թագա աչքալուսենք ա սաըքում, դրանց մի պալատ ա տալի, եբջանիկ ապրում են:

Նրանք հասան իրանց մուրագին, դուք էլ հասնեք ձեր մուրագին:

2. ԹԱԳԱՎՈՐԻ ՖՈՐՍԿԱՆԸ

Ըլում ա չի ըլում մի թագավոր ա ըլըմ: Էս թագավորը մենակ ֆորսի միս ա ուտելիս ըլըմ, իրան հմար մի ֆորսկան ա պահելիս ըլում, գնում ֆորս ա անըմ, բերըմ թագավորն ուտում: Թագավորը մի հարմար տեղ ա տվել, ըտեղ ապրում ա:

Մի օր էլ ֆորս չի ոաստ գալի, մի սիրուն դուշ ա ոաստ գալի, ասըմ ա, տանիլ չեն տա թագավորին: Իբան տուն ա տանըմ, գնում թագավորին ասըմ. – Ըսօր ֆորս չի պատահել:

Քնելու վախտը գալիս ա, տենում տեղը գծած, դուշն էլ իրան տեղը: Ջարմանում ա, ասում ա. «Էս ո՞վ ա իմ տեղը գծել»: Անկել օրն էլ գնում ա ֆորսի, գալի տենում տները

մաքրած, տեղերը վե քաղած, ճաշն եփած, դուշն էլ իրան տեղին: Էքսի ըռավողը վեր ա կենըմ, տապ անըմ, տենըմ ա դուշը բմրլի շորերը հանըմ՝ աղջիկ ա դառնըմ, թոնիրը վառում ա, ուզում ա տունը մաքրի, վրա ա հասնում, ըմրլե շորերը վեր ա ունում, որ ձգի թոնիրը վառի, աղջիկը աղաչանք ա անում, թե՝ մի վառի, քեզ վնաս կըլի, չի լսում, վառում ա:

Աղջկա մատին մի մատանի կա, թւին մի բլազուկ: Աղջիկը մի օր, որ աղբը ասնում ա դեն գծի, վազիրը տենում ա, գալիս ա ասում ա թագավորին, թե. — Թագավորն ապրած կինա, ֆորսկանի տանը մի աղջիկ կա, մատին մի մատանի կա, թւին մի բլազուկ կա:

Թագավորը ծառային դարգում ա, ասում ա. — Գնա ֆորսկանին ասա՝ թագավորը կանչում ա:

Ֆորսկանը որ գալիս ա, թագավորն ասում ա. — Գնա կնգանըդ մատանին բի:

Տղեն տուն ա գալի, աղջիկն ասում ա. — Թագավորն ի՞նչ ասավ:

Ասում ա. — Ասավ՝ կնգանըդ մատանին բի:

Կնիկն ասում ա. — Տո քու կես հախը չի՞, մարդիկ ընչի պտի տենային, որ մատիս մատանի կա, որ թագավորին խաբար տանեին, թագավորն էլ ուզեր:

Ֆորսկանը մատանին տանըմ ա, տալի թագավորին:

Աի օր էլ թագավորը ֆորսկանին կանչըմ ա, բլազուկն ա ուզում: Կնիկը բլազուկը թևից եղ ա անում, ասում ա. — Տար իրան սեցրու:

Աի քանի վախտից եղը թագավորը ֆորսկանին ասում ա. — Գնա բլազուկի թայը բի:

Ֆորսկանը տխուր եղ ա գալի, ասում ա. — Էլ ճար չկա, թագավորը բլազուկի թայն ա ասըմ գնա բի:

Կնիկն ասում ա. — Դարդ մի անի, ըռավողը կիթաս մեշեն, մի դուշ կգա աղաքըդ, էս բմբուլը շանց կտաս, քեզ կտանի միջնեկ քվորըս կուշոր: Քվորըս կասես՝ պուճուր քիրըդ բլազուկի թայն ուզում ա, կտա, վեր կհունես, կգաս:

Ֆորսկանը գընում ա բլազուկի թայը բերըմ ա, տալիս ա թագավորին:

Աի քանի վախտ էլ անց ա կենըմ, թագավորը ֆորսկանին ասըմ ա. — Գնա մատանու թայն էլ բի:

Ֆորսկանը գալիս ա կնգանն ասում ա, բմբուլը վեր ա ունում, գընըմ մեշեն, միջնեկ քորոջից մատանու թայն էլ ա վեր ունում, բերըմ թագավորին:

Նագիր վեզիրները ֆորսկանին նախանձում են, մտածում են, թե թագավորն ինչ ուզեց, սա բերուց, տվուց թագավորին, թագավորի աչքումը ռանձրացավ, արի սրան միեկն քանի դարգենք, որ գնա, էլ չգա: Սըանք մտնում են թագավորի տամարր, ֆորսկանին կանչել են տալի, դարգում են վարյոխին բերելու:

Ֆորսկանը ճարը կտրած տուն ա գալի, կնգանն ասում ա. — Թագավորը ասավ՝ գնա վարյոխին բի:

Կնիկն ասում ա. — Դարդ մի անի, գնա թագավորին ասա՝ մատանու թայը տու, գնամ ըբերեմ:

Ֆորսկանը գնում ա թագավորից մատանին վեր ա ունում, գալի տուն: Կնիկն ասում ա. — Կեթաս մեշեն անց կկենաս, մի ծովի ռաստ կգաս, մատանին կդնես լեզվեդ, ծովը կցամաքի, ծովն էլ անց կենաս, կհասնես մի խաս բախչի, մեջը անմահական քրով հավուգ կա, հավուգի կշտին մի մեծ ապառանք: Էդ ապարանքը իմ մեծ քվոր ապառանքն ա, քիբս դուս կգա, մատանին շանց կտաս, խնդիրքըդ կհայտնես, թե՞ հաց-դինի դրեց աղաքումըդ, ուրեմն կաբա վարյոխին տա բերես, թե չէ՝ ուրեմն կարալ չի տա, վարյոխուն վե կալելու սամթը գիտի ոչ:

Ֆորսկանը մատանին վեր ա ունում, գընըմ: Գընըմ ա, գընըմ, մեշեն անց ա կինըմ, հասնըմ ա ծովե դրադին: Տենըմ ա ըտի մի բուդկա, միջին մի սեղան, վոեն մի աման՝ գդալը միջին դրած: Տղեն մատանին դընըմ ա լեզվեն, ծովը ցամաքացնում ա, անց ա կենըմ,

գընըմ: Գընըմ ա, գընըմ, մտնում ա խաս բախչեն, հասնում ա անմահական հավուզին, մատանին լեզվին ա տալի, կնգա մեծ քիրը աղաքն ա գալի: Ֆորսկանը մատանին շանց ա տալի, ասըմ ա. — Քիրըդ ասեր վարյոխին դարգիր:

Մեծ քիրն ասըմ ա. — Վա՛յ, քրոջս տեղը նեղացել ա:

Հաց ու գինի ա դընըմ ֆորսկանի աղաքը, ասում ա. — Փեսա ջան կեր, ինչի էկել ես, կտամ կտանես:

Անծ քիրը հայտարարություն ա տալի, ով որ վարյոխու տեղն իմանա, գոնի բերի, նրան կգծի իրա անմահական ջրով հավուզի մեջ, որ ընդի աւարի: Էդ երգըրի մարդկանցից օչ ով իմանում չի վարյոխու տեղը: Իմաց են տալի, որ մի պառավ գորտ կա. նա կգիդենա տեղը: Մեծ քիրը էրկու գորտ ա դարգում էդ պառավ գորտի եղնուց, թե՛ թագավորը քեզ կանչում ա:

Պառավ գորտն ասում ա. — Էսքան տարի էս ցխոտ գյուղումը ապրեի, տեղս գիդայիր ոչ, հմի պետքդ եմ, տեղս գիդա՞ս, գալիս չեմ:

Աղջկա մեծ քիրը իմաց ա տալի պառավ գորտին, թե՛ արի, քեզ գծեմ իմ անմահական ջրով եավուզի մեջ, ընգի ապրես:

Անմահական ջրի հավուզի անունը որ լսում ա, քոստ-քոստ անելով գալիս ա:

Աղջկա մեծ քիրը գորտին ասըմ ա. — Ինձ հմար վարյոխին պսի ճարես:

Գորտն ասըմ ա. — Դժվար բան ուզեցիր, մեծ եմ, կարալ չեմ գնա ծովովը:

Ասըմ ա. — Ջուրը կցամաքացնեմ, դու աղաքն ընգի գնա, տղեն քու եղնուցը կգա:

Ճարը կտրած պառավ գորտը ճամբա ա ընդնըմ, գընըմ ա, գընըմ, տղեն էլ եղնուցը, ծովն անցնում են, հասնում են բուդեին: Գորտը գընըմ ա, մտնում ա բուդեին, տապ ա անըմ: Տղեն եղնուցը մտնում ա, նստում ա սեղանի աղաքին: Տենըմ ա մի մարդ էկավ ներս մտավ: Ֆորսկանն էլ ա տապ անըմ: Մարդն ասըմ ա. «Արդեն աղա», մի աներևույթ օքմի պատասխանում ա. «Բիր աղա». ասըմ ա. «Մի սեղան պատրաստի ուտեմ, խմեմ, քեփ անեմ»:

Աներևույթ օքմին սեղան ա պատրաստում, էդ մարդը ուտում ա, խմում, բեդերը օլորում ա, էթում: Ֆորսկանը տենըմ ա: Ասըմ ա. «Ես էլ ասեմ, տենամ ինձ հմար էլ սեղան կգծի թե՛ չէ»: Ասըմ ա. «Արդեն աղա, մի սեղան գծի ուտեմ, խմեմ, քեփ անեմ»: Աարքում ա, բաժակը լցնում ա, ասում ա. «Արդեն աղա, էս բաժակը խմի»: Մին էլ ա լցնում, էդ էլ ա խմում: Արդեն աղան ասում ա. «Էս քառասուն տարի էդ անիրավըն եմ ծառայել, մի հետ նա իմ տվածից ինձ չի կամեցել, սրանից հետո քեզ պսի ծառայեմ, ուր գնաս քու հետ եմ»: Ֆորսկանը բուդեից դուրս ա գալի, գորտն էլ եղներիցը: Ծովը ցամաքացնում են, գընըմ գորտերի թագավորի տունը (մեծ քվոր): Ասըմ ա. «Բերի՞ր»: Ասըմ ա. «Մի բան բերի, համա գիդեմ ոչ, էս ա, թե՛ չէ»: Տղեն ասըմ ա. «Արդեն աղա, մի սեղան գծի, ուտենք, խմենք»: Աղա-քուց էրկու բաժակ Արդեն աղին ա խմացնում, եղով իրանք են ուտում, խմում: Ուտում, խմում են, պրծնում, գոբտեբի թագավորը պառավ գորտին գծում ա անմահական ջրով հավուզը, փեսին էլ ճամբու ա դընըմ իրա տունը:

Ֆորսկանն ու վարյոխին ծովը ցամաքացնում են, անց են կենում: Մութն ընդնում ա, մի ջաղացում դոնախ են ըլում: Նստում են հաց ուտելու, ֆորսկանը տենըմ ա որ մի չոմալակ օջախումը գընըմ ա, գալի, հարցնում ա. — Էս ի՞նչ բան ա:

Ջաղացպանն ասըմ ա. — Չոմալակ ա, հունարն էլ են ա, որ ասեմ՝ իջի էս մարդու գլխին՝ տու, կտա:

Ֆորսկանն ասըմ ա. — Դ՛ու ասա՛ թո տա:

Ջաղացպանն ասըմ ա. — Չոմալակ, արի էս մարդու գլխին տու:

Չոմալակը իջնում ա, գալիս ա ֆորսկանի գլխին տալի:

Ֆորսկանն ասըմ ա. — Էդ ես տեսա, բա դու որ իմ Արդեն աղին տենաս:

Ջաղացպանն ասըմ ա. — Էդ ի՞նչ բան ա, հլա շանց տուր տենամ:

Ֆորսկանն ասըմ ա. — Արդեն աղա, մի սեղան գծի ուտենք, խմենք:

Աղաքուց երկու բաժակն Արդեն աղինն ա:
Ջաղացականն ասըմ ա. — Ուզու՞մ ես, արի
քու Արդեն աղին իմ չոմալակի հետ փոխենք:

Արդեն աղեն ֆորսկանի անգաջին ասըմ ա.
— Կըլլի, եդ չոմբախը վե կալ գնա, մինչի
գեղիցը դուս գաս, ես եղնուցդ կհասնեմ:

Ֆորսկանն ասըմ ա. — Համաձայն եմ:

Ջաղացականն ուրախանըմ ա: Ասըմ ա. —
Դու քո չոմալակն առ, ճամբա ընգի, ես էլ իմ
Արդեն աղին առնըմ, գնամ տուն:

Ֆորսկանն ասըմ ա. — Չուրի տուն հասնիլը
կասես՝ Արդեն աղա, կասի. «Բիր աղա, գալիս
եմ»: Գեղի դրաղին շները վոա կտան, ձեն
չհանես, կմտնես տունըդ, կասես՝ Արդեն աղա,
կասի՝ «Բիր աղա, էստի եմ»:

Ջաղացականը գընըմ ա տուն, ֆորսկանն էլ
չոմբախը ուսն ա դընըմ, ճամբա ընգնում,
դընըմ: Ջաղացականը չուրի տուն հասնիլը
կանչում ա՝ «Արդեն աղա», սա ասում ա՝ «Բիր
աղա»: Հասնում ա տուն, դուռը թակում ա,
ասըմ ա. — Ա կնիկ, դուռը բաց արա:

Կնիկը դուռը բաց ա անում, մարդը մտնում
ա տուն: Կնիկը տենըմ ա մարդը դարդակ ա
էկե, ասում ա. — Այ մարդ, մեր չոմալակը
ու՞ր ա:

Ջաղացականն ասում ա. — Ա կնիկ,
չոմալակը էնենց մի րանի հետ եմ փոխի, որ ոչ
չոմալակ, ոչ էլ ջաղաց ա պետքը էստուցը եդը:

Ձեն ա տալի. — Արդեն աղա, Արդեն աղա:

Արդեն աղան չկա ու չկա:

Արդեն աղան հասնում ա ֆորսկանին, նրա
եղնուցը գնում ա: Գալիս եմ մի ուրիշ ջաղացն
են մտնում, քչեր ա, ըտի են մնում: Չոմալակը
բնծրանում ա օդը, գնում ա, գալի:
Ջաղացականն ասում ա. — Էս ի՞նչ ա:

Ֆորսկանն ասում ա. — Չոմալակ ա, էլի:

Թե. — Դրա հունարն ի՞նչ ա:

Ֆորսկանն ասում ա. — Են ա, որ իջնի,
մարդ սըպանի:

Ասըմ ա. — Աին ասա, թո իջնի, իմ գլխին
տա:

Ֆորսկանն ասում ա: Չոմալակն իրա
հունարը շիանց ա տալի:

Ֆորսկանն ասում ա. — Արդեն աղա, մի սե-
ղան գծի, էս ջաղացպանի հետ ուտենք,
խմենք:

Անդանը գծվում ա, երկու բաժակը աղաքից
Արդեն աղան ա խմում, եդն էլ իրանք ուտում
են, խմում: Ջաղացում մի տըմբուշկա կա
դըած. ջաղացպանն ասում ա. — Էդ քու Արդեն
աղան իմ տըմբուշկը հետ չե՞ս փոխի:

Ասըմ ա. — Քու տըմբուշկի հունարն ի՞նչ ա:

Ջաղացպանն ասում ա. — Որ տանես
դաշտումը դնես, ասես՝ վոխաղի, վոխաղի, ինչ-
քան ասես զորք դուս կգա, կոիվ կանի, կոիվ
որ պրծնի, կասես՝ գախաղի, գախաղի, էդ
զորքը կմտնի տըմբուշկեն:

Արդեն աղան ֆորսկանի անգաջին ասում
ա. — Ասա՝ համաձայն եմ, ես քեզ հետ եմ:

Տըմբուշկեն էլ են վեք ունում, գընըմ են,
գընըմ են, դընըմ, հասնում են տուն:
Տըմբուշկեն դընըմ ա գեղնին, չոմալակը
օճորքն ա էլնում, դընըմ ա, գալի:

Կնիկն ասում ա. — Բերի՞ր վարյոխին, —
չանց ա տալի չոմալակն, ասում ա. — Է՞ս ա:

Աարգն ասում ա. — Չէ:

— Տըմբուշկե՞ն ա:

Թե. — Չէ:

Աարգն ասում ա. — Արդեն աղա, մի սեղան
գծի, կեգաս հետ ուտենք, խմենք, քեփ անենք:

Անդանը վռազ գծած ա: Կնիկն ասում ա. —
Ուրեմն էս ա, ինքը չկա, գործը կա:

Թագավորին իմաց են տալի, որ ֆորսկանը
էկել ա: Ըռավոդը տըմբուշկեն ձեռն ա առնըմ,
չոմբախը ուսին ա դնում, գնում ա պալատը:
Նագիր, վեզիրները սինոդը հվաքվում են,
տենան ֆորսկանը ըրել ա վարյոխին: Շանց
են տալի չոմալակը, ասում են՝ էս ա վարյոխին,
ֆորսկանն ասում ա՝ չէ:

Ձեն ա տալի. — Արդեն աղա, թագավորին
վայել, սինոդին վայել մի սեղան գծի. ուտենք,
խմենք, քեփ անենք:

Անդանը գծած ա: Ուտում են, խմում: Որ
ուտում են, խմում, պրծնում, ֆորսկանն ասում
ա. — Չոմալակ, վեր արի, թագավորին թող,
մնացածի գլուխը տուր:

շոնալակը բոլորի գլուխը տալիս ա: ֆորսկանը եղ ա դառնում թագավորին:

— Յմի ինչ ես ասում, մնացինք ես ու դու, թախտդ տալիս ես, թե՛ ուժով տի իյլեմ:

Թագավորն ասում ա. — Արի կռվենք, դու քո չոնալակով, ես իմ գորքով:

Թագավորն իրա գորքը դուս ա բերում, ֆորսկանն էլ իրա տըմբուշկեն ա դուս բերում, ասըմ ա՝ վոխադի — վիխադի:

Չորքը դուս ա գալի, թագավորի գորքին ջարդում: Էլի մնում են թագավորն ու ֆորսկանը: Ֆորսկանն ասում ա. — Դու չես տեսնում, որ էլ թագավոր չես, ես եմ թագավորը, ուժն էլ ա իմը, հունարն էլ: Ես եմ ժողովողի տերն ու տիրակալը, նրա հըմա մտածողը:

Թագավորին պալատից դուս ա անըմ, ինքը նստում ա թագավոր, կնիկն էլ դառնըմ ա թագուհի: Պալատի օճորքումը կախ ըլած ա չոնալակը, զընըմ ա, գալի, թախտի կշտին տըմբուշկեն ա՝ գորքը միջին, վարյոխու նման դարավաշն էլ աղաքը ծառայում ա: Էլ ինչ էր պետք էդ թագավորին:

Երգնքից իրեք խնձոր վեր էլավ, մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մին էլ՝ ալամ աշխարհին:

3. ԹՈՒՉՈՒՄ ՏՂԵՆ

Մի առավոտ շուտով թոռչու տղեն իր հոր թոռը վերցնում ա ու գնում գեղի մոտ, թոռը զըծում ա, ու ինքն իըան ասում. «Սա իմ բախտս», թոռը քաշում, կամաց քաշում, քաշում, ծանդր ա գալի, թոռը ջըից դուրս ա գալի, շատ ծանդր ա, նայում ա մեջը, ոչինչ չկա, մի քիչ էլ քաշըմ ա, ամբողջովեն ջրից հանելուց հետո տեսնում ա մի բան թոռի միջին թըպըրտում ա, ձեռը տանում բռնում, տեսնում ա գորտը, վերցնում ա, քցում իրա սումկան ու բերում տուն: Շա տ տիպուր նստում ա: Մերը հարցնում ա. — Ի՞նչ ա պատահել, տղա ջան, ընչի ես էսպես սխուր:

Թե. — Ինչ ասեմ, այ մեր, առավոտը շուտ թոռըս զծեցի, ասի էս իմ բախտը, հըմի բռնել

եմ, բերե, էն սումկայի մեջ սնիցը կախ արած ա, գնա տես ինչ ա:

Մերը գնում ա, ձեռքը դնում ա սումկայի մեջ, տեսնում ա՝ փափուկ բան ա, քաշում ա, հանըմ սումկայից, տեսնում ա գորտըն ա, իրա վախելեն ձեռքիցն ընգնում ա ու գորտը թռչկոտալով, թըփթըփալեն զընըմ ա, մըտնում ամբարի տակ: Էդ օրը իրանք իրանց տանը իրանց գոռծին, առավոդը վեր են կենում, զընում գոռծի, տղեն իրա գոռծին, մերն էլ իրա գոռծին: Իրիգունը հավաքվում են գալի, գալիս են տեսնում՝ տունը մաքուր ավլած, սըրբած, չայը պատրաստած, ճաշը պատրաստած, մնում են զարմացած. «Այ մարդ, էս մեր դուռը փագած էր, բա մեջը մարդ չի էլել, ո՞վ ա էս մեր ճաշերը պատրաստել»:

Մեկ օր, հինգ օր, տաս օր, տղեն ասում ա. — Այ մեր, ես տանը տապ տիմ անել, դու գնա գործիդ, հլա տենանք էս ով ա մեր տուն մտնում, մեր ճաշը շինում, մեր տունը ավլում:

Իրանք էլ տան դռան հետևը մի կարաս են ունենում դրած, կարասի ու դռան արանքը ահագի զագռ ա ունենում, էդ տղեն զալիս ա էդ արանքումը տապ անում, մերը գնում ա գոռծի, մի քանի վախտից հետո մեկել տեսնում ա էդ գորտը դուս էկավ, էկավ օջախի մոտ կանգնեց, սկսեց կը՛ռ, մեծացավ, կը՛ռ, ավելի մեծացավ, կը՛ռ, մեկեն մեծացավ, մի պառկ պատռեց, միջից մի շատ սիրուն, գեղեցկուհի աղջիկ դուրս էկավ ու գնաց դեպի տան վերևի կրդմը: Տղեն վազում ա, էդ որ պարկըր որ դուս ա էկել, էդ խրխին վերցնում ա, քցում կրակը: Չցում ա կրակը, անմիջապես վառվում ա խրխին, աղջիկը հետ ա գալի, հետ ա գալի, ինչ պտի անի, արդեն խրխին վառվել ա, նա աղղեն մնաց որպես աղջիկ: Իրիգունը մերը տուն ա գալի, տեսնում ա՝ այ մաղդ, մի արեզակ, թե հուրի մալաք, թե ինչ-որ մի հեյրան էկել ա իըա տղի մոտ՝ ըտեղ նստած: Տղեն էլ շատ ուրախ, էդ աղջիկն էլ ուրախ: Ասում ա. — Տղա ջան, էդ ո՞վ ա:

Թե. — Այ մեր, էս իմ բախտն ա, ես որ եմ առավոդը թոռը զծեցի ու քաշեցի, ծանդր էր

գալի, ե՞ն սա ա, ի՞մ բախտն ա:

Էլավ էդպես: Աղջիկը դրան օգնում ա տարբեր տեսակով, էդ տղեն հարըստանում ա: Թագավորի տան առաջը սկսում ա իրա հըմար պալատներ կառուցել, մեծ այգի գցել, թագավորի նազիր վեզիրները գնում են թագավորին խաբար տալի, թե. — Այ տղա, էս ռնց ա որ թագավոր լինելով, նա էլ թոռչու տղեն, ու նրա կնոջը նայի, քու կնոջը նայի: Դու իրավունք ունես մինչև յոթ-ութ կին պահես, ե՞ն սիրուն կինը իրավունք չունի թոռչու տղի կինն ըլի, նա պետք ա քոնն ըլի:

Էդպես չակերտավոր բարի մարդիկ թագավորին սկսում են լարել դեպի թոռչու տղեն, ինչ անի, ինչպես չանի, ինչ հնար գդնի, այ մարդ, որ կարողանա թոռչու կնոջը վերցնի, իր համար կին դարձնի: Գդնում են դրա հավատարիմ նազիր-վեզիրները թե. «Պտի կանչես նրան, ե՞նպես զադանյա տաս, որ նա չկարենա կատարե, իսկ փոխարենը դու վերցնես նրա կնոջը»: Ի՞նչ զադանյա տա, ի՞նչ չտա, կանչում ա, թե՝ թոռչու տղին կանչեք, գա: Թոռչու տղեն գալիս ա, թագավորը զադանյա ա տալի, թե. — Թոռչու տղա, ես ինչքան մտածել եմ, ի՞մ հողում քեզանից ի՞գիթ մարդ չկա, ի՞մ էլ կինս հիվանդ ա, նրան, մի անմահական ծաղիկ կա, դու պետք ա բերես, ող դեդ պատրաստենք, կնոջս իմացնենք, որ նա լավանա: Պայման ենք կապում, եթե կբերես՝ քու քաշով մեկ ոսկի եմ տալու, չես բերի՝ վիզըդ տալու եմ:

Խեղճ թոռչու տղեն փոռ-փոշման վերադառնում ա իրա տուն, կինը տեսնում ա, ող տղի ռանգը- մռանգը սավենե՞ն թռած ա:

— Ի՞նչ ա պատահել, ասա տենամ, այ մարդ:

— Է՛, ինչ պտի պատահի, թագավորը կանչել ա, ինձ ե՞նպիսի զադանյա ա տվել, որ ես էդ զադանյան չեմ կարա կատարի, նա ասում ա՝ եթե զադանյան կատարես քու քաշով մի՞ն ոսկի եմ տալի, թե չես կատարի՝ վիզըդ թոցնել եմ տալի:

— Ի՞նչ ա ասել, հլա ասա տենամ:

— Ինձ ասում ա, թե անմահական ծաղիկ պտի բերես, որ նրա ջրով կնոջս լավացնենք,

ես նրա հըմա անմահական ծաղիկ որդեղի՞ց պտի բերեմ:

— Է՛, ա՛յ մարդ, դրա հմար ես մտածում: Քեզ հըմար հանգիստ մնա, իսկ ինչ որ ասում ես՝ պայմաններդ տալի՞ս ա:

Թե. — Կտա:

— Դե որ տալիս ա, գնա իրան ասա՝ յոթը թունգի քացախ, յոթ փութ բամբակ, էրկու հատ էլ մշակ տա քեզ, դրանք բեր, անմահական ծաղիկը մենք կբերենք:

— Դե ասենք, թագավորի հըմար էդքան տվածը ինչ ... յոթ փթի փոխարեն տասնըյոթ փութ էլ կտա, յոթ թունգի փոխարեն տասնյոթ թունգի քացախ էլ կտա, հետո ես ի՞նչ պտի անեմ:

— Դու գնա բեր, ես քեզ պասեմ:

Թոռչու տղեն զընում ա թագավորի մոտ, ասում ա. — Եթե ուզում ես անմահական ծաղիկը բերեմ, ինձ յոթ թունգի քացախ պիտի տաս, յոթ փութ էլ բամբակ, էրկու հատ էլ մշակ:

Թագավորը մտածում ա, տեսնում ա որ կամաց թոռչու տղի խելքն առնում ա, էդ ինչ որ պահանջում ա, տալիս ա, դըրգում: Գալիս են թոռչու տուն, կինն ասում ա. — Այսինչ դաշտում մի լավ սառնախալուր կա, օրվա ճաշ վախտը հրեղեն ձիանքը գալիս են ընտեղից ջուր խմում, հիմա դու մշակների հետ տանում ես, ե՞ն ախալուրը ցամաքացնում ես, ե՞ն ախալըի ակը ե՞ն յոթ փութ բամբակը խցկում, որպեսզի ջուր՝ չդուս գա, էդ յոթ թունգի քացախն էլ լցնում ես էդ ախալըի տեղը: Էսինչ ժամին հրեղեն ձին գալու ա ընտեղից ջուր խմե, հենց դուռը դնե ջրի վրա, որ խմե, կոռչես ու վրեն կնստիս, ու դու որ ձիու վրա նստեցիր, աղղեն նա քու ե՞նթական ա, ուղ ուզենաս կքչես, իսկ անմահական ծաղիկն էլ էսինչ լեռի դուռումն ա, մոտ հարյուր քսանից իննսուն աստիճանի տակ լեռաքար ու մի հատ ծաղիկ ա ընդեզբուսած, միայն մի հատ, ձին էդ լեռան դռովը թոցնում ես, ձեռըդ գցում, ծաղիկը պոկում ու բերում:

Եվ էդպես էլ անում ա թոռչու տղեն, վերցնում ա էդ բամբակն էլ, էդ քացախն էլ, էդ

մարդկանցն էլ, տանում ա էդ գործարքը կատարում, ձիուն նստում, գալի էդ ծաղիկը պոկում, գալի քաղաքի դրադը հասնում, ձիւն րաց թողնում, ինքը ծաղիկը բերում ա տալի թագավորին: Էդ գաղանջան կատարեց, հիմա ինչ անեն: Մի ուրիշ գաղանջա ա տալի: Նորից կանչում ա թոռնու տղուն, թե. – Որ դու էդքան իգիթ տղա ես, արի քեզ մի գաղանջա էլ տամ:

– Ի՞նչ պտի ասես, – ասում ա:

– Հերըս ու մերըս էս քսանհինգ տարի ա չկան, մահացել են, դու պետք ա գնաս նրանցից մի խաբար բերես:

Այ մարդ, էս հլա լուս աշխարհումն ա, էդ մարդը կնատարի, բա ո՞նց գնա, էդ մեռած մարդկանցից խաբար բերի: Քոռ ու փոշման նորից վերադառնում ա տուն, կինը տենում ա, է՛, չէլավ, էլի տխուր ա մաբղը: Մոտանում ա. – Հը, ասա, տենամ հըմի ի՞նչ գաղանջա ա տվել, թոռնու տղա:

– Է՛, այ կնիկ ջան, հըմի միենց գաղանջա ա տվել, դժվար թե ես կարենամ էդ կատարեն, դա կատարվող բան չի:

– Հլա ասա, ասա տենամ:

Ասում ա. – Ասում ա, թե՛ հերս ու մերս քսանհինգ տարի ա մեռել են, նրանցից խաբար չունիմ, պետք ա գնաս նրանցից խաբար բերես:

– Այ մաբդ, դրա հըմար ես մտածում, դու հանգիստ քնի, էդ խարարն էլ կբերեն:

– Այ կնիկ, ոնց հանգիստ կքնվի, որտեղի՞ց պտի ռերեն: Ես ոնց տիենց խաբար պտի տանեն թագավորին:

– Դու հանգիստ քնի, դրա խաբաբը կբերենք մենք:

Է՛, վերջապես, որ լուսանում ա, կինն ասում ա. – Թոռնու տղա, գնա թագավորին ասա՝ քառասուն մետրա բարձրության չոր շարժին բարձի, քառասուն բռչկա էլ նաֆթ վերևից կլցնես, ես կկանգնեմ վերևը, դու ներքևից կվառես, էդ ա ճանապարհը, էդ ճանապարհով ես կերթամ՝ հորիցդ-մորիցդ խաբար կբերեմ:

– Լսենք թե թագավորի հմա էդ քառասուն

մետրա շարժինը նշանակություն չունի, րա ես ո՞նց կանեմ, նա որ վառի, ես բոցի մեջ կվառվեմ:

– Քու գործը չի, դու գնա էդ բանն արա:

Թոռնու տղեն գնում ա թագավորին ասում, որ. – Թագավորն ապրած կենա, եթե ուզում ես հորիցդ – մորիցդ խաբար բերեմ, պետք ա քառասուն մետրա բարձրության շարժին դարսենք, վերևից էլ չորս բռչկա նավթ լցնենք, ես վերևը կանգնեմ, դու ներքևից վառես, էդ վառվի, որ ես դրա միջոցով գնամ եմ ճանապարհը, եմ աշխարհը, նրանցից խաբար բերեմ:

Էդպես էլ անում են: Թագավորը քառասուն մետրասյան բարձրության շարժինը դարսում ա, չորս բռչկա նավթ լցնում, թոռնու տղեն էլ բարձրանում ա վերևը, թագավորը ներքևից վառում ա, թոռնու տղեն ծխի մեջ ա ըլում, կինը ծխի միջով թոռնու տղին բերում ա իրա տուն, մենակ էն պայմանով, որ պետք ա քառասուն օրից խաբարը բերի, քառասուն օր պետք ա իրավունք տա: Գնա՛ց: Անցնում ա երեսունհինը օր, երբ որ ժամանակից մնում ա մի օր, մի քանի ժամ, մի քանի ռոպե, շուտ-շուտ գալիս են: «Թոռնու տղեն չէկա՞վ, խաբաբը չբերե՞ց»: Թագավորը ուղարկում ա իրան նազիր-վեզիրներին. – Գնացեք, տեսեք, ի՞նչ էլավ, ինչի չի խաբար բերեց:

Անում ա տաս ռոպե, որ պետք է լրանա քառասուն օրը, նորից են գալի, կնիկն ասում ա. – Այ մաբդ, որտեղով որ ուղարկել էր, են ճանապարհով էլ գալու ա, գնացեք ընդեդ:

Իսկ նախքան էդ կնիկը թոռնու տղին տանում ա, էդ գոյացած մոխրի միջին թաղում, ծածկում: Գընում են ըտե, մեկիլ տեսնում են թոռնու տղեն մոխրի միջին աչքերը պլուստըակ արած դուրս էկավ: Ա՛յ մարդ, էս մարգն էլի էկավ, ու տանում են տուն: Ասում ա. – Լա՛վ, այ կնիկ, հըմի ես գնամ թագավորին ինչ ասեմ:

Կնիկն ասում ա. – Գնում ես նրան ասում, որ հերըդ – մերըդ շատ նեղացել են քեզանից և շատ էլ վիրավորվեցին, թե ինչի ինքը չի գալի, որ թոռնու տղեն ով ա, որ դարգում ա իրա հորից – մորից խաբար բերե: Հերըդ ասում էր,

իրան կասես, որ հերըդ ասեր տղա ջան, ես ծերացել եմ, արդեն ժամանակս կարճացել ա, մերըդ էլ նմանապես, ենքան էլ ապրուստ ունի և էնպիսի աշխարհում ա, էր ինչ ա քու ունեցվածքը թագավոր, հասարակ մի բան նրա մոտ, որ ես երևի շուտով կմեռնիմ, էկեք ես ապրուստին տեր կանգնեցեք: Իսկ մերը ասում էր, որ հարսիս համար պռոշնիս պատռել ա նիենց, անպայման հարսիս պետք ա բերես, շատ ուժեղ կաղոտել եմ, մեկ էլ շատ թողմաթ արավ մերըդ, թե նուժելի ինքը թագավոր լինելով, նա էլ թագուհի լինելով, իրանք չեն գալի իրանց հորն ու մորը տենում ինչ վիճակում են, վեր են կալել ինչ որ մի յեմանչի, մի թոռնու տղի ուղարկել, թե՝ գնա իմ հորից – մորից խաբար բի, ինչ խաբար պտի տանիս դու, այ տղա ջան, ասա որ իրանք գան մեր ունեցվածքին տեր կանգնեն, վերցնեն ու հետ գնան:

– Ասենք թե, այ կնիկ, թագավորը էդպես էլ համաձայնվեց, գնում ա, բա նրան ինչ ճանապարհով պիտի դարգենք:

– Դու գնա նրան համաձայնացրու արի, ես քեզ կասեմ ճանապարհը:

Էլ էդպես թոռնու տղեն գնում ա թագավորի մոտ, գնում ա, տենում թագավորն ու թագուհին նստած սպասում են թոռնու տղին, թե ինչ խաբար պտի բերի:

– Բարև, թագավորն ապրած կենա, բա չեք ասի ես ինչ երգիք ա, այ՛ մարդ, երգիք դոսիս ընդեդ ա, հորըդ – մորըդ մոտ, ի՞նչ ունեցվածք ունին, ի՞նչ ապրուստ ունին, ում ա պետքը, ծերացել են, ամբողջ երկոի տերն են, ոչ մեկըդ չեք գնացել, նեղացան, թե նուժելի թագավորը հարմար ա գդել թոռնու տղին դարգել, որ գա իրա հռից – մորից խաբար բերի, ինչի ինքը չի եկել, ինչի հաղսը չի եկել, իսկ մերըդ, թագավորն ապրած կենա, էլ չեմ ասում, թե ինչքան ա կարոտել ձեզ, կխնդրեր, որ՝ խնդրում եմ հարսին վերցնես, քու թագավորությունն էլ ժամանակավոր տաս մեկոն ու գաս, մեր ունեցվածքին տեր կանգնես, էնպես,

որ մենք արդեն ծերացել ենք, մեր հայ-հայը գնացել ա, վայ-վայն ա մնացել:

– Ուրեմն էդպես էր, թոռնու տղա:

– Հա, թագավորն ապրած կենա, թե ինչքան ունեցվածք ունի հերըդ, ասելու չի:

– Շատ լավ, դե գնա հանգստացի, մենք կերթանք:

Թոռնու տղեն գալիս ա տուն, երկու օրից հետո թագավորը մորից կանչում ա: Թոռնու տղեն կնգանն ասում ա. – Հըմի ես գնում եմ, թագավորը պտի ասի՝ ես ի՞նչ ճանապարհով գնամ, ինչպե՞ս գնամ, ի՞նչ պատասխան տամ:

Կնիկն ասում ա.

– Դու թագավորին ասում ես, թե երկուսով եք գնում՝ պետք ա ութանասուն մետրա րարծրության շարժին դարսվի, ութ բոչկա նավթ լցվե, թե մենակ ես գնում քառասուն մետրա բարձրության շարժին պտի դարսվի, չորս բոչկա նավթ լցվի: Հետո նրան ասում ես, որ քու թագավորությունը ժամանակավոր տալիս ես ռուս մեկին, ռուսացի գաս էլի հետ վերցնես քու թագավորությունը:

Էդպես էլ թոռնու տղեն գնում ա թագավորի մոտ, թե. – Թագավորն ապրած կենա, թե երկուսով եք գնում՝ պետք ա ութսուն մետրա բարձրության շարժին դարսվի, ութ բոչկա նավթ լցվի, դուք վերևը կանգնեք, ես ներքևից վառեմ, որ դուք էդ ճանապարհով գնաք: Եթե մենակ ես ուզում գնաս՝ պետք ա քառասուն մետրա բարձրության վիա շարժին դարսվի, չորս բոչկա նավթ լցվի:

Թագավորն ասում ա. – Չէ, թոռնու տղա, մենք երկուսով ենք գնում, հիմա ես էլ ուրիշ մարդու իմ թագավորությունը տալու միտք չունեմ, իմ թագավորությունը ժամանակավորապես տալիս եմ քեզ, մենք՝ մարդ ու կնիկ գնում ենք, մենք վաղվանից էդ բարձրությունը պատրաստել կտանք, մյուս օրը կերթանք:

Հաջորդ օրը էդ բարձրության շարժինը պատրաստ ա, նավթը լցրած, թագավորը կանչում ա թոռնու տղին, իրանք էլ բարձրանում են վերև, թոռնու տղեն պրտի վառի:

– Դե, թոռչու տղա, իմ թագավորությունը տալիս եմ քեզ մինչև իմ վերադարձը, – ասում ա թագավորը:

Թագավորն ու թագուհին կանգնում են ութանասուն մետրա բարձրության շարժինի վրա, թոռչու տղեն ներքևից սպիչկեն քցում վառում ա, ու դրանք գնում են իրանց հոր ու մորից խաբար բերելու: Են օրվանից մինչև էսօր նրանք գնացել են և են օրվանից թոռչու տղեն դառնում ա աշխարհի թագավորը:

Թոռչու տղեն ու իրան կնիկը հասնում են իրանց մուրազին, դուք էլ հաւսնեք ձեր մուրազին:

4. ՈՏԵՆԲԸ ԿՏՐԱԾ ԱՂՋԻԿԸ

Ըլըմ ա չի ըլըմ մի թագավոր ա ըլըմ, ունենում ա էրկու տղա, մի աղջիկ: Էս թագավորը շատ ա ապրում, թե քիչ ա ապրում, գիղվալ չի, մեռնելու վախտի կանչում ա տղերքին, ասում ա. – Տղերք, ես որ կմեռնեմ, ինձանից եղը ինչ որ կանեք, որդի որ կգնաք, ձեր քվոր հետ խորհուրդ կանեք, առանց ձեր քվորը գործ չբռնեք:

Աղջկանն էլ մի դանակ ա տալի, ասում ա. – Աղջիկ ջան, էս դանակը պիմդ կպահես, հենց տեղդ նեղանա, քեզ պետք կգա:

Չերը մահանում ա, տղերքը հոր վասյաթը կատարում են: Ինչ գործ անըմ են, իրանց քրոջից հարցնում են: Տղերքը պսակված են ըլում, սրանց կանանց փորներուն ծովում ա, նախանձում են, թե մենք կնիկն ըլենք, սա քիրն ըլի, սրանից խորհուրդ հարցնեն: Միտք են անում ոնց անեն, օլխին մի օղբաթ րերեն, ռադ անեն, կորցնեն:

Օրի մի օր կնանիքը գընըմ են գոմունը ձիանիրը ռաց թողում, ձիանիրը իրար կտորում են, քացի տալի, ջարդում: Տղերքը գալիս են գործից, տենըմ են ձիանիրը թամա՛մ կտորած. – Էս ո՞վ ա արե:

– Քիրըդ ա արե: Էլ ո՞վ ա արե:

Քվորը ռան չեն ասում, աղաքվա նման ամեն բան քվոր հետ են խորհուրդ անըմ:

Մի օր էլ ասլան դափլանն են կապած տեղից բաց թողնում, գծում իրար հետ, դրանք են կտորում իրար: Դրա հըմար էլ բան չեն ասում: Մեծ տեքրակինն ասում ա. «Արի իմ տղին մորթենք, գան, ասենք՝ նա ա արել, ռալքի էդ վախտը աչքներիցը գծեն»: Բերըմ են, ըրեխին մորթում են: Ըրիգունը տղերքը գալիս են, թե՛ էս ո՞վ ա արե, էս ի՞նչ բան ա: Թե՛ քիրդ ա մորթե, էլ ո՞վ տի մորթի:

Ախպըրտինքը ջգրվում են. – Է՛, այ քիր, բավական է, ձիանիրը բաց թողիր՝ բան չասեցինք, ասլան դափլանին ռաց թողիր՝ ռան չասեցինք, ռա էս ի՞նչ ա, Էգուց էլ մեզ տես մորթի:

Քիրն էլ ասըմ չր: Էրկու մարդ են բերըմ, ասըմ են. «Էսքան ռսկի կտանք ձեզ, մեր քվորը տարեք, մեր հողից հանեցեք, – աքսորում են էլի, – ուրիշ տերության հռդում թողեք ու էկեք»: Չարսները թաքուն էդ մարդկանց փող են տալի, ասըմ են. «Որ կտանեք ընդեղ թողալու, էրկու ոտն էլ ծնգից կկտրեք ու ոտները կիերեք մեզ»: Էդ մարդիկ աղջկանը, որ տանում են, ուզում են ոտները կտրեն, աղջիկն ասում ա. – Այ տղերք, տարեք մի ադբրի կշտին գոնյա դրեք, որ էկող գնացողը ջուր խմի, մի կտոր հաց կուտեն, մի թիքա էլ հալբաթ րնձ կտան:

Դրանց խոճերը ընքան ա ըլըմ, որ տանըմ են մի լավ ադբրի կշտի ոտները կըտրըմ, վեր ունըմ, գընըմ: Աղջիկը մընըմ ա ընտի ընգած:

Էդ տերության թագավորի տղեն էդ քշեր դսմաթի էրազ ա տենըմ, ըռավողը վեր ա կենըմ, գընըմ ֆորսի: Գընըմ ա ման գալի, ման գալի, գընըմ ա էդ ախպըրի կուշտը, մաշուր տեղ ա ըլըմ, ասըմ ա. «Գընամ էդ ախպրից ջուր խմեմ»: Գընըմ ա, տենըմ, մի աղջիկ կա ջրի դրաղին, արևին ասում ա՝ դուն մի դուս գալ, ես ըստի եմ, համա ոտները կտրած ա: Ասըմ ա. «Ոտներդ ա կտրած, որ կիսանըդ էլ կտրած ըլես, դու իմն ես»: Վեր ա ունում, տանըմ: Չորն ասում ա. – Այ հեր, ես էս աղջիկը րերել եմ, ես սըան տի առնեմ:

Չերն ասում ա. – Ոը րերել ես՝ լավ ես արե,

բութել տուր քու խերի խաթեր, համա որպես կին ես համոզ չեմ:

Չէ, — ասըմ ա: — Այ հեր, իմ դսմաթը սա ա: կա սա ա, չկա՝ սա ա:

Հերն ասըմ ա. — Դու գիղես:

Էդ տղեն սիրում ա աղջկանը, պատրոնն էլ ինչ տի ասի՝ թագավոր մարդ ա:

Կնիկը հղի ա ըլըմ, տղեն պտի գնա կոիվ, ասում ա. — Հերա, որ հարսը կպառկի, ինձ մի նամակ կգրես, թե ինչ ա բերե:

Հերն ասում ա. — Շատ լավ:

Կռվի տեղը էս թագավորի սայուզնիկը էն տղերքն են, որ իրա միրզամնին են, հարսի ախպրտինքն են, համա գիղան ոչ, թե իրանք փեսա-միրզամնի են, ինչ գիղան իրանց քվորն ով ա ուզել, ով չի ուզել: Դրանք թող կովեն, իարարը տանք էդ հարսից:

Աս պառկում ա, մի ջուխտ ոսկեքյանքյուլ տղա բերում: Հերը ուրախալի մի նամակ ա գրըմ, տալի մի մարդի, ասըմ ա՝ կտանես, կտաս իմ տղին, նամակը մեջ գրում ա. «Տղա ջան, աչքըդ լիս, կընիկըդ պառկել ա, մի ջուխտ ոսկեքյանքյուլ տղա բերել»: Էս փոշտալոնը, աֆերիստ տղա ա ըլըմ, ասըմ ա. «Մին ա գնալ դեմ Կիրովականովը, Կիրովականի տղերքն էլ են կռվըմը, նրանց կնանիքն էլ նամակ կտան, կտանեն, փող կառնեն»: Գընըմ ա դրանց կուշտը, ասըմ ա. — Գընըմ եմ պազիցիքը, նամակ չունե՞ք ձեր մարթկերանցը տալու: Մեր թագավորը էրկու ոտները կտրած մի հարս ունի, պառկել ա, մի ջուխտ ոսկեքյանքյուլ տղա ա բերե, աչքալուսենքի նամակ եմ տանըմ:

Արանք գլխի են, որ իրանց տալն ա, ասըմ են. — Բեզարած մարդ ես, ըսօր մնա ըստի, ըռավողնին վեր կկենաս, մեր նամակներն էլ կտանես:

Բերում են քարթու գինի խըմացնըմ, հարփացնըմ ու քնացնըմ: Թագավորի նամակը էդ տղի ծոցից հանըմ են, թողըմ են, մի նամակ գրում, որ. «Տղա ջան, կնիկդ պառկել ա, մի ջուխտ շան թուլա ա բերե»: Իրանց մարդկանցը ինչ որ գրելու ա, գրում են տալի էդ

տղին, ըռավողը սա վեր ա կենըմ, գընըմ պազիցեն: Տանըմ ա ամենքի նամակն իրանց ա տալի, ամենքն իրանց նամակի պատասխանը գրում են. թագավորի տղեն ախրվում ա, համա գրում ա. «Շան թուլա չէ, որ ինչ որ էլ ուզում ա բերած ըլի՝ պահի մինչև իմ գալը»: Փռտալիոնը գալիս ա տղերանց նամակը որ տալիս ա, էլի քարթու գինին խմացնում են, քնացընըմ, թագավորի տղի պատասխանը ծոցից հանըմ են, թողնում են, գրում են. «Հայրիկ, ոսկեքյանքյուլ տղերքին էլ, իրան էլ հրամայի տանեն գծեն ծովը»:

Նամակը հասնըմ ա թագավորին, թագավորը կարդում ա, գլուխը պտտում: Հարսը նկատում ա, ասըմ ա. — Էդ ի՞նչ ա ըլե, հայրիկ:

Ասըմ ա. — Ես կարալ չեմ ասի, առ դու նամակը կարդա:

Նամակը տալիս ա հարսին, կարդում ա, ասում ա. — Հայրիկ, որդուդ կամքը կատարի:

Մսըմ ա. — Ո՞նց կատարեմ, քեզ պես հարսին, ըրեխանցը ո՞նց տանեմ, ածեն ծովը:

Մսըմ ա. — Մի զանդուկ շինել տուր, որ ջուրը մեջը չանցնի, ինձ էլ, ըրեխանցն էլ դի միջին, մի ամսվա էլ ուտելիք դի, թող տանեն, ձգեն ծովը, թե կապրենք, թե կնեռնենք՝ էդ էլ մեր րախտիցը:

Թագավորը բերըմ ա մի զանդուկ ա շինել տալի, զնըռըմ մեջը, ջուր չանցնի, հարսին, ըրեխանցը դնել տալի միջին, մի ամսվա ճաշացու, ուտելիք դընըմ հետներնին, տանըմ են, գծում ծովը, լաց ըլելով եդ գալի:

Ջրի երեսովը շատ են գրնըմ, քիչ են գընըմ, մին էլ էդ կնիկը տենըմ ա, որ էլ զանդուկը գրնըմ չի, կաղենել ա: Ուտելիքն էլ քիչ ա մընըմ, ասըմ ա. «Էս ա ուտելիքներս կհատնի, ո՞նց կապրենք, սովից կնտորվենք»: Միտքն ա ընգընըմ, որ հերը մի դանակ ա տվե, ասել ա, որ քեզ մի օր պետք կգա: Դանակը հանըմ ա ու էդ զանդուկե դփիլը քփորում ա: Քփորելով, քփորելով րաց ա անըմ, գլուխը հանըմ ա, որ ծովի դռադին են: Ըրեխանցը հանըմ ա, ինքն էլ դուս ա գալի, զանդուկը քաշ տալով հանըմ ա ծովի դռադը, դուս մեջը ապրում են: Մի հաց ա

մընըմ, մի ճաշացու: Ասըմ ա. «Էս էլ էփենք, ուտենք, եղօրվա տերն էլ աստված»: Ճաշն էփում ա, դընըմ են ըղաքնին, ուտելիս են ըլնըմ, տենըմ են հրես էրկու մարդ էկան. — Բարի ըրիգուն, այ քիրա:

— Ասսու րարին, համեցեք հաց ուտենք:

Ասըմ են. — Այ քիրա, մի կտոր հաց ա, մի րաժին ճաշ, մենք էլ, որ ուտենք, բա դու՞ք:

Ասըմ ա. — Ախպեր ջան, իմ ունեցածն էլ էս ա, շատ ա, քիչ ա, էկեք իրար հետ ուտենք:

Նստում են, հետներն ուտում են, ասում են.

— Այ քիրա, որ դու եղ լավութիւնը մեզ արիր, մենք էլ քեզ մի լավութիւն կանենք:

Աի սվրստոկ են տալի ըրեխին, ասըմ են. — Կփչես էս սվրստոկը, էրկու արաբ դուս կգան, կասեն՝ աշխարհը քանդենք, թե շինենք: Կասես՝ ոչ քանդեցեք, ոչ շինեցեք, մեք հըմար ուտելիք բերեք, տուն սարքեցեք, սըրտներդ ինչ ուզի, արաբները կանեն, — ասըմ են, իրանք անհայտանում:

Տղեն վրազ սվրստոկը տալիս ա, էրկու արաբ են դուս գալի, ասում են. «Ի՞նչ կա, տղա ջան, աշխարհը քանդենք, թե շինենք»: Տղեն ասում ա. «Ոչ քանդեցեք, ոչ շինեցեք, մերս, ախպերս ու ես սոված ենք: Սուփրա, սեղան բացեք, ուտենք, լիանանք»: Արաբնին ասում են. «Լէջներդ իսփեք, բացեք, պատրաստ ա»: Դրուստ, որ աչքերը իսփում են, բացում, տենըմ են ջրի դրադին մի սուփրա, սեղան ա բաց ըլած, որ աշխարհումը, ինչ ազիզ թիքա կա, վրեն կա: Մերն ու տղերքը ուտում են, լիանըմ. ուրիշ ըրեխեք, թե տարով են մեծանըմ, սրանք ժամով են մեծանըմ: Մերն ասըմ ա. — Որդի, դուք մեծացել եք, էլ էս զանդուկը մեջ տեղ չէք անի, եղ արաբներին կանչի, ասա, որ էս ջրի դրադին մեզ հմա տուն շինեն:

Տղեն սվրստոկը տալիս ա, արաբնին դուս են գալի, ասըմ են. «Չը՞ տղա ջան, աշխարհը քանդենք, թե շինենք»: Տղեն ասըմ ա. «Ոչ քանդեք, ոչ շինեք, մենք տուն չունենք, մեզ հմա մի լավ տուն սարքեք, որ մերս, ախպերս ու ես մեջը ապրենք»: Ասըմ են. «Քնեք, վե կացեք, պատրաստ կըլի»: Ըռավորը դրանք վեր

են կենըմ, տենըմ են տան մեջ, մերն ջուկ օթախում, իրանք ջուկ օթախում, ինաս տեղաշորում պառկած են: Վոազ վեր են կենըմ, տղեն սվիստոկը տալիս ա, սուփրա-սեղանը րացվում ա, ուտում են, վազըմ են ծովը լողանալու: Էդ վախոր մի լողկչի իրա լողկեն բերըմ ա, լողկեն դրանց կշտին ուտն անըմ, մի ըրեխուն վեր ա ունում, լողկեն գծում, հայդե տանըմ: Էն մեկելը լաց ա ըլըմ. — Վա՛յ նանի ջան, ախպորըս տաղան:

Չամա ինչ, ըրեխեն ջոգ ա գընըմ, իրանց ուտելիքն էլ հատնըմ ա, ինչ անեն: Թո դրանք ըռի կենան, իարարը տանք լողկիցը:

Լողկեն Էդ ըրեխին տանըմ ա ծովը մի դրադին հանըմ ա, մի դուռ ա շանց տալի, ասըմ ա. — Էս դուռը բաց արա, մի մտի ընդի մեծ օթախ ա, մեջը լիքը ոսկի կիտած, դրան ձեռ չտաս, օթածի մեջտեղը մի սեղան կա, վրեն մի շամդւսն: Էդ շամդւսնը վե կեալես, դուս կգաս, թե ոսկուն ձեռ տաս՝ յա վե կալես, դուռը եղ կգա, կմնաս մեջը:

Ըրեխեն մտնում ա Էդ օթախը, նայում ա չորս դիհը՝ լիքը ոսկի, մոդանում ա սեղանին, շամդւսնը վեղ ա կալըմ, էի մտիկ անըմ չորս դիհը, ասըմ ա. «Քա մարդ, էսդադա՝ ոսկու կշտիցը դուս գա, վեր չունի»: Ընե սիե ա անըմ մի բուռը վեր ունում թե չէ՝ դուռը փակվում ա, ինքը մընըմ ա միջումը: Են մառըմ են դրսի կոնիցը տենըմ ա, ասըմ ա. «Շան որդին թամախ արավ, ոսկին վե կալավ, դուռը փակվեց»: Ումուռը կտրում ա, թողնում ա, գընըմ: Էդ ա, դա մնաց ըտի՝ Էդ տղեն մի օր, էրկու օր որ մնում ա ըտի, ասըմ ա. «Իսի՞ չեմ ես իմ արաբներին ասըմ, ինձ դուս տանեն ըստիան»: Սվիստոկը փչում ա, արաբնին դուս են գալի: «Չը՞ տղա, ի՞նչ կա, աշխարհը շինենք, թե քանդենք»: Ասըմ ա. «Ոչ շինեցեք, ոչ քանդեցեք, ինձ ըստիան դուս հանեցեք»: Ասըմ են. «Քնի, ըռավորը վե կկենաս, կտենաս լուս աշխարհումն ես»: Ոսկըն լցնում ա ջեբերը, հույս ունի որ դուս տի գալ, քընըմ: Ըռավորը վեր ա կենըմ, տենըմ ա լիս աշխարհում ա: Ոտով ճամբա ա ընգըմ, գալի:

Շատ ա գալի, քիչ ա գալի, մթնում ա, մի տեղ նստում ա ու ասում ա. «Տենամ, էս շամդանի հունարն ինչ ա, որ էն մարդը ինձ տարավ սրա քյալագին բերուց»: Շամդանի կոթը պտտում ա, շամդանը վառվում ա, չըրադվան ա դառնըմ, դոա միջից հագած-կապած ժողովուրդ ա, որ դուս են գալի, երա-ժիշտները նվագում են, դրանք էլ պար են գալի: Կոթը եդ ա պտտում, բոլորն անհետանում են: Ասըմ ա. «էս էլ լավ ա, մեզ պետք կգա»:

Վեր ա կենըմ սվիստոկը տալիս ա, արաբ-նին դուս են գալի թե. «Ի՞նչ կա տղա, աշխարհը քանդենք, թե շինենք»: Ասըմ ա. «Ոչ շինեք, ոչ էլ քանդեք, ինձ հասցրեք իմ մոր ու ախպոր կուշտը»: Ասըմ են. «Քնի, ըռավիդը վի կկենաս, մորդ ու ախպորդ կշտին կըլես»: Դեռ ինքը քնած, մերը ըռավորը վիր ա կենըմ, տենըմ ա՝ տղեն հրեն տանը քնած ա: Ուրախանըմ ա, տղին վիր ա կացնըմ, սա պատմում ա գլխի էկածը, շամդանը շանց ա տալի, կոթն ըլորում ա, տուներ լցվում ա նվագողներով ու պարող-ներով, էլ եդ կոթն ըլորում ա՝ ոչ ոք չկա: Մերը զարմանում ա, ասըմ ա. — Դե որ էդ շամդանն ու սվիստոկը էդ դադա հունար ունեն, իմ ոտներն հրե իմ ախպերակնանոց մոտն ա, թող բերեն, կացենն իրանց տեղը:

Տղեն վռազ սվիստոկը տալիս ա, արաբնին դուս են գալի. «Չը՞ տղա, աշխարհը շինենք, թե քանդենք»: Ասըմ ա. «Ոչ շինեցեք, ոչ էլ քանդեցեք, իմ մոր ոտները հրե իրա ախպերակնոջ մոտն ա, գնացեք, բերեք, իրանց տեղումը դրեք, սաղացրեք»: Ասըմ են. «Քնեցեք, ըռավիդը վեր կեննաք, կտենաք ոտները սաղ ա»: Պառկում են, քընըմ, ըռավորը վիր են կենըմ, տենըմ են իրանց մերը հրե ոտի ա էլել, ման ա գալի:

Թագավորի աղջիկ ա, թագավորի էլ կնիկ ա: Գիղի որ կոիվր պոծել ա, գորքը եդ դի գնա իրանց տները: Տղին ասըմ ա. — Սվիստոկը տու, արաբներին կանչի, ասա՝ էս ծովի վրա մի կարմունջ գծեն, որ գորքը գա, անց կենա էս յանովր:

Տղեն սվիստոկը տալիս ա, արաբները դուս են գալի, ասըմ են. «Չը՞ տղա, աշխարհը քանդենք, թե շինենք»: Ասըմ ա. «Ոչ քանդեք, ոչ շինեք, մի կարմունջ գծեք էս ծովը վրովր, որ կովից եկող գորքը գա, անց կենա»: Ասըմ են. «Քնեք, վի կացեք, պատրաստ կըլի»:

Ըռավիդը վեր են կենըմ, տենըմ են տաս-ներկու արշին լեռնոթյան մի կարմունջ ա գծած ծովի վրովր, նիե մի կարմունջ, որ չուտես, չիսես, մտիկ անես: Ձորքը գալիս ա դեմ առնըմ կարմնջին. այ տա, էրա՞ գ ա, ի՞նչ բան ա, սիե բան չկար: Էս եր շինեցին: Աղաք-աղաք իրեք ծիավոր են գալի, մինը թագավորի տղեն ա, են մեկեկները էդ կնգա ախպրտինքը: Էդ կնիկը տղերքին դարգում ա, ասըմ ա. — Տղա ջան, գնացեք կարմնջի ծերունը կաղնեցեք, են ըղաքի էկող իրեք զինվորին ասեք, որ մերըս ձեզ դոնախ ա կանչըմ:

Ըրեխեքը գընըմ, են կանգնում են կարմնջին, ծիավորները անց են կենըմ, մոտանըմ են դրանց, ասըմ են. — Մեր մերը ձեզ դոնախ ա կանչըմ:

Ասըմ են. — Թե գնանք ոչ, կասի մարթատեղ չդուց, ավիլի լավ ա գնանք:

Ձորքին հանգիստ են տալի, իրանք մտնում են տուն:

Կնիկը սեղան ա գծում, թեփշները դընըմ ա աղաքնին, ասըմ ա թագավորի տղին. — Կերեք ոնց որ քո տան հացը, — ախպրտանցն էլ թե. — Կերեք ոնց որ ձեր քվիր հացը:

Արանք գդալնին վեր են դընըմ, ասըմ են. — Աինջի չբացատրես քու ասածը, մենք բանի ձեռ չենք տա, բացատրի քու ասածը:

Ինչ անըմ ա, րանի ձեռ չեն տալի, ճարը կտրած ասըմ ա. — Որովհետև քո կնիկն են, ձեր էլ քիրն են:

Մարդը զարմանըմ ա: Իմ կնիկը ոտներ չուներ: Ախպրտինքն էլ ըտի են զարմանըմ. — Չէ որ մեր քիրը ոտն ուներ:

Ասըմ ա. — Ոչ դուք զարմացեք, ախպրտինք, որ ես ոտ չեմ ունեցել, ոչ էլ դու զարմացի, այ մարդ, որ ես ոտ ունեմ: Դուք էլ

էք ճիշտ, ախպրտիմք, դու էլ ես ճիշտ, այ մարդ:

Էդ աղջիկը պատմում ա իրա գլխի էկածը: Զորքին ճամբու եմ գծում, թագավորի տղեն ա, ախպրտիմքը մնում եմ ըստի: Կնիկը տղին ասըմ ա. — Սվիստոկը տու, արաբներին կանչի, ասա թող մի պալատ կաղնացնեն թագավորի պալատի դեմը, որ շողքը գցի վրեն, թագավորն էլ տենա, զարմանա:

Տղեն սվիստոկը տալիս ա, արաբները դուս եմ գա. — «Յը՞, այ տղա, աշխարհը շինենք, թե քանդենք»: «Ոչ շինեք, ոչ քանդեք, մի պալատ կաղնացրեք մեր պապի պալատների ըղաքին, որ շողքը գցի թագավորական պալատի վրեն»: Ասըմ եմ. «Քնեք, վե կացեք, պատրաստ կըլի»:

Ըռավողը թագավորը տեղումը աչքը բաց ա անըմ, տենըմ ա մի մենձ պալատ՝ արևի առաջն առել ա, շողքը գցել իրա օթախների վրեն: Վեր ա կինըմ, մայրըմ ա, մայրըմ, աչքերին հավատում չի, հագնըմ ա, դուս ա գալի բախչեն: Դուս ա գալի բախչեն, մոտանում ա հավուգին, տենըմ ա ըղաքի պալատի դարվագից դուս էկան իրա տղեն, հարսը, ըրեխեքը, երկու էլ սղամարդ: Բայց հարսը երմի իրա ոտներովմ ա, սաղացել ա: Զարմանում ա: Թագավորի տղեն մոդանում ա, հորը բարև ա տալի, ասըմ ա. — Այ հեր, մի զարմանա, էս քու հարսը, էս էլ քու թոռները, հալալ դամաթը որ ծովն էլ գծես՝ եղ կգա:

Յերը հարսին, թոռներին տենըմ ա, ուրախնըմ ա, ասըմ ա. — Բա էս մարդիկ ո՞վ են:

Տղեն ասըմ ա. — Սըանք էլ իմ եաղսի ախպրտիմքն են:

Յենց ըստի, հավուգի դրադին նստոտում են, թագավորին պատմում էդ աղջկա գլխի էկածը, որոշում են էթան հաղսի հոր թագավորության հողը, տղերանց տուն, նրանց կնանոց կիւտը, որ դըանք տենան, սիրտները ճաքի: Յամա դըանց սիրտը քար ա, կճաքի՞: Գալիս են տուն, տղերքը իրանց կնանոց ամոթանք են տալի, բերում են երկիւսին էլ կապում են դաթրի պոչից, րաց թողնում:

Թագավորը, տղերքը թագա հրսանիք են անըմ, շամդանը բաց են անըմ, պալատը լցվում ա ուրախութենով: Սվիստոկը տալիս են, արաբնին դուս են գալի, ծառայում են հարսանքավորին:

Ուտում են, խմում, քեփ անում, նորմանց դառնըմ են բախտավոր խնամիներ: Նրանք հասան իրանց մուրագին, դուք էլ հասնեք ձեր մուրագին:

Ասսանից իբեք խնձոր վեր էկավ, մեկն՝ ասողին, մեկը՝ լսողին, էն միմն էլ՝ ալամ աշխարհին:

5. ՉԻՆՄԱՆՉԻՆ ԹԱԳԱՎՈՐԻ ՄԱՋԻԿԸ

Մի քասիբ կնիկ ա ըլըմ, մի տղա էրեխա ա ունենըմ, ուզվորութին ա անըմ սրանից-նրանից, իրա ու տղի գլուխը պահըմ ա: Մի վաճառական մարդ տենըմ ա էդ տղին, մորն ասըմ ա. — Մմո՞թ չի ուզվորութին ես անըմ, տղեղ եքա մարդ ա, թո մի տեղ աշխատի, համ քեզ կպահի, համ իրան:

Կնիկն ասըմ ա. — Էս քյորփեն ինչ տի աշխատի, որ մենք էլ ապրենք:

Մարդն ասըմ ա. — Տղիդ տուր, տանեմ իմ տանը պահեմ, աշխատցնեմ, իրան կպահեմ, երեսուն մանեթ էլ փող կտամ, դրանով էլ դու կապրես:

Կնիկն ասըմ ա. — Տար:

Վաճառականն էդ տղին տանըմ ա տուն, ինքը դընըմ ա մի եզն առնըմ, եզան պոզեղուն թոկը դընըմ ա, տալի էդ տղին, ասըմ ա՝ դե քաշի, ինքը ծիով եղնուց գնում ա: Տանըմ ա Քոշաքարի կշտին եզը վեր ա դընըմ, մորթըմ, միսը հանըմ, էդ տղին կաշվի միջին պահըմ: Մի դուշ գալիս ա էդ կաշին վեր ա ունում, տանըմ ա էդ սարի գլուխը: Տղեն կարը քանդըմ ա, դուս գալի, որ սարի գլխին ա, ասըմ ա. — Ա խագեին, ինձ բերիր ըստի թող աղիր, ճամբա չկա, ես ի՞նչ տի անեմ, ընձի ըստից տար:

— Յա, — ասըմ ա, — էդ քարերիցը թու արա, քարերիցը թու արա, քեզ էլ ըղից կհանեմ:

Սարի գլխին էլ անգին քար ա, մարմար քար ա: էդ քարերիցը թու ա անըմ, ենքան, որ իրա դուրգյարը թմամու՛մ ա, ասըմ ա. – Հերիք ա, հերիք:

Տղեն ասըմ ա. – Աղա ջան, դե ինձ էլ տար ըստիան:

Ասըմ ա. – Քեզ տանելու հնար կա՞, որ տանեն, գնա, – ասըմ ա, – քեզ պես շատերին եմ բերել, ըստ թող արել:

Ասըմ ա, ինքը իրան բեռը բարձըմ ա, գալի:

Խարարը տանք էդ տղիցը: Դես ա պտտվում, դեն ա պտտվում, ճամբա չի անըմ որ գւ, մի տեղ տենըմ ա մի դուռը կա, էդ դուռը բաց ա անըմ, նի մտնում, տենըմ ա թոնիրը դրած իրեք բաժին էփած ճաշ, ինքն էլ սոված տղա, ասըմ ա. «Ի՞նչ անեն, սրանք տեր կունենան, թե մնի թաժինն ուտում եմ՝ վայ թե գան, ինձ սպանեն, ուտեմ ոչ՝ սոված եմ, ի՞նչ անեն»: Ասըմ ա. «Բերեն իրեքից էլ մի գդալ ուտեմ հավասար, որ մաշուր չանի: Ես մի քիչ նութ կընգնեմ, իրանք էլ կգան իրանց բաժինն կուտեն»: Աին էլ տենըմ ա օքմի ա գալի: Գընըմ ա տապ անըմ, դուռը թաց ա ըլըմ, իրեք դուռ եմ ներս գալի, բմբլե շորերը հանըմ են, դառնըմ աղջկերք, բաժընին քաշըմ են աղաքները ուտելու, մինն ասըմ ա. – Ա քիր, իմ թաժնիցը մըրթմըրթահուտ ա գալի, ոնց որ օքմի կերած ըլի:

Կասկածավորում են, են մինն էլ ա ասըմ, իրեքն էլ գլխի են ընգնըմ, որ օքմի ա կերել իրանց փայիցը:

– Ո՞վ ես, ի՞նչ քինս ես, դուս արի, թե որ մենք գդանք՝ մեծ թիքեղ անգաճղ ենք թողալու:

Տղեն միտ ա անըմ. «Մին ա գդնել դեն, լավն են ա իմ կամքով դուս գամ»: Դուս ա գալի, ասըմ ա. – Ա՛յ քվորտինք, ես եմ կերե:

Թե. – Բա ախպեր ջան, բա խի՞ ես տապ արե:

Ասըմ ա. – Վախեի, ասեի, ո՞վ գիդի ինչ տեսակ միլլեթնի ըլեն, դրա հմա տապ արի:

– Դե արի, ախպեր ջան, դու կըլնես մեզ ախպեր, մենք էլ կըլենք քու քվերքը, մենք կեթանք, կաշխատենք, դու էլ կուտես, ըստի կապրես:

Մի օր, երկու օր գընըմ են ֆորս անըմ, բերըմ, դրան էլ ըստի պահըմ: Տղեն մլորում ա, տխրում ա, քվորտինքը հարցընըմ են. – Խի՞ ես տխրում:

Ասըմ ա. – Բա ի՞նչ անեն, դուք գընըմ եք ֆորսի ման գալի, ես մնում եմ տանը մենակ:

Ասըմ են. – Տենըմ ես էս շորերը, ախպեր ջան, մենք էս շորերով ենք թև առնըմ, թռչում, դու էս շորերիցն ունե՞ս, որ մեզ հետ գաս: Դու ըստի կաց:

Քվորտանց մինն ասըմ ա. – Աղջի, բերեք բաղի բլանիքը տանք իրան, էթա ցերեկը թաղի միջին ման գա, օրն անց կենա:

Անկել օրը տղեն գընըմ ա բաղումը ման գալի, տենըմ ա, որ էն կեանը մի բաղ էլ կա: Ըրիգումը աղջկերքը գալիս են, տենըմ են էլի տխուր, տանը մտած ա: Ասըմ են. – Էդ խի՞ ես տխուր, էսօր գնացիր բաղը ման էկար:

Ասըմ ա. – Հա, մի բաղի բլանիքը տալիս էք, մնինը տալիս չէք, խի՞ չէք էն մինն էլ տալի:

Ասըմ են. – Ախպեր ջան, ոնց որ մենք ենք իրեք քիր, ընենց էլ մեր բիճու աղջկերքն են իրեք քիր, մի բաղը մերն ա, էն մինն էլ նրանցն ա:

Էն մի քիրն ասըմ ա. – Աղջի, բերեք են մնի բնալիքն էլ տանք, գնա ընդի էլ ման գա:

Էքսի օրը տղեն գընըմ ա, ի՞նչ տենա, բաղը նրանցն ա, սրանց բաղն ի՞նչ ա, անմահական ջրով հավուզը, միջին չայիր-չիման, օր իջած վախտը տենըմ ա, հրես իրեք թևավոր դշեր էկան, վեր էկան, շորահան էլան, աղջկերք դուռան, մտան հավուզի մեջը, լղանըմ են: Տղեն գնաց պուճուրը քվոր շորերը պահեց, դրանք էլ լղանեին, ջրի միջին գլխի չեւան, դուս էկան, են երկու քիրն իրանց շորերը հաքան, պուճուրի շորերը կա ոչ, նրանք թռան, գնացին, պուճուրը թե. – Ո՞վ ես, ի՞նչ քինս ես, շռերս տուր:

Տղեն դուս ա գալի, կայնըմ ա աղաքը, ասըմ ա. – Ես եմ, ինս եմ, քինս եմ, տալիս չեմ:

Ասի շորերը տալիս ա, որ տկլոր չմնա, թռչունի շորերը տալիս չի, բերըմ ա տուն: Աղջկերքը ըրիգումը գալիս են, տենըմ են

իրանց բիծու աղջկան տղեն հետը բերել և
իրանց տուն:

Ասըմ են. — Ախպեր ջան սիւս ես արե, լաւ
ես արել, քեզ հետ զըրըցահընգեր կըլի:

Ուրախանըմ են, տղեն մլորիլ չի:

Տղեն եղ աղջկանը կըն և առնըմ, վըրա
երկըրոր տարին էրկել ըրեխա և ունենում:
Շատ են կենըմ, քիչ են կենըմ, տղեն ասըմ և. —
Այ քվորտինք, ինձ մի ճամբա շանց տվեք, ես
էթամ, իմ մերը մեղք և, էսքան տարի
բացակայել եմ, պահող չունի, հեսա կնիկ էլ
ունեն, էրեխա էլ ունեն, էթամ մորս կեւշտը:

Աղջկեքը դրանց ճամբա են շանց տալի,
զընըմ են տուն հասնըմ: Մերը տղին, հաբսին,
թոռներին տենըմ և՛ ուրախանըմ և, տղեն
պատմում և, թե աղեն իրան գլխին ինչ օյին
խաղաց, ինքը ռնց էս աղջկանը գդավ, առավ:

Ասըմ և. — Աերա, էս աղջկա բըմբըլե
շորերը դուքով տալիս եմ քեզ, բլանիքը ճանգը
չգցես, թե բլանիքը ճանգն ընգավ, հաքնիլ տի,
փախչի:

Տղեն էթում և մի լուծ եզն և առնըմ,
ըսկսում և վար ու ցանք անիլը, տունը պահի:
Օրերից մի օր, տղեն մի բիծու աղջիկ և
ունենըմ, գալիս և զրից և անըմ հարսի հետ,
մերը քնած և ըլըմ, տենըմ և հարսը մլորած,
տխուր և, ասըմ և. — Հարս ջան, եղ խի՞ և
քեփդ իարար:

Ասըմ և. — Ինչ անեն, որ խարաք չըլի,
բիծուդ տղեն շոբերս դրել և գանդուկը,
բլանիքը տալիս չի, որ հանեն, հաքնեն, տկլոր
են նըստում, վե կենըմ:

— Բա ի՞նչ և արե բլանիքը:

— Հրե մորը թումբանի միջին:

Եղ աղջիկը զընըմ և բլանիքը հանըմ և,
բերըմ, տալի հարսին: Հարսը գանդուկը բաց
և անըմ, շորերը հաքնըմ և, մի ճիպոտ էլ կա
գանդուկումը, ճիպոտը խըփըմ և, ինքը դառ-
նում և հրեղեն ձի, ըրեխանցը շինում քուռակ,
թև և առնըմ, թոչում: Խրիյրնջոցից մերը վեր և
կենըմ, հարսն ասըմ և. — Տղեդ որ գա, կասես
Չինմանչինու քաղաքումն եմ, թե տղա և՛ թուր
գա ինձ գղնի: Ես գնացի:

Ըրիգունը տղեն գալիս և, տենըմ և կնիկը
չկա:

— Այ մեր, ու՞ր և հարսը:

Մերը վախըմ և որ ասի, համա ճարը ի՞նչ,
ասըմ և. — Տղա ջան, ասսանից պահեն, քեզա-
նից ինչ պահեն, սիւս, սիւս, մբափը թափել էր
վոես, բիծուդ աղջիկը բլանիքը հանել և, տվել
և կնգանըդ, նա էլ գանդուկը բաց և արե,
շորերը հագե, թև առե թռե, ըրեխանցն էլ թև
տվուց, ասավ՝ Ես Չինմանչինու քաղաքումն
եմ, մարդիս ասա, թե տղա և՛ թուր գա ինձ
գտնի:

— Է՛, այ մերա, էս ի՞նչ բեբիր իմ գլխին, ես
գնացի:

Իրանց մի թայ եզը վեր և ունըմ, քըշըմ
տանըմ և են սարի տակը, որդի աղեն եզը
մորթեց, եզը մորթում և, ինքը մտնըմ և կաշվո
մեջը, դուշը գալիս և իրան հանըմ և սարի
գլուխը: Տղեն տեղին ծանոթ և, զընըմ և
քվորտանց տուն: Քվորտինքը ըրիգունը գալիս
են. — Այ ախպեր, էս ի՞նչ իարար և:

Թե. — Բա ասել չեք, բիծուդ աղջիկը գլխիս
սիւս, սիւս օյին և բերե, ըրեխանցն էլ վեր և
կալել, թռել: Ասել և՛ Չինմանչինու քաղաքումն
եմ, թե տղա և՛ թուր գա գղնի: Ինձ մի ճամփա
շանց տվեք, ես գնամ Չինմանչինու քաղաքը
գղնեն, իբան ու ըրեխեքիս եղ բերեն:

Քվորտինքը իրեք մատանի են տալի, ասըմ
են. — Այ ախպեր, սիւս կեթաս, շատ կեթաս, քիչ
կեթաս, մի մարդ կպտահի: Ատանին շանց
կտաս: Նա քեզ ճամփա շանց կտա, կեթաս,
եղև մի ջաղացի կեասնես, ջաղացպանին էն
մեկել մատանին շանց կտաս, նա էլ քեզ
ճամբա շանց կտա: Կեթաս, մի քիչ էլ որ էթաս,
մի հլեվոր ռաստ կգա, դրան էլ երբորդ
մատանին շանց կտաս, նա քեզ դուզ շանց
կտա ճամբեն, կեթաս, կեասնես Չինմանչինու
քաղաքը:

Տղեն քվորտանցից շնորհակալ և ըլըմ,
մատանիքները վեր և ունըմ, Չինմանչին քա-
ղաք ո՞րդի ես, էկա ասելով ճամբա և ընգնում:
Շատ և զընըմ, քիչ և զընըմ, իրեք սահմանն էլ
անց և կենըմ, տենըմ և իրեք ջանավար ինչք

են բաժանում, հենց որ տղին տենում են, ասում են. — «Հրե իսամողլին էկավ, սա արդար կբաժանի»:

— Ի՞նչ եք բաժանում:

Թե. — Մի խալիչա, մի փափախ, մի սուփրա, մի ճիպոտ:

Ասում ա. — Հունարնին ասեք՝ բաժանեմ:

Ասում են. — Փափախը, որ դնես գլխիդ, օչ ով քեզ տենալ չի, խալիչի հունարն են ա, որ վրան նստիս ու ճիպոտով տաս, ասես, խալիչա ջան, ես քեզ կուզեմ Չինմանչինու քաղաքի դրադին, աչքըդ իսկես, բացես՝ ընդեդ ես: Սուփրին ասես սուփրա ջան, բաց ըլի, բաց կըլի. ուտելիք, ինչ սիրտդ ուզի՝ վրեն կըլի:

Տղեն ասում ա. — Վազեք, եդ դառեք, որըդ քեզ հետ գա՛ խալիչեն նրանն ա:

Հլե գընում են, հեռանում թե չէ՝ դա փոստալը գլխին ա դընում, խալիչին նստում, ճիպոտով տալի. — Խալիչա ջան, ես քեզ կուզեմ Չինմանչինու քաղաքի դրադին: Մին էլ աչքը բաց ա անում, Չինմանչինու քաղաքի դրադին ա: Չինմանչինի քաղաքի չորս կուռը պարիսպնի քաշած ա, մի դուռ ունի մտնելու: Մի գել ա դռանը կապած, մի դոչ, մի խորոմ խոտը գելի աղաքին ա դրած, մի դմակ էլ՝ դոչի: Մսում ա. «Էս ինչ անիրավ աշխարհի ա, դմակը դռել են դոչի ըղաքին, խոտը տարել են գլխի ըղաքին դրել»: Դմակը վեր ա ունում, գծում գելին, խոտը դընում դոչի ըղաքին: Գընում ա քաղաքը պըտըտում ա, տենում ա՝ հրե էրեխեքը կոթի են խաղում: Մսում ա. — Ըրեխեք, ձեր քաղաքումը ինչ կա, ինչ չկա:

Ըրեխեքը թե. — Մեր թագավորի պուճուր՝ աղջիկը գնացել ա մի իսամողլու ուզել, էրկու էրեխա հետը եդ ա էկնլ, հերը տարել ա մի տան գծել:

— Էդ տունը որդի՞ ա:

Շանց են տալի թե. — Էն տունն ա:

Խալիչին նստում ա, փոստալը դրնում ա, ասում ա. — «Խալիչա ջան, ես քեզ կուզեմ են տանը, որդի կնիկս ու ըրեխեքս են»: Խալիչեն վրազ հասցընում ա: Գընում, տենում ա կնիկը քնած, ըրեխեքը զարթուն են: Փոստալը վեր ա

ուռնում, ըրեխեքը տենում են, որ իրանց հերն ա, ուզում են մորը ձեն տան, վե կացնեն, ասում ա.

— Սուս արեք, սուս արեք, թող արեք, թող քնի:

Ըրեխանցը հարցընում ա՝ թե. — Դուք ի՞նչ էք ուտում, որ ձեզ բերել են ըստի պատժել, ո՞վ ա ձեզ հաց տալի:

Մսում են. — Ըրիգունը տատըս մի հաց ա բերում, մի բաժին ճաշ: Մերս հացն ուտում ա, ճաշը մեզ տալի, յա ճաշն ա ուտում, հացը մեզ տալի:

Ըրեխեքը մորը վեր են կացնում, էդ մարդը վրազ փոստալը քաշում ա գլխին: Ըրեխեքն ասում են. — Վե կաց, մեր հերը էկել ա:

Հավատում չի, հալրաթ, ասում ա, մտքներովն ա ընգե: Մարդը տենում ա ըրեխանցը հվատում չի, փոստալը գլխից վեր ա ունում, կնիկը տենում ա՝ շիդակ մարթն ա: — Էս ի՞նչ օր-րաթ րեհիր իմ գլուխը:

Թե. — Մսիլ մի:

Մարդը սուփրեն բաց ա անում, ինքը, կնիկը, ըրեխեքը ուտում են, լիանում են, մարդն ասում ա կնգանը. — Որ ըրիգունը գա մերըդ, ես ըրեխեքը չեմ ըլի, դու իրան կասես, որ մինչև երր տենք ըստի թուշ ըլիլ, իմ մարդը որ գա, հերս կտա՞ մեզ, եդ տանի: Մորըդ միտքը կիմանաս:

Ըրիգունը որ մերը գլխիս ա, մարդը փոստալը գլխին ա ըլում, տենում չի, աղջիկն ասում ա. — Մերա, որ մարդս գա, հերս կթողա մեզ տանի, թե չէ, մնչի երր տի էս տանը մեզ թուշ անի:

— Եսիմ ի՞նչ կասի:

Տղեն համրերում չի, փոստանը վեր ա ունում, ասում ա. — Մերա ջան, ես եմ փեսեդ, էկել եմ, թագավորին ասա, տենանք ինչ ա ասում:

Կնիկը գընում ա թագավորին ասում ա, թագավորը տղին կանչում ա: Մերը եդ ա գալի փեսին սվորցընում ա, թե. — Սիե, սիե, բարև կտաս, չէ որ դրանք ուրիշ ազգ են, կասես՝ էկել եմ կնգաս, ըրեխանցըս եղմիցը, ինչ կասի, գիղեմ ոչ:

Տղեն գընում ա թագավորին բարև տալի,

ասըն ա. — Էկել եմ կնգաս ու ըրեխանցս եղնիցը:

Թագավորը հարց ա տալի, թե. — Ո՞նց տիրացար իմ աղջկանը:

Տղեն ոնց ըլել ա պատմում ա, ասըն ա. — Գնացի բաղը, տեհա աղջկերքն էկան վեր էկան, թւերը վեր առան, ես շորերը վե կալա պահեցի, քվորսիւնքը հագան գնացին, ինքը մնաց, շորերը տվի ոչ, առաւ, երկու ըրեխա էլ ունեցա:

Թագավորն ուզում ա ջաննաթ կանչի, որ տղի գլուխը տա, սա փոստալը դընըն ա գլիին, եդ ա գալի, նըստըն ա իյալիչին, կնգանը, ըրեխանցը ճիպոտով տալի: Կնգանը մի հրեղեն ծի, ըրեխանցը քուռակներ շինում ա, հայդա: Թագավորը իմանում ա, իրա տղին գծում ա եղնեն, ինքն էլ եետը գալիս են: Թագավորն էն ա ուզում ա հասնի քուռակներին, էդ մարդը եդ ա դառնըն, ճիպոտով տալիս ա թագավորի տղին, քար շինըն, թագավորը եդ-նուց գալիս ա, հասնըն ա եդնուցը: Հենց որ տեդ են հասնըն, մարդը փոստալը հանըն ա, թագավորն ասըն ա. — Դու քո աղածն արեցիր, գոնյա արի տղիս դիակը շանց տուր, տանեմ հողավորեմ:

Ասըն ա. — Թագավորն ապրած կենա, ես կգամ քու տղին կսաղացնեմ, քեզ կտամ, համա քու արածն էլ արած չէր:

Թագավորը մեղա ա գալի:

Տղեն ու թագավորը նստում են իյալիչի վոեն, գալի տղի կուշտը, ճիպոտով տալիս ա, տղեն սըղանըն ա, ոտի ա կայնըն, փեսի հետ պռոշտի անըն, թե որ դու էդքան հունարով տղա ես, ըսօրից եդը մեր փեսեն ես: Թագավորն էլ ա փեսի եետ պռոշտի անըն, ճամբու ա դընըն, ասըն ա. — Սրանից եդը կնգանդ, ըրեխեքիդ հետ մեր գլիի, աչքի վոա տեդ ունես:

Տղեն գալիս ա, հասնըն ա իրա կնգանը ու ըրեխեքին, աղջիկն էլ դալաթ ա արել որ թոչունի շորը հագնի: Աարդի հետ իյալիչին նստում ա, գալիս են իրանց երգիրը, կարոտն առնըն ա, եդ ա գալի: Երջանիկ ապրըն են,

ցրանք հասան իրանց մուրագին, դուք էլ հասնեք ձեր մուրագին:

6. ԱՉՔԵՐԸ ՀԱՆՍԾ ԱՂՔԻԿԸ

Ըլըն ա չի ըլըն մի վաճառական ա ըլըն, դա մի հուրի մալաք կնիկ ա ունենում, համա ըրեխա չի ունենըն: Որոշում ա գնա հաջի, որ աստված իրան զավակ տա, բերըն ա տան դոնեըն փագըն, կտրովը մի ծակ թողում, դուռն ու նաըղըվանին քանդըն, որ կնգա կուշտը մարդ չգնա: Հենց էդ մարդը ճամբա ա ընգը-նըն, կնիկը պատճառավորվում ա: Ես մաըղը շատ ա գընըն, քիչ ա գընըն, ռեզարըն ա: Բանձրանում ա մի տան կտրի, ասում ա. «Քնեն, դինջանամ, լուսածեգին ճամբես շա-րունակեմ»: Գլուխը դընըն ա գեղնին, լսում ա, որ նեքսից իրա մասին են խոսում, մեկն ասըն ա. «Լսե՞լ եք, որ ֆլան վաճառականը գնացել ա հաջի, կնգանը մենակ թող արել տանը»: Մե-կելը թե. «Էկեք գնանք կնգանը փախցնենք»: Մարդը մոտանում ա հերթիկըն, ներս ա նայըն, տենըն ա տանը լիքը դաչադնի, քառասուն մարդ: Ես մարդը իմանում չի ինչ անի, ասըն ա. «Թե եդ դառնամ գնամ, ես ինչ տի անեմ սրանց, գնամ ոչ բա՞ որ կնգանս տանեն»: Էլ եդ ասըն ա. «Չէ, թե իմ հաջի գնալու զորութին կա, սրանք կարալ չեն իմ կնգանը փախցընեն»:

Էդ մարդը թո էթա իրան ճամբեն, են քառասուն հարամին էլ ծիանը նստեն, էթան իրանց ճամբեն:

Քառասուն հարամին գալիս են մարդի դռանը վեր գալի, ծիանը կապում, մնին դարա-վաշ կաղնացնում, իրանք դես են պտտվում, դին են պտտվում, դուռը չկա: Ասըն են. «Անպայման գլխովը տեդ կուցենա մտնելու, ընդովը պտի մտնենք»: Էրկաթ-մերկաթ հավաքում են, էդ պատին տալով, տալով վեր ըլըն գլուխը: Կնիկ. որ լըսըն ա շխկոց ա գալի, ասըն ա՝ օքմի ա գալի: Կենդ ու կնիկ, թուրը վեր ա ունում, դվեր րարձրանում ա, ճամրի ըղաքին կաղնըն ա, հարամիներից

մինը գլուխը պալա ա անըմ, որ տենա ինչ կա, ինչ չկա, որ վեր գա, տալիս ա գլուխը թոցընըմ, են մինն էլ, են մինն էլ երեսունհինգի գլուխն էլ կտրում ա: Սընըմ ա ծիաննի կշտինը, ասըմ ա. — «Էս ի՞նչ բան ա, էսքան մարդ գնաց, դուս չէկան հլա գնամ, տենամ ի՞նչ ըլավ»: Սա էլ ա բանծրանըմ վախվրիսելով, ծակոց մտիկ անըմ: Կնիկը գլուխը եդ ա գծում, ասըմ ա. «Աստոծ, էս փորինս քեզ մատաղ կանեն, թե էս փործանքից ազատվեն»: Սսըմ ա, թուրը քաշըմ ա էդ հարամու մի անգաճը պոկում ա: Սա գլուխը եդ ա քաշում, ասում ա. — «Էդ ա հընգորտանցս գլուխը տվել ա»: Թողում ա, գընըմ: Տանըմ ա ծիանը ծախում, գընըմ ա հեքիմին փող ա տալի, յարեն սադացնում ա, մընըմ ա մի անգաճանի:

Խաբարը տանք հաջի գնացող վաճառականից: Քառասուն օրը թմամում ա, գալիս ա: Մինչի դրա գալը կնիկն էդ ջանդաքնին դեն ա թափում, կըրսընըմ, մարդը զատ չի մաշուր անըմ: Սարգն էլ միամիտ. գիդի ոչ, բան էլ հարցընըմ չի: Գալիս ա, նարդիվանը սարքում, դուռը բաց անըմ, որ ժողովուրդը գնալ տի, դրա հառքի ուխտը շնորհավորի: Ժողովուրդը ամենքը մի փեշքաշ բան են առնըմ գալի: Քյառեն, անգաճ կտրածը, ասըմ ա. «Հմի մոմենտն ա, իմ երեսունհինգը հնգորտանցը գլուխը տվուց, ես պետք ա գնամ էդ կնգանը տանեն»: Մի գլուխ շաքար ա առնըմ, գընըմ ա: Էդ տանը ուտում են, խմում են, ժողովուրդը ցըրվում ա, էդ քյառեն գընըմ չի, կնիկը գլխի ա ընգընըմ, որ էս են քյառեն ա, մարդին ասըմ ա. — Սյ մարդ, դէ էդ մարդին ասա, թող գնա իրան հմա նախատուն ունենա, րան կունենա, մի տեղ կունենա գնա քնի, մենք քնենք:

Մարդն ասըմ ա. — Այ կնիկ, ամոթ ա, րալքի անադաթում դարիք մարդ ա, տեղ գծի, թող քնի:

Սսըմ ա. — Չէ, թող գնա, էս քաղքընը հըլբաթ մի տեղ կըլի որ կենա:

Մարդը տեղ ա գծել տալի:

Կնիկն ասըմ ա. — Դու գիդես՝ համա կփոշմանես:

Տեղ են գծում, քյառեն իրան հմար ա քնում, դրանք էլ մարդ ու կնիկ՝ իրար կշտի: Քշերվա մի վախտը քյառեն վեր ա կենըմ, գալի էդ կնգանը վեր ա կացնըմ, ասըմ ա. — Վե կաց, սուս արա, թե չէ վիզըդ կտրում են:

Թե խոսում ա՝ վեզը կտրել տի, ասըմ ա. «Աուս կանեն, բալքա խելոքութենով ազատվեն»: Սսըմ ա. — Վեր են կենըմ:

Շորերը հաքնըմ ա, դուս գալի: Քառասուն ոտ նարդըվան ա մինչև տակը, ասլան դափլանին տակին կապած, քսան ոտ նարդըվան որ ցած են գալի, ինքը աղաքի գնալիս ա ըլըմ, քյառեն եդնուցը, ասըմ ա. — Տենըմ ես, որ կարըմ չեմ գնա, — պատճառավոր ա ըլըմ, փորը ըղաքից ընգած ա, — արի դու ըղաքից գնա, ես եդնուց բռնեն, վե գանք:

Հա, ադաքն ա ընգընըմ, ուրիսացել ա, տանից հանել ա, տանել պտի: Տասը ոտ նարդըվանին, որ վեր են գալի, միամըտացնըմ ա, մի ռոտ կադնըմ ա, եդնուց քացի տալի: Քյառեն ընգընըմ ա նարդիվանի տակը, ասլան-դափլանին հուպ են տալի, կուլ են տալի: Կնիկը եդ ա գալի, սուս արած տեղը մտնըմ, քընըմ: Մարդը ոչինչ էլ չի իմանըմ:

Ըռավողը վեր ա կենըմ, հաց ա սարքում, չայ ա սարքըմ: Մարդը բեգարած, անքուն մարդ ա, քնած ա: Վեր ա կննըմ, դուս ու նես ա անըմ, տենըմ ա դռնախը չկա. — Այ կնիկ, դռնախն ու՞ր ա, հաց կերե՞լ ա:

Կնիկը թե. — Հաց էլ ա կերե, չայ էլ ա խմե, գործ ունեղ, գնաց:

Օրերի մի օր էդ կնիկը պառկում ա, մի աղջիկ ա բերըմ: Աղջիկը մենծանըմ ա, դառնըմ հինգ — վեց տարեկան աղջիկ, դռներին հաղ անելիս ա ըլնըմ, մի պառավ մարդ մոդանըմ ա, ասըմ ա. — Աղջիկ ջան, գնա մորդդ ասա, խոստումըդ խի՞ չես կատարում:

Աղջինը վազ ա տալի, գալի, ասըմ ա. — Նանի, մի պառավ մարդ կա դուրսը, ասավ՝ գնա նանիդ ասա խոստումըդ ի՞նչ չի կատարում:

– Էս ի՞նչ բան ա, էս ի՞նչ ա ասում էս ըրեխեն, – ասըմ ա մարդը:

Կնիկը գլխի ա ընգընըմ, ասըմ ա. – Այ մարդ, գիդաս էդ բիծեն ինչ ա ասըմ. դու որ հաջի գնացիր, քո գնալու քշերը քառասուն հարամի էկան, երեսունիննի գլուխը կտրեցի, մնի էլ մի անգաճը պոկեցի, որ հաջատեղից էկար մտի՞դ ա, որ էն մարդը մեր տանը քնեց:

Թե. – Հա:

– Նա էլ նրանց հնգերն էր, – ասըմ ա, – քշերը վեր կացավ ինձ տաներ, ես էլ նարդի-վանի կրսումը ասի՝ դու աղաք գնա, քացի տվի, ընգավ նարդիվանի տակը, ասլան-դավ-լանին կերամ: Էդ վախտը ես ասսուն խնդիրք եմ արել, թե դրանից ազատվեմ, փռիմս մատաղ կանեմ:

Զ՞է որ մարդը տեհել էր դաչաղներին, լսել էր, որ տի գան կնգանը տանեն, ասըմ ա. – Որ դու դըմնցի ազատվել ես, ըրեխա չէ՝ ինձ էլ մատաղ խոստանայիր, ռազի կրլեի: Ես վախեի, քեզ ասեմ, դու վախես՝ թե սիե բան ա րլել: Համա տենըմ եմ դոչադ ես, էկել էլ եմ, իրանցըն էլ կերել եմ, աղջիկ ջան, գնա, գնա ասա՝ հերս ու մերս ասում եմ. «Մեր խոսքի տերն ենք, մեր խոսքն էլ կատարում ենք, ուր տանըմ ես՝ տար»:

Էդ բիծեն աղջկանը մի քիչ տանըմ ա, ասըմ ա. – Աղջիկ ջան, կաղնի, կգնաս հորն ու մորդ կասես, որ դուք ձեր խոսքի տերն եք, ձեր խոսքը կատարեցիք, գնաս՝ աղջիկ ջան, դմնիցը մտնես, կրնկներիցըդ ոսկի թափի, հունվար ամսին, որ ծիծաղես, բերնիցըդ ծաղիկ թափի, բախշում եմ, վագի քո հոր ու մոր կրլտը:

Բիծեն էդ օխմանքն էլ ա տալի, ըրեխին եդ ա դաբգում: Խոխեն գալիս ա, թմփթմփալեն տուն ա մտնում թե չէ, ոսկրն թափում ա կրնկներիցը: Հերն ու մերը փառք են տալի ասսուն, որ իրանց ըրեխուն էդ հունարովը եդ ա վեղադարծրել իբանց: Օբ օրի ըբեխեն մհնձանում ա, տուն ա մտնում թե չէ, կրնկներից ոսկր ա թափըմ, հունվարին էլ, որ ծիծաղըմ ա, բերնիցը ծաղիկ ա թափըմ: Սադ աշ-

խարին իմանում ա, որ ֆլան վաճառականը սիենց աղջիկ ունի:

Մի թագավոր գալիս ա իրան տղի հըմար ուզում: Նշան են դընըմ, ժամանակ տալի, որ ֆլան օրը կգանք մեր հարսը կտանենք: Զորքով, կարգով գալիս են հարսը տանելու: Թագավորին մի ծծներ ա ունենըմ, սա ունենըմ ա մի թոփալ աղջիկ: Դրանք էլ են հարսանքավորի հետ խնամի գալի: Ուտում – խմում, քեփ են անըմ, իրանց հարսն առնըմ են, գընըմ: Շատ են գընըմ, քիչ են գընըմ, մթնում ա, մի ծմակր միջի դինջանում են, պառավը գալիս ա նագըր-վեզիրներին ասըմ ա. – Թողեք աղջկանը տանեմ իյրատներ տամ, որ մարթու տանը իյանութեն չանի:

Աղջկանը տանըմ ա ծառերի յանը, աչքերը հանըմ ա, դընըմ իրա ջեբը, շորերը հանըմ ա, հաքցընըմ իրա թոփալ աղջկանը, սրա շորերը նըան ա հաքցընըմ, աղջկա ճտին մի հուլ էլ կա, էդ էլ հանըմ ա գցըմ իրա աղջկա ճիտը, բերըմ եդ: Հենց դիդենըմ են իղանց հարսն ա, վեր են կենըմ, գալիս են իրանց երգիրը: Համա հարսն ինչքան դուս ու աուն ա անըմ, կրնկներիցը ոսկր չի թափըմ:

Թո դրանք ճամփա պահեն, թե հարսի կրընկների տակը եբ տի ոսկր թափի, իյարարր տանք են կույր աղջկանից:

Էդ ծմակրում, որդի աղջկանը են քավթառը վեր ա գծել, մի ֆորսկան ա ըլըմ: Սա վեց աղջիկ ա ունենըմ, դրանց ֆորսի մսով ա պահելիս ըլըմ: Էդ ֆորսկանը տնից դուս ա գալի, գալիս ա, հասնըմ ա էդ ծմակր, ֆորս ռաստ չի գալի, աղջկանն ա ռաստ գալի, տենըմ ա սիրուն աղջիկ ա, նստում ա լաց րլըմ, ասըմ ա. «Ի՞նչ անեմ, թե տանե՞մ, վեց աղջիկ ունեմ, էս էլ օխտը՝ ո՞նց պահեմ, նրանց չեմ կաբըմ պահեմ, թե տանեմ ոչ, ո՞նց թողամ»: Ֆորսն էլ ռաստ չի գալի, տխուր-տրտում գալիս ա տուն, հրացանը կախրմ ա, նստում ա: Աղջկերքը գալիս են, ռտները հանըմ են, տենըմ են քեփը իյարաբ ա, ասըմ են. – Այ հեր, էդ ի՞նչ ա քեփըդ խարաբ, ի՞նչ անենք սօր ֆորս չես րերե, սոված կտորվիլ

չենք: Էգուց կբերես, սոված մնալ չենք:

Հերն ասըն ա. — Է՛ որդի, մինը գիդեք, մինը չէ:

— Ի՞նչ ա ըլել:

Թե. — Բա, սհե, սհե, մի սիրուն աղջիկ եմ տեհե, աչքերը հանած, ծնակունը վեր գցած: Նրա հմար եմ մտածում, թե խի՞ հետս ըերի ոչ:

— Այ հեր, ի՞նչ կըլեր՝ բերիլ իր, վեց քիր ենք, մինըս որ պահիլ չէր, հալբաթ եմ մինս կպահեր, մինն ու մինըս դուրս կտաներ, ներս կբերեր:

Հորը ստիպում են, թե. — Ըռավողը վե կաց, գնա բեր:

Ըռավողը եղ ֆորսկանը գընըն ա աղջկա կոնիցը բռնում ա, բերըն տուն: Տուն մտնելու քիմիցը, եղ աղջկա ոտնի տակից ոսկին թափում ա: Դուս եմ բերըն, ներս եմ տանըն, վեց քիր են, ոսկըն դիզվում ա: Աղջիկը չի տենըն, համա գիդի չէ՞, ասըն ա. — Ի՞նչ ա, ոսկը ա թափըն, որ ուրախանըն եք:

Ասըն են. — Հա:

Հարստանըն են, տուն-տեղ փոխըն, իասս շորեր առնըն, հաքնըն: Ֆորսկանը աղջկերքին մարդի ա տալի, ինքը ըավարավում ա: Սա մի ըարեգամ ա ունենըն, ըրեխա չի ունենըն, մարդ ու կնիկ են ըլըն: Ասըն ա. «Աեղք են, էս աղջկան տանեն նրանց տուն, կգբաղվեն. դուս կտանեն, տուն կիերեն, աղջկա կըրընկների տակի ոսկիվ կապրեն»:

Վեր ա ունում, տանըն: Սրանք սիրով ապրըն են, էս մարդն էլ ա հարստանըն: Ինչ աղջկա աչքերը հանել էր, եմ ջաղու պառավը, աղջկա ըրեսին ծիծաղ ըրեացել չէր: Հունվարը որ գալիս ա, սրանք մտնըն են տուն, դուռ-ակոշկա փակըն:

Օրերի մի օր էլ պառավնին՝ մարդ ու կնիկ երգ են ասըն, աղջիկն ուրախանըն ա ու որ մի հետ ծիծաղում ա, դրանք տենըն են, որ աղջկա բերանից ծաղիկ ա թափըն: Բիծեն ասըն ա. — Որդի, հլա մի հետ էլ ծիծաղի:

Ասըն ա, որ ծիծաղում են, ծաղիկ ա վե գալի՞:

Թե. — Հա:

— Դե որ ծաղիկ ա վե գալի, փունջ արա, քթոցնին դի, իշու վոա դիր, տար ման ածա, ասա՛ ծաղիկ եմ ծախըն, աչքով եմ տալի: Ով քեզ մի ջուխտ աչքը կտա, ծաղիկը նրան էլ կտաս, ոսկով-բանով տալ չես:

Բիծեն ասըն ա. — Այ որդի, եղ ով իրա աչքը կտանի, ծաղկի կտա:

Աղջիկն ասըն ա. — Ուրիշ տեղ, որ առնեն ոչ, թագավորի պալատումը առնող կըլի:

Թող դա ծաղիկը տանի, իաբարը տանք թագավորի տղիցը:

Թագավորի տղեն սիրտ չուներ. քավթառի աղջկա ոչ բերանիցն էր ծաղիկ վե գալի, ոչ կըրնկներիցը՝ ոսկի: Աս իրան տվել ա ման գալուն ու ֆորս անելուն, որ դարդը մոռանա:

Բիծեն ծաղիկը ման ածելով տանըն ա, տանըն, հասնըն ա պալատի աղաքը: Ձեն ա տալի՝ մի գույգ աչքով ծաղիկ եմ ծախըն: Պառավի աղջիկը ձեն ա տալի, ասըն ա. — Նանի, նանի, ծաղիկ եմ ծախըն, գնա առ, տար պստորոնիս շանց տու, ասա՛ հրես հարսը ծիծաղել ա, շնորքը շանց ա տվե, պատիվներս կավելանա:

Աչքերը հանըն են տալի, ծաղիկն առնում են, բիծեն էլ ուրախ-ուրախ եղ ա գալի տուն:

— Պապի բերի՞ր:

— Հա:

Բերըն են աչքերը ղընըն են տեղը, սաղանըն ա, դառնըն ա էն աղաքվա աղջիկը: Դուս ա գալի, ներս ա գալի, ծիծաղում ա, համ իըան ոսկին ա տենըն, համ ծաղիկը: Համա եղ ուրախութիւնը շատ չի քաշըն, աղջիկը հիվանդանում ա: Բիծեն ինչքան հեքիմ ա բերում, կարում չի սաղացնի, մեռնըն ա: Բիծեն ջանդաքը չորացնել ա տալի, օխտը ճամփի արանքում արծան ա կաղնացնում, հասարն էլ ոսկուց ու արծաթից ա ըլըն:

Խարարը տանք թագավորի տղից: Աչքը կնիկը գալիս չի. սաղ օրը դուսն ա, պտտելով, պտտելով գալի հասնում ա եղ օխտը ճանապարհի ճամփարածանը: Գալիս հասնըն ա ըտե, տենըն ա մի արծան կա, սիրտը վեսայում ա թե, ոնց որ էս իրա սիրած աղջիկն ա, ամեն

օր գալիս ա, մինչի կեսօր ըտի մնում, մինչի ըրիգուն տուն հասնում, աղոթարանի հետ էլ ետ գալի ըտի: Օրերից մի օր էլ գալիս ա տենում, հրեդ մի ըրեխա էդ արծանի դոշին ծվում ա: Արծանը շունչ չունի, ըրեխեն սադ ա: Ասում ա՝ կա չկա էս ըրեխեն իմն ա, վեր ա ունում, տանում, տալի կնգանը, ասում ա. — Առ էս ըրեխեն, պահի:

Ըրեխեն էդ կնգա ճտի հուլը բռնում ա, լաց ըլում: Ինչքան բան են տալի, էդ հուլը ձեռիցը գծում չի, լացն էլ կտրում չի: Թագավորի տղեն ջգրվում ա, ասում ա. — Դու ըրեխա պահող չես, կըսպանես, ինձ տու, տանեմ որդիան բերել եմ, ընդի եդ գծեմ:

Կնիկը ըրեխեն տալիս ա իրան, համա սա հուլը բաց չի թողնում, տղեն ջգրվում ա վոեն, ասում ա. — Հանի ճտիցդ, թող վեր ունի:

Հուլը ճտից հանում ա, ըրեխի ճտին ա գծում: Բերում ա դընում արծանի դոշին, ինքը դարդին նստում: Ըրեխեն արծանի դոշին պտտելով, պտտելով, հուլը հասցընում ա արծանի պոռոշների: Արծանը աչքերը բաց ա անում, ծիծը հանում, ըրեխի բերնին դընում: Թագավորի տղեն վեր ա կենում, մոտանում ա աղջկանը, ասում. — Ըսօրից եղը ես քոնն եմ, դուն իմն ես:

Աղջկան ու ըրեխին վեր ա կալում, գալի տուն, մտնելու քիմին աղջկա կոնկեղի տակից ոսկին թափում ա:

Էդ մոր ու աղջկանը դաթըի պոչից են կապում ու բաց թողում, մեծ թիքենուն անգաճներուն ա մընում: Բերում հրսանիք են անում, բախտավերվում են:

Նըանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

7. ԹԱԳԱՎՈՐԻ ՊՈՒՃՈՒՐ ՏՂԵՆ

Ըլում ա չի ըլում մի թագավոր ա ըլում, էս թագավորը ունենում ա իրեք տղա: Տղեքը որ մեծանում են, թագավորը մեծ տղին կանչում ա կուշտը, հագար մանեթ փող ա տալի, ասում ա.

— Տար առնտուր արա, տենամ ինչ թավուր առնտուր ես անում, որ թագավորը առնտուր անել չգիտենա, կարալ չի թագավոր ըլի:

Հագար մանեթը էդ տղեն վեր ա ունում, գընում: Շատ ա գընում, քիչ ա գընում, հասնում ա մի բագար, տենում ա հրեդ մի չովդար մի հարիր գլուխ կուշտում անասուն ա ծախում, կենտ-կենտ ուզում են՝ տալիս չի: Թագավորի տղեն կուշտում փող ա ունենում, առնում ա էդ ապրանքն ու կենտ-կենտ՝ մնին էրկու ծախում: Հագար մանեթը շինում ա էրկու հագար մանեթ: Էդ փողը վեր ա ունում, գալի տուն: Ըռավողը թագավորը տղին կանչում ա, ասում ա. — Ի՞նչ առնտուր ես արե:

Տղեն հանում ա էրկու հագար մանեթը, դընում ըղաքին: Ասում ա. — Այ տղա, էս ի՞նչ առնտուր ես արե, քեզ հագար մանեթ եմ տվե, դու էրկու հագար ես եդ բերե:

Ասում ա. — Թագավորն ապրած կենա, գնացի, տեհա մի չովդար ապրանք ուներ, կուշտում առա, կենտ-կենտ ծախեցի:

— Է՛, — ասում ա թագավորը, — դու ժողովողի արունը կծծես, դու թագավոր չես կարա ըլիլ, գնա:

Թագավորը միջնեկ տղին ա կանչում, հագար մանեթը տալիս ա: Ասում ա. — Գնա քեզ հմար՝ մեր թագավորության մեջ մի քանի տեղ տուն շինը, որ որդի գնաս՝ մի տուն տեղ ունենաս:

Աիջնեկ տղեն գընում ա երգրի իրեք քաղաքներում մի-մի տուն շինել տալի, դմենը փակում, բլանիքը դընում ջեբը, գալի: Հերը կանչում ա, հարցընում ա, թե. — Ի՞նչ արիր:

Տղեն պատասխանում ա, թե. — Ֆլան ֆստան քաղաքումը մի-մի տուն եմ շինել տվե, էս էլ բլանիքնին:

Հերն ասում ա. — Ես քեզ ասի տուն շինի, թե դադտակ շենքեր կաղնացրու: Դարտակ տունը ու՞մ հմաը, ի՞նչի հմաը ես շինել, տուն շինելն էն ա, որ գնաս մի մարդի հետ ծանոթանաս, մի մարդի պատվես — եարգես, դրա տունը դառնա քեզ հմաը տուն, եք գնաս դուռը քեզ հմար բաց ըլի:

Պուճուր տղին ա կանչըմ, փողը տալի դարգում, ասըմ ա. — Գնա առըտուր արա:

Պուճուր տղեն էլ ա ճամբա ընգնըմ, գընըմ: Գընըմ ա, գընըմ, մին էլ տենըմ ա՝ մի մեռել տանըմ են հողավորելու: Ժողովուրդը էդ մեռելին վեր են դընըմ, ծեծում են, եղ վեր ունում, տանըմ: Մոտանըմ ա, ասըմ ա. — Էս մեռելին խի՞ եք ծեծում:

Մարդիկ ասում են. — Մեր կարգը էս ա, թե մարդը մարդու փող ա պարտք ըլըմ, տալիս չի, մեռած վախտը ծեծում են, որ պարտքը դուս գա:

Տղեն ասըմ ա. — Ու՛մ ա պարտք, ինչքա՞ն ա պարտք:

Մինն ասըմ ա՝ քսան մանեթ, մինն ասըմ ա՝ հարիր, են մինը՝ էրկու հարիր մանեթ: Մեռելի պարտքերը տալիս ա, ասըմ ա. — Պրծա՞նք, էլ օջովո պարտքը չի՞:

— Չէ:

— Դե վե կալեք, տանենք հողավորենք:

Հետներուն գընըմ ա, տանըմ են հողավորում, պրծնըմ: Մսըմ ա. — Այ ժողովուրդ, էկեք գնանք, էս մարդուն մի պարտք էլ ունի՝ են էլ տամ, նոր գնացեք:

Ժողովողին բերըմ ա ճաշարան, մեռելին հոգու հաց ա տալի. — Էս էլ էն մարդու հոգու պարտքը, որ տվուց ձեզ, էլ հո պա՞րտք չի:

— Չէ:

— Դե գնացեք:

Պուճուր տղեն եղ ա գալի տուն: Օխտը կոպեկ փող ա մընըմ ջեբին: Ըռավողը թագավորը կանչըմ ա, տղին ասըմ ա. — Այ տղա, ի՞նչ առըտուր ես արե:

Հանըմ ա օխտը կոպեկը, դընըմ ա ալաքին:

Թագավորն ասըմ ա. — Էս ի՞նչ ես տալի, ես քեզ հազար մանեթ փող եմ տվե:

Տղեն ասըմ ա. — Հայրիկ, ոը իմ տերը դու ըլեիր, վայ թե հազար էլ պարտք անեիր:

— Տղա ջան, ի՞նչ ես արե:

— Թե. — Տեհա մի մեռել են տանըմ, վեր են դընըմ, ծեծըմ, թե մարդկանց պարտք ա ըլել, պաղտքը տվել չի, ես էդ մարդի պարտքերը տվել եմ, մնացածն էլ ժողովողին հոգու հաց

եմ տվե:

— Լավ ես արե տղա ջան, հմի գիդամ, որ դու կարաս ժողովուրդ կառավարես, իմ թախտն էլ կարաս կառավարես:

Ասըմ ա. — Գնա մեզ հմար մի պովո ճարի:

Տղեն գընըմ ա, մի պովըր ճարըմ, բերըմ, դա ճաշն էփում ա, դընըմ աղաքներուն: Թագավորը կանչըմ ա պովոին, ասըմ ա. — Արի մեզ հետ ճաշ արա:

Պովըր գալիս ա հետները նստըմ, ճաշ անըմ: Թագավորը թաքուն տղին ասըմ ա. — Է՛, տղա ջան, սա պովո չի, պովըրը թագավորի հետ հացի նստիլ չի: Գնա ուրիշ պովոր գոի:

Տղեն գընըմ ա մի արաբ ա գընըմ, բերըմ: Արաբը լավ ճաշեր ա էփըմ: Իրանք սեղան են նստըմ, թագավորը կանչըմ ա արարին հացի: Արաբն ասըմ ա. — Թագավորն ապրած կենա, պովըր ի՞նչ իրավունք ունի իրա թագավորի հետ նստի ճաշ անի: Ես իմ կուխնումը ինչ կուզենամ, են էլ կանեմ կուտեմ: Դուք Ձեր հացը կերեք:

Թագավորն ասըմ ա. — Տղա ջան, սա իսկական պովո ա, սա մեզ ձեռք կտա:

Մի քանի հետ պովոին փորձում ա, տենըմ ա պովըր առըտուրից ամեն րան հասկանըմ ա: Մի օր ասըմ ա. — Մրաբ, ըրեվալով դու առըտուրի սավոր, լավ հասկացող մարդ ես, արի մի հազար, էրկու հազար մանեթ տամ, իմ տղին էլ վե կալ, իյամ տղա ա, գնացեք առըտաւր արեք, թող առըտուր անել սովորի, որ ընծանե եղը կարենա իմ թախտը կառավարի:

Մսըմ ա. — Լավ, թագավորն ապրած կենա: Էս պայմանով, ինչ որ կբերենք՝ կես ա:

— Գնացեք, — ասըմ ա թագավորը, — ինչ որ կբերեք՝ կես ա:

Վեր են կենըմ, գընըմ:

Շատ են գընըմ, քիչ են գընըմ, տենըմ են մի տեղ իրենք ճամբա իրարից րաժանվում ա: Մի ժեր մարդ ա նստած: Հարց են տալի, ասըմ են. — Պապի, էս ճամփենին ու՞ր են գընըմ:

Մսըմ ա. — Էս մինը Բաղդատ ա գընըմ, էս մինը Խորասան ա գընըմ, էս մինն էլ Էրզրում ա գընըմ:

— Բա ո՞ր ճամփովը գնանք, որ թեզ հասնենք էրզրում:

Ասըմ ա. — Էս մինը տասնըհինգ օրվա ճամփա ա, էս մինն էլ իրեք օրվա ճամփա ա, համա էս ճամփով գնացողը եղ գալիս չի:

Արաբն ասըմ ա. — Թագավորի տղա, ի՞նչ անենք, տասնըհինգ օրվա ճամփի հետ, արի էս իրեք օրվա ճամփովը գնանք:

Գընըմ են, շատ են զընըմ, քիչ են զընըմ, մթնում ա, ծորատակին գեղատեղի պես բան ա պտահում: Պովորը կրակ ա անըմ, ճաշ ա սաքըում, թագավորի տղին ճաշ ա ուտացնում, քնացնում: Կող-կուշտը թամաշ ա անըմ, տենըմ ա՝ իրե մի դուռ կա, բլանիքը վրեն կախ արած: Դուռը բաց ա անըմ՝ ուշարը միջին քնած ա: Ուշարին սպանում ա, թիքա-թիքա ա անըմ, դեն գծում: Ներսի դռները բաց ա անըմ, որ օխտը խազնի, իրար միջի ուշաթի կաթողութինն ա: Էղ դռները փակըմ ա, բլանիքները դընըմ ջեբը, գալի քընըմ թագավորի տղի կշտին: Թագավորի տղեն բան չի իմանըմ: Ըռավողը վեր են կենըմ, զընըմ: Ինքն իրա մտքումը ասում ա. «Էս ուշաթի հունարն էր, որ գնացողը էս ճամփից ետ չի եկել», արիսեին ա ըլնըմ, որ գնալ դեն, գալ դեն: Գընըմ են, հասնըմ են Էրզրում: Բագարումը ման են գալի, տենըմ են մինը մի դուշ ա ծախըմ:

— Այ տղա, դշիդ գինն ի՞նչ ա:

— Հարիր մանեթ:

— Բա դըա հունարն ի՞նչ ա, որ հարիր մանեթ ես ուզում:

Թե. — Դրա հունարն են ա, որ գնաա մի տեղ զըից անես, դուշը կմտնի շկափի մեջը, քու զըից անելի փախտը սա ընենց մի բան կասի թեզ հմա, հարիր չէ, հագար մանեթ կարժենա:

Արաբը հարիր մանեթ տալիս ա, դուշը առնըմ:

Թագավորի տղեն ասըմ ա. — Դա ի՞նչ ա, որ դըան հարիր մանեթ ես տալի:

Թե. — Սա մեզ պետք կգա:

Էրզրում քաղաքի թագավորի աղջիկը լալ ա. թագավորը հայտարարություն ա տարածե.

աղջկաա ով խոսցնի նրան տեմ տալ:

Արաբն ասըմ ա. — Ես տի եթամ թագավորի աղջկան խոսցնեմ, ուղեն թագավորի տղին:

Թագավորի տղին տանըմ ա մի ճաշարան դընըմ, ասըմ ա. — Դու ըստի կեր, խմի, նստի, ես գնամ թագավորի աղջկան խոսցնեմ: Ասում ա, գնում թագավորի պալատը: Աբաբին տանըմ են թագավորի կուշտը, ասըմ ա. — Թագավորն ապրած կենա, ես կարամ աղջկանը խոսցնեմ, հետս մի մարդ դիր, որ նըա ըղաքին խոսցնեմ:

Թագավորն իրա վագըրին դընըմ ա հետը, ասըմ ա. — Գնա տես, խոսցնըմ ա՞:

Գընըմ են, տենըմ աղջիկը քյարգյահ ա անըմ: Արաբը դուշը բաց ա թողըմ, զընըմ ա շկափի տակըմ մի տեղ տապ ա անըմ: Ասըմ ա, — Վաղիր, իրեք մարդ ճամբա են զընըմ: Մինը՝ տերտեր, մինը՝ դյուրգյար, մինն էլ՝ դերծիկ: Ըրիգունը հերթ են դըկըմ, որ իրեքն էլ քնեն ոչ, հերթով մինը դըավուր քաշի, երկուսը քնի: Տերտերն ու դերծիկը քընըմ են, դյուրգյարը տենըմ ա, քունը տանըմ ա: Կացինը վեր ունում մի ծառ կտրըմ, էղ ծառիցը մի խսանի արծան շինըմ, կաղնացնըմ: Վեր ա կացնըմ դերծիկին, ասըմ. — «Ա դերծիկ, վե կաց, հմի հերթը քունն ա, հմել ես եմ քնում»: Դերծիկը վեր ա կենում, տենըմ դյուրգյարն իրա շնորքը շանց ա տվել, մարդ ա կաղնացրել: Շոր ա կարըմ հագցընըմ: Սա էլ տերտերին ա վե կացնըմ, տերտերը վեր ա կենըմ, տենըմ դյուրգյարն իրա հունարն ա շանց տվել, դերծիկն էլ իբանը, սկեում ա աղոթք անելը, աստծուն խնդրելը, թե. «Աստոծ, ինձ ամոթով մի անի իմ հնգորտանց կշտին, էս արծանին շունչ տուր, թող խոսա»: Դրա խնդիրը աստոծ կատարում ա: Վագիր, հմի աղջիկը ու՞մն ես արժան տենըմ:

Վագիրն ասըմ ա. — Ես արժան եմ տենըմ դյուրգյարին:

Դուշն ընդիան ասըմ ա. — Ես էլ արժան եմ տենըմ դերծիկին:

Աղջիկը համփեղըմ չի, ասըմ ա. — Անաս-տվածներ խր՝ չէք դուզ խոսում, աղջիկը պատկանում ա տերտերին, հագար շոր, հագար

փետ կսողնացնվի, որ շունչ չունենա՝ նա ում կպատկանա:

— Խոսցրի՞, — ասըմ ա, — վագիր:

Ասըմ ա. — Հա:

Համա աղջկա սիրտը, որ ճաքում ա, քյարգյահը կտրատում ա, թե՛ խի խոսացի:

Էթըմ են թագավորին ասըմ են. — Աղջիկդ խոսաց:

Թագավորը հվատում չի:

Արաբն ասըմ ա. — Հըվատում չես, արի քու ըղաքին էլ խոսցընեն:

Էլ եդ ղուշը բաց ա թողըմ, գընըմ, մըտըմ ա քյարգյահի տակը:

Ասըմ ա. — Թագավորն ապրած կենա, իրեք մարդ գընըմ են արհեստ սովորելու: Արանք իրարից ըաժանվում են, ասըմ են. «Իրեք տարի եղը կհավաքվենք, ըստի կմիանանք, որ տենանք ո՞վ ինչ արհեստ ա սովորել»: Ամենքը գընըմ են արհեստ սովորում, իրեք տարուց եղը գալիս են թոփ ըլըմ նույն տեղում: Մինն ասըմ ա. — Ես եգին դնալ եմ սովորել, մինը՝ հեքիմութեն եմ սովորել, մինն էլ թե՛ ես էլ ռամ գծող եմ: Ասըմ են՝ ռամըդ գծի, տես ինչ կա: Ատիկ ա անըմ, ասըմ ա. — «Թագավորի աղջիկը հիվանդ ա, հեքիմնին հավաքվել են, կարըմ չեն սղացնեն»: Էդ հեքիմն ասըմ ա. «Ես ճարը կանեն, վայ հասցնող ըլի եա՛»: Եգին դնացողն ասըմ ա. — «Հլա ինձ տու»: Ձեռիցն առնըմ ա, վագ տալի հըսցնում ա թագավորի աղջկանը: Աինչի դրանք եղնուցը իրանց երիշովը գալիս են, նա արդեն ըղջկանը սղացըել ա: Էդ իրեքն իրար հետ կռվում են: Նա ասըմ ա՝ աղջիկն իմն ա, նա ասըմ ա՝ իմն ա:

Արաբն ասըմ ա. — Թագավորն ապրած կենա, դու ու՞մն ես աղջկանը արժան տենըմ:

Ասըմ ա. — Ռամ գծողին, որ նա ռամ գծեր ոչ, նրանք ինչ գիդեին թագավորի աղջիկը հիվանդ ա, սաղացնել ա պետք:

Ղուշն ընդիան ասըմ ա. — Հեքիմին ա հասնըմ:

Աղջիկն ասըմ ա. — Եգին գնացողին ա հասնըմ, որ հինգ ըռպե էլ ուշ էր հասցրել, աղջիկը մեռած էր:

Ասըմ ա. — Թագավորն ապրած կենա, խոսցրի՞:

Թե. — Հա, խոսցրիր:

— Խոսքի՞դ տերն ես:

Թե. — Տերն եմ, աղջիկս էլ եմ տալի, քսան ֆուրղուն էլ բաժինք եմ տալի:

Արաբն ասըմ ա. — Ի՞նչ տալիս ես՝ տուր, քսան ֆուրղուն էլ դարդակ կտաս:

Թագավորն իրա աղջկա հետ քսան ֆուրղուն կարողութին ա ղընըմ, քսան ֆուրղուն էլ դարդակ ա տալի:

Համա աղջիկը էլ եդ լալ ա:

Թագավորի տղեն իրան հմար ուտում — իմում ա ճաշարանումը: Արարը բերըմ ա ֆուրղունին ոտն ա անըմ, ասըմ ա. — Դուս արի, աղջիկը ըերել եմ:

Դուս ա գալի, աղջկա կողքին նստում են, գալի: Գալիս են, հասնըմ են գեղատեղին, են քսան ֆուրղուն էլ ուշաքի խագնի ոսկին ա բարձըմ, գալիս են:

Թագավորին աչքալուսանք են տալի, թե՛ պուճուր տղեղ գալիս ա, համ հարս ա ըերըմ, համ էլ քառասուն ֆուրղուն ապրանք-կարողութին: Գալիս են մտնըմ պալատ, ընձրանում են թագավորի կուշտը: Արաբն ասըմ ա. — Թագավորն ապրած կենա, մեր պայմանը պայմա՞ն ա:

Թագավորն ասըմ ա. — Կարողութինը կես արեք, աղջիկը թող իմ տղին:

Արաբն ասըմ ա. — Չէ, խոսքը խոսք ա:

Թագավորը մլորում ա, կարըմ չի խոսա:

Արաբն ասըմ ա. — Ըռավողը աղջիկը կտանենք մեյդանումը կես կանենք:

Ժողովուրդն իմանում ա, որ թագավորի տղեն ու արարը իրանց բերած աղջկանը տանիլ տեն, կես անեն: Թոփ են ըլըմ մեյդանումը: Արաբը էրկու ստուլբա ա տնկել տալի, աղջկանը մի ոտը կապըմ ա մի ստուլբիցը, մինը՝ մի, գլխի վրա կալս անըմ: Թուրը հանըմ ա, որ կիսովը շախկա տի անիլ, աղջիկն ու՛ ա անըմ, ըռնիցը օձը գծըմ: Աղջկանը ըաց ա թողըմ, աղջիկը կաղնըմ ա, ըսկըսըմ ա խոսալը:

Արաբն ասըմ ա. – Թագավորի տղա, աղջկա լիզու՞ն էր պակաս:

Թե. – Հա:

– Լիզու՞ն էլ ա տեղը:

Թե. – Հա:

– Դե թագավորն ապրած կենա, աղջիկն էլ եմ բախշում քու տղին, կարողութիւնն էլ: Ես էն մեռելն եմ, որ քու տղեն փրգեց ծեծելուց, իմ պարտքը տվուց: Նրա լավութեան դեմը ես էլ ես լավութիւնն եմ անըմ, ասըմ ա ու ինքը անհայտանըմ:

Ասսանից իրեք խնձոր վեր էլավ, մեկը՝ ասողին, մեկը՝ լսողին, մինն էլ գըի առնողին:

8. ԸՆԴՄԱՐ ԹԱԳԱՎՈՐԸ

Ըլըմ ա չի ըլըմ մի թագավոր ա ըլըմ, իրեք տղա ա ունենըմ, մեռնելու վախտը որ գալիս ա, սա կանչում ա տղերքին, ասըմ ա. – Ես որ կմեռնեմ, իմ գերեզմանի վոա ղարավուլ կքաշեք:

Թագավորը մեռնըմ ա, տանըմ են հողավորում են: Առաջի քշերը մեծ տղեն ա գընըմ: Քընըմ ա, թե ղարավուլ քաշըմ, ըռավողը գալիս ա, ասըմ են՝ ինչ տեհար, թե՝ ոչ մի բան: Երկրորդ գիշերը միջնեկ ախպերն ա գընըմ, էլի քշերը քընըմ ա, ըռավոգը վե կենըմ, գալի, ի՞նչ տեհար՝ բան չտեհա: Երրորդ քշերը պուճուր տղեն ա գընըմ: Քուսը տանըմ ա, մատը խազըմ վոեն աղ ու բիբար ա շաղ տալի, որ քուսը չտանի: Կրակ ա անըմ, նստըմ: Աին էլ տենըմ ա, իրես մի քառասուն գլխանի դէ էկավ, հոր գերեզմանը ուզում ա քանդի: Ասըմ ա. «Էս հորս թշնամին ա, դրա հմար հերս ասեղ գերեզմանիս ղարավուլ կքաշեք»:

Թուրը հանըմ ա, դըա քառասուն գլուխն էլ թոցըմ: Մինչի քառասուն գլուխը կտրում ա, կրակը հանգչում ա: Քշերն էլ ցուրտ ա ըլըմ, ասըմ ա՝ գնամ կիակ ճարեմ, բերեմ, կրակ անեմ, չուրի լիսանա: Էս չախին գնամ տուն, ախպրախնքս կասեն՝ մեր ախպերը վախել ա, էկել ա տուն: Կրակի լսին գընըմ ա, գընըմ, տենըմ ա մի ծեր մարդ, նստած մի երգան կծիկ

ծեռին, կծկում ա: Ասըմ ա. – Պապի, էս ի՞նչ ես անըմ:

Ասըմ ա. – Քշերն եմ կծկում, իրիգունին քանդել եմ կծիկը մինչի քշերվա կեսը, հմել լիսանալու վսխտն ա, կծկում եմ, որ լիսանա:

Ձեռն ու ոտը կապըմ ա, դընըմ դրադ, ասըմ ա. – Աինչի եղ գալս կծկըլ մի, ես եղ կգամ, բաց կանեմ ձեռն ու ոտըդ, կկծկես:

Գընըմ ա, հասնըմ կրակի կուշտը, տենըմ օխտը դէ, կրակի կշտին նստած, գրից են անըմ:

– Բարի ըրիգուն:

– Աստու բարին, թագավորի տղա, – ճնանչում են, – էս ու՞ր ես գընըմ:

Թե. – Բա հորս գերեզմանի վոա ղարավուլ էի էկել, մի քառասուն գլխանի դէ էկավ, սպանեցի, կրակս հանգել ա, էկել եմ ձեզանից կրակ տանեմ:

– Թագավորի տղա, էղ դէին, որ դու սպանել ես, դու մեր ախպերն ես: Դրա ահիցը մենք կարենայինք ոչ ֆլան թագավորի ըղջկերանցը տանեինք: Արի գնանք թագավորի իրեք աղջկերիցը մինը քեզ հմար, էրկուսը մեզ հմար բերենք:

Վեր են կենըմ, գընըմ են: Հենց առաջի մարդիվանին որ բանձրանում են, թագավորի տգեն դուս ա գալի բալկընը, որ դէերը եղնեն դուս գան: Դուս էկող դէի գլուխը կտրում ա, յոթի գլուխն էլ կտրում՝ ա, ներքս թափըմ: Վեր ա գալի դըանց քնթները, պռռշին ու անգաճնին կտրըմ, թաշկինակը կապըմ, բնձրանըմ ա ըղջկերանց պալատը, տենըմ ա ամենքը մի օթախում քնած են, շամդանը ռտներներու տակին վսռած: Մեծի, միջնեկի շամդանների տեղը փոխում ա, պուճուրի մատանին փոխըմ ա, նրա մատանին հանըմ ա իրա մատը դընըմ, իրանը նըա մատին դընըմ դուս գալի:

Գալիս ա, գալիս, հասնըմ ա ձեռ ու ոտները կապ արած ծերունուն, ձեռ ու ոտը բաց ա թողում, ասըմ ա. «Ժողովուրդը մեղք ա, հերիք ա քնի, թե կծկի», գալիս ա գերեզմանի կուշտը: Լիսանում ա, գալիս ա տուն: Ախպրտանցը պատմում ա, թե գդել եմ մեր հոր

թշնամուն, քառասուն գլխանի դեհն, սպանել են: Էլ դարավուլ քաշելու կարիք չկա:

Ախպարտիները թող հանգստանան, խաբարը տանք աղջկերանց հորիցը: Էդ թագավորը ըռավողը վեր ա կենըմ, տենըմ ա իրա պալատի ներքի բալկոնումը՝ օխտը գլուխը կտրած, դեհ ջանդաք կիտած: Ասըմ ա. «Իմ աղջկերքը որ վե կենամ, տենամ, կվախենամ, քանի վեր չեն կացե, սրանց ես կորցընեմ»: Օռռաներին կանչել ա տալի, գալիս են, տանըմ էդ ջանդաքները հեռացըմ: Աղջկերքը վեր են կենըմ, տենըմ են իրանց շամդանին գլխի կոսան ա դրած, պուճուր քիրն էլ տենըմ ա, որ իրա մատանին փոխած ա: Ուրեմն քշերիս ըստե մարդ ա մտել: Թագավորին իմաց են տալի: Թագավորն էլ իրա աչքովը տեհել ա օխտը դեհ ջանդաքնին: Հայտարարություն ա տալի, թե. — Ով որ էս քաջությունն արել ա, թող գա, իրա պահանջը ես տալիս եմ:

Եկողներից թագավորը նշանաբան ա ուզում, համա ունեն ոչ, ի՞նչ շանց տան: Թագավորի պուճուր տղեն էլ գիդացել ա թագավորի հայտարարության մասին, ասըմ ա՝ սադ բանից իսբար չեն՝ գընըմ են, էդ խի չեն ես էլ գընըմ: Գընըմ ա, ասըմ ա. — Թագավորն ապրած կենա, ես եմ դեհի գլուխը կտրե:

— Նշան ունե՞ս:

— Ունեն:

Թաշկինակը բաց ա անըմ, օխտի քիթը, ականջնին, պոռչնին մեջը: — Բա ի՞նչ ես պահանջում:

Ասըմ ա. — Թագավորն ապրած կենա, մենք իրեք ախպեր ենք, դու էլ իրեք աղջիկ ունես: Մենք ֆլան թագավորի տղերքն ենք, քու աղջկերքը տուր մեզ կնության:

Ասըմ ա. — Տվի:

Խոսք ա տալի, ժամանակ դընըմ, մա էլ պտի պատրաստություն տենա, մա էլ:

Հարսանիքի օրը պուճուր տղեն ասըմ ա. — Դուք գնացեք հարսներին բերեք, ես կմնամ, մեր թախտը բրախելը օրենք չի: Համա գնալու տեղը, եդ գալիս ֆլան թալըմը վեր չգաք, ահալու տեղ ա:

Մեծ ու միջնեկ ախպրտիները գընըմ են, հարսները վեր ունում, գալի կանանչ, հանդարտ տեղ ա, էդ թալումը վեր են գալի, որ ծիանիքը արածեն, իրանք էլ մի քիչ դինջանան, ճամբեն շարունակեն:

Հենց որ դրանք տեղավորվում են, մի օծ գալիս ա դրանց չորս դիովը պտտըմ ա, գլուխը դընըմ պոչի վոա, ասըմ ա. — Ճամբա չեմ տա, գնացեք ձեր պուճուր ախպորը բերեք, գնա Շամհար թագավորից ինձ հմար մի խաբար բերի:

Դրանք ասըմ են. — Բա մենք ըստի, ո՞վ խաբար տանի, թող մենք գնանք, կասենք մեղ ախպերը կգա:

Օձն ասըմ ա. — Բաց եմ թողըմ, գնացեք, համա չգա էլ ոչ, մին ա՝ ես մրան կգտնեմ:

Պուճուր ախպերը տենըմ ա, որ հրսանիքի աղվեսն ուշացավ, ասըմ ա. «Կա չկա սրանց մի բան պատահեց, աղաքները դուս գամ, տենամ ի՞նչ իսբար ա»: Հենց դուս ա գալի, տենըմ ա հրե հրսանիքի աղվեսի ձին սիվտակ բայդաղը կապած ընելաց:

— Էս ինչի՞ ուշացաք:

— Բա չես ասի, թագավորի տղա, թե ինչ ըլավ, ֆլան թալումը մի օծ ճամբեքս փապեց, ասավ՝ գնացեք ձեր պուճուր ախպորն ասեք, թող գնա Շամհար թագավորիցը ինձ մի խաբար բերի:

Թագավորի տղեն էլ եդ չի գալի, ասըմ ա. — Դուք հրսանիքը շարունակեցեք, ես գնամ օծի ուզածի եզմիցը:

Գընըմ ա, գընըմ, հասնըմ ա թալեն, ձեն ա տալի՝ օծ ախպեր, օծ ախպեր: Օձը դուս ա գալի:

Տղեն ասըմ ա. — Օծ ախպեր, ի՞նչ ես պահանջում:

Ասըմ ա. — Գնա Շամհար թագավորիցը ինձ մի խաբար հասցրու:

Տղեն գընըմ ա թագավորի ղըլդի շորերը հանըմ, ծառայի շոր հագնըմ, գընըմ. Շամեար թագավոր ուրդի ե՞ս՝ նրա քաղաքը: Գընըմ ա մտնըմ պալատ, ասըմ ա. — Էկել եմ Շամհար թագավորին ծառայեմ:

Տղին տանըն՝ են թագավորի կուշտը, թագավորը դրան ծիապան ա նշանակում: Տղեն Շամհար թագավորի ծիանը պահելիս ա ըլըմ, մին էլ քշերը Շամհար թագավորի կնիկն ու զանքաջը գալիս են գոմը, տղին ասըմ են՝ էս ծիանը թամքի: Երկու ծի թամքել են տալի, նստում ու դրան էլ եղնիմուն գծում, տանըմ են մի քարի էր, դրան ծիանը բռնել են տալի, իրանք մտնում էրը. ըտի մի դև կա, էդ դևի հետ քեփ անըմ: Քեփները որ թմամում ա, դուս են գալիս, նստում ծիանքը, եդ գալի:

Գնալով ծիանը լղարում են. թագավորը գլխի ա ըլըմ, որ ծիանը լղարում են, ասըմ ա. — Այ տղա, էս ծիանը խի՞ են լղարում, սրանց կերը ավելացրա:

Կերն ա ավելցընըմ, ինչ անըմ ա, չի անըմ, էլի ծիանը լղարում են:

Թագավորն ասըմ ա. — Ըստի մի բան կա:

Տղեն ասըմ ա. — Թագավորն ապրած կենա, թե ուզում ես ծիաննու լղարելու պատճառն իմանաս, արի իմ շորերը հաքի, քշերս ըստի կաղնի:

Թագավորը հաքնըմ ա տղի շորերը, քշերը մընոմ գոմումը: Թագավորի կնիկն ու զանքաջը սովորականի պես գալիս են, ասըմ՝ ծիանը թամքի: Սուս արած ծիանը թամքում ա, նստում են, գլխի չեն, որ Շամհար թագավորն ա, ասըմ են. — Եղներուցս արի, — տանըմ են քարի էրը, ծիանը բռնիլ տալի, գընըմ իրանց քեփն անըմ ու գալի: Շամհար թագավորը նոր մաւոր կծում ա: Եդ են գալի թե չէ, ծիանը կապըմ են, նոր գլխի են ընգընըմ, որ ծիապանը Շամհար թագավորն էր: Ինչ անենք, էս ա մեր գլուխը կտա: Դրանք մի ճիպոտ են ունենըմ, հացատան կարասի միջին դրած, էդ ճիպոտվ որ տալիս են, ինչ ուզենան՝ կատարվում ա: Ծիպտովը տալիս են, Շամհար թագավորին շինըմ դուշ: Էս դուշը ընգընըմ ա դշարի մեջ, Շամհար թագավորին դշերը ըմբլահան են անըմ, գգում են: Կնիկն ու զանքաջը մթամ մեղք են գալի, ասըմ են՝ մեղք ա, փոխում են, էշ են սարքում: Էս էշին ծառաները չրչարում են, տանըմ են կծերը ջուրը վրա տալի, ռերըմ,

մեջքը պլոկում ա: Կնգա ու զանքանջի մեղքը գալիս ա, փոխում են, սատվոր շինըմ, վոեն փետը ջարդում են, կիսանը կտրվում ա: Մեղք ա, էս էլ փոխենք: Վերջապես եատու են շինըմ, ասըմ են՝ տանը թոնրի դրաղին վեր կընգնի: Շամհար թագավորը կատու ա դառնըմ, համա իրան դրոշմը վոեն ա:

Շամհար թագավորին մի հացթուխ ա ունենըմ, դրան էլ մի սախատ աղջիկ ա ըլըմ, կատուն գալիս ա պոչը էդ աղջկանը քսում, որ մի կտոր հաց տան, աղջիկն ասըմ ա. — Վու՛յ, նանի, նանի, էս կատուն ոնց որ մեր Շամհար թագավորն ըլի:

Մերն ասըմ ա. — Պրճկվի դրա զանքաջն ու կնիկը, Շամհար թագավորն ա, բա ո՞վ ա, կատու են շինե:

Գընըմ ա ճիպոտը կարասիցը ռերըմ. — Կատու ջան, դառիր մեր Շամհար թագավորը:

Շամհար թագավոր ա դառնըմ:

Շամհար թագավորը թագավորութիմը առնըմ ա իրան ձեռը, կնգանն ու զանքաջին կապըմ դաթրի պոչիցը, բաց թողում՝ մեծ թիքները անգաջներն ա մընըմ:

Թագավորի պուճուր սողեն գալիս ա Շամհար թագավորի կուշտը, ասըմ ա. — Թագավորն ապրած կենա, ինձ ագատի ես գնամ իմ տունը:

Իրա վարձը հազարապատկ տալիս ա, սողեն գընըմ ա, գընըմ ա, գընըմ, հասնըմ ա թալեն, ձեն տալի՝ օձ ախպեր, օձ ախպեր:

Օձը դուս ա գալի, ասըմ ա. — Պատմի տենամ՝ ինչ տեհար:

Տղեն պատմում ա աչքով տեհածը: Տղեն հենց որ ասըմ ա, թե՛ Շամհար թագավորի կնգանն ու զանքաջին դաթրի պոչից կապեցին, մեծ թիքներուն անգաճներուն մնաց, օձը պատռվում ա, դառնըմ մի տղա:

Ասըմ ա. — Թագավորի տղա, Շամհար թագավորի կնիկն ու զանքաջը իմ մերն ու քիրն են, նրանց դարդիցը ես օձ էի դառել, հմի որ նրանք չկան, ես իրավունք ունեմ որպես մարդու ապրեմ:

Թագավորի տղեն ասըմ ա. — Այ տղա, որ տենց ա, արի գնանք ինձ հետ, իրեք ախպեր չըլենք, չորս ըլլենք:

Գընըմ են, ապրըմ են հաշտ ու համերաշխ չորս ախպոր պես:

Նրանք հասան իրանց մուրադին, դուք էլ հասնեք ձեր մուրագին:

9. ՄՍԼԱՀԱԹ — ԽՈՐՀՈՒՐԳ

Ըլըմ ա չի ըլըմ մի թագավոր ա ըլըմ, ունենըմ ա իրեք տղա, մսլահաթը, ասիլ-խոսելը պուճուր տղի հետ ա ըլըմ: Մսըմ ա. — Տղա ջան, մենձացել եք, ուզում եմ ձեզ հրսանիք անեմ:

Պուճուր տղեն ասում ա. — Դե որ տհենց ա, արի իրեք քիր մի տանից ուզի, որ խորթ ու փորթ չըլի, որ քվորտինքը իրար հետ ղիլուժաժ չըլնեն, ախպրտինքը՝ իրար հետ:

Թագավորն ասում ա. — Տե խելոք բաներ ես ասում, ըդու հմար եմ քեզ սիրում եմ:

Թագավորն իրան նագիր-վեզիրներին վեր ա ունում, գընըմ աշխարհի ման ա գալի, որ իրեք աղջիկ գտնի, բերի, հրսանիք անի: Գընըմ ա, գընըմ ա, հասնըմ ա Շամախի թագավորի քաղաքը: Մտնում ա թագավորի պալատը, թագավորը դրան իրա խմբով ներս ա առնում, պատիվ ա տալի: Իրեք աղջիկ պալատումը հաց են քաշելիս ըլում: Թագավորին ասըմ ա. — Թագավորն ապրած կենա, էս իրեք աղջիկն էլ քո՞նն ա:

Ասըմ ա. — Հա:

— Հո խորթ ու փորթ չեն:

Թե. — Չէ, մի հորից, մի մորից են:

Ասըմ ա. — Ես իրեք տղա ունեմ, արի քու իրեք աղջիկը տուր իմ իրեք տղին, կտա՞ս:

— Բա հո իրագարածի՞ն չեն տալու, թագավորը որ թագավորին աղջիկ չտա, բա ու՞մ տի տա:

Բերըմ են, նշան են դընըմ, քառասուն օր ժամանակ են տալի, որ քառասուն օր եղը գան տանեն:

Քառասուն օրը որ թմամում ա, թագավորը թաղարուք ա տենըմ, գորքով, բեռներով, որ ուզում ա ճամրա ընգնի, պուճուր տղեն ասում ա. — Հայրիկ, էս ի՞նչ ես անըմ: Թախտըդ բրախում ես, կասող բրախում ես, որ մինը գա կասող դրդակի, տանի, էլ դու ընչով ես թագավոր: Բա մինն էլ ա պալատումը չմնա՞: Ես մնում եմ, դուք իմ փայ աղջիկը կբերեք:

Թագավորն ասըմ ա. — Խելոք բան ես ասում:

Պուճուր տղին թողում ա պալատում, իրանք ճամբա են ընգնում: Որ ճամբա են ընգնում, պուճուր տղեն ասում ա. — Թագավորն ապրած կենա, խրաբա տեղ վեր չգաք, խրաբա տեղից վնաս կգա:

Թագավորը պուճուր տղին արխայնացնում ա, տաշի-տուշի անելով գնում են, մտնում են թագավորի հողը, մտնում են պալատ, տանում են հարսներին շորերը հագնում, բերում են, մենձը գընըմ ա մենձի ձեռն ա բռնում, միջենկը՝ միջենկի, են պուճուրը մնում ա պուլտ: Թագավորն ասում ա. — Բա դու ասիր իրեք տղա ունեմ, բա խի՞ ա էրկուսը:

Թագավորն ասում ա. — Իմ են տղեն մեզ մեր ֆողումն ա սպասում:

Հրսանքավորը որ դու են ըլըմ մի խարաբա տեղ, աղջկերքի հերը ասըմ ա. — Մի քիչ դինջանանք, հաց ուտենք, դայֆա խմենք, եղնա գնանք:

Թագավորն ասում ա. — Բրախեք, գնանք:

Խնամիքը լսում չեն. վերջը քշերը մնում են ըտի: Ըռավողը որ վեր են կենում, տենում են մի ուշաբ օձ էկել ա, իրանց չորս կռնովը փթաթվել, պոչը դրել ա բեռնումը:

Ձիմվորներն ասում են. — Եկեք սպանենք:

Ուշաբը լիզու ա ըլում, ասում ա. — Թե թագավորի պուճուր տղին կբերեք, ձեզ կբրախեն, թե բերիլ չեք՝ էնդար կպահեն, սովոց կմեռնեք:

Ասում են. — Մենք ըստի, թագավորի պուճուր տղեն պալատումը, ո՞նց իմաց տանք, որ գա:

Ուշաբը պոչը բեռնիցը հանում ա, մի աղանք թող անըմ, մինը անց ա կենըմ թե չէ, եղ

պոչը դընըմ ա բեռնին: Էս մինը գընըմ ա, թագավորի պուճուր տղին պատմում: Տղեն ասում ա. — Չէ որ ես թագավորին ասել ի, որ խարաբա տեղ վեր չգաք:

Էս մարդն ասում ա. — Թե էդ էլել ա պրծել, հընի դու գնա:

Թագավորի պուճուր տղեն ճամբա ա ընգնում, գընում: Շատ ա գընըմ, քիչ ա գընըմ, հասնում ա ուշաբին: Սա պոչը բեռնիցը եանըմ ա, թագավորի պուճուր տղեն անց ա կենում միջի կուռը:

Ուշաբն ասում ա. — Գնա եմ վորի դրաղին կաղնի:

Տղեն գնում ա վիրի դրաղին կաղնում ա, ուշաբը պոչը բեռնիցը հանում ա, ժողովուրդը կամաց դուս ա գալի, չիմ գընըմ են: Որ տալիա են ընգնում, երևում չեն, ուշաբը տղին ասում ա. — Իմ մեջքին նստի, ընգաջներիցս դայիմ բռնի, վախիլ մի, քեզ ես վեր չեմ գցի:

Տիե անում ա տղեն, ուշաբը սողալեն տանում ա: Տանում ա հանըմ մի մենձ դաշտ, ողղի շատ մորմոնջաթափ ա ըլըմ, վեր ա դընըմ տղին, ասըմ ա. — Էս տաս-քսան սոմին առ, սրանց քշի, ուտացրու մորմոնջներին ու սրանց քեհիցը վե կալ, որ քու նեղ վախտը քեզ օգնեն:

Ըտեհ ա անըմ: Մխելի ոը գընըմ են, շատ դավենի ա ըլըմ, ասըմ ա. — Սրանց հմա էլ մի հինգ մեշոկ խմոր արա, գունդ աբա, ուտացրու, դրանց բուրզն էլ վե կալ:

Էդ էլ ա վեր ունում: Մխելի էլ գընըմ են, ասում ա. — Դուգդուննի կա, մի էրկու տավաղ առ, միս արա ուտեն, կշտանան, նըանց բորուլն էլ վե կալ:

Էդ էլ ա վեր ունում, որ գընըմ են, տեղ են հասնում, բմբուլը կրակ ա տալի, դուգդունին կռվում են:

Ուշաբը տղին տանում ա թագավորի պալատի ըղաքին ոտն անում, ասում ա. — Գնա թագավորին ասա՝ էկել եմ աղջիկդ ուզելու:

Տղեն մտնում ա պալատ, ասում ա. — Թագավորն ապրած կենա, էկել եմ աղջիկդ ուզելու:

Թագավորն ասում ա. — Տղա ջան, թագավորական օրենք, կարգ ու կանոն գիդա՞ս, որ էկել ես իմ աղջիկն ուզելու:

Տղեն ասում ա. — Գիդամ, պատրաստ եմ ենթարկվելու:

Թագավորն ասում ա. — Ես քեզ իրեք խնդիր կտամ, կատարեցիր՝ աղջիկս կտամ, թե կատարեցիր ոչ՝ գլուխդ կկտրեն:

Թագավորը բերել ա տալի պուլի վոան մի թաղալ կորեկ, մի թաղալ կտավետա խառնըմ, օթախի մեջտեղը կիտըմ, ասում ա. — Էս մի գիշերըմ ջգիլ տես:

Տղեն մտածում ա, մտածում ա, որ մի օր անց կենա էլ կարալ չի ջգի, ինչ անի, էդ մորմոնջների քեհը կրակ ա տալի, գալիս են էրկու մասն ըլըմ, մի մասը կորեկն են կըրըմ՝ մի դրադ տանըմ, մի մասը կտավետան են կորըմ՝ մի դրադ տանըմ, թամուզ ջգում են. մի եատիկ մի տեղ էլ ա ըլըմ չի, վեր են կենըմ, գընըմ:

Ըռավողը թագավորը վեր ա կենում, ասըմ ա. — Տղա, հլա դուռը բաց արա, տենամ ջգել ես:

Տղեն դուռը բաց ա անըմ, ասըմ ա. — Ինձ ըրելի տեղ ես դընըմ, դու թագավորական անդամներ չունես, որ մեն մենակ ես գալի տենաս ջգել եմ, թե չեմ ջգել:

Թագավորը մտքումը ասում ա. — «Պա՛հ, էս ինչ քոքված տղա ա»: Թագավորը կանչում ա իբա նագիր-վեգիրներին, գալիս են տենըմ, նիենց ջգել ա, որ մի հատիկ էլ չջգած չկա: Թագավորն ասում ա. «Չէ, սա աղջիկս տարավ»:

Թագավորը բերել ա տալի օխտը ընգնանի պզինձ հալվա անել տալի, բերըմ ա էլ եղ էդ տանը դընըմ, ասըմ ա. — Էս մի քշերումը ուտիլ տես:

Քշերը ո՞նց տի ուտիլ, մի տաղելկա ուտի՝ կեշտանա, ընդուց եղը ո՞նց տի ուտիլ: Էդ դավենու րուրդը կրակ ա տալի: Դավենին գալիս են թամուզ ուտում ու գընըմ: Ըռավողը թագավորը էլի գալիս ա, ասըմ ա. — Տղա, հլա վե կաց տենամ կերել ես:

Տղեն դուռը բաց ա անըմ, ասըմ ա. — Հա, հեսա կսրել եմ:

Թագավորի տղի կշտին ասըմ ա. «Չէ, աղջիկս տանել տի»: Հմել ասում ա. — Բի դուգ-դուննին կովացնենք:

Ղուգդուննիների թըղ ծխում ա թե չէ՝ գալիս են, կովում են, որը վեր ա ընգնում, վեր են ունում թագավորինն ա, տղիցը գատ չի վեր ընգել: Էդ էլ ա հաղթըմ:

Թագավորն ասըմ ա. — Օրենքը իրենք էր, իրենք կատարել են, միայն մի բան էլ եմ խնդրում, մինն էլ եմ ուզում կատարես:

Տղեն հարցնում ա, թե. — Ի՞նչ տի կատարեն:

Թագավորն ասըմ ա. — Էս ստաքանը լիքը ջուրը էս չինարթովը վեր դես ընիլ գլխիդ դրած, ու եդ դիս գալ, թե մի պուտ կթացրիր՝ գլուխըդ տալ տեմ, կթացրիր ոչ՝ աղջիկս տալ տեմ:

Թագավորի աղջիկը տեհել էր, որ տղեն իրեն խնդիրն արել ա, ոնց անի որ էս մինն էլ անի: Տանըմ ա մատնիքը թլիսմ անել տալի, բերըմ ա տղին տալի:

Ասըմ ա. — Էս մատանին որ մատումդ էդ ջուրը բռնես է՛, թամուգ կսառչի, գատ չի վեր դառնալ:

Տղեն մատնիքը դընըմ ա մատը, ստաքանը լիքը ջուրը դընըմ ա գլխին ու ըլում ա չինարթը, ըտիան իրան հոր պալատն երևում ա, սիրտը լցվում, լաց ա ըլըմ: Թագավորն ասըմ ա. — Վեր արի, կթացրիր:

Տղեն ասըմ ա. — Չէ, էդ ըրտասունք ա, լաց եմ ըլել:

Լեզվեն տալիս են, տենըմ են որ աղի ա: Ատաքանի ջուրը տանըմ են քաշըմ, տենըմ են, որ տոչնի ինչ որ տվել են, են էլ կա: Բերըմ են օխտը օր, օխտը քշեր հրսանիք անըմ, տղին ու աղջկան ճամրու դընըմ: Ուշաբն ադաք ա ընգ-նում, տղեն ու աղջիկը էլ եղնում գընըմ են: Գընըմ են հասնըմ գրանիցը, ուշաբը պայթում ա, դառնըմ ա մի սիրուն տղա, պատմում ա թագավորի տղին գլխի էկածը: Թագավորի տղեն ասըմ ա. — Որ քու թլիսմը էս աղջիկը

իրան հորից ուզելն էր, քեզ հալալ ըլի, արի գնանք մեր քաղաքը, ապրի մեզ հետ մեր պալատումը:

Տղեն ասըմ ա. — Շնորհակալ եմ, ես էլի մուրագ ունեմ, համա էդ մուրագը ես ու իմ կնիկը կկատարենք, դու գնա քու ճամբովը:

Թագավորի տղեն գալիս ա, հասնում ա հոր պալատի ադաքը, հերը տղին տենալու դադա, ուրախանելեն, թագը դընըմ ա էդ տղի գլխին, ասըմ ա. — Ինչ լավ ա, որ էկար, ես էլ գիդայի քեզ ուշաբը փչացրել ա:

Ըստի էլ օխտը օր, օխտը քշեր հրսանիք են անըմ, տղին թագավոր նշանակում: Մեկել տղերքին նագիր-վեգիրներ են նշանակում: Իրանք հասան իրանց մուրագին, դուք էլ հասեք ձեր մուրագին:

10. ՉՈՓՉԻՆ

Մի կնիկ ա ըլըմ մի տղա ա ունենըմ: Էդ տղեն օրական մի շալակ փետ ա մեշիցը բերըմ, բազարումը ծախըմ, օրը երկու հաց ա տուն բերըմ, դրանք մի շուն ու կատու են ունենըմ, մի հացը կես անըմ, կեսը ինքն ա ուտում, կեսը մերը, մի հացն էլ կես ա անըմ, կեսը շանը, կեսը կատվին:

Մերն ասըմ ա. — Ա՛յ տղա, դրանց կերածն էլ մենք կուտենք, դրանց ուտդ արա:

Տղեն ասըմ ա. — Չէ, չէ մերա ջան, ես սոված կմնամ, իմ փայ հացը քեզ կտամ, դու կեր:

Մերն էլ իրան տղին դմիշ չի անըմ որ սոված մնա:

Օրերի մի օր տղեն փետ անելի տեղը մի քոթուկ որ տեղնահան անում, տենըմ ա մի հուլ ըտի վեր ընգած: Վեր ա ունում գալի: Հասնըմ ա տուն, ասըմ ա. — Հուլ ջան, հուլ, մի սեղան բաց արա, մի կուշտ ու տռուգ ուտենք, է՛:

Մեղանը ռաց ա ըլըմ, մերն էլ, տղեն էլ, շունն էլ, կատուն էլ ուտում են, կշտանում են, հլա մնըմ էլ ա:

Տղեն ասըմ ա. – Նանի, գնա թագավորին ասա էկել եմ աղջիկըդ իմ տղի հմա ուզելու:

Մերը թե. – Այ տղա, թագավորը քեզ աղջիկ կտա՞:

Տղեն ասըմ ա. – Մերա, քունն են ա, գնաս ասես:

Մերը գընըմ ա, թագավորի ինամախոսի քարին նստում ա. գնում են թագավորին խաբար են տանում, թե. – Թագավորն ապրած կենա, չոփչու մերը էկել ա, ինամախոսի քարին նստել ա.

Թագավորն ասըմ ա. – Թող արեք նես գա:

Պառավը մտնում ա պալատ, գլուխ ա տալի, ասըմ ա. – Թագավորն ապրած կենա, իմ տղեն դարգել ա, որ գամ քու աղջիկն ուզեմ իրան հմա:

Թագավորն ասըմ ա. – Դե, գե, թագավորական օրենքը զիդաս ո՞նց ա:

Ասըմ ա. – Չէ, ասա զիդենամ:

– Տղիդ իրեք խնդիր կտամ, թե կկատարի՝ աղջիկն կտամ, թե կատարիլ չի՝ գլուխը կտրեն:

Առաջին պայմանը թագավորն ասում ա. պառավը տզին անիծելով պալատից դուս ա գալի, տուն ա մտնում, ասում ա. – Տո րեմուբագ, թագավորն ուզում ա էս քերիս մի պալատ շինես, ո՞նց տես շինել, կարալ չես ոտըդ յորդանիդ գյորա մեկնես:

Տղեն ասըմ ա. – Մերա ջան, վախիլ մի, դու գնա քնի:

Ըրիգունը տղեն դուս ա գալի օթախիցը, հուլը հանըմ ա, ասըմ ա. «Հուլ ջան, հուլ ջան, էս քերիս ըստի հենց պալատ շինի, որ թագավորի պալատիցը լավն ըլի»: Ըռավողը վեր են կենըմ, տենըմ են՝ պատրաստ ա: Թագավորի ծառաները գընըմ են, խաբարը տանըմ, թագավորը հվատում չի: Գալիս ա տենըմ, իրա պալատաիցն էլ լավը:

Թագավորն ասըմ ա. – Էս քերիս մի խալիչա գործի, որ իմ աղջիկը իմ տանիցը գնա ժամը, ժամից գա ձեղ տուն, ոտը գեդնին չդնի, խալիչի վոռվը գնա:

Պառավն էլի տղին անիծելով տուն ա

գալի, տղեն մորը սիրտ ա տալի, ասըմ ա՝ գնա դու քնի:

Հուլը եղ էլ ա ստեղծում:

Թագավորը երրորդ պայմանն էլ ա դնում, ասըմ ա. – Էդ խալըչի էս կոնովն էլ, են կոնովն էլ ծառ տես տնկիլ, որ արևը աղջկաս գլխին տա ոչ, չվաքովը գնա, գա:

Հուլը եղ էլ ա ստեղծում:

Թագավորը կանչում ա աղջկանը, ասըմ ա. – Քեզ ուզեցան ա ըլել, մարդի տիմ տալ:

Ասիլ մի թագավորի աղջիկը մի արաբ սիրած ա ըլըմ ու նրան ա ուզելիս ըլըմ, համա թագավորն ասըմ ա. – Մի քերում պալատը շինեց, մի քերում իալին գծեց, մի քերում բաղը գծեց, քեզ ում տեմ տալ, որ եղ տղից լավը ըլի, ուզիլ տես, թե չէ՝ գլուխըդ կտրել կտամ:

Գլխի կտրելու ամունը որ տալիս ա, աղջիկն ուզում ա: Ուզում ա թե չէ, եղ տզի տեղը նեղում ա, թե՛ եղ ո՞նց արիը, եղ ի՞նչ արիը:

Մի ամիս քաշում ա, տղին զգվացնում ա, են հուլը շանց ա տալի, ասում ա. – Են հուլի հունարն էր, այ էս հուլը տիե աներ:

Քերիս քնում են թե չէ, աղջիկը եղ հուլը վեր ա ունում, ասըմ ա. – Հուլ ջան, հուլ ջան, են ծովի մեջտեղը, որ մի կղզի կա՝ ընդի մի աչք օթախ ըլի, ես ու իմ սիրածը միջին, էս պառավի տղեն էլ ֆորի միջին ըլի:

Կատարվում ա:

Խաբարը տանք շանն ու կատվից:

Շունն ու կատուն սովում են: Վեր են կենըմ, գընըմ են եղ ծովոն դեմ առնըմ: Շունը կատզին շլակում ա, անց են կենըմ են ցամաք տեղը, գընըմ են, տենըմ են՝ ակոշկեն կոտրած, ակոշկովը տուն են ընգնում, տենըմ են՝ սեղանը բիթը, ուտում են, շունն էլ ա կշտանում, կատուն էլ: Հմի հուլը գընում չեն: Կատուն, որ տենըմ ա դրանց ջերերումը զատ չկա, պոչի ծեղը տանըմ ա աղջկա քթի ծեղը կոխում, խուտուտ տալի, փոշտում ա թե չէ՝ հուլը բերնիցը վեր ա ընգնում: Կատուն հուլը վեր ա ունում, դուս են գալի, հասնում են ծովի

դրադը թե չէ՝ շունն ասըմ ա, թե. — Հուլը ինձ կտաս, քեզ անց կկացնեն, թե չէ՝ անց չեմ կըցնիլ:

Կատուն ասըմ ա. — Թե անց չես կըցնիլ, կկենանք, կգարթենն, կգան հուլը կխլեն, կտանեն:

Հուլը տալիս ա շանը, շունը ըռխում ա ու կատվին շլակում, գալիս են, որ էս դրադիցը մոդանըմ ա, մի ծուկ գալիս ա, լեղ տալի, շունը համր ա անըմ, թե ծուկը բռնի, հուլը վեր ա ընկնում, էդ ծուկը կուլ ա տալի: Շունն ու կատուն գալիս են էն ծովի դրադի ցամաք տեղը վեր դառնում: Թոռքերքը գալիս են թոռ գծում: Քանի թոռ են գծըմ, դարդակ ա ըլըմ, քանի թոռ գծըմ, դարդակ ա ըլըմ: Ասըմ են. — Այ տղա, էս շան ու կատվո բախտիցը հլա գծենք:

Գծում են թե չէ, թոռը լիքը դուս ա գալի: Կատուն էդ ծուկը ճմանչում ա, չամգով տալիս ա, ըռխում ա թե չէ՝ թոռչին վեր ունում, դենը վոա անըմ: Փոքը ճղում ա, հանըմ ա հուլը: Հմել հո անց կենացնելու չի: Կատուն հուլը վեր ա ունում, շան հետ գընըմ են: Գընըմ են, հասնըմ են ֆորին, ֆորի գլխին համ մոմռացնում են, համ էլ քանդում են, որ մի ծակ բաց անեն: Չնգրշտորում են, վերջը մի մկան ծակ ա բաց ըլըմ, հուլը էդ մկան ծակովը վեր են գծում, գըկըմ ա ընգնըմ տղի գոքը: Տղեն վեր ա ունում, տենըմ ա՝ հուլն ա. «Հուլ ջան, հուլ ջան, էս նեդ տեղիցն ազատի»:

Ազատում ա: Տղեն, շունն ու կատուն գընըմ են տուն: Տղեն ասում ա. — Հուլ ջան, հուլ, վոագ մի սեղան բաց արա, կուշտ ու տոռուգ ուտենք:

Սեղանը բաց ա ըլըմ, պառավն էլ, տղեն էլ, շունն էլ, կատուն էլ սոված են, ուտում են, կշտանում:

Խաբարը տանք թագավորիցը: Թագավորը գարմանըմ ա, թե՝ էս խի չի իմ աղջիկը հերանց գալի: Չոփչին որ պալատ ա ներս մտնըմ, թագավորն հաղց ա տալի աղջկա մասին, տղեն ասըմ ա. — Թագավորն ապրած կենա, շատին դիմացել ես, քչին էլ դիմացի: Էս մի քշերը համփերի, քու աղջիկը կգա քու դուռը:

Ըրիգունը տղեն հուլը հանըմ ա, ասըմ ա. — Հուլ ջան, հուլ, թագավորի աղջիկն ու սիրեկանը իբանց օթախովը թագավորի պալատի աղաքին դուս գան:

Ըռավողը թագավորը վեր ա կենըմ, պալատից դուս ա էլնում, տղեն ըտի կաղնած ա, ասըմ ա. — Թագավորն ապրած կենա, ըհետ, այ աղջիկըդ:

Թագավորը տենըմ ա, աղջիկը արաբի հետ օթախումը քնած:

Թագավորը աղջկան էլ, արաբին էլ գլխները կտրել ա տալի, գըկըմ ա հարևան թագավորի աղջիկը ուզում ա էդ տղին, հրսանիք անըմ:

Նըանք հասան իրանց մուբաղին, դուք էլ հասնեք ձեր մուրագին:

11. ԲՅԱՍԻՐԻ ՏՂԵՆ ՈՒ ԹԱԳԱՎՈՐԻ ԱՂՋԻԿԸ

Շատ հին ժամանակներում մի մաըդ ու մի կին են ըլում, ունենում են մի հատ տղա: Էդ տղեն լավ սովորելիս ա ըլում: Մարդը հինգ տարի չարչարվում ա, տակըռի ա հանում, ծախում՝ իրանց գոյությունը պաշտպանելու հմա, տղին դարգում ա ուսումի: Տղեն ճանապարհ ա ընգնում, գնում, շատ ա գնում, քիչ ա գնում, պատահում ա մի մարդի, որ մի դիակ հանած ծեծում ա, հաբց ա տալի. — Այ մարդ, էդ դիակոն խի ես ծեծում:

Մարդն ասում ա. — Էս մաըդը ինձ հինգ մանեթ էր պաըտք, մեռավ, չկարեցավ տա, ամեն պաըտքը միտս ընկնելով ծեծում եմ, սիրտս հովանա: Տղեն ձեռի էլած հինգ մանեթ փողը հանում ա, տալի: Էդ մաըդուն ասում ա. «Էդ մեռելը թաղի», ինքը գալիս ա տուն:

Մեըդ տղին որ տենում ա, արմանում ա, ասում ա. — Տղա ջան, ի՞նչ եդ էկար:

Տղեն թե. — Սհե, սհե:

Մեըդ թե. — Լավ հս արել, հաց ու պանիր ա, մի օր առաջդ կգա:

Տղեն ասում ա. — Բա հոըս պատասխանն ի՞նչ պտի տամ:

Մերն ասում ա. – Հորըդ պատասխանը ես կտամ:

Տարին անց կացավ, նույն ժամանակը տղեն էլի ճանապարհ ընկավ, գնաց: Գնաց, գնաց, մի կարմունջի հանդիպավ, տեհավ կարմունջին մի տղա կանգնած: Տղեն հարց տվավ, – Ու՞ր ես գնում:

Թե. – Սովորելու:

– Ես էլ եմ սովորելու գնում:

– Ինչքա՞ն փող ունես ձեռիդ:

– Հինգ մանեթ:

– Հինգ էլ ես ունեմ:

– Արի ախպերանանք:

Տղերքը ախպերացան ու ճամբա ընկան, գնացին, գնացին, հասան իրանց ուսմանը: Գնացին տեսան, որ թագավորը հրաման ա տվե, որ – Մինչև այգիներիս միրգը չհավաքեմ, ուսումնառանը չեմ բացում:

Քյասիբի տղեն ասավ, – Արի մենք էլ գնանք, այգին փորենք, պտուղները հավաքենք, մեզ աչքի առաջ կունենա:

Գնացին այգի, քյասիբի տղեն տեհավ թագավորի աղջկան, վոեն սիրահարվեց: Տղերքը որ ախպերացան, որոշեցին որ ինչ դատեն, գան կաղմնջի վրա կըսեն, նորից գնան իրանց գործին: Քյասիբի տղեն ընկերոջը դրգում ա, թե. – Գնա թագավորի աղջկան ուզի ինձ հմար:

Տղեն ասում ա. – Այ ախպեր, թագավորը մեզ աղջիկ չի տա:

Ասում ա. – Գնա, քո ինչ գործն ա:

Տղեն ասում ա. – Դե իմ ձեռի փողն էլ, քո ձեռի փողն էլ վեր կալ, գնա դարոնի մոտ, մի թուր սաղքել տուր, գնա մի հատ էլ դագաղ սարքել տուր:

Ասում ա, գնում: Տղեն գնում ա թագավորի խնամախոսի քարին նստում ա: Թագավորն իր վեզիրին ասում ա. – Գնա էդ ջահելի գործը դգի, թող գնա:

Վազիրը գալիս ա տգի մոտ, հարցնում ա, թե՝ ի՞նչ ա ուզում:

Տղեն ասում ա. – Գնա թագավորին ասա, ես քարի վոեն նստողը խի ա գալի:

Վազիրը գնում ա, ասում թագավորին, թագավորն ասում ա. – Գնացեք ասեք էդ տղին, թող գա:

Տղեն գալիս ա, թագավորը կարգադրում ա տղին հաց տան. տղեն ուտում ա, կըշտանում, հարց ա տալի:

– Թագավորն ապրած կենա, բա իսի՞ չես հարցնում թե՛ ես իսի եմ եկել:

Թագավորն ասում ա. – Ասա:

– Էկել եմ քու աղջկանն իմ ախպոր հմար ուզեմ:

Թագավորը դիմում ա վեզիրին. – Տար ես տգին ցույց տուր, պատմիր հետ բեր:

Վեզիրը տղին տանում ցույց ա տալի մի մեծ սենյակ՝ լիքը ջահել տղերանց քարե արձաններով, ասում ա. – Տեսնու՞մ ես էս տղերանցը, դու էլ սրանց նման կդառնաս, չգիտենք ընչից ա, ով որ գալիս ա թագավորի աղջկան ուղելու, հլա աղջկա հետ չխոսած, քար ա դառնում:

Ասում ա. – Բան չկա, ոնց էս բոլորը, իմ ախպերն էլ դրանց հետ:

Տղեն գալիս ա տուն, առնում ա թուրը, քյասիբի տգի հետ վեր են ունում դագաղը և գնում են պալատ: Թագավորի առաջ բարև բռնած կանգնում են: Թագավորը կարգադրում ա, սեղան են գցում, նստում են, ուտում են, խմում են, աղքատի տղեն ասում ա. – Թագավորն ապրած կենա, մեր երկու ախպոր հինգ տարվա դատած ոսկըն էս յաշիկումն ա, ուր որ գնանք, մեզ հետ կտանենք:

Թագավորը ոսկու մեռած մարդ էր, թույլ ա տալի, որ տղեն դագաղը տանի աղջկա օթախը: Դու մի ասա թագավորի աղջիկն էլ իրա հերթին ա տղին հավանած ըլում: Նստում են տղեն ու աղջիկը դեմ դիմաց, տղեն խոսացնում ա աղջկան, համա աղջիկը վախում ա պատասխան տա, որ տղեն չմահանա: Տղեն որ շատ ա ստիպում աղջկանը, աղջիկը էնա ուզում ա բերանը ռաց անի, բերանից մի սև օձ ա դուս գալի, հարձակվում ա տղի վոեն, համա յաշիկի միջից մեկել տղեն վեր ա թռնում, օձին սպանում: Աղջիկը բերանը բանում ա, որ տղին

ասի, որ ինքն էլ տղին ա սիրում, էլի ռերանից մի սև օձ դուս ա գալի, գնում տղի յանը, ռայց մեկել տղեն օձին սպանում ա:

Թագավորը վեզիրին ուղարկում ա, ասում ա. — Գնա տես ինչ կա, ինչ չկա:

Վեզիրը գնում ա թագավորին ասում ա. — Թագավորն ապրած կենա, համ տղեն ա սադ, համ աղջիկդ:

Թագավորը կանչում ա տղին, ասում ա. — Ինչքան ոսկի ուզում ես աղջկաս հետ տամ, առ, գնա քու հոր հողը, ռավ ա, ինչքան ջահել-ջիուկ կտորվեց իմ հողի վրա ես աղջկա մեղքովը:

Թագավորը իրեք ջորի ոսկի ու ռըրյանտ ա ռեռնել տալիս, ախպերներն առնում են, գնում: Գնում են, գնում, հասնում են էն կամուրջին, որդի հանդիպել էին:

Ախպերներն ասում են. — Մենք մեր խոսքի տերն ենք, մենք էստի պտի մեր դատածը կիսենք:

Քյասիրի տղեն ասում ա. — Մենք ամեն ռան պտի կիսենք, թագավորի աղջկան էլ պտի կիսենք:

Ոսկին ու ռըրյանտը կիսում են, ռերում են թագավորի աղջկան կանգնեցնում են կարմունջի վրեն, ռռնում են՝ մեկի աջ ձեռքից, մեկը ձախ ձեռքից, ախպերացուն ասում ա. — Ընենց պտի կիսեն, որ գրամի տաըրեղություն չըլնի:

Աղջիկը, որ էդ լսում ա, վախից ծվում ա, ռերանից մի շանհաը օձ ա դուրս գալի: Տղեն օձին սպանում ա, ասում ա թագավորի փեսացուին. — Էս օձին տեհար, էրկուսն էլ պալատում են սպանել, դու տեհար ոչ: Ես կենդանի մարդ չեմ, շողք եմ քու կիղքին, ես եմ մեռելն եմ, որ փողը տվոր, ինձ թաղել տվեր:

Տղեն ասում ա ու անհետանում ա, քյասիրի տղեն առնում ա հարստությունը, նորից ռարծում ա ջորիները, թագավորի աղջկա հետ գնում ա իրանց տունը:

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

Ըլում ա չի ըլում մի ձկնորս ա ըլում: Էդ ձկնորսը օրական ձուկ որսալիս ա ըլում և նրանով իրան ընտանիքը պաշտպանում: Մի օր էլ ձուկ որսալիս ա ըլում թռռը մեծ ձուկ ա ընկնում: Ինքը կարըմ չի թռռը ջրից հանի: Թռռի մի ծերը կապում ա մի ծառից, ինքը գալի տղին օգնության կանչում: Էրկուսով չարչարվում են, էլի ձուկը կարըմ չեն հանեն, կնոջըն էլ են կանչըմ: Իրեքով մի կերպ ջրից դուրս են հանըմ, դընում ջրի դրաղը: Ձուկը շատ մեծ ա ըլում, ձեռքով տանել չի ըլում: Յերը տղին ասում ա, թե. — Գնա հարևանի սելը ուզի ձուկը տուն տանենք, սելատիրոջն էլ փայ խոստացի:

Տղեն ասում ա. — Այ հեր, ես գնամ, նա ինձ սել չի տալու, ավելի լավ կըլի դու գնաս:

Մարգն ու կնիկը գնում են սելը ռերեն, տղեն մնում ա ձկան մոտ: Աստու կողմից ձուկը լեգու ա առնըմ, ըսկսում ա տզի հետը խոսալը, թե. — Խնդրում եմ, ինձ թող գնամ, ես քեզ պետք կգամ, լավությունըդ չեմ մոռանա:

Իրեք անգամ խնդրելուց հետո, տղի խիղճը տանջում ա, որոշում ա ձկանը էլ եդ գցի ջուրը: Ձուկն ասում ա. — Այ տղա, հորդ չասես, որ դու ես ինձ ջուրը գցել, ասա՝ ձուկն իրան թափ տվուց, ինձ էլ պոչով իսկեց, վեր գցեց, ընգավ ջուրը գնաց: Մեկ ա, հերդ քեզ ծեծելու ա, ռր տիենց ասես, քիչ կծեծի:

Էտենց էլ ըլում ա: Յերը սելը ող ռերում ա, տենում ա տղեն լաց ա ըլում, ձուկն էլ չկա, հարցնում ա. — Ու՞ր ա ձուկը:

Տղեն պատասխանում ա, ոնց ող ձուկը իյրատ էը տվել, թե. — Ձուկը պոչով թափ տվեց, ինձ վեր գցեց, ինքն էլ ընկավ ջուրը, գնաց:

Յերը շատ իյիստ ռարկանում ա տղի վրա, ու մի լավ ծեծում ա: Ըրիգունը պարապ տուն են գալի, առանց ձկան որսի: Էդ օրը դրանք մնում են սոված: Իրեք օր դրանք սոված են մնում, և էդ իրեք օըն էլ հերը տղին ծեծում ա: Շատ ծեծ ուտելուց տղե ջանին որ հասնըմ ա, տունը թոգնըմ ա, կորչըմ տանից:

Շատ ա գընըմ, քիչ ա գընըմ, գնալու ժամանակ մի մեծ ջրի ա պատահում, տենում ա, որ եդ ջրի վրա մի կարմունջ կա, եդ կարմընջի են մի ծերին իբա մման մի սղա ա կանգնած: Սոտենում ա նբան, հարցնում ա. — Ո՞վ ես, ու՞ր ես գնում:

Տղեն պատասխանում ա, թե. — Քյասիր տղա եմ, ման եմ գալի մի գործ ճարեն:

Ասում ա. — Ես էլ եմ քու օրին, արի գնանք մի տեղ աշխատենք:

Էդ կարմընջից էրկու ճանապարհ ա բաժանվում, որոշում են ամենքը մի ճամբով գնան, մի տարին լրանալու օրը նույն կարմընջի ծերին հանդիպեն, իբանց աշխատած եկամուտը ախպոր մման կիսեն: Եվ էդպիսով բաժանվում են իրարից, ամենքը մի ճամբով գնում:

Ձկնորսի տղեն գնում ա, գնում, հանդիպում ա մի հարստի, դառնում ա դագապահ՝ մի տարվա պայմանը՝ իրեք ոսկի:

Խոսքը տանք մեկել ընկերոջը: Մի թագավորի աղջիկ լալ ա ըլում: Իմաստունները ինչքան չարչարվում են, չեն կարըմ գաղտնիքը գտնեն, թե աղջիկը ընչի չի խոսում: Թագավորը խոստանում ա, ով որ կարենա իրա աղջկան խոսացնի, աղջիկը կտա ու էրկուսի քաշովը ոսկի կտա: Տղեն լսում ա թագավորի հրամանը, գնում ա թագավորի մոտը, ասում ա. — Թագավորն ապրած կենա, ես կարամ խոսացնեմ քու աղջկանը, համա ես աղքատ տղա եմ, կարող ա դու խոստումիցըդ դուս ըլիս, մի թղթի գրի, տուր, որ ես համոզված ըլեմ, որ խոսքիդ տերը կըլնես:

Թագավորը թուղթը գրում, պեչատում ա, տալի տղին: Տղեն ասում ա. — Թագավորն ապրած կենա, աղջիկըդ որ օթախըմ որ ապրում ա, եմ օթախի մեջտեղից մի հատ փարդի կապել տուր, դու ու թագուհիդ լսողի դերերում եղեք, ես գնում եմ աղջկանդ մոտ:

Թագավորը տղի պահանջը կատարում ա: Տղեն հաքի շորերը հանըմ ա, գնում ա աղջկա մոտ, աղջիկը երբ էդ ձևի՝ տկլոր տենում ա տղին, շատ խիստ ջղայնանում ա, ձեռով, ոտով, ունքով հասկացնում ա, որ դուրս գնա:

Տղեն ուշք չի դարձնում, ասում ա. — Ես բողոք ունեմ, բողոքս լսիր:

Եվ սկսում ա իրան բողոքը պատմել: Էդ ընթացքում աղջիկը հա ուզում ա նրան օթախից դուրս անել, բայց տղեն ուշք չի դարձնում, շարունակում ա իրան բողոքը, ասում ա. — Մենք իրեք ընկեր էինք: Մեկս՝ դուրգյար, մեկը՝ պարտնոյ, մեկելն էլ՝ մոլլա: Գամբի վոա մի տան դոնախ ընգանք: Տան տեբը մեզ լավ հյուրասիրեց, հետո ջոկ օթախում տեղ պատրաստեց քնելու: Օթախի մեջ շատ տախտակ կաբ, գիշերվա մի վսիստ, որ դուրգյարի քունը կտրում ա, վեր ա կենում էդ տախտակից փետե մարդ ա սարքում, գալի իրան տեղը քնում: Գիշերվա մի վսիստ դերձակն ա զարթնում, տենում ա իրա էրկու ընգերները քնած են, մեկն էլ դիմացը կանգնած ա: Ձեն ա տալի, տենում ա փետից ա. սկսում ա դրա հըմար շոր կարել, կարըմ հագցնում ա, պառկում քնում ա: Մոլլա ընկերն ա զարթնում, տենում ա էրկու ընգերները քնած են, մի մարդ էլ առաջը կանգնած ա, մոտենում ա, տենում ա փետից աղջիկ ա՝ շոր հագած, առանց հոգու: Մոլլան ադոթում ա աստծուն, որ էդ փետից սարքած աղջկան շունչ տա: Խնդրանքը աստված ընդունում ա, հոգի ա տալի փետին, դառնում ա կենդանի աղջիկ: Դրա հըմաբ հմի իրեքս կռվում ենք, դուրգյարն ուզում ա ինքը առնի, մոլլեն ուզում ա ինքը առնի: Դմի քեզ եմ եարցնում, ասա, էդ աղջիկը որ ընգերոջն ա հասնում:

Աղջիկը էլի ջղայնացած ձեռք ու ոտքով տղին օթախից դուրս անել ա ցանկանում, բայց տղեն րանի տեղ չընելով իրան խոսքն ա պնդում, թե. «Մինչև չասես ումն ա հասնելու աղջիկը, ես չեմ գնա»: Ստիպված աղջիկը ձեռքը գնում ա բկին, հաղիվ հազ, առանց լսելի ձայնով ասում ա՝ «դյուրգյարին կհասնի»: Տղեն ձեռը գնում ա ականջին, ասում ա. «Ի՞նչ ասիր, չլսեցի»: Էտենց ա անում, որ թագավորն ու թագուհին փարդի հետևում լսեն: Աղջիկը նորից ա ասըմ, որ դուրգյարին կհասնի: Տղեն ասում ա. «Դայիմ ասա, չեմ լսում, անգանջնիս

ծանդըր ա»: Աղջիկը երրորդ անգամ կրկնում ա, որ ոյուրգարին կոասու:

Տղան թողնում ա դուրս գալի, շորերը հագնում ա, գնում ա թագավորի մուտ: Թագավորին ասում ա. — Լսեցի՞ր, աղջըկադ խոսակցութիւնը:

Թագավորն ասում ա. — Շատ ապրես, տղա, լսեցի:

Թագավորը խոստումի տերն ա լինում: Աղջկան տալիս ա էդ տղին և մեծ հարստութիւնով ուղարկում ա տուն:

Արդեն տարին լրանում ա, տարին լրանալու օրը, կարմունջի ծերին իրան ընգերոջն ա սպասում: Աի ժամ սպասելուց հետո ձկնորսի տղեն ա գալի, փաթաթվում են իրար, համբուրվում են, հարց ու փորձ անում, թե որը ինչքան ա վաստակել մեկ տարում: Ձկնորսի տղեն տալիս ա իրա իրեք ոսկին, իսկ մեկել ընկերն ասում ա. — Ես աշխատել եմ յոթ խուրջին ոսկի, մի ձի, մի կին, մի հատ թուր, մի հատ թվանք: Մեր խոստումը խոստում ա, պտի հավասար ախպոր բաժին անենք:

Սկսում են կիսել: Ձկնորսի տղեն իրեք ոսկուց էրկուսը տալիս ա իրան, մի հատ էլ խուրջինից հանում, ասում ա՝ էս էրկուսն էլ ինձ:

Մեկելը իրան վաստակից իրեք խուրջինը տալիս ա ընկերոջը, իրեքը վերցնում ա ինքը: Յոթերորդ խուրջինը կիսում ա, կեսը տալիս ա ձկնորսի տղուն: Հրացանը տալիս ա տղուն, թուրը վերցնում ինքը: Մնում ա ձին ու աղջիկը, ոք կիսել հնարավոր չի:

Մեր պայմանը պայման ա, — ասում ա տղեն, — պտի սրանց կիսենք:

Ձկնորսի տղեն ինչքան աղաչանք ա անում, որ դրանք կենդանի շունչ են, կեսել չի կարելի, տղեն ասում ա՝ չէ, պտի կիսենք: Թուրը վեր ա ունում ու կենդանի ձիուն միջից կիսում: Մնում ա աղջիկը. ձկնորսի տղին ստիպում ա, որ արի ձեռքից բռնի, սրան էլ պտի կիսեն: Ձկնորսի տղեն բռնում ա աղջկա մի կոնիցը, մեկելը մեկել կոնիցը, թուրի թարս յանը իջացնում ա աղջկա գլխին, շարժում ա՝

մթամ փախս ա տալի: Աղջիկը վախից էնպիսի գոռոց ա առաջացնում, որ բերանից գորտեր ու կարրճներ են թափվում: Դրանից ա, որ աղջիկը չի կարեցել խոսի, ու փրգվում ա ամեն ցավից: Տղեն ասում ա. — Այ տղա, էստի վնասվեց միայն մի ձի ու մի խուրջին, որ միջից կիսեցինք: Առ էս թուրն էլ քեզ, քու տված ոսկին էլ քեզ, իմ փայն էլ քեզ, աղջիկն էլ քեզ: Ես են ծուկն են, որ դու փրկեցիր:

Ասում ա, թռչում, ընկնում ա ջուրը, գնում, իսկ ձկնորսի տղեն առնում ա աղջկան ու հարստութիւնը, գնում ա տուն:

Ասսամեն իրեք խնձոր ընգավ. մեկը՝ ասողին, մեկի՝ գրողին, մեկելն էլ՝ լսողներին:

13. ՎԵՐԱԸՆԴԻՒՄ ՀԵՔԻԱԹԸ

Աի աղքատ մարդ ա ըլում, ինքն ու մի կին: Էդ կինը էնքան սիրում ա ըլում, որ արկին ասում ա՝ դու դուս մի գալ, ես պատրաստ եմ: Արի որ շատ քյասիբության մեջ ա ըլում: Կնիկն ասում ա. — Այ, մարդ, արի դու գնա աշխատանքի, ես էլ ֆահրա-բան մանեն, դու էլ կաշխատես, կբերես, մի կերպ կապրենք:

Մարդն ասում ա. — Է՛, այ կնիկ, ես վախում եմ, եթե ես գնամ, դու ոտդ դուս կդնես:

— Այ մարդ, արի ադ ու հացը բերենք երդվենք, դու գնա քու ըշխատանքին:

— Շատ բարի, այ կնիկ, — ասում ա մարդը:

Բերում են ադ ու եացը վեր են դնում, կնիկն ասում ա. — Եթե քեզանից դեննը մեկն ինձ դիպչի, թող աչքերս քռանան:

Էդ մարդու հմա որդից մի կտոր հաց ա ճաբըմ, քյասիբ մարդ, ո՞ր հրեվանը հաց կտա, տանը չկա փոխը տան, մի կսոր ճաբըմ ա, բերում, դընըմ ա չուխի դոշին ու յալլա, վեր ա կենում, գընըմ: Շատ ա գընըմ, քիչ ա գընըմ, մի հարուստ հեթանոսի նոքար ա ըլում: Թե ի՞նչ ա նրա նոքարութիւնը. րազըզյանին, որ գալիս են ձիու ադրը դուս աա, գոմը պատրաստի, էդ ա: Ոչ փող ա բարըշըմ, ոչ հալա: Հաց փորի բարըշըմ ա, ըղի կենում ա:

Մի քանի ժամանակ անց ա կենում, մի քանի ժամանակից եղը դոա կինը ձեռները ծոցին կանգնած ա ըլում, մեկ էլ տենում ա մի մարդ էկավ:

– Բարի ըրիգուն, այ քիրա:

– Աստծու բարին:

– Այ քիրս, – ասում ա էդ մարդը, – էս գիշեր ինձ դոնախատեղ տուր, գշերս ըստե մնամ:

– Այ ախպեր, դոնախն աստծունն ա, – ասում ա կինը, – համեցեք, արի:

Մարդը գալիս ա տուն, հմի դոնախ ա էկե, ճամփորդ մարդ ա, սոված ա, էդ խեղճ կինն էլ մի բան չունի, ի՞նչ անի: Էդ մարդուն տանը թողնում ա, ինքը էս հրեվանի տունը, էն հրեվանի տունը, օջուվք էլ հաց չեն տալի: Մի քիչ ժամանակ, որ եղանում ա, գալիս ա տուն, էդ մարդն ասում ա. – Այ քիրա, ախր ինձ մենակ ըստի թողիր, դու ու՞ր գնացիր:

– Է՛լ, ախպեր ջան, ասանեն թաքուն չի, քեզանեն ինչ թաքուն ըլի, տանս հաց չկա, դու էլ ճամբորդ մարդ ես, սոված ես, րա ի՞նչ անեն:

– Վա՛յ, այ քիրա, առ էսքան ոսկի, գնա ճաշարանից հավ կըլի, դագ կըլի, հնդուշկա կըլի, էս մի շալովն էլ գինի առ, արի ուտենք, խմենք, քնենք:

Էդ կնիկը վեր ա կենում, ճաշարանից ամեն րան բերում ա, ուտում են, մութը, քնելու ժամանակ մի տեղը էստի ա գցում, մի տեղ, էնդի: Էդ մարդն ասում ա. – Այ քիր, մութն օջախ, իրար կշտի քնենք, ու՞ր ես ջաֆա քաշում, էրկու տեղ գցում:

– Չէ, այ ախպեր, – ասում ա կինը, – խնդրում եմ էդ մասին խոսաս ոչ, էս չախին դոնախը եթե տնից դուրս հանեմ՝ համ ինձ հմա չի լավ, համ քեզ հմա չի լավ: Քնի, վե կաց, գնա:

Սա հա, դա չէ, վերջը շատ որ դես, դենը, էդ մաղղը սկսում ա քնել: Աստված երգնքից մի հրեշտակ ա դարգում, ասում ա. «Եթե երդումին հաստատ կըլի, թող որ ամեն գշեր գլխի տակին մի քիսա ոսկի ըլի, եթե չէ՝ աչքերը քոռանա, կուրի-կուր ման գա»:

Էդ գիշեր, մինչև լիս էդ կնգանը չարչարում ա որպես հրեշտակ, չարչարում ա, չարչարում, էդ կինը մոտ չի գալի, գշերվա մի վախտ, մինչ լուսաբաց քունը գրռում ա, քնում ա, ըռավողը վեր ա կենում, տենում ա մութաքեն էդ մարդի տեղը դռած, էդ մարդը չկա:

– Վա՛յ, – ասում ա, – հողերը գլխիս, էդ շան որդին էկավ էդքան չարչարեց, վայ թե ինձ իայտառակ արավ, ես չիմացա, քնած մացի, հրեվանին ասեմ, ու՞մ ասեմ, որ անունս դուրս չնգնի, ի՞նչ անեմ:

Վերջը տեղերը հվաքում ա, տենում ա մի քիսա գլխի տակին: Այ մարդ, էս ի՞նչ բան ա: Մյուս գշեր էլ աստված երգնքից հրեշտակ ա դրգում, ասում ա. «Գնա էդ տնումը փորձառություն առա, եթե ճիշտ կըլի իրա երդումին, թող աշխարքի ծովո ավազի չափ կարողություն, ապրանք, դոլվաթ ունենա»: Յրեշտակը գալիս ա, ինչքան որ չարչարում ա էդ կնգանը, էդ չկա, կինը ասում ա. – Էդ բանը ինձանում չկա, արի կըլի հանդարտ քնի, վե կաց, գնա: Թե չէ էս չախին վե կաց, գնա, ես չեմ կարա:

Լավ: Մարդը գիշերվա մի վախտը վե կացավ, ճակատին իայ ջաշեց ու գնաց:

Ըռավողը էս կինը վե կացավ, տեհավ ոչ ոք չկա: Մյուս օրն էլ էլի նույնպես, էդ մարդը տեհավ, որ էդ կինը իրա երդումին հաստատ ա:

Մարդը որ գնացել էր, են ժամանակը կինը պատճառավոր էր, կինը ագատվեց, մի հատ տղա րերեց: Կինը ռոռշում ա նամակ գրի մաղդին, մարդի ըվել անունը Վըռըշիկ էր, նամակ գրի Վըռըշիկին, որ գա, ինքը ամեն օր գլխի տակից մի քիսա ոսկի էր գտնըմ, մարդը ով գիաի ռոգի նոքարություն էր անըմ: Էդ գյուղը մի րագրգյան կար, խրիդ էր գընըմ: Նամակը դըրըմ ա, տանըմ րագրգյանին, թե. «Այ բագրգյան ախպեր, երգիրը ման ես գալի, էս նամակը առ, որգի մարդուս կտեսնիս, տուր իրան»: Նամակի մեջ ի՞նչ ա գրում: Գըրըմ ա. «Վըռըշիկ, կինդ ագատվել ա, ըրեխեդ ծղնուրի վըրա ա մնացե. գլուխըդ ըտի թոչի, ըստի վեր արա»: Էդվաթուր ա գրում, որպես թե թեգ գա:

էդ բագրոյանը գնաց. իասսա՛վ են քաղաքը, են բագրոյանի տունը, տեհա՛վ Վըռըշիկը ըտե, կանչեց ասա՛վ. – Վըռըշիկ, կինդ մի մա՛նակ ա տվե:

Նամակը տվեց իրան: Մարդը մամակը վե կալա՛վ պահեց, տվուց իազեիմին, ասա՛վ. – խազեիմ, կնիկս մամակ ա գրել, առ կարդա, տես ինչ ա ասում. ես գիր չգիտեմ:

Խազեիմը կարդաց մամակը, ասա՛վ. – Վըռըշիկ հազար մանեթ հարամ փող կուզես, թե հիսուն մանեթ հալալ:

Վըռըշիկը թե. – Հիսուն մանեթ հալալ փող կուզեմ:

– Առ, – ասա՛վ, – գնա բագարունը ինչ ռաստ գա, առ դարգի, դու եդ արի, քու գնալու վախտը չի:

Վըռըշիկը վի կացա՛վ գնաց, տեհա՛վ երկու երիտասարդ տղա մի եշիկ խնծոր են ծախըմ:

– Գինն ի՞նչ ա:

– Հիսուն մանեթ:

Էդ հիսուն մանեթը տվուց, առա՛վ եշիկը, բերեց, խազեիմը զնոեց, տվուց բագրոյանին ասա՛վ. – Տուր Վըռըշիկի կնգանը:

Վի կալա՛վ բագրոյանը էդ խնծորը, բերուց, Վըռըշիկի կնիկը իմացա՛վ, որ բագրոյանը էկել ա օլուող. ափալ-թափալ վազելով գնաց, ասա՛վ. – Հը, բագրոյան, կարգին մի իաբար:

Ասա՛վ. – Խաբար-մաբաբ չգիտեմ, մի եշիկ բան ա դրգել զմռած, գնա մի փալանչի բի, թող տանի, տես ինչ ա:

Գնաց մի փալանչի բիրեց, էկա՛վ էդ եշիկը տաբա՛վ, ըրիգունը եշիկի դուռը բաց անելու պես տունը լիս ընգա՛վ, ամբողջ ոսկի, անգին քար:

– Քու տունը քանդի Վըռըշիկ, ես ինչի եմ ման գալի, դու ինչի ես ման գալի:

Էնքան մալ, դոլվաթ էլա՛վ, էլ չափը չկա:

Էրեիմեն կնքելու ժամանակ մի քավոր բռնեց, քավորին զակագ տվուց. – Ինձ հմար իրեք հարկանի տներ շինի:

Քավորը սկսեց տուն շինելը, տները շինեց, պրծա՛վ, ենքան մալ ու դոլվաթ ունեը, ութանատուն տնտեսություն գոմեշ կթռդ ունեը:

Օրի մի օր էլի էդ բագրոյանը գնար առևտրի, գնաց մի մամակ տվուց. «Այ քու տունդ քանդվի, տունդ-տեղդ անդեր մնացել ա, արի տանդդ, տեղիդ տիրացի»: Բագրոյանը տարա՛վ մամակը տվուց, կարդաց խազեիմը, ասա՛վ. – Վըռըշիկ, հիսուն մանեթ հարամ փող կուզե՞ս, թե քսանհինգ մանեթ հալալ:

Ասա՛վ. – Հալալ փող կուզեմ:

– Առ, – ասա՛վ, – գնա բագարունը ինչ որ ռաստ կգա, տուր առ, եդ արի:

Գնաց տեհա՛վ մի կատու են ծախում. – Ի՞նչ ա գինը:

– Քսանհինգ մանեթ:

Կառուն առա՛վ, բերուց տվուց իազեիմին, վանդակ շինեց, դրուց մեջը, տվուց բագրոյանին, որ պտի բերի տա կնգանը:

Էս բագրոյանի առևտուրը էդ քաղաքումը անց չկացա՛վ, գնաց դըրա Տարեց քաղաքը: Քյասիբը քյասիբին դոնախ կըլնի, թագավորը՝ թագավորին, բագրոյանը՝ բագրոյանին: Գնաց մի բագրոյանի դոնախ ընգա՛վ: Իրիգունը, որ հաց ուտելու սուփրեն գցեցին, մագիր-վեգիրը, քոծերը, ամենքը մի փետ ձեռները վի կալան, սուփրի չորսի կուռը կտրեցին: Բագրոյանին ասա՛վ. – Բագրոյանն ապրած կենա, թե ծեծելու ես նիենց ծեծի, սուփրեն գցել ես՝ նո՛ր: Էս ինչ բան ա ...

Բագրոյանը թե. – Ըստի տեսակ-տեսակ անասուններ կան, սուփրեն վայելելուն իյանգարում են, նբա հմա դբանք վերցրել ենք:

Մեկ էլ տեսա՛վ են պատի տակիցը մի մուկը ընդեան ա դուս գալի, մեկը ընդեան ա դուս գալի, մինն ընդեան: Են ժամանակը կատվին ինչ ասի՝ ասլան բալասի:

Բագրոյանն ասա՛վ իրա վեգիրին. – Գնա ասլան բալասին բիր:

Ասլան բալասին բերին թե չէ, եստի ֆը՛շտ, էնդի ֆը՛շտ, էլ մուկը կատվի առաջին ի՞նչ կարա անի, պատածակերը մտան, իաբաբը հասա՛վ էդ քաղաքի թագավորին:

– Թագավորն ապրած կենա, բագրոյանի տունը մի դոնախ ա էկե, մի հատ ասլան բալասի ունի, էստեսակ, էստեսակ բան:

Թագավորն էլ քյասիբ մարդ էր էլի, կարար ոչ սուփրա բաց աներ: Էրկու բագրոյանին էլ դոնախ կանչեց: Սուփրա բացեցին, մագիր-վեգիրները, քոծերը եկան սուփրի չորս կուռը լցվեցին:

– Թագավորն ապրած կենա մեզ բերել ես պատվելու, թե պատժելու:

Թագավորն ասավ. – Ասլան բալասին բեր:

Ասլան բալասին բերեցին թե չէ, էլ ինչ մուկը դուս կգա ընդէ, որ սուփրա խանգարի: Կերան, խմեցին, վի կալսն: Թագավորն ասավ. – Ասլան բալասուդ գինն ասա, տամ:

Ասավ. – Չէ, անգին ա, ամանաթ ա, ես դրա գինը չեմ կարա տամ:

– Այ մարդ, – ասավ, – ես թագավոր մարդ, դու ոնց թե չես կարա:

– Չէ, չեմ կարա, դա աստօն ամանաթ ա:

Քաշեց կատվի քաշովը իրեք չափով ոսկի մի դուբլի մեջ զմեց, ասավ. – Բագրոյան, տար ամանաթատիրոջը տուր:

Բագրոյանը դուբլին առավ, գնաց: Վըռըշիկի կնիկը իմացավ որ բագրոյանը էկել ա, ուրախ-ուրախ գնաց, ասավ՝ տենամ ինչ խաբար ա բերել Վըռըշիկիցը: Բագրոյանս ասավ. – Գիտեմ ոչ ինչ ա ինչ չի, մի յաշիկով բան կա՝ դրգել ա, գնա տար:

Գնաց բաց արավ, տեհավ որ բուրդը ոսկի. «Այ քու տունը քանդվի Վըռըշիկ, էս ինչ բան ա, որ դու անում ես»:

Մյուս ժամանակը էլի մի մամակ գրեց: Նամակը տարավ տվուց, խազեինն ասավ. – Վըռըշիկ, քսանհինգ հարամ կուզե՞ս, թե տասներկուսուկես հալալ:

Վըռըշիկը թե. – Չէ, – ասավ. – հալալը կուզեմ:

Թե. – Առ, – ասավ. – էս էրկու հացը փեշդ դիր, գնա, քու ճամփիդ ինչ ռաստ կգա, տուր, բազարդ առ ու գնա:

Վըռըշիկին ճամբու դրին, գնաց: Գնաց, գնաց, տեսավ էրկու տղա մի գորչատկա թվանք ձեռներուն ծախում են:

– Ի՞նչ ա գինը:

– Տասներկու մանեթ հիսուն կոպեկ:

Հանեց սուս-փուս տվուց, առավ, ուսը գցեց, գնաց: Գնաց որ հասավ իրանց ֆողին, սովածացավ: «Գնամ, – ասավ. – էս գութանի կուշտը, մի կտոր հաց ուզեմ, բալքի ճուռըս հասնի, գնամ տուն»:

– Է՛յ բարով. խերով մաճկալ, ուրախութենի վարեք, էս ու՞մ գութանն ա:

– Վըռըշիկինն ա:

Ամանչեց, ասավ. «Հա՛յ-հարայ, էվել ա-մունս տալիս են, մասխարա են անըմ»: Այնինչ իրանն ա: Ասավ. «Գնամ էն դավայի էլխի կուշտը, նրանե մի կտոր հաց ուզեմ, բալքի ծնկներս բռնե, գնամ տուն»:

Գնաց, ասավ. – Բարաջողում, այ էլխաչի, էս ում էլխեն ա:

– Վըռըշիկինն ա:

Ամանչեց, ըստեղ էլ հաց չուզեց: Անց կացավ մյուս տեղը, որդի գնաց հարցնելով. բուրդն ասին՝ Վըռըշիկինն ա: Իլլաջը կտրած անոթի, մի կերպ, ոչ կերավ, գնաց, տեհավ ութանասուն հատ կթվոր գոմեշ են կթում դուռնը, քավորն էլ ըրեխեն խտտին, կնիկն էլ կողքին քառասուն ոտ մարդվանի գլխին կանգնած են:

Վըռըշիկը թվանքը հանեց, ուղղեց, մի քանի անգամ էլ չրթեց, որ որպես սիրական ա ռոմե կինը, չրթեց, չրթեց, թվանքը բաց չելավ. Կինը էդ քառասուն ոտը ափալ-թափալ, գլխի վրա ընգնելով էկավ փաթթվեց Վըռըշիկին: Վըռըշիկը ոնց որ մի եատ աղոթած էշ, էլ էրեսին մտիկ չի անում: Քավորը իրան ամանչելեն ըրեխին վեր դրեց ու հեռացավ: Նա նկատեց, որ Վըռըշիկը ուրիշ կարծիք տարավ: Վըռըշիկն ու կինը մտան տուն, կինը մարդուն լավ պատվեց, ըրիգունը մթնեց, բերեց տեղերը գցեց, որ իրար հետ քնեն, էդ բեմուրաղը մութաքեն էրկուսի ըրանքումը դրուց, թվանքն էլ՝ կողքը: Խեղճ կինը չուրուքմիշ էլավ, էդ գշեր չուրի բուսը մղկտաց, դես-դեն արավ, Վըռըշիկը ոչ խոսաց, ոչ պատասխան տվուց:

Ըռավորը կնիկը վո կացավ, ասավ. – Այ մարդ, դու ինձ խի սիե սպանեցիր, ես քեզ ինչի արի, որ սիե արիր:

Թե. — Այ կնիկ, ես մի նպատակ ունիմ, դիլագ եմ արե, ես դիլագը կանենք, նոր մարդ ու կնիկ կըլնենք:

— Շատ բարի, այ մարդ, ինչ որ ուզում ես, եմ էլ արա:

Մի հատ մեծ սար կար, դիք սար: Վըռըշիկն ասավ, — Պետք ա մեր մեծ վրանը վեր ունենք, գնանք ընդեղ, իմ նպատակը կատարեմ, նոր գանք մարդ ու կնիկ ըլնենք:

Գնացին էլ սարի գլուխը. մարդն ասավ, — Ինձ ջվալը գցի, թող արա:

Կնիկը մարդուն ջվալը գցեց, ըրեխեն կապեց ջվալին, էրկու հետ որ պտիտ էկավ, կնիկը դմիշ չարեց, դռը դեմ արավ, բռնեց:

— Դե, այ կնիկ, հմել քու ձեռները, ոտները պետք է կապեմ:

Բերեց կնգա ոտներն ու ձեռները կապեց, գցեց ջվալն ու թող արավ, գնաց: Էդ ծերիցը մինչև ներքև ոչ ծառի դիբավ, ոչ քոլի գիբավ էդ կնիկը, գնաց մի ծառի փչակի ներքևի ծալումը ռտն էլավ: Էդ գիշերը մնաց ըդի: Ծեգի հետ իրեք րագրոյան գնեին Հալապ առևտուր անելու: Գնալու ժամանակը տեհան մի վրջոց, տնքոց ա գալի, հմի վախենում են, որ գնան տենան, թե ինչ բան ա, ինչ գագան ա, ինչ անասուն ա: Մինն ասավ, այ տա, էկիք գնանք, մինն ասավ՝ գնանք ոչ: Զէ, վերջը իրար սիրտ տվին, գնացին: Գնացին ջվալը բաց արին, տեհան ոնց որ մի հատ արեգմակ՝ ջվալի միջին: Բայց որդի էլ ուզում ա ըլի, գիշերն անց կացավ, գլխի տակին քիսա ռսկին կա:

Էդ բագրոյանների մեջ կռիվ ընգավ, նա՛ ասում ա՝ իմն ա, նա ասում ա՝ իմն ա, նա ասում ա՝ իմն ա: Բագրոյաններից մինը հայ ա, մինը՝ ջիուղ, մինը՝ վրացի, դրանց մեջ հարուստը ջիուղն ա. սա ասում ա. — Ով որ ամեն մեկիս հինգհարուր մանեթ կտա, կնիկը նրանը կըլնի:

Ինքը տվուց ամենքին հինգհարուր մանեթ, կնիկը վերցրուց: Էկան գնացին ծովը դրադին, մի չայիր-չիման տեղ, չաղրները վեր թողին, ըտեղ հանգստանալու: Հանգստանալու ժամանակը մութը որ ընգավ, էդ ջիուղն էլավ, էլ

կնիկն էլավ հուլ-հուլ մոտ չեկավ, կարաց ոչ մոտ գալ: Կնոջը վերուց մի հատ դութկի մեջ գցեց, դուռն էլ փակեց ու գցեց ծովը: Թողնենք թող դա ըտենց ծովովը գնա, բագրոյանին գնան իրանց առևտրին:

Էդ ծովը դրադին մի հատ քաղաք կար, թագավորանիստ քաղաք. ըտեղ մի քյասիբ չոփչի մարդ կար, օխտ աղջիկ ուներ: Էդ աղջկերանցը ամեն օր հավաքեր բերեր, չոփը հավաքեին, տանեին հինգ շահով, տաս շահով ծախեին, առևտուր անեին, ապրեին: Էդ մի օրը էկան, տեհան ծովը ալիքը դութիկը բերել ա դրաղը մոտացրել: Եզներու թոկերը գցեցին, քաշեցին հանեցին դութիկը: Դութկի դուռը որ բաց արավ, չոփչին ասավ, — Էյ աստված, յարաբ դութկի մեջ ինչ կա:

Դուռը բաց արավ, տեհավ շաղիկ-շաղիկ քնած մի հուրի մարալ. — Վա՛յ, աստված, քու տունը քանդվո, որ օխտն աղջիկ տվիր քիչ ա, մինն էլ տվիր՝ ութը, ես ինչ անեմ:

Ուզեց դութկի երեսը փակի, կընն ասավ, — Վա՛յ, հայրիկ ջան, ես օխտն աղջիկն էլ կպիհեմ, քեզ էլ կպիհեմ, հանի:

Հանեց: Հավաքած չոփերը վեր ածին ու էդ կնգա կուռն ընկան ու յալլա գնացին: Էդ կնիկը գնաց, տեհավ էդ չոփչուն մի կնիկ ունի: Կեղտոտ, տկլոր, կորած, ճար, մադաթ չկա: Հանեց մի քիսա ոսկի տվուց, ասավ, — Հայրիկ ջան, առ գնա, ինչ որ սիրսոդ ուզում ա, առ արի:

Գնաց բերուց ամեն ինչ, բերուց կերան, խմեցին, քեֆ արին: Մի քանի ժամանակ անց կացավ, ասավ, «Սրա հմար եմ տեսակ տներ շինեմ, թագավորի նպատակներին ծածկի»: Պլանչի, վարպետներ հավաքեց, բերեց հիմը գցեցին, եմ տեսակ շենք շինեցին, որ թագավորի շենքն ի՞նչ էր նրա առաջ:

Էկավ մի քանի ժամանակ անց կացավ, չոփչու միտքը ծռվեց, ասավ, — Գիտե՞ս աղջիկ ջան, ինչ կա, պտի ճաշեր պատրաստես, ես նպատակ ունեի, որ ապրուստ ունենամ թագավորին իրա տնով-տեղով դոնախ բերեմ:

— Վա՛յ, հայրիկ ջան, — ասավ կինը, — արի

ընել մի, որ բերես թագավորին դոնախ, նա պտի ինձ ուզի, ես էլ ինձ պտի սպանեմ, արի ընել մի:

– Է, ես պտի իմ նպատակը կատարեմ:

Բերուց սկսեց քո հավանած ճաշեր պատրաստել, գնաց թագավորին իրա ծնողներով, նաժիշտներով բերեց դոնախ: Կերան, խմեցին, թագավորն ասավ, – Չոփչի, ո՞ր աղջիկդ պատրաստել էս բոլորը:

Թագավորն հանեց իրա մատանին դրեց Վըռըշիկի կնգա մատը:

– Վա՛յ քու տունը քանդվի, էս ինչ օղբաթ էր արիր:

Լավ,

Վըռըշիկի կնիկն ասավ, – Թագավորն ապրած կենա, քառասուն օր սռոկ, քառասուն օրից եղը նոր քեզ խոսք կտամ:

Թագավորի հմար ինչ կար, ինչ գիտեր, թե դվորը կփախչի, դվորը կերթա, որ ասավ, Գնաց բժիշկներին մի գումար փող տվուց, դեղ առավ, եթե թագավորը են տեղը հասնի, որ կարենա ոչ, դեղը խմի, մահանա, իրա երդումից դուս չգա: Գնաց դես պտտվեց, դեն պտտվեց, ո՞վ կարա ինչ անի, ո՞վ չանիլ, ասին՝ իլան-դուլան, չաթի քյասան մի հատ պառավ կա, դարդիդ դարման անել նա կանի, չանել նա կանի:

Վըռըշիկի կնիկը գնաց էդ պառավ ջադվին գդավ, մի քիսա ռսկի հանեց ջադվին տվավ, ջադուն ասավ, – Թագավորին կասես քու եռեսունինը կինը, իրեք օրվա պատրաստություն առ, գնանք ծովո դրադին սեիր անենք գանք: Թագավորն էդ կանի: Որ գնաք, թագավորից ֆալչուն իրավունքը վեկունես: Առ էս սանդղը, էս մի բուռ աղը, էս ռինոկը, աչքիդ կդնես, հեռուն կտենաս: Էդ կնանոցը կառնես, ֆալչուն կիրամայես որ ուժեղ էշի, որդի կտեսնաս, որ թագավորը իրա իմրով հասնում ա՝ սանդղը կգցես ծովո, ճնկուլ կդառնա, չեն կարա գան հանեն, որ տեհադ ճամրա գտան, հասնում են՝ աղը կգցես, ծովի կեսը սար կդառնա, էլ նրանք կարալ չեն գան հասնեն:

Կինը գրություն գրեց թագավորի վիա, ասավ, «Չու եռեսունինը կնոջ և ֆալչուդ

իրավունքը տուր ինձ, ամեն ինչ պատրաստիր, գնանք ծովի երեսին սեիր անենք, գանք նոր ես քու կինը, դու իմ մարդը»: Թագավորը պատրաստեց ամեն բան, մի հատ գրություն տվուց, կինը դրեց ծոցը, ֆալչուն վերցրեց ու գնաց: Գնացին, կինը ռինոկը դրավ աչքին, մի քիսա ռսկի տվուց ֆալչուն, որ ինչքան կարա ուժեղ քշի:

Պառավ ջադուն կնգանը ճամրու ա դընըմ, ասում ա. «Էս իրեք քիսա ռսկով ես ինչ անեմ, յավաշ գնամ թագավորին մի բան հսկացնեմ, թագավորից էլ մի բան փախցնեմ»:

Գընըմ ա թագավորին թե. – Թագավոր, քու տունըդ քանդվի, կնանիքդ առավ, փախավ,

Թագավորը թե. – Ի՞նչ հնար անեմ, ի՞նչ չանեմ:

Ջադուն ասում ա. – Ինչ ուզում ես արա, կնանիքդ առավ, գնաց, ինձ մի բան տուր, ես քեզ ասեմ, արա:

Թագավորը զորքն առավ գնաց եղեվոցը: Կինը մտիկ արավ, որ իրեք կիլոմետր ա մնացել, որ հասնեն, սանդղը գցեց, ճնկուլ տառավ, ինքը մի առ ժամանակ գնաց: Էլի մտիկ արավ, տեհավ արդեն ճանապարհ են գդել, գալիս են՝ աղը գցեց, ծովը կիսումը կես էլավ, դառավ ադասար, էլ ոչ դես, ոչ դեն, հնար չէլավ, որ հետևիցը գան: Ֆալչուն ահագին ռսկի տվուց, ասավ, «Մեզ տար ծովի այսինչ դրադին վեր դիր, մենք գնանք սեիր անենք»: Գնաց ծովո դրադին մի չայիր-չիման տեղ ընդրեց, կողքին էլ մեշա, մերի: Կնանիք գնացին մեշեն սեիր անելու, ինքը ծոցի թուղթը, մի ռոլ ռսկի հանեց տվուց ֆալչուն, ասավ, – Թագավորը որ քեզ բան կասի, էս թուղթը՝ ստորագրությունը ցույց տուր, էլ չի կարա խոսա:

Կնանիքը մինչի ըրիգուն ման էկան մեշումը, մին էլ տեհան, որ մեշու փեշին քառասուն հատ կրակ ա էրևում: Վըռըշիկի կնիկն ասավ, – Գնանք տենանք էնտեղ ինչ կա:

Վի կացան ընգան գնացին, տեհան որ քառասուն ընգանին վոեն էփում ա, քառասուն բոչկա գինի վեր դրած, տեր-տիրական չկա:

– Աղջկերք, – ասավ, – սրանց անպայման

տեր կա, որ կգան ամենքդ, կերթաք մընի վըզովը կընկնեք, կասեք քեզ կին ենք էկե: Կնստեք, կուտեք, կիմեք, դու էլ կասես իմ ստաքանը իմ մարդին, ես էլ կասեմ, մա էլ կասի, դրանց կիարբացնենք, մոր մենք մեր գիտեցածը կանենք:

Մեկ էլ տեհան քառասուն ավագակ պատրոն-պատրոնդաշունը, զենքունը կորած էկան: Կնանիքը վագեցին, ամենը մընի ճտովն ընկան, որ մենք ծեգ կին ենք էկե: Էկան սկսեցին սուփրին գցիլը, քաղցր ու արևի աղաքի գինի, մարդիքը էնքան խմեցին, որ էլ աշխարքիցը գատ չհըսկացան: Կնանիքը իրանց շորերը հանեցին, էլ մարդկերանց զենք ու զրահը, շորերը հագան, իրանց շորերը թողին ու, յալլա՛, ըլան ընկան ճամբա, գնացին: Էդ մարդիքը վո կացան, տեհան որ, ա՛յ մարդ, իբանց շորերը, զենք-րան չկա, իրանք մնացել են տկլոր, կանանց շորերը վեր ածած ա, էդ կանանց շորերը հագան, մի կերպ ման են գալի, թե ման գան:

Խաբարը տանք կնանոցը: Գնացին, գնացին էնդի հասան, որ մի քաղաքունը թագավորը մահացել ա, դուլվաթ դուշին գցում են, ում գլխին վեր գա՛ մա պտի ըլլի թագավոր: Դուլվաթ դուշին գցեցին, էկավ Վըռըշիկի կնգա գլխին վեր էկավ: Կնիկը թե. — Այ մարդիկ, ինծանից թագավոր չի ըլի:

Տարան մույն դուշը ուրիշ կոնիցը բաց թողին, էլ եդ էկավ դրա գլխին վեր էկավ: Դրան տարան մի հատ դագանոց գցեցին, դուռ կտուր, կալան, որ դուշը գնա ոչ դրա գլխին վի գա, դուշը գնաց ճրգշավորեց, էլի գլխին վեր էկավ, ասին. — Այ մարդ, կա չկա մեր թագավորը ես ա:

Տաըան թագավորի թագը դրին գլխին, Վըռըշիկի կնիկը էկավ թագավոր, իրա թագավորությունը արեց:

Թագավորի խաս րախչունը մի հատ ախպուր կար, իրան նկարը քաշեց, տարավ էդ ախպուրի ճկատիցը կպցբուց, ամեն մի օրը փախցրած թագավորի երեսունիմը կինը որ կար, ամեն մի օրը մինը դարավուլ էր, որ. «Ով

կգա, կտենա նկարը, ախ կքաշի, կբերեք իմ կուշտը»:

Էդ ավագակնին իլաջները կտրած ման գալով, ման գալով էկան, տեհան էդ կնգա նկարը ըտի քաշած, բոլորը ջուր խմեցին, ախ քաշեցին: Սրանց քշեցին, բերին: Թագավորն ասավ. — Սրանց կտանեք, ինչ կերակուր, ող ես եմ ուտում, նրանց կտաք, առանձին սենյակում կպահեք:

Էդ քառասուն ավագակը թող ըտի ապրեն, տենանք վերջը ինչ կըլի:

Մի քանի ժամանակ անց կացավ, ջիուղը էկավ էդ քաղաքը առևտուր անելու, ջրիցը խմեց, ախ քաշեց: Բերին թագավորի մոտ, ասավ. — Սրան օրական երեք հարյուր գբամ ջուր, երեք հարյուր գրամ հաց, մի դագանոցի միջի կալըհեք:

Էկավ օրի մի օրը էդ թագավորը աշխարհը ման գալով էկավ էդ քաղաքը, էկավ ըտեղ դրա նկարը տեհավ, ախ քաշեց, դրան էլ ասավ. — Գցեք րանտի մեջ, օրը իրեք հարիր գրամ հաց, իրեք հարիր գրամ ջուր:

Դրան էլ տարան:

Օրի մի օր էլ չոփչին էկավ, դառավ աղքատ սար ու չու ընգավ, որ իրա աղջկանը գգնի, էկավ ըտեղ, ախ քաշեց: Տարան թագավորի կոշտը, ասավ. — Տարեք սրան ինչ կերակուր ուտեմ, ավելի ուժեղը դրան, պաշտպանեցեք մի առանձին տեղումը:

Խաբարը տանք Վըռըշիկին. դուլվաթն էլ գնաց, կարողությունն էլ, երեխեն էլ գնաց, մնաց ինքը՝ թափառական: Սար ու չու ընգավ, էկավ կնգա նկարը տեհավ, ջուրը խմեց, ախ քաշեց, տարան թագավորի կուշտը: Ասավ. — Տարեք սրան իմ երկրորդ սենյակը, ինչ որ ես եմ ուտում, սրան տվեք:

Խաբարը տանք թագավորի դատից, իրմի թագավորը սրանց դատը պտի անի: Թե դրուստ դատ արավ՝ թագավոր ա, թե դրուստ դատ չարավ. էլի թագավոր ա: Իրան բերեցին. Ժողովողին հավաքեց, սկսեց դատ անելը: Էդ քառասուն ավագակնին թագավորի ամեն կինը մինին տվուց, մի հատ էլ՝ ուրիշ կին քառա-

սունքորդին տվուց, իրա աղաքին ծառայող շինուց:

Կանչեց ջըհըդին. — Զը, դու ինչի՞ հմար ախ քաշեցիր:

Ասում ա. — Սին, սին բան:

Ասում ա. — Լավ, են կինը քեզ ուզեր ոչ, կըրախեիր, ուր գցեիր ծովը, մա ինչ՞ մեղքի տեր էր, որ նրան ծովը գցեցիր:

Ասում ա. — Լրբի միմն էր, էսքան ոսկի տվի, իմ հնգերտանցիցը առա, ինձ հետ միացավ ոչ, սին արի:

Թագավորն ասում ա. — Քիշմիշ կերած դաթի բերեք, պոչիցը կապեք, քաշ տվեք:

Դրան էլ տհենց արեցին:

Կանչեց թագավորին: — Ընչի՞ ախ քաշեցիր:

— Նրա համա ախ քաշեցի, ոը մի լըբի միմը, եռեսունիմը կնիկ ունեի, նրան էլ որ ուղեի՝ քառասունմ էր, էկավ կմանոցս առավ, փախավ, էկա նկարը տեհա, ախ քաշեցի:

Ասավ. — Սրան մի եատ հըեդենի պոչից կապեցեք, քաշ տա:

Դրան էլ հըեդենի պոչից կապեցին:

Կանչեց չոփչուն. — Դու իսի՞ ախ քաշեցիր:

— Է՛, հողերը գլխիս, ռա ոը ես ախ չքաշեմ, ով քաշի, սին, սին օյին էլավ: Նա մղկտաց, մրմնջաց, անգաճ չարի, թագավորին բերի, մա մատանին մատին դրուց, սա վե կացավ, փախավ, էկա ըստե նկարը տեհա, ախ քաշեցի:

— Սրան, — ասավ, — տարեք մի փուք ոսկի տվեք, ճամրու դրեք: Էս միմի դատն էլ տվեք ընծի, ի՞նչ եք ասում ժողովուրդ, դուզ դատ արի՞:

— Կեցցե, — ասին, — թագավորը դու ես, ոը դու ես կաս: Դուզ դատ արիլ:

Անացին Վըռըշիկն ու ինքը, հմի Վըռըշիկի դատը ինքը պտի անի: Ըրիգունը մթնեց, իըա կնգա շորերը հագավ, գնաց Վըռըշիկի աղաքին ստոլ ա սարքում, դես ա անում, դեն ա անում, Վըռըշիկը խոսում չի, լիզու չկա, ասում չի, թե էս իմ կնիկն ա: Էկավ էդ շորերը փոխեց, թագավորի շոր հագավ, գնաց, ասավ, — Զը, ի՞նչ տեհար:

— Թագավորն ապրած կենա, կինս էկավ:

— Բա ինչ ասիր, ինչ չասիր:

Թե. — Ոչ մի բան չկարացի խոսա:

— Դուրումսադ, էս սրումը գնում են կնոջդ դըրգեն, եթե չխոսաս, գլուխդ պետք է տամ:

Գնաց շորերը փոխեց, կնգա շորեր հագավ, էկավ ֆռռում ա, տունը սարքում ա մթամ թե, դես-դեն Վըռըշիկի լիզուն լալկվեց, չխոսաց: Էլի գնաց շորերը փոխեց, էկավ:

— Զը, ի՞նչ տեհար, ինչ չտեհար:

Թե. — Կինս էկավ, լեզուս լալկվեց, կարացի ոչ խոսամ:

— Անպետք, անպետքի մեկը, էս ռոպեին ջաննաթ են կանչում գլուխդ տամ: Գնում են էս ռոպեին դարգեն, եթե չխոսաս, պետք է գլուխդ տամ:

Գնաց շորերը փոխեց, էկավ դես տվուց, դեն տվուց, Վըռըշիկը լըռացավ, Կարըմ չի խոսա:

— Վըռըշիկ, — ասավ, — ես ո՞վ եմ:

— Իմ կնիկը:

— Բա դու ինչի՞ չես իմ հետ խոսում:

Նոը բերեց թագը դրուց Վըռըշիկի գլխին. — Դու թագավոր, ես էլ թագուհի, ռայց էդ սխալմին էլ չգործես:

Ասսանեն իրեք խնձոր վի գա. միմը՝ ասողին, միմը՝ լսողին, միմն էլ՝ աշխարհքին:

14. ՀԱՋԻ ՍԱՅԱԴԻ ԱՂՋԻԿ ՓԱՐԻՆ

Հաջի Սայադը գավակ չի ունենում, գընըմ ա ման գալի, բալքի մի խելոք մարդ մի հմար ասի, ըրեխա ունենա: Մի մարդ ա ռաստ գալի, ասըմ ա. — Ու՞ր ես գընըմ, հաջի Սայադ:

Ասըմ ա. — Ըրեխա չունեն, ման են գալի, որ մի հմար իմանամ, ըբեխա ունենամ:

Սաըդը ձեռը տանըմ ա ախպրի միջից մի խնձոր հանըմ, ասըմ ա. — Կտանես էս խնձորը կնգանդ հետ կուտես, տարին վոա քեզ ըրեխա կըլի, համա առանց ինձ կնքիլ չես: Կնքելու վախտը ես կգամ անունը կգնեմ:

Ասըմ ա. — Լավ:

Հաջի Սայադդ խնձորը կտորում ա, ուտում են, գալիս ա իրա ժամանակին կնիկը մի աղջիկ, մի տղա ըրեխա ա ունենում: Դրանց գեղունը մի ջղացական մարդ ա ըլըմ, ենքան ըրեխա ա ունենում, որ էլ կարըմ չի պահի: Կնգանն ասըմ ա. — Էդ ա պարկելուդ օրերն ա, ես գլուխ եմ առնում կորչեմ, գամ տենամ, թե օրոցք կա տանը, քեզ էլ ջուրը կգըծեմ, նրան էլ:

Էդ քշեր որ հաջի Սայադդի կնիկը ըզադվում ա, էդ ջղացականի կնիկն էլ մի տղա ա բերում, ըրեխին բարուրում ա, տանըմ մեջիթի դռանը վե դընում, ասըմ ա. «Մի աստվածասեր կգա ըռավողը վեր կունի, կտանի կպահի»:

Հաջի Սայադդ ուրախանում ա, որ ալլահը իրա մուրազը տվուց, մնի տեղ էրկու ըրեխա ունի, ասըմ ա. «Գնամ մեջիթը իմ նամագն անեմ, որ նպատակս կատարվեց»: Գընում ա, տենում մի ըրեխա մեջիթի դռանը դրած: Ասըմ ա. «Ալլահը ինձ եմ էրկուսին իմ կնգանից ա տվե, էս մինն էլ ինքն ա դարգել»: Վեր ա ունում, բերում: Հմի կնիկը էրկու ըրեխա ունի, էրկու ծիծ, էդ երրորդը ոնց պահի: Հաջի Սայադդ գընում ա մի կնգա գընում, պայման են կապում, որ ուտելիքի՝ կաթի փողը տա, սա իրեք տարի պտի ծիծ տա, իրեք տարուց եղը ըրեխան բերի տա հաջի Սայադդին:

Իրեք տարուց եղը էդ կնիկը ըրեխեն սաղ-սալսմաթ բերում տալիս ա դբանց: Հմի էլ հաջի Սայադդ կնունքի էր կարոտ, միտքն էլ դրել ա, որ իբա փափագը կատարվել ա՝ գնա հաջի: Ըրեխեքը մենձացել են, համա անուն չունեն, տենում ա էդ մարթը էկավ ոչ, պատրաստությոն ա տենում, որ ըրեխանցը պտի կնքեն: Են ժամանակը որ անըմնին պտի դենն, մարդը գալիս ա, ասըմ ա. — Էդ ի՞նչ ա, առանց ինձ կնունք ես կատարում:

Ասըմ ա. — Շատ սպասեցի, ասի՝ վայ թե գալիս չի:

Աղջկա անումը դնում են Փարի, տղինը՝ Մահմադ, են մնին էլ Թափտղը, իրրև գընովի:

Մարդ ու կնիկ ըրեխեքին անունավորում են, իրանք հազըրվում են գնան հաջի, Մահմադին հետները տանում են, աղջկանն ու

Թափտղին տանը թող անում: Ասըմ են երեսունիննը օր որ թմամի, վրա քառասուն օրը եդ տի գանք: Թափտղին ու Փարուն Թամբահ են անում, որ էդ օրը բագարից մեյվա, ուտելիք բերեն, որ իրանք հաջի տեղիցը գան, մարդիկ կգան ուխտը շնորհավորեն:

Երեսունիննը օրը թմամում ա, վրա քառասուն օրը քիրը դարգում ա ախպորը, թե՛ գնա էս բի, են բի: Ախպերը գընում ա բերում ա, մի աղլուխ էլ մեյվա կապում ա, ասըմ ա. «Տանեմ տի ջրի դրադի աղջկերանցը դեմ անեմ, ով որ վեր կունի, ես նրան պտի սիրեմ»: Գընում ա ջրի դրադը, աղջկերանց որ դեմ ա անում, դրանք էլ գիդեն էդ տղեն հաջի Սայադդին չի, ասըմ են. — Վա՛յ քու գլխու. ուզող ես՝ գնա իրե Փարին քու քիրը չի, նրան ուզի:

Աա. — Ո՞նց թե, իմ քիրը չի:

Թե. — Հա, քեզ ֆլան պառավն ա պահե, գնա հարցրու, որ ուզես, օրենք ա:

Թապտղը գալիս ա թե. — Այ Փարի, մենք քիր ու ախպեր չենք, մենք պետք ա իրար հետ լինենք:

Փարին թե. — Չէ, մենք քիր ու ախպեր ենք, էդ բանը ըլելու չի:

Գընում ա էդ պառավըն հարցընում, թե՛ տհե րան կա, ասըմ ա՝ հա: Ինչքան ստիպում ա, աղջիկը համոզվում չի, վախում ա հերը, մերը գան, խսրար տա, ինքը վռագ գընում ա աղաքնին, Վսնաձոր (Ղարաքիլիսա) հասնում, թե. — Ինչ գնացել եք նադիր-վադիրների հետ Փարին քեփ անելիս ա ըլել:

Հերը տղին դարգում ա, ասըմ ա. — Փարուն կդես թառքիդ, Ձամալուն անց կկացնես, մեր ֆռդից կհանես, ուրիշ տերության հողում կըսըպանես, շորերն իրա արնով արնոտ կանես, կբերես իմ աղաքը, որ ես տուն գամ, թե չէ՝ գալ չեմ:

Քիրն էլ ճամբա ա պահում, որ հեսա գալու են է, տենում ա ախպերն էկավ, ասըմ ա. — Էդ ի՞նչ ա, ախպեր ջան, մենակ էկար:

Թափտղը թե. — Մեր մերը հիվանդ ա, քեզ ա ուզում, թառքիս էլի, գնանք:

Քվորը հանում ա թառքը, տանում ա դբա

Քուլագիրան, Վարդաբլուրի գլխին՝ պոպոզ տեղը, էլ դմիշ չի անըմ քվորը որ սըպանի, թրի ոռովը տալիս ա, շշմացնում ա ու շորերը հանըմ, բողջա անըմ, բերըմ մի չոբանից մի գառն առնըմ, մորթում, արմոտ անըմ եղ շորերը, բերըմ հոր աղաքը: Նոր վեր են գալի, գալի տուն: Թող դոանք գան քեփը կանեն, թե սուգը կանեն, իսաբարը տանք Փարնիցը:

Փարին որ ուշքի ա գալի, տենըմ ա որ ինքը տկլոր, գլխի ա ընգնում, որ ախպերը բերուց ըստի թողուց, որ ես իրա արածը իսաբար չտամ: Ինքը գնաց ինձ սևացրուց, էլ որ էրեսովն էթամ հորս ու մորս պատմեմ, չեն հավատա, լավն են ա գլուխս առնեն, կորչեմ:

Տկլոր, ծմակովը էթում ա, մի ծառի վեր ա ըլըմ: Էդ էլ մի Ալիսանաղի տիրություն ա, անց ա կացե ուրիշ տերության: Էդ տերության Ալիսանաղեն ըռավողը վեր ա կենըմ, ասըմ ա. — Քշերս սհե մի էրագ եմ տեհե, ո՞վ կարա իմ երագի միտքը րացատրի:

Ալիսանագի նագիրը՝ մի սև մարդ, որին Ղարանագիր են ասըմ, ասըմ ա. — Ես կաըամ բացատրեմ:

Էս մարթը էրագը պատմում ա, սա ասում ա. — Դա դսմաթի էրագ ա, թե խոստանում ես գդածի կեսն էլ ինձ տաս, ես քեզ հետ կգամ էրագիդ եղնուցը:

Ասըմ ա. — Խոստանում եմ, արի էթանք:

Իրանց հրացաններն վեր ունում, գընըմ են ման գալի անտառնին, որ մի ֆորս-բան պտի ռաստ գա: Ղարանագիրը մի յանով ա էթում, Ալիսանաղեն մեկել դիովը: Էթում են էթում, Ալիսանաղեն կըռանում ա, որ ջուր խմի, տենըմ ա ախպրի մեջը մի իսանի շողք կա, դես ա մտիկ անըմ, դեն ա մտիկ անըմ, օքմի չկա, էլի ախպրին մտիկ ա անըմ, տենըմ ա՝ իսանի պատկեր ա: Վեր ա մտիկ անըմ, տենըմ ա ծառի վրեն հրեդ մի աղջիկ կա: Ինչքան լեզու զիդա, էդ լեզվով բարև ա տալի, դա բարևն առնըմ չի, տասներկու լեզվով բարև ա տալի, համա պատասխան չկա, աղջիկը ձևացնում ա, որ խուլ ու լալ ա: Ձեռով հըսկացնում ա՝ դե վեր արի, լիզուդ չկա, որ կիսլանդ էլ ըլնես, իմ

դսմաթն ես: Անտեք աղջիկ վեր ա գալի: Յափընջումը կլուում ա, շոր ա հանըմ դրան հաքցընի, ձեն ա տալի. «Ղարանագիր, Ղարանագիր, արի ֆորսը գդել եմ: Սա կես անելու չի, որ կես անենք, քեզ տալու չի, ես քեզ քու վարձը կտամ»: Ղարանագիրը ջգըվում ա, համա շանց չի տալի, ասըմ ա՝ խոսքիդ տերը չես, էլ մնալ չիմ քեզ ծառայեմ, վազըրութենից դուս ա գալի, էթում ա ջաղացպան մտնում:

Ալիսանաղեն աղջկանն առնըմ ա, ապրում են: Կնիկը մի ջուխտ տղա ա բերըմ, ուրախանըմ ա, համա դե կնիկը որ խոսըմ չի, դոա հմա շատ դիխոր ա: Օրի մի օր ըրեխեքը մեծացած են ըլըմ (ըրեխանց հետ խոսում ա, նինի ա տալի), պառավ ծառաներից մինը լսում ա, էթում Ալիսանագին ասըմ ա. — Բա ասիլ չես կնիկդ լիզու ունի:

Ասըմ ա. — Պառավ, ի՞նչ զիդաս:

Թե. — Էսօր ձեր դոնովն անց կենայի, ըրեխանց հետ խոսեր:

Ասըմ ա. — Բա ոնց անեն, որ դոա լիզուն իմանամ:

Ասըմ ա. — Կգնաս էրկու խնձոր՝ մինը լավը, մինը խակը վե կունես, որ ինքը տնից դուս կըլնի, կրերես, կտաս ըրեխանցը, դու տապ կանես, կգա կտենա ըրեխեքը իրար ձեռից են լավը խըլըմ են, էն խակին տիրանըմ չեն, սիրտը կճաքի, ջիզը կգա բան կասի, կիմանաս:

Ալիսանաղեն գընըմ ա էդ խնձորնին առնըմ, կնիկը տնից դուս ա գալի, գընըմ ա ջուրը, մտնում ա, խնձորնին տալի ըրեխանցը ու փարդի տակին տապ անըմ: Աինչի կնգա ջրիցը գալը ըրեխեքը իրար գզում են, խնձորը իրար ձեռից ճռպրուտըրըմ, ըրեխեք են: Կնիկը գալիս ա տենըմ ա, ասըմ ա. — Յանի առներ, առներ, էրկուսն էլ մի տեսակ կառներ, էդ խի՞ ա տհե արե:

Փարդի տակից դուս ա գալի. — Վա՛յ կնիկ, դու լիզու ունես:

Էլ կարըմ չի թաքցնի:

— Բա խի՞ չես մինչի երմի խոսե:

Թե. — Բա ամոթ արի, մին որ խոսացի ոչ, էլ կարացի ոչ թե խոսամ:

— Դե հմի ասա ո՞վ էս, ու՞մ աղջիկն էս, ո՞նց ընգար դու իմ ծեռը:

Կնիկը պատմում ա, ասըմ ա. — Ասեմ Ալխանաղա: Ես Բիթլիսշահարու հաջի Սայադի աղջիկն եմ, սհե, սհե, իմ Թափտըդ ախպերը իմ գլխին օյին բերուց, իմ հերն էլ ինձ վոնդեց, էկա ընգա ըստի:

— Բա հմի ո՞նց անենք, ի՞նչ անենք, որ նրանք գիդան որ ոչ դու սադ ես, էթանք թո տենան, որ սադ ես, մեղավորն էլ դու չես:

Պատրաստություն են տենում, որ տի էթան Բիթլիսշահարա: Էդ վախտը թագավորը լուր ա տալի, որ Ալխանաղեն գնա իր մոտ ժողովի: Թագավորի հրաման ա, ինչ անի: Բա ունը՞ դնի կնգա հետը, ունը չդնի, հիշըմ ա Ղարավազը-րին, ասըմ ա. «Դա նա գա տանի, համ էլ հորը կպատմի աչքի տեսածը»: Գընըմ ա Ղարավազի կուշտը, ասըմ ա. — Արի ըրեխանցը տար կնգաս հորանց տունը, հորն էլ պատմի քու աչքով տեսածը, ինձ թագավորը կանչել ա:

Իրան հըմար մի ֆայտոն ա տալի, մի ֆայտոն էլ նստացնըմ ա իրա քուլփաթին, գորքը դընըմ ա հետը, ճամրա դընըմ: Ղարավազիին էլ տնդըվազ ա անըմ, չեմ ու չում ա անըմ, համա մտքունըմ ասում ա. «Տեր ալլահ, յարա՞բ մտքինս կըլի, թե չէ»:

Ալխանաղեն ասում ա. — Կգնաք, այսինչ տեղը վեր չեք գա, վտանգավոր տեղ ա:

Ղարանազիրը բերըմ ա ըտի վեր բերըմ, գորքին դարգում ա, ասում ա. — Տարեք պոզանը — ծիանն արածացրեք, եք սվիստոկ կտամ, ծիանը կբերեք:

Մնում են ինքն ու իանըմը ըրեխանց հետ: Չադիրը խփում են, խանըմը իրա ըրեխանցովն ա իրա չադրունը նստում, էդ Ղարավազին էլ իղա չադրունը, նա էլ ա սամավար գծըմ, նա էլ: Համա դրա միտքը ծուռն ա, չայը որ էփում ա, մի բաժակ չայ ա լքցնըմ ըրեխանց մնին տալի, ոտնավոր տղերք են, ասում տար մորըդ տու: Նա էլ չայը եդ ա տալի, ասըմ ա՝ մենք էլ ենք չայ գծե, ունդունում չի, հադով-բանով հսկացնում ա, որ ուզում ա հեղը մոդ ըլի, իանըմը մոտ չի թողըմ, ասըմ ա՝ ըրեխանցըդ կկտռեն,

ասըմ ա՝ ինձ էլ որ սըպանես, ըլելու չի էդ բանը:

Ըրեխանցից մնին մորթում ա, են մինին էլ ա մորթում, կնիկն ասըմ ա՝ թող, գնամ լվացվեմ, գամ: Ասըմ ա՝ վայ թե գնաս, գաս ոչ: Ախպուրը մի քիչ հեռու ա ըլըմ, ասըմ ա՝ որ վախում ես, թոկի ծերը բի կապի բլակոցս, մի ծերն էլ դու բռնի չաղըրըմը նստի: Շալը վեր ա ունըմ, գընըմ ա ախպրի կուշտը, ինչ լվացվիլ, շալը գծըմ ա մասըրի թփի վոա, ինքը փախչըմ: Ծամփա ա պահըմ, թոկը ծոցըմ ա՝ գիլ ա, թոզը ծոցըմ ա՝ գիլ ա, հենց գիդի ընդի ա: Ասըմ ա՝ ամոթ ա անըմ որ գա: Գընըմ ա ընգնըմ էդ շալի վոա, հենց գիդի թե իանըմն ա, էրես մերես էդ փշերը ճանգըմ են, էլ որդի կգտնի՝ գնաց: Խանըմը գընըմ ա, իաբար տանք Ղարավազըրիցը:

Սվիստոկը տալիս ա, թե՛ էկեք, հարա՛յ-հարա՛յ, հարամեքը էկան, իանըմին տարան, ըրեխանցն էլ կտորեցին: Ըրեխանցը մեյդդնին դընըմ ա ֆայտոնը, բերում տուն: Բա՛ խանըմը ի՞նչ ելավ. իանըմին տարան: Ըրեխանցը ֆողավորում են, մի վախտը անց ա կենըմ Ալիանաղեն իրա գործերը թող վերջացնի, իաբարը տանք Փարի իանըմիցը:

Փարի իանըմը գընըմ ա մի չոբանի ռաստ գալի, էդ չոբանն ասըմ ա. — Ես կնիկ չունեմ, քեզ կուվեմ:

Ասըմ ա. — Չոբան ախպեր, քեզ կուզեմ, համա քեզ հետ գալ չեմ, գնա, — ասըմ ա, — քիր կունենաս, հաըս կունենաս, մեր կունենաս, նրանց ըի, ես ոչխարը կպահեմ, ըի ող նրանց հետ գընամ:

Չոբանը գընըմ ա, ասըմ ա. — Է՛, հլա եդ արի. թե չէ կգնաս, կասես մի աղջիկ եմ գդել, եկեք տարեք, ինչ կասեն, չոլունը քեզ ո՞վ ա աղջիկ տվել:

Չոբանը եդ ա գալի. — Բա ո՞նց անենք:

Ասըմ ա. — Արի շորերս փոխենք, քու չոբանի շորերը տուր, ես հաքնեմ, դու էլ իմ շորերը վե կալ ու գնա, շորերս որ տենան, կգան:

Չոբանը շորերը հանըմ ա տալի, աղջիկը հաքնըմ ա, ինքը աղջկա շորերը առած, մի չոմ-

բախն էլ ունի, որ մի փութ նալը կա կայցրած ոռ-
իցը, քաշ տալով չոմբախը տանում ա: Ղա թող
գնա, խաբարը տանք խանումից: Աի թոխլի ա
վե գծը մորթում, թափանը հանում, մաքուր
լվանում, մազերը հվաքում ա տակը, թափանը
(Ղաբինը) դնում գլխին, դառնում տղամարդի
շորեք հաքած չոբան: Ոչխարը բրախըն ա,
ուզում ա գելը ուտի, ուզում ա չոբանը գա
գդնի, ինքը գընում ա: Գընում ա, գընում, հասնում
ա Բիթլիսշահարա: Ընտեղ մի կաթմունջ կա, էլ
շահարումը, ոնց որ Ղարդանելի կաթմունջը,
ամեն տիրության մարդ էլ ըտեղով գալիս ա
անց կենում: Մի թուխտ ա գըրըն, կաթմունջի մի
կռանը կայցնում, ասում ա. «էկող բազրգյաննի,
գնացող խոջաննի, էս թուղթը հասցրեք Ալիա-
նաղին, ասեք, թե՛ ուզում ա տեղս իմանա,
Բիթլիսշահարեն եմ»: Մարթը չէ որ գիդի, որ
կնիկը Բիթլիսշահարի հաջի Սայաղի աղջիկն
ա, որ թուղթը իրան հասնի, կիմանա որ կնիկը
սաղ ա: Թուղթը կայցնում ա կարմնջիցը, ինքը
գնում իրան հոր՝ հաջի Սայաղի դուռը: Ասում ա.
— Կարելի՞ է ինձ մի գործ տաք, աշխատեմ:

Ասում են. — Ի՞նչ կարաս անես:

Ասում ա. — Ի՞նչ որ տաք, կանեմ:

Ասում են. — Ղազարած չունենք, կարաս
դազերը պահես:

Ի՞նչ ճաղ ունի, մի բան պտի անի մինչի
իրան տերը դուս կգա էլի հլբաթ:

Ասում են. — Ի՞նչ տի տանք:

Ասում ա. — Քեզանի բան չեմ ուզում,
վրոպս մի շոր կտաս, փորոպս մին հաց կտաս:
էղ ա:

Թող դա դազերը պահի, խաբարը տանք
Ալիանաղիցը:

Գործերը դասավորում ա, ասում ա. «Գնամ
կնգանս գղնեմ, որ գլուխը վրեն ըլի կեթա դուզ
Բիթլիսշահարա»: Ղարավեզրին ասում ա. —
Աղի իբար հետ գնանք տեզերը շանց տուր:

Կարա որ գա ոչ, վրզը կտա: Շան պես
գալիս ա հետը ընգնում, գալիս են: Որ գալիս են
էդ թալեն, որտեղ կտողել ա ըրեխանցը, հեքը
բայաթի ա ասում, անց են կենում, գընում: Գընում

են, շատ են գընում, քիչ են գընում, ռաստ են
գալի չոբանին:

— Չոբան ախպեր, սիե մի կնիկ եմ կորցրե,
բալքա տեհած ըլես:

— Ա, էդ կնիկը ես էլ եմ կորցրե, — ասում ա
չոբանը:

Որ ասում ա՝ ես էլ եմ կորցրե, Ալիանաղեն
էլ ա գլխի ըլում, Ղարանագիրն էլ, նա տիրում
ա, որ կնգանը գդնիլ դենք, մարդն էլ ուրախա-
նում ա, որ գդնիլ դի: Չոբանը ոչխարը բրա-
խում ա, հետները ընգընում գընում, երկու
չըլենք, իրեք ըլենք, գընանք: Իրեքով գընում
են, գընում են, շատ են գընում, քիչ են գընում, էդ
շահաբա կարմնջի վրեն բուքա են տալի:
Ալիանաղի աչքովն ա ընգընում գրած թուղթը,
վեր ա ունում դրանցի թաքուն կարդում ա, թե.
«Ես Բիթլիսշահարումն եմ»:

Խանում էլ դազերը բերում ա ջուրը, մտիկ ա
անում, տենում ա իրեք մաբդ, մինը Ալիանաղեն
ա, մինը Ղարավագիրը, մինն էլ չոբանն ա:

Ասում ա. — Ղարիբ ախպերտինք ծանոթ
ունե՞ք էս քաղաքումը:

Ասում են. — Չէ:

Ասում ա. — Հաջի Սայաղը լավ մարդ ա,
ըրիգունը կգաք նրա տուն, նա ձեզ դոնախ
կընդունի:

Էղբան բանը, որ ասում ա, Ալիանաղեն
գլխի ա ընգնում, որ ըստի մի բան կա, ուրա-
խանում ա: Էս քաչալը (խանումին քաչալ են
ասում ըստի), որ սրանց հետ գրից ա անում, մի
քիչ ուշանում ա, Թափտըղը հողը խաբար ա
տալի թե. — Քաչալը դազերը ոտն ա արե, ինքը
գրից ա անում:

Որ տուն ա գալի, հաջի Սայաղը դբան մի
սիլլա ա տալի, ասում ա. — Ընչի՞ ես դազերը
ոտն արե, մլուլ անում:

Հաջի Ասյաղի կնիկը վրեն խոսում ա: Ասում
ա. — Կուռըղ կոտրի, խի՞ տվր անֆուտլուղ
նոքար ա, սփաթն էլ իմ Փարնի նմանն ա:

Փոշմանում ա, համա տվե, պոծել ա:

Ըրիգունը էդ մարդիկ գալիս են, հաջի Սա-
յաղը դոնախնին ընդունում ա:

Քաջալն ասըմ ա. — Էս ըրիգունը, հաջի Սայադ, իրավունքը տուր ինձ, ես մի հեքիաթ տի պատմեմ:

Ասըմ ա. — Քաջալ ջան, տալու չի, բայց քեզ մի անմեղ սիլլա եմ տվե, տալիս եմ:

Սսըմ ա. — Որ տալիս ես, ինչ ասեմ՝ ինձ տի լսեք, պովրին ասա մի դազը մորթի, պլկի, ես մի նաղըլ տի ասեմ, թե ասածս խոսքերումը դուզը կըլի, դազը կեփի, թե սուտ կըլի՝ էփիլ չի, պովրը տակը վառիլ դի որ էփի:

Չոբանին ասըմ ա. — Ահակըդ վե կալ, դուանը նստի, տնից դուս էկող չըլի, դունիցն էլ տուն էկող չըլնի:

Հաջի Սայադին ասըմ ա. — Մարդ դարգի կանչել տու ֆլան պառավին:

Ջաթի Ահմադն ու Թափտըղը ըտի են:

Քաջալն սկսում ա նաղըլը պատմիլը ոնց որ ես ասեցի, նաղըլը ասելով գալիս ա խոսքը հասնըմ ա Թափտըղին, սա ուզում ա դուս գա, չորանը ասըմ ա. — Գնա տեղըդ վեր ընգի, թե չէ էս մահակովը նիենց կտամ, որ գեղինը յոթ դաղը կմտնես:

Թափտըղը վեր ա ընգընըմ տեղը: Չիմ նաղըլն ասելով գալիս ա հասնըմ ա Ղարանազըրին, սա էլ ա ուզում դուս գա, չորանը կթողա՝ որ դուս գա: Քաջալը պատմում ա, պատմում, վերջը ձեռներով թափանը եդ ա տանըմ, մազերը տակից թափում են, տեսնում են՝ իրանց Փարին ա: Վրա են թափըմ, հերն էլ, մերն էլ, մարդն էլ, ախպերն էլ, պչպչորում են քանի տարի իրանց կորցրածին: Չոբանն էլ ա մողանըմ, խանըմը ասըմ ա. — Չոբան ախպեր, իմ տերն էկել ա, — շանց ա տալի մարդուն:

Թափտըղին ու Ղառավազըրին կապըմ են դաթրի պոչիցը, ռաց են թողըմ, մենձ թիքեն անգաճնին ա մընըմ: Քաջալը պառավի դատը տալիս ա չոբանին, ասըմ ա. — Ղու տես անի:

Չոբանն ասըմ ա. — Ս պառավ, էս մահակովս իրեք հետ տալ բը տեմ, թե դիմացաը՝ քու ըախտիցն ա, թե դիմացար ոչ՝ դիմացար ոչ:

Տանըմ ա դոանը, որ մի հետ տալիս ա՝ ծնգներիցը եդ գընըմ ա գեղնի դադումը, մին էլ

որ տալիս ա՝ կեսիցն ա գընըմ գեղնի դադումը, մին էլ պառավին ռադ ա անըմ:

Գալիս են նորից ուտում, խմում, քեփ են անըմ, հաջի Սայադը գիտի որ Ալիխանաղի նման փեսա ունի, Սլիխանաղեն էլ գիտի հաջի Սայադի նման աներ ունի:

Ասսանե իրեք խնձոր վեր էկավ, մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ ալամ աշխարհին:

15. ՎԱՍՏԱՐԻՄ ԿՆԻԿԸ

Աի քասիբ մարդ ա ըլում եթում ա բանվորության: Իրա գնալուց վեց ամիս եղը կինը պառկում ա, մի տղա երեխա բերում: Էդ երեխան բերելուց եղը ամեն քշեր, որ քնում ա, գլխի տակին մի բուռ ոսկի ա ըլըմ: Ասըմ ա. «Ինչ անեմ, մարդիս տեղը գիդեմ ոչ, որ գրեմ, ասեմ՝ այ մաղդ, քո աշխատանքը էլ պետք չի, արի»:

Էդ ախմախ մարդն էլ իրա տեղը իմաց չի տալի: Աի տարի, երկու տարի մնում ա, էդ կնիկը էնքան ոսկի ա հավաքում, որ իմանում չի ինչ անի, եղև բեբըմ ա իրանց հին-հին տները քանդըմ ա, տեղը թագա լավ տներ սարքըմ:

Օրերի մի օրը մարդը մի քանի կոպեկ վաստակած գալիս ա գեղը: Առտանում ա տանը, մնում ա ընմացած, ասըմ ա. «Այ մարդ, էս իմ տան տեղն ա տունն իմը չի, դռանն էլ մի տղա էրեխա, էս ո՞վ ա սաքքել, էս ընչով ա շինել էս կնիկը, էս ու՞մ ըրեխեն ա»: Ասըմ ա. «Ուրեմն կնիկս լրրություն ա արե, սըանով էս տները շինել ա, էս էրեխին էլ ըրել ա»: Էլ համփեղըմ չի, որ կնգանը հարցնի, թե՝ այ կնիկ, էս ընչով էս շինել, էս ըրեխին ե՞րբ ես ըրել: Ջգրած տուն ա մտնըմ, համա կնիկը տեհած ա ըլըմ, ասըմ ա. «Էս ախմախը կըտադած ա, կտա ինձ կըսպանի, լավ ա գլուխս առնեմ, կորչեմ»: Փախըմ ա, գընըմ մի գանդուկ ա շինել տալի, ինքը մտնում ա մեջը, գցել ա տալի ծովը, ծովի ըրեսին տասնըհինգ օր մընըմ ա, մի վաճառական իրա խանութին

ապրանք ա առած ըլըմ, ծովովը գալիս ա ըլըմ, էդ զանդուկը, որ տենըմ ա, մշակներին ասըմ ա. — էս զանդուկը վե կալեք դոեք լողկեն:

Տանըմ ա իրա տուն, ապրանքը հանըմ ա դախլերում դասավորըմ, պրծնում ա, մշակների հախը տալիս ա գընըմ են, մնում ա ինքը մենակ, ասըմ ա. «Հյա էս զանդուկը բաց անեն, տենամ սրա միջինն էս ինչ ա, որ էսքան էլ ծանդո ա»: Ջանդուկը բաց ա անըմ, տենըմ ա մի սիրուն կնիկ, տասնհինգ օրվա ոսկին էլ ըտեդ կիտած:

— Այ կնիկ, — ասըմ ա, — աստոճ քեզ ինձ հմա ա դարգել, ես կնիկ չունեն, ինձ կառնես:

Ասըմ ա. — Ձոռո՞վ, թե կամո՞վ:

— Իհարկե՝ կամով:

— Դե որ կամով ա, գնա մի հուլ առ ըի, գծեն ճիտս, որ ես քեզ ուզեն, թե չէ ուզիլ չեն:

Ասըմ ա. — Այ կնիկ արմատ, էդ իմ էլածը տանեն տամ հուլ առնեն, ըս ինչով ապրենք:

Ասըմ ա. — Տենըմ ես էս ոսկին, ամեն քշեր իմ գլխի տակին մի բուռ ոսկի ա ըլըմ, դռանով կապրենք:

Էդ մարդին ճամբու ա դընըմ, դուռը փակում ա, ու հայդա: Գընըմ ա : Շատ ա գընըմ, քիչ ա գընըմ, հասնըմ ա մի քաղաք, էդ քաղաքը թագավորանիստ քաղաք ա ըլնում, աղբուրից ջուր ա խմում, ասիլ մի էդ թագավորի աղբուրն ա, թագավորին իմաց են տալի, թե մի կնիկ քու աղբըրիցը ջուր խմեց:

Թագավորն ասըմ ա. — Գնացեք, բոնեցեք, տեսեք էդ ով ա, որ տիե ռիսկով իմ աղբըրիցը ջուր խմեց:

Իրեք օր էդ կնգանը փակած են պահըմ, վոա չորրորդ օրը, ոը դուռը բաց են անըմ, որ տանեն թագավորի կուշտը, տենըմ են իրեն իրեք բուռ ոսկի կիդքին գիզած: Հարց են տալի, թե՝ էս ոսկին որդիա՞ն: Թե՝ իմ գլխի տակին ա ըլըմ: Իրան հունարը ասըմ ա: Թագավորին խաբար են տալի, կնգանը տանըմ են կուշտը:

Թագավորը տենըմ ա էդ կնգանը, դիրը գալիս ա, ասըմ ա. — Ես քառասուն կնիկ ունեն, դու որ էդ շնորհքի տերն ես, դու էլ կլինես

քառասունմինը:

Կնիկը թե. — Ձոռո՞վ, թե կամո՞վ:

Ասըմ ա. — Իհարկե՝ կամով:

Դե որ կամով, դու հասակըդ առել ես, թույլ տուր գնամ են սարը, ծաղիկ քաղեն, քաղեն բերեն ֆոտ կքաշես, կջահեւանաս, են ժամանակը քեզ կառնեն:

Ասըմ ա. — Վայ թե խարես, գնաս ու եդ չգաս:

Ասըմ ա. — Որ վախըմ ես կնանիքդ էլ հետս դիր, ես գնամ:

Կնանոցը ասըմ ա. — Դե հետը գնացեք:

Քառասունմին կնանիք ճամբա են ընգնում, գընըմ: Ամահական ծաղիկն էս սարըմ ա, էն սարըմն ա, խարելով տանըմ ա մի թալա տեղ հասցընըմ, մթնում ա: Ասըմ ա. — Էկեք ըստի քշերս մնանք, ըռավողը կլիսանա, կգնանք:

Կրակ են վառըմ, հացի են նըստում, մին էլ տենըմ են քառասունմին ձիավոր էկան:

— Բարի ըրիգուն ձեզ:

— Աստու բարին, հարամ բաշի, — ասըմ ա կնիկը:

Ասըմ ա. — Ընչո՞վ իմացար, ոը մենք հարամնի ենք, ես էլ հարամբաշի:

— Դե, — ասըմ ա, — էս չախին, քշերվա կեսին էս չոլումը թուր ու թվանքը կապած՝ կնշանակի հարամնի եք:

— Ճիշտ ա, — ասըմ ա, — մենք ղաչաղնի ենք: Կնանիք չունենք, եկեք իրար առնենք, քառասունմին կնիկ եք, քառասունմին մարդ ենք:

Կնիկը թե. — Ձոռո՞վ, թե կամո՞վ:

— Կամով, կամով չըլի, գոռով:

— Դե դուք թուր ու թվանք կապած տղամարդիկ, մենք էլ կնիկ-սրմատ, ի՞նչ տինք անիլ, կամով չլնի, գոռով տիք առնիլ: Հեշտ կնիկ ուզիլ չկա, հարամ բաշի, — ասըմ ա էդ կնիկը, — դուք սովոր կըլնեք էս գնդերին, հնգերտանցըդ դարգի գնան, գինի, արաղ, միս, ճաշացու բերեն, ուտենք, խմենք, որ էս քշեր մենք իրար առնինք պաի:

Ասըմ ա. — Լավ ես ասըմ:

Ղարգում ա հնգերտանցը մի քսան հոգու, որ էդ կնգա ուզածնին բերեն: Էդ թագավորի կնանիքը մլորել են, թե՛ էս ինչ ա, էս ու՛մ ճանգն ընկանք: Էդ կնիկը, որ տենըմ ա կնանիք մլորել են, ասըմ ա. — Չարամ բաշի, հնգորտանցդ մի կուռը քաշի, թող արեք ես էս կնանոցը դրադ տանեն, համոզեն, որ մի քիչ ուրախ ըլեն:

Ասըմ ա. — Լավ, գնացեք:

Էնքան դրադ ա տանըմ, որ իրանց իոսակցութիւնը դրանք իմանան ոչ, որ կորչիլ պտեն, փախչեն:

Կնանիք թե. — Այ քիրա, ի՞նչ տենք անի:

Կնիկը թե. — Որ կնստենք ուտել խմելու, ամենքդ մինի կշտին կնստեք, դուք շատ չեք խմի, շատ չեք ուտիլ, նրանք ուտիլ դեն, խմիլ, հարրիլ, որ հարբեցին՝ պորտիկ կըլեն ու կքնեն: Եդնա ես ծափ կտամ, որ ծափ կտամ՝ վեր կկենաք, ամենքդ ձեր կողքինի թուրը կհանեք ու վիզը կկտրեք, շորերնին կհանեք, կհաքնենք, սողամարդու կերպ կառնենք, ձիանին կնստենք ու հայդա: Կանե՞ք:

— Կանենք:

— Ղե, որ կանեք, սրանցից կազատվենք, չէ՛ չէ:

Ճաշը սաըքում են, սեղանը գծում, ամեն մինը մնի կշտին նստած են, էդ կնիկն էլ հարամ րաշու կողքին ա նստած: Թամադեն էլ էդ հարամ րաշին ա: Ուտում են, խմում են: Ղրանք թաքում ուսովը ծուլ են անըմ խմիչքը, մութ ա, դաչաղնին նկատում չեն, համա դաչաղնին հարրում են, թուշիկ են ըլըմ, ամենքը պորտիկ են ըլըմ ու քնում: Կնիկը տենըմ ա, որ սաղն էլ քնած են, խմած մարդիկ, ծափ ա տալի, կնանիքը վեր են կենըմ ամենքն իրան կողքի մարդի վիզը կըտըրըմ, շորահան անըմ, շորերնուն հագնըմ, իրանց շորերն էլ րոխչա կապըմ: Կնիկը հարամ րաշու վիզը կըտըրում չի, հարամ րաշուն սաղ ա թողնըմ ու վրի շորերը հանըմ ա, շաբիկ, փոխանով թողըմ, նստում են ձիանքը ու յալլա, ճղում են:

Ըռավողը հարամ բաշին գարթնում ա, տենըմ ա որ քառասուն հարամու վիղն էլ

կտրած, ինքն էլ մնացել ա տկլոր: Ասըմ ա. «Չե՛յ վա՛խ, ես քսան տարի էս չուլումը ապրեցի, ոչ ով կարաց ոչ մի մագիս դիպչի, մի կնիկը ինչ բերուց էս քառասունիս գլխին»:

Թո հարամ բաշին տե մնա, խաբարը տանք կնանոնցից:

Ղրանք գընըմ են, շատ են գընըմ, քիչ են գընըմ, հասնըմ են մի քաղաքի, որ ժողովուրդը թագավոր ա ընտրում: Ղուշ են րաց թողում, ղուշը ում գլխին վե գա, թագավորը նա ա: Ղուշը գալիս ա էդ կնգա գլխին վե գալի: Ասում են. — Ղարիբ ախպրտինք, գնացեք, — մի տուն են տալի, — ընդի նստեցեք, մենք մեր թագավորն ընտրենք մեր ժողովրդիցը, նոր ղուք վեր կկենաք կգնաք ձեր տները:

— Լավ, — ասըմ են:

Ձիանքը կապում են, իրանք գընըմ են տան մեջ նըստում, ղուշը տանըմ են եդի իրանց ժողովրդի մեջին բաց թողնում, ղուշը էլ եդ գալիս ա ակոշկի շուշեն կոտրում, մի մտնում, էդ կնգա գլխին վե գալի: Իրեք հետ տանըմ են, րերըմ, ղուշը էլ եդ գալիս ա էդ կնգա գլխին ա վե գալի:

— Կաս՝ մեր թագավորը դու ես, չկաս՝ մեր թագավորը դու ես:

— Այ ժողովուրդ, ես դարիբ մարդ, ես ձեր երգրին անծանոթ, դուք գնացեք ձեզ հմա թագավոր ընտրեցեք:

— Չէ, կաս՝ մեր թագավորը դու ես, չկաս՝ դու ես, ղուշը իրեք հետ քու գլխին ա վեր եկե:

Ինչ տի ասի, թափառական ընգել ա չուլերը, էդքան մարդի արին ա մտե, ուզի չուզի մի տեղ պտի գիըար ըլի: Նըստըմ ա թագավոր:

Իըա հնգերտինքը գիդի որ սաղ էլ կնիկ են, դրանց նշանակում ա իրա պալատի սահմաններումը պահապան: Մի ստուլբա ա տնկել տալի՝ քաղաքի մեյդանի աղորի կշաին, իրան կնիկ արմատ նկարը կպցընըմ, էրկու պահապան ա նշանակում ջուխտը կոանը, ասըմ ա. — Ըտեղ կաղնեցեք, ով կգա էս ախպրորիցը ջուր խմի, էս նկարը մտիկ կանի, ախ կքաշի՝ կբերեք իմ կուշտը:

Թողենք եղ կնիկը թագավորի, են կնանիքն
էլ պահակ կանգնեն: Խաբարը տանք մար-
թիցը:

Մարդն իմանում ա, որ իրա գնալուց վեց
ամիս եղը իրան տղա ա էլել, որ կնգա գլխի
տակին ամեն քշեր մի բուռ ոսկի ա ըլել, կնիկն
էղ ոսկովն ա էս տները շինել, փոշմանում ա,
ինչ պտի անի, էլ ծեռը չի ընգնում: Էղ մարդի
ճակտին փայ չի ըլնմ գրած, են օրն ա ընգնում,
տուն տեղն էլ ա ծախում, էբեխեն էլ ա սովից
մեռնում, ինքն էլ ա հրե պտի ընգնի մեռնի: «Չէ,
– ասում ա, – չէ, գնամ աշխարհ ման գամ, էլ էղ
իմ կնգանը գտնեմ, էլ էղ իմ կնիկը ինձ պահի»:

Թող նա ճամբա էթա: Խաբարը տանք
վաճառականից:

Վաճառականը գընում ա էղ հուլը առնում ա,
բերում ա, տենում ա դուռը փագած, մարդ չկա
միջին: Ասում ա. «Էղ կնիկը ինձ խաբեց, էթամ
աշխարհ ման գամ, էղ կնգանը գդնեմ, իբան
ուզած հուլն իրան տամ, բալբա իմ տված
փողի կեսը տա, գամ ինձ հմա ապրեմ, ոչ վար
ու ցանք անող եմ, ոչ բանվորություն անող
եմ»:

Թող դա էլ ճամբա ընգնի: Խաբարն
ուժնիցն ենք տալի: Թագավորիցը:

Ասում ա. «Էղ կնիկը ինձ ուզողը չէր, գնամ
գդնեմ կնանիքս էլ ա եղ բերեմ»:

Թող դա էլ ճամբա ընկնի: Հմի ուժնիցն ենք
տալի խաբարը: Հարամբաշուցը:

Հարամբաշին իրան գլխիցը մի բուռ մագ
ա պոկում, ասում ա. «Պտի էթամ էղ կնգանը
գտնեմ, կամ թո իմ գլուխն էլ տա, կամ դբա մեծ
թիքեն անգաճն եմ թողալու»:

Թող դա էլ ճամբա ընգնի:

Կնգա թագավորական քաղաքը առաջինը
էղ կնգա մաթթն ա գալի: Աղբրից ջուր ա
խմում, նկարին մտիկ ա տալի, նման ա տալի,
ախ ա քաշում: Դրան բռնում են, տանում են
թագավորի կուշտը:

Տենում ա իրան մարթն ա, ասում ա. –
Տարեք բանդում փակեցեք, հաց, ջուր տվեք:

Մի քանի օր եղը գալիս ա վաճառականը:
Նկարին նայում ա, ախ ա քաշում: Բռնում են,

տանում են թագավորի կուշտը: Տենում ա, որ
դա էլ վաճառականն ա, դրան էլ են տանում
բանդը, գցում առանձին տեղ, հաց-մաց են
տալի: Եղև հերթով գալիս են թագավորը,
հարամբաշին: Դրանց էլ տանում են
թագավորին շանց տալի, ճանաչում ա, տանում
են բերդը ջոկ-ջոկ օթախներում պահում, հաց
տալի: Դրանք բոլորն էլ, որ գալի հավաքվում
են, թագավորը բոլորին կանչել ա տալի,
մարթուն նստացնում ա կողքին, ծենը տալիս
ա վաճառականին, ասում ա. – Որ էղ նկարը
տեհար, խի՞ ախ քաշեցիր:

Սա թե. – Թագավորն ապրած կենա, սիե,
սիե մի կնիկ գանդուկի մեջ ինձ պտահեց,
տարա տուն, ասեցի ես քեզ կուզեմ, ասավ՝
գոռով, թե կամով: Ասի՝ կամով: Դե որ կամով
գնա մի հուլ առ բի ճիտս գցեմ, նոր քեզ
կառնեմ: Ես էլ վե կալա ինչքան փող ունեի
տվի հուլն առա, բերի, էկա տեհա մարդ չկա
տանը: Ասի՝ պարզ բան ա, էղ կնիկն ինձ
խաբեց, գնամ, աշխարհ, աշխարհ ման գամ,
կնգանը գդնեմ, գոնյա իմ փողի կեսն էլ ա
կտա, կբերեմ մի թեթև խանութ կբանամ,
կապրեմ: Հմի ող դու ըլնեիր իմ տեղը ախ չէի՞ր
քաշի:

Թե. – Հա, ես էլ ըլնեի ախ կքաշեի:

Եղ ա դառնում մարդին թե. – Դու լավ լսի:

Նորից դիմում ա վաճառականին. – Էղ
կնիկը որ քեզ պտահեց, մի օր, մի քշեր կշտին
կացե՞լ ես:

Թե. – Չէ, ոք էղ առաջաբկն արի, դա էլ իրա
ուզածն ասավ, ինձ խափեց ճամբու դրեց,
ինքը գնաց ու գնաց:

Վաճառականին թե. – Լավ, դու նստի:

Նորից եղ ա դառնում մարդին, ասում ա. –
Դու լավ լսի:

Ձենը տալիս ա թագավորին, ասում ա. –
Հմեկ դու պատմի, տենանք, ինչի՞ ախ քա-
շեցիր:

Դա էլ պատմում ա, որ էղ կնիկն իրա կնա-
նոցը տարել ա, ինքը աշխարհե աշխարհ ման
ա գալի, որ իրա կնանոցը գտնի, եղ տանի, հմի
կնգա նկարը որ տեհել ա, ճանաչել ա, ախ ա

քաշել: Դրան էլ ա ասըմ նստի, մարդին էլ, թե դու լավ լսի: Ձեմը տալիս ա հարամբաշուն, ասըմ ա. — Դու ընչի՞ ախ քաշեցիր:

Հարամ բաշին ա սկսում պատմելը, ասըմ ա. — Թագավորն ապրած կենա, մենք քառասունմի հոգով քսան տարի չուերումը ման գայինք, օրերից մի օր տեհանք քառասունմին կնիկ մի թալում նստած են: Ասի՝ բարիգուն, էդ նկարի կնիկն ասավ՝ ասսու բարին, հարամ բաշի: Ասի՝ ընչո՞վ իմացար, որ մենք հարամնի ենք, ես էլ հարամ բաշի: Ասավ՝ որ դուք էս չուումը ման եք գալի թուր ու թվսնք կապած, ուրեմն հարամնի եք: Ասինք՝ մենք ուզում ենք ձեզ առնենք: Ասավ՝ զոռով, թե կամովի: Ասինք՝ կամով, կամով որ չըլի, զոռով, Ասավ թե՝ գնացեք ուտելիք, խմելիք բերեք, ուտենք, խմենք, նոր ձեզ ուզենք: Դարդակ կնիկ ուզիլ չտի ըլի: Հնգերտանքս գնացին ինչ որ պետք էր բերին, սեղան գցեցինք, ես էլ թամադեն ի, եմ ուտել, խմելն ա միտս, մնել վո կացա, տեհա քառասուն հնգորտանքս գուրին էլ կտրած, իմ հագին էլ մնացել էր ոտաշորս ու շապիկս: Ես էլ ասի՝ գնամ աշխարհի ման գամ, էդ կնգանը գտնեմ կամ իմ գլուխն էլ տա, իմ արումը խառնի իմ հնգորտանք արնին, կամ դրա մեծ թիքեն անգամջը թողեն:

Թագավորը անց ա կենում իրա օթադը, թագավորի հալավը հանըմ, իրա կնիկ արմատի հալավը հագնում ա, գալի կշտներին կաղնըմ: Ըրմանում են, թե մինչև հմի թագավոր էր, հիմի էլ մեր ուզած կնիկն ա: Ասըմ ա. — Ես բոլորիդ ուզածն էլ կկատարեմ:

Վաճառականին ասըմ ա. — Դու ի՞նչ ես ուզում հըմի:

Ասըմ ա. — Էս քու ուզած հուլն ա, էսքան փող եմ տվե:

Ասըմ ա. — Առ էս քու փողը, վե կալ գնա:

Վաճառականը վեր ա կալըմ փողը, ուրախ ուրախ գընըմ: Թագավորին հարց ա տալի. — Դու ի՞նչ ես ուզում:

Ասըմ ա. — Ես եկել եմ, իմ կնանիքն եմ ուզում:

Ասըմ ա. — Էդ իրանց կամքն ա, կգամ տար,

գալ չեն գոռով տալ չեն:

Կնանոցը կանչըմ ա, ասըմ ա. — Ձեր մարդը էկել ա, ուզում ե՞ք հետը գնացեք, ուզում չեք, մնացեք:

Չէ, — ասըմ են, — որ մեր մարդը էկել ա, մենք էրթում ենք:

Կնանիքը հագնում են իրանց շորերը ու թագավորի հետ ճամբա ընգնըմ:

Մնաց հարամ բաշին: Ասըմ ա. — Հարամ բաշի, հըմի դու ի՞նչ ես ուզում, դու՞ էս իմ գլուխը տալի, թե ե՞ս եմ քու գլուխը տալի:

Հարամ բաշին ասըմ ա. — Դու, որ էդքան գաղափարի տեր ես, էդքան բանը կատարել ես, հմել երգիր ես ղնկավարում, ոչ դու իմ գլուխը տուր, ոչ ես քոնը:

Թագավորը հարամ բաշուն ասըմ ա. — Հարամ ությունիդ թարգը տուր, ես քեզ գործի կգնեմ, կաշխատես, կապրես:

Հարամ բաշին շնորհակալ ա ըլըմ: Դրան նշանակում ա թագավորական իազիների պահապան: Մարթին ասըմ ա. — Հմի դու ինչ ես ուզըմ:

Ասըմ ա. — Ինձ էլ ըստի մի գործի դի, կշտիդ մնամ:

Ասըմ ա. — Ես թագավոր — թագուհի, դու էլ իմ մարգն ես, իսալին իմանա ի՞նչ կասի:

Ասըմ ա. — Բա ի՞նչ անեմ:

Կնիկն ասըմ ա. — Տեհար էդքան մարդու գլխին ի՞նչ եմ բերե, եդքան մարդկանց արումն եմ մտե, սադ քո մեղքովը, աստոծ կամենում ա, որ մենք իրար պատկանենք, եսքան ռան էդավ գլխներիս, վերջը անարատ իրար գտանք:

Աարդուն թրաշել ա տալի, ռաղնիք ա դրգում, շորեր ա հագցնիլ տալի, թագավորի հալավը, կանչըմ ա իրա սինողներին, ասըմ ա. — Իմ մարգն էկել ա, ես գընըմ եմ:

Աինողները ըրմանում են, որ իրանց թագավորը կնիկ արմատ ա ըլել, իրանք գլխի չեն ըլել, համա իմանալով նրա գլխի էկածը, ասըմ են. «Կաս՝ դու ես մեր թագավորը, չկաս՝ դու ես»: Բաց չեն թողնում: Կնիկը մարդին օծում ա թագավոր, նստացնըմ ա գահին, իրար հետ

հաշտ ու իադադ կառավարում են երգիրը: Իրանք հասնում են իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

Աստանից իրեք խնձոր վեր էկավ. մինը՝ ասողին, մինը՝ լսողին, էն մինն էլ՝ ավամ աշխարհին:

16. ԿՆԻԿ ԷԼ ԿՍ, ԿՆԻԿ ԷԼ

Ըլում ա չի ըլում մի թագավոր, էդ թագավորը հրաման ա տալի, որ շաբաթ օրերը իրա երգրունը լուս չպիտի վառվի: Թագավորի հրամանը հրաման, ժողովուրդը լիսը հանգցնում ա ու քուն մտնում: Մենակ քաղաքի ծերուն մի թեթև լիս ա էրևում: Թագավորը հրամայում ա, գնան տենան էդ ով ա, քանի գլուխ ունի ուսերին, որ իրա հրամանը չի կատարել: Թագավորի նազիր-վեզիրները գնում են, տենում են, որ մի ակոշկովը շոր ա քաշած, բայց մի փոքր ծակ կա, էդ ծակովը լիս ա երևում: Դուռը ծեծում են, բացում են, տենում են, որ ջուլիակը աշխատում ա, կնիկն էլ թել ա մանում: Էդ մարդ ու կնգան աղաքներն են անում, տանում թագավորի կուշտը: Թագավորը հարց ա տալի. — Այ ջուլիակ, ընչի՞ հմար հրամանս չես կատարել:

Ջուլիակն ասում ա. — Դե ակոշկեքը փակել էի, որ հացի փող աշխատեն: Թագավորն ապրած կենա, եթե մենք էսօր կտոր չգործեինք, էգուց հացի փող չէինք ունենա:

Թագավորը կարգադրում ա դրան տանեն բանտը գցեն, կնգան ա հարց տալի, կնիկն էլ նույնն ա ասում:

Թագավորն ասում ա. — Այ կնիկ, դու սիրում ես, ընչի ես տիե քյասիբ մարդի կշտին ապրում, որ հացի փողի հմար մտածում ես:

Ասում ա. — Բա ի՞նչ անեն, թագավորն ապրած կենա:

Թագավորն ասում ա, թե. — Մարդիդ սպանի, ես քեզ կպահեն:

Կնիկը համաձայնվում ա: Թագավորը հրամայում ա, ջուլիակին բաց են թողնում, հեղինից

էլ կնգանն ա դարգում: Կնիկը գնում ա տուն, տենում ա մարդը տանը, խաբլափորում ա, մարդին քնացնում, կացնով տալիս ա գլխին, սպանում: Սպանում ա, վազելով գալի թագավորի պալատի դուռը: Պահակնին բաց են թողնում, գնում ա թագավորի կուշտը, ասում ա. — Մարդիս սպանեցի:

Թագավորն ասում ա. — Լավ արեցիր:

Նազիր-վեզիրներին դարգում ա, գնում են, տենում են, որ տվել ա կացնով մարդին սպանել: Գալիս են պատմում թագավորին: Թագավորը կանչել ա տալիս ջաննաթներին, ասում ա. — Էս կնկանը կտանեք մի քարի կշտին ընենց մանդր կկտորեք, որ ագռավը կարենա էդ կտորը կուլ տա:

Ջաննաթնին տանում են էդ կնգանը կտտորտում, քարի էրեսին վեր ածում, եղ գալի, ասում են. — Թագավորն ապրած կենա, քո հրամանը կատարված ա:

Ըռավողը լիսանում ա, թագավորը կանչում ա իրա նազիր-վեզիրներին, դրանցից ամենահավատարիմ ջահել վեզիրին ասում ա. — Դու կմնաս քաղաքում, ես նազիր-վեզիրներս հետ գնում եմ երգիրը ման գալու, մի երկու օր կմնամ դրսում, գամ տենամ կին բառ չկա էդ քաղաքում: Մանուկիցը մինչև ծերը բոլոր կանանց կկոտորեք որպես դավաճանի: Մռաջին հերթին կեթաս պալատ իմ կնիկարմատը կկոտորես ու քունը, հետո՝ ժողովողին: Թե գամ տենամ հրամանս կատարված չէ, գլուխդ կկտրեն:

Թագավորը գնում ա: Վեզիրը մնում ա մլորված, շփոթված, թե ինչ անի: Մլորված գնում ա տուն: Թագավորի հոր առաջին վեզիրը դրա հերն ա ըլում, մի ծեր մարդ, որը հմի տանը նստած էր: Հերը տենում ա տղեն մտամուլոր ա, ասում ա. — Տղա ջան, խի՞ ա քեփդ իարար:

— Մյ հեր, — ասում ա, — ոնց չի իարար ըլի, թագավորը ինձ նման հրաման ա տվե, ես ի՞նչ անեմ, ես ո՞նց կոտորեմ էս դադա ժողովողին, էս դադա կանանց:

— Տղա ջան, ոչ մեկի քեփին էլ չդիպչես, մի

աղա ես, իմ միմուճարն ես, թող քու գլուխը կտրի: Ոչ մեկին էլ ձեռ չտաս: Դու աչք կպահես, կտեմաս, որ թագավորը գալիս ա, ինձ կտանես նրա պալատի դռանը կնստացնես:

Տղեն ըտենց էլ անում ա: Թագավորը մտնում ա քաղաք, տենում ա կնանիքն ու աղջիկները ազատ, քաղաքում են, ման են գալի, ամեն ինչ իրա տեղումն ա: Թագավորը թուրը հանում ա զու քաշում, որ հասնելու պես վեզիրի գլուխը թոցնի: Մուտենում ա պալատին, հալիվորը ոտի ա կանգնում, ասում ա. – Թագավորն ապրած կենա, էդ վեզիրն իմ տղեն ա, նրա գլուխն էս կտրել տալու, տուր: Բայց թույլ տուր էրկու խոսք ասեմ, նոր կտրի: Դու գիտես, որ ես քո հոր առաջի և հավատարիմ վեզիրն եմ եղել:

Թագավորն ասում ա. – Գիտեմ պապի, ասա:

Ասում ա. – Թուրըդ տեղը դիր, նսաի կողքիս, նոր ասեմ:

Թագավորը նստում ա, թուրը դնում պա-
այանը: Հալիվորն ասում ա. – Պատմությունըս մի քիչ երկար կըլի, բայց կլսես:

Ասում ա. – Ասա:

Հալիվորն ասում ա. – Քու հերր մի օր ինձ կարգադրեց, որ գնամ իրա հանդամասը ման գամ, տեմամ ինչ կա, ինչ չկա, գամ իրան ասեմ: Գնացի ման էկա, եդ եմ գալի, տեմամ մի ծիավոր կտրեց առաջս, ասավ. «Այ ծիավոր, ծիուս եղնով արի»: Մի քիչ դեմ գնացի, ինքն անցավ. եդ դառավ թե. «Եդ արի, թե եդ չես գալի, մեծ թիքեդ անկանջդ կմնա»: Եդ դառա եղնուց գնում եմ, մխելի որ գնացի, եղնուց գուրզով տվի, գուրզըս վեր ընկավ. եդ դառավ թե. «Ես խաղալիք չեմ, քեզ ասում եմ եզնիս արի»: Ուրեմն գուրզս նրա վրա չէր ազդել: Էլի քշեց, քշեցի գնացի, մխելի էլ, որ գնացինք, էլի գուրզով տվի: Ասավ. «Այ տղա, ինձ նեղացնիլ մի, քեզ ասում եմ եզնես ծիդ քշի, արի»: Չիմ քշեցի գնացի, տեհա որ իմ ուժից վեր ա նրան սպանելը: Գնացինք, գնացինք, շատ գնացինք, քիչ գնացինք, գնաց մի գաղի որքումը ծիանից

վեր էկավ. Ասավ. «Էդ ծիանը բռնի, զաղի դռանը կաց, թե մի ժամ անց կենա, ես դուս չէկա, իմ ծիմ ավելի ուժեղ ա, իմ ծիմ կնստես ու կփախչես»: Ձաղի դռանը մի էլ կա, էլի վրա էլ մի մեծ ջաղացքար, ինքը մտավ էդ էլը: Քարը որ եդ քաշեց ու մտավ էդ էլը, ղըլմադալ էլավ. մի քիչ եդնը արիմը չայրիի նման դուս էկավ ըտեղան: Վերջը տեհա էդ մարդը դուս էկավ մի քլալա թրի ծերին: Ասավ. «Նստի ծիդ»: Չիմ նստեցինք, գնացինք: Քշեց գնաց. շատ գնաց, քիչ գնաց, մի ծառի տակ վեր էկավ: Գնացի, ես էլ հասա, վեր էկա, հանգստացանք, հաց հանեց, հաց կերանք: Ասավ. «Այ տղա, դիտես քեզ ուր եմ ըրել: Էն որ կտորեցի, արունը դուս էլավ, դներն էին: Իմ մարդին սպանեցին, հմի էս գըրեզմանը, տեսնում ես, էս իմ մարդի գըրեզմանն ա, – ասավ. – գըրեզմանը բաց արա»: Ինքն էլ քոմագ արավ. գըրեզմանը բաց արավ. Ասավ. «Հմի ինձ տի սպանես, էս տղի ծոցումը կթաղես, ծիս էլ քեզ, էս ոսկին էլ քեզ»: Ես ռիսկ չարի, ասի. «Ես կարալ չեմ քեզ վրա սուր վրա բերեմ»: Վերջը որ շատ ստիպեց, տեհավ անում չեմ, ինքն իրա թուրը հանեց, իրա դոշին դրեց, ինքն իրան սպանեց, ասավ՝ որ իրան հողով ծածկեմ: Ինչան դրի տղի ծոցումը, քլալեն էլ դրի ոտների տակը, հողով ծածկեցի, ծիանը րացեցի, բերի: Համա, թագավորն ապրած կենա, կնիկ էլ կա, կնիկ էլ կա, էն էլ էր կնիկ, ինչան մաղդի վրեժը հանեց, իրան սպանեց, ծոցումը թաղվեց, իսկ դու մի հասարակ ջուլհակի կնգա հմար ուզում ես էս ժողովրդին կոտորես:

Թագավորն ասում ա. – Հայրիկ, ճիշտ ես ասում, կնիկ էլ կա, կնիկ էլ կա, քեզ էլ րախշեցի, քու տղին էլ, քու կնգան էլ:

Թագավորը իրա հրամանը հետ ա վեր կալում, ժողովուրդն ու երգիլը ապրում են առաջվա նման:

17. ԸՆԴ ԲՍՄԱՅԻԼ

Ըլում ա չի ըլում մի թագավոր ա ըլում: Էս թագավորը շատ հարուստ ա ըլում, թե՛ ապ-

րուստով, թե՛ գորքով, մենակ ըրեխա չի ունենում: Եդ թագավորի կնիկը մարդուն ասում ա. — Ես հարստութիւնը թոփ ենք արե ընչի հմար, աղքատներին փայ ենք անելու:

Թագավորն ասում ա. — Ինչ անում ես, արա:

Եղ ասելուց շատ վախտ չի կենում, մի դարվիշ գալիս ա, մտնում ա եդ թագավորի պալատը, փայ ա ուզում: Թագավորի կնիկը կոտը տանում ա, ոսկու տակը տալի, բերըմ ա դրա խուրջինը լցվում ա: Դերվիշն ասում ա. — Օջ ով ես դադա փայ չի տալի, դու ո՞նց ա կոտով ես փայ տալի:

Թագուհին ասում ա. — Դարվիշ ախպեր, Եսդար ապրուստն ունենք, ոչ տղա ունենք, ոչ աղջիկ, ինչնիս ա պետքը, փայ եմ անըմ, որ հատնի:

Դարվիշը ջեբիցը մի խնձոր ա հանըմ տալի, ասըմ ա. — Կըկլպես, կլեպը կտաս ձիուն, ձին մի քուռակ կբերի, խնձորը կկիսես, թագավորի հետ կուտես, իննը ամիս, ինը օր, իննը ժամ որ թմամի, մի տղա կբերես, մենակ թե անունը դնիլ չես, մի՛նչի որ ես գամ:

Թագուհին ուրախանում ա, խնձորը կլպում ա, կլեպը տալիս ա ձիուն, խնձորի կեսը ինքն ա ուտըմ, կեսը՝ թագավորը, իննը ամիս, իննը օր, ինն ժամը որ թմամում ա, պառկում ա, մի տղա բերում: Դարվիշը գիղի եդ տղեն եր տի ծնվիլ. գալիս ա անունը դընըմ ա Շահիսմայիլ: Եդ տղին տնից դուս չեն թողնըմ, դասատուն գալիս ա տանը դաս տալի, գընըմ, ըտենցով դառնըմ ա տասնութ տարեկան:

Մի անգամ ոնց ա ըլըմ դրա ճաշի միջին մի ոսկոր ա ըլնըմ, կըծում ա, կըծում ջոյանանում ա, տալիս ա ակոշկովի, շուշեն ջարդում ա: Որ շուշեն ջարդում ա, արեը տուն ա ընգըմ, արե չտեհած ըրեխա չայիր ա գալի, որ բոնի, դասատուն ներս ա գալի, որ դաս տա, տենըմ ա տղեն քափ քրտինք մտած շողքի հետ կոիվ ա տալի: Դասատուն գընըմ ա թագավորի կուշտը, ասըմ ա. — Թագավորն ապրած կենա, տղիդ ըտեհ վիրունի պահելուց էլ հնար չկա, դուրս բերեք տնից:

Դուրս են բերըմ, խորտնում ա, սվորցնում են ինչը ինչ ա, բերըմ են էն ձիու քուռակը, որ խնձորի կլեպից ա ծնվե, թամքում են, մի չորս հոգի հետը դընըմ, մատացնում են ձիու քուռակին, դարգում են սարերը, որ ման գա:

Գընըմ են սաբը, տենըմ են մի տերտեր սարըմը չաղիր ա խփել, մտել: Դրան մի աղջիկ ա ունենըմ, անունը Գյուլիզար: Շահիսմայիլը Գյուլիզարին որ տենըմ ա, ասըմ ա. — Աղջի ջան, ինձ կուղե՞ս:

Շահիսմայիլն ու Գյուլիզարը մատնիքները փոխում են: Եդ մատնիքի վրա Շահիսմայիլը սրտավորվում ա, տերտերին ասըմ ա. — Ես քու աղջիկն ուզում եմ:

Տերտերը ասըմ ա. — Դու թուրքի տղա ես, թագավորի տղա ես, ես էլ տերտեր եմ: Տերտերը թուրքի աղջիկ կտա՞:

Շահիսմայիլը ջոյանանում ա, ասում ա. — Կաց գնամ գորքը բերեմ, տենամ տալիս չէ՞ս:

Հենց որ Շահիսմայիլը գընըմ ա, տերտերը վրանը քանդըմ ա, աղջկանը առնըմ, գընըմ: Գյուլիզարը մի թղթի վրա գրում ա, մի սալ քարի տակին դընըմ թե՛ «Շահիսմայիլ, ինձ տարան, թե ինձ սիրում ես, իմ եղնից կգաս՝ կգտնես»:

Շահիսմայիլը գորքով գալիս ա, տենըմ ա տերտերն աղջկան առել քոչել են, գորքին եդ ա դարգում, սալ քարը շուռ ա տալի, տենըմ ա՝ տակին մի նամակ: Եդ էլ որ կարդում ա, ջլիգ տքանում ա, գընըմ ա: Շատ ա գընըմ, քիչ ա գընըմ, մի տան ա ոաստ գալի: Եդ տունը ոչ դուռ ունի, ոչ ակոշկա, կտուրն էլ պատած, ասըմ ա. «Ես տերտերն արած կըլի, որ գորքը գա իրան ու աղջկան գդնի ոչ»: Շահիսմայիլի ձին ոտով իսկում ա, պատը փուլ ա գալի, տենըմ ա՝ մի աղջիկ, շերեփը ձեռին, ճաշ ա էփում: Ասըմ ա. — Ինձ թագավորի տղի հըմա ուզում են, օխտն ախպեր ունեմ՝ տալիս չեն, մնին սպանել են, վեցն էլ կոիվ են անըմ:

Շահիսմայիլը հարց ա տալի. — Թե դվորը տի գնամ, որ իրանց հասնեմ:

Աղջիկն ասում ա. — Թունելով որ գնաս, աղաքները դուս կգաս:

Շահիսմայիլը գընըմ ա աղաքները կաղնում:

Էդ ախարսիները որ տենում են, ասում են.
— Գնանք էս տղին մեր սպանված ախարոր տեղը բերենք:

Գընըմ են ծիու սանծից քաշում, բերըմ են էս կուռը: Աղջիկը ճաշը եփած ա ըլըմ, բերըմ ա որ ախարտիները ուտեն:

Շահիսմայիլը ասըմ ա. — Մինչև ծեր ուտիլը ես կռվեմ:

Նստում ա ծին՝ ընգնում գորքի մեջ, թուրը քաշում ա, սրան ա տալի, նրան ա տալի, ինչքան ինքն ա սպանում, մի էղքան էլ ծին ա պոչով տալի սպանում, գորքն ում ոտը բռնում ա, փախչում ա, կռիվը վերջանում ա: Սրանք հավաքվում են գալիս են իրանց տունը: Տենըմ են պատը քանդած: Ասըմ են. — Էս ո՞վ ա պատը քանդել:

Շահիսմայիլն ասըմ ա թե. — Ես:

Ասըմ են. — Որ դու ես քանդել, քեզ բան չենք անիլ, մենք մեր օժար կամովը մեր քվորը տալիս ենք քեզ:

Ասըմ ա. — Ես ծեր քվորը փութ չեմ դընըմ, համա ես մի Գյուլիզարը ունեմ, գնամ նրան բերեմ, ծեր քվորն էլ հետս տանեմ:

Ախարտիներն ասում են. — Էդ ճամփովը մի գնա, ով էդ ճամփովը գընըմ ա, եդ չի գալի: Էդ ճամբի վրա մի արարի զանգի կա, ում սիլլա ա տալի, մեռնըմ ա:

Շահիսմայիլը ծիով գալիս ա, կանգնում ա էդ արաբի զանգիի աղաքին, ասըմ ա. — Արարի զանգի, ինձ ճամբու տու, գնամ իմ Գյուլիզարին գտնեմ:

Արաբի զանգին ասըմ ա. — Ծամբա չեմ տա, դայիշից հասար եմ քաշե, գլխից մուրճ եմ կապե, ճամբա չեմ տա:

Դրանք կռվում են: Շահիսմայիլը դրան ա տալի, դա Շահիսմայիլին ա տալի, ենդաը կռվում են, ոը բեգարում են, կաղնում են, էլ կռվում չեն, վեր են գալի կոխ բռնում: Շահիսմայիլը արաբի զանգուն վեր ա գծում, ծեռը գծում ա դոշին, շորը պատողը, ծծերը բաց են ըլըմ:

Էս կնիկն ասում ա. — Շահիսմայիլ ես սիե եմ արել, որ ով ինձ հաղթի, ես նրան առնեմ, արի ինձ առ:

Շահիսմայիլն ասում ա. — Ես քեզ փութ չեմ դընըմ, համա ես մի Գյուլիզար ունեմ, նրան որ գտնեմ ոչ, ուրիշն ինձ պետք չի: Ասըմ ա. — Մնա ըստի գնամ նրան գտնեմ, գամ քեզ էլ հետս տանեմ:

Գընըմ ա մի քաղաք, մի տան դոնախ ա ըլում: Մին էլ մի ծեն ա լսում: Ասում ա. — Էս ի՞նչ խաբար ա, էս ի՞նչ ա պատահել:

Ասըմ են. — Մի տերտեր կա, մի Գյուլիզար անունով աղջիկ ունի, թագավորն ուզում ա իրա տղի հմար ուղի, մոտ չի գալի, վե չի կալում: Մադ ա շինըմ, որ նշանը մեջը դնի, տանի ուրախանա, վե կալի:

Շահիսմայիլն ասում ա. — Էս մատանին էլ իմ կողմից տար, բալքե վե կալի:

Տանըմ ա. Գյուլիզարը որ մատանին տենըմ ա, ասըմ ա. — Էս մատանին որդիան ա քու ճանգն ընկել:

Պառավը ասըմ ա. — Իմ տունը մի դոնախ կա, նա տվուց:

Գյուլիզարն ուրախանում ա, մտքումն ասում ա. «Շահիսմայիլն էկել ա, — ասըմ ա, — ըռավողը կեթամ բաղումը սեյր կանեմ: Կգամ նշանը վեր կունեմ»: Կնիկը եդ ա գալի: Շահիսմայիլն ասըմ ա. — Ի՞նչ ասավ:

Պառավը ասըմ ա. — Ասավ ըռավողը գնամ րախչումը սեյր անեմ, գամ նշանը վեր կունեմ:

Շահիսմայիլը քշերը քնում չի, ծիանը իոտ ա տալի, թիմարում ա. լիսանում ա, վեր ա գալի րադչեն, րախչումը լիքը աղջիկ: Գյուլիզարը Շահիսմայիլին տենըմ ա, կուռը վեր ա բերըմ: Շահիսմայիլը ծին քշում ա Գյուլիզարի կոնիցը բռնըմ, դընըմ ծիուն ու հայդա. խարարը տանըմ են, թե Գյուլիզարին տարան:

Շահիսմայիլը Գյուլիզարին առնըմ ա, գալի արաբի զանգու կուշտը: Արաբի զանգին ասըմ ա. — Դուք բեգարած կըլնեք, քնեցեք, ես էկածնի հետ կկռվեմ:

Էկածին ջաղդում ա, էկածին ջաղդում ա, գետի դայդա աղինը գընըմ ա:

վեր են կենում, իրեքով ձին նստում են, գընըն են յոթ սխալոր քվոր՝ Նունուֆարի կուշտը, նրան էլ վեր ա ունում, չորսով նստում են ձին, գընըն են, հոր ապարանքի դաքին չադիրը խփում ա, կնանիքը մեջը դընըն, որ հրսանիքով տանի:

Թագավորը հարսներին տենըն ա, միտքը փոխվում ա: Տղի հետ կարտ են խաղ անըն, քանի իաղ են անըն, Շահիսմայիլը տանըն ա: Թագավորն ասում ա. — Շահիսմայիլ, լսի՝ չես թող անըն մի հատ էլ ա տանեն:

Բոշ ա անըն, թագավորը մի հետ տանըն ա: Բերըն ա թուֆ մատնին ժնջով կապում ա, ասըն ա. — Ջաննաթ, գլուխը տվեք:

Շահիսմայիլը թափ ա տալի, ժնջիլը կտրատվըն ա, օղերը ծըլլնգ-ծըլլնգ վեր ա գալի: Թագավորն ասում ա. — Հանաք արի, Շահիսմայիլ, քեզ փործելու հընա արի, քու ուժը որն ա:

Շահիսմայիլն ասում ա. — Որ մատներս ձիուս կապես, միսըս կպկի, կհասնի ոսկորներուս, ոսկորներս պոկ չի գա:

Էլի կաղտ են խաղըն, Շահիսմայիլը տանըն ա: Հերն ասըն ա. — Բոշ արա, մի հետ էլ ես տանեն:

Շահիսմայիլը թոշ ա անըն, հերը տանըն ա, թերըն ա ձիու պոչիցը թթերիցը կապըն ա: Ջաննաթին կանչըն ա գլուխը տա: Իրա վագիրն ասըն ա. — Խի՞ ես գլուխը տալի, տար թաղումը աչքերը հանի, ոչ կտենա, ոչ կգա:

Լսում ա, տանըն ա աչքերը հանըն, գալի: Գընըն ա, որ եղ կնանոցը թերել տա, կնանիքը գալիս չեն, կովում են, արարի գանգին մի էրկուսին սիլլա ա տալի, սպանում: Նունուֆարը իմաստուն ա, Գյուլիզարը հեքիմ ա: Դրանք թոքտի կովեն, խարարը տանք Շահիսմայիլիցը:

Շահիսմայիլը աչքերը հանած վեր ընգած ա թախչումը: Էրկու թոչուն գալի վրեն վեր են գալի: Մինն ասում ա. — Մեռած ա:

Են մինն ասում ա. — Մեռած չի, աչքերը հանած կողքին վեր ածած ա, արի դենք տեղը: Ես թոնեն, էթամ անմահական ջրով թևս թոչեն թերեն, քսեն աչքերին՝ լավանա:

Ըտեհ էլ անըն են: Շահիսմայիլը վեր ա կենըն, գընըն քաղաք, մի տան դոնախ ա ըլըն: Մին էլ թոփի ձեն ա լսում, ասում ա. — Ես ի՞նչ ձեն ա:

Պառավն ասում ա. — Մեր թագավորը մի ագրաիլ կնգա հետ կռիվ ա անըն, ինչքան զորք ունի՝ ջարդել ա, իմ տղին էլ պտի տանի:

Շահիսմայիլն ասըն ա. — Մերա, վախիլ մի, քու տղի տեղը ես կեթամ:

Պառավը թերըն ա ծվածեղ ա անըն, Շահիսմայիլին ուտացնում ա, ճամրու ա դընըն: Կնանիքը զորքի մեջ տենըն են Շահիսմայիլին, քաշում են իրանց կուշտը: Տենըն են ձին չկա, ասըն են. — Բա քու ձին ու՞ր ա:

Թե. — Թագավորի մոտն ա:

Ճիշտ ա, ձին պալատումն ա, համա ոչ ոքի մոտ չի թողնում, ով նստում ա՝ թոլ ա անըն, մեջքիցը վեր գծում: Կնանիքն ու Շահիսմայիլը կռվով մոտանում են պալատին, ձին, որ Շահիսմայիլին տենըն ա, վագում ա կուշտը: Շահիսմայիլը նստում ա ձին, քըշում ա դբա պալատի նեքսը, հասնըն ա թագավորին, թոքվ տալի գլուխը թոցնում ա: Նագիր-վեգիրները ընկնում են Շահիսմայիլի ոտները, որ իրանց խնայի: Շահիսմայիլը իջնում ա ձիուց, նստում ա գահին: Կոիվը դադարում ա:

Յոթ օր, յոթ քշեր հարսանիք են անում, նրանք հասան իրանց մուրագին, դուք էլ հասնեք ձեր մուրագին:

18. ԱՐԴԱՐ ՊԱՏ

Ըլում ա չի ըլում մի քյասիպ տղա ա ըլում: Ես քյասիպ տղեն շատ խելոք ու սիրուն ա ըլում: Օրերից մի օր ես քյասիպ տղեն նշանվում ա մի հարուստի աղջկա հետ: Տղեն ենքան քյասիպ ա ըլում, ող աղջկա մոտ գնալու ժամանակ իրանց հրեվանի շորերն ա հագնըն, ինքը շոր չունի: Երկուշարթի օրը եվրեյ հրեվանի շորերն ա հագնըն: Ես անգամ էլ եվրեյի շորերն ուզում ա, որ գնա աղջկա մոտ: Եվրեն պատասխանում ա, թե էսօր կարալ չեն տա, էգուց կտան:

Նույն էդ օրը եվրենն ա գընըմ աղջկա մոտ, աղջիկը եվրենից հղիանում ա:

Քյասիպ տղեն հրսանիք ա անում, աղջիկը բերում ա տուն: Ժամանակ ա անցնում, քյասիպը իրեն տղա ա ունենում: Ժամանակի հետ քյասիպը հարստանում ա, մեծանում ա, հիվանդանում ա: Մեռնելու ժամանակ իրեն տղին էլ կանչում ա, տղերանց մորն ասում ա: — Իմ ապրուստը բաժանում եմ էրկու տղերանց վրա, մեկին փայ չկա, մեռնելուցս հետո կգնաք մի իմաստուն մարդ կգտնեք, նա կասի, թե ում փայ չկա:

Սսում ա ու մեռնում ա: Իրեն ախպերն էլ ճամբա են ընգնում, գնում են, իմաստուն մարդ որդի՝ ես, իմաստուն մարդի մոտ: Ճանապարհին մեծ ախպերն ասում ա. — Էս ճամփով դավա ա անցել:

Միջնեկն ասում ա. — Դավեն մի աչքից քոռ ա էլել:

Պուճուրն ասում ա. — Դավի վրի բեռի մի թայը մեղր ա էլել:

Շատ են գընըմ, քիչ են գընըմ, ճամբին մի մարդ ա ռաստ գալի, բարև ա տալի, հարցնում ա. — Էս ճամբին դավա չտեսա՞ք:

Մեծը պատասխանում ա, թե՝ տեսանք, միջնակը թե՝ մի աչքը քոռ էր, պուճուրն էլ թե՝ դավի բեռի մի թայը մեղր էր:

Էդ մարդը իրեն ախպրտանց հետ ընգնում ա ճանապարհ ու գնում: Ճանապարհին մեծ ախպերն ասում ա. — Դեսը կնիկ ա գնացել:

Միջնեկն ասում ա. — Էդ կնիկը հղի ա ըլել:

Պուճուրն էլ թե. — Մարդից փախած ա ըլել:

Շատ են գընըմ, քիչ են գընըմ, մի մարդ ա ռաստ գալի, էդ փախած կընգա մարդը, միանում ա դրանց ու գընըմ են: Գընըմ են, հասնում են իմաստուն մարդուն: Մեծ ախպերը պատմում ա հոր ասածը, ասում ա. — Պտի ասես, թե հորս ունեցվածքը ում ա հասնում, ում չի հասնում:

Իմաստունը հարցնում ա. — Բա էս երկու մարդիքը ո՞վ են:

Դավստերն ասում ա. — Ես իմ դավեն եմ ուզում, սրանք տեսել են:

Իմաստունն ասում ա. — Դե որ տեսել էք, տվեք իրան, յա ասեք որդի ա:

Մեծ ախպերն ասում ա. — Մենք դավեն չենք տեսե, ոտնատեղը ճամբում էրեվաց, ասեցի:

Միջնակն ասում ա. — Դավեն գնալու ժամանակ մի կողմն ա արածել, սաղ աչքի կողմն ա արածել:

Պուճուրն էլ թե. — Մեղրին վրա տված ճանճին քշելու ժամանակ ճանճերը սպանվել են, ընկել ճանապարհին:

Իմաստուն մարդը դավատիրոջն ասում ա. — Գնա քու դավեն գտի:

Մյուս մարդին ա հարցնում իմաստունը, թե. — Դու ի՞նչ ես ուզում:

— Սրանք իմ կնգանը տեհել են, — ասում ա մարդը, — չեն ասում որդի ա:

Մեծ ախպերը պատասխանում ա. — Ես ոտնատեղից հասկացա, որ կին ա էլել, քանի որ ոտների մատերը իրարից հեռու ա էլել:

Միջնակն ասում ա. — Ես հասկացա, որ հղի ա, քանի որ ոտնատեղերը իրարից հեռու ա էլել:

Պուճուրն էլ թե. — Կնիկը գնալուց մի քանի անգամ ետ ա դառել ու ետ նայել, դրանից հասկացա, որ մարդից փախած ա:

Իմաստուն մարդը դրան ասում ա. — Գնա քու գործին:

Մնացին իրեն ախպերն ու իմաստունը: Իմաստուն մարդը պատմում ա, որ էրկու հնգեր են ըլում, որոշում են, որը իրան կնիկ թեզ բերի, հնգերը կնգա ծոցին քնի:

Իմաստունը հարց ա տալի մեծ ախպրը, թե. — Որ դու քնես հնգորդ կնգա ծոցին, ո՞նց կքնես:

Մեծ ախպերը պատասխանում ա, թե. — Կքնեմ ռնց որ իմ կնիկը:

Հարց ա տալի միջնակ ու պուճուր ախպրը, սրանք նույն հաղցին պատասխանում են, թե՝ մենք կքնենք որպես մեր քիրը:

Իմաստուն մարդն ասում ա. – Մեծ ախպերը բիճ ա, նրան փայ չկա, փայը բաժանեք երկու ախպորդ մեջ:

19. ԻՆՉ ՈՐ ԲՐԴԵՍ ՈՒՐԻՇԻ ԹՄՄ, ԿԳՍ ԶՈՒ ԳՂԱԼ

Ըլնում են չեն ըլնում մի մարթ ու մի կնիկ են ըլնում, ունենում են հուրի մալաք մի աղջիկ:

Օրերից մի օր կնիկը մեռնում ա, մարթը թագա կնիկ ա բերում, մի աստու գեշ աղջիկ էս կնգանն ա ունենում: Էս թագա կնիկը տենում ա խորթ աղջկանը, մախանձը ընգընում ա սիրտը, հանգիստ տալիս չի, ամեն օր մարթին ասում ա. «էդ աղջկանը տար կորցրա, էդ աղջկանը տար կորցրա»: Ենքան ա ասում, ենքան ա ասում, մարթի ճարը կտրվում ա, արաբեն լծում ա, աղջկանը նստացնում, տանում հեռու ծակումը թողնում, ինքը դառնակ գալի տուն:

Աղջիկը հոր ճամփեն շատ ա պահում, հերը գալիս չի: Վախից բրցրանում ա ծառը, ծառի վրեն քընում: Ըռավողը լիսանում ա, իջնում ա ծառից, էս կուռն ա գընում, էն կուռն ա գընում, օքմի չկա, լաց ա ըլում, ճվում ա, հավաքին հասնող ըլնում չի: Սովում ա: Հերը աղջկա հետ մի քիչ հաց ու պանիր էր դրե, հանում ա, ուզում ա ուտի, միել տենում ա հրես մի մուկը դուս էկավ, լեզու առավ ու ասեց. – Մի քիչ էլ ինձ տաս, ես էլ եմ սոված:

Աղջիկը մի քիչ հաց, մի կտոր պանիր ա կտրում, դնում մկան աղաքին, մուկը սկսում ա ուտիլը:

Մուկը ուտում ա, կշտանում, ասում ա. – Այ աղջի, հրեն արջը գալիս ա, քեզ հետ մարջ դի գալ, մի զանգակ ա բերում, քու ճտիցը կախ դի անիլ ու իրան աչքերը փակիլ դի, ասիլ դի, թե՛ քեզ բռնեցի կուտեմ, թե չէ՛ մի ուղտաբեռ ոսկի կտամ: Դու կասես՝ համաձայն եմ, բե աչքերդ կապեմ: Աչքերը կկապես ու զանգակը կգցես իմ վզովը, ես խոտերի միջին ման կգամ, արջը կարալի չի ինձ գտնի, ման կգա, ման կգա, կրեզարի, կասի՝ ես հաղթեցի, արի աչքերս

բաց, քու ոսկին տամ, գնա: Էն վախտը դու կվազես կուշտս, զանգակը իմ վզից կհանես, կգցես քո վիզը, արջի աչքերը կբանաս ու քու ոսկին կստանաս:

Տենց էլ անում են, արջը հաղթվում ա, մի ուղտաբեռ ոսկի ա տալի աղջկանը, թողնում գընում ա:

Մի քանի վախտից հերը արաբով գալիս ա ծակից ցախ տանելու, համ էլ աղջկանը տենալու, տենում ա հրես աղջիկը ըստեղ, մի ուղտաբեռ էլ ոսկի կողքին դիզած: Ուրախացած վազում ա, աղջկանը գրկում, սպառնում, ոսկին բարձր սելին, աղջկանը նըստացնում վրեն, բերում տուն: Սրանց շունը, որ հեռվից տենում ա աղջկանը, մարդահաչ ա տալի, ասում ա. «Հրես կորած աղջիկն իրա հաղստությունովն գալ դի, հրես կորած աղջիկն իրա հարստությունովն գալ դի»: Խորթ մերը որ լսում ա, փետը վեր ա ունում, շանը թակում ա, ասում ա. «Այ անդեր, ասա՛ կորած աղջկա ռսկընին գալ դի»: Մին էլ տենում ա մարթը էկավ, արաբեն լիքը ոսկի թերուց, տունը լցրուց:

Էքսի օրը կնիկը մարթին ասում ա. – Հմի էլ իմ աղջկան տար ծակումը բբախի, մի արաբա ոսկի էլ թող մա բերի տուն:

Մաղթն ասում ա. – Այ կնիկ, ծակաչքութին մի անի, ամեն անգամ հաջողություն ըլիլ չի, էսքան ոսկին մեզ բռլ ա:

Համա ու՞մ ես ասում, կնիկը մաթթի տեղը էնքան ա նեղում, որ սրա ճաքը կըտրում ա, էս աղջկան էլ ա տանում, բրախում ծակումը ու գալի տուն:

Դե էս աղջիկը գիդի, որ հերը գալ դի իրան տուն տանի, լաց չի ըլլում: Տանիցը ուտելու լավ թիքեք ա վե կալել հետը, արիալին նստում ա, սուփրա սեղանը բաց ա անում, սկսում ա ուտիլը: Մուկը ծակից դուս ա գալի, լեզու ա առնում, ասում ա. – Մի քիչ էլ ինձ ուտելու բան տուր:

Աղջիկը փետը վեր ա ունում, ընգընում դրա եղնա, ասում ա. – Դե կողի, անդեր, մթամ ես հլե կշտացա, մնացիք դու:

Սա մկանը զատ չի տալի, մուկը թողնում և գընըմ: Մի քիչ եղը արջն և գալի, աղջկա հետ մարջ և բռնըմ, հաղթըմ և ու ուտըմ:

Էքսի օրը կնիկը մարթին դարգում և, թե. — Գնա, եմ մի արաբա ոսկին էլ բի:

Մարթը արաբեն լծում, գընըմ ընդի, տենըմ և աղջկա ոսկըմնին և մնացել: Ոսկըմնին լցնում և մեշոքը, դնում արաբեն, տխուր-տխուր գալի տուն: Շունը հեռվից տենըմ և արաբեն դարդակ գալիս և, մարդահաչ և տալի. «Հավ-հավ, էկավ արարեն, ոսկու տեղ բերավ ոսկըմնին»: Աղջկա մերը փետը վեր և ունըմ, որ շանը թակի, միել տենըմ և՝ մարթը դառը դարդակ, տխուր գալիս և: Սկսում և գլխին վեթափիլը, իրան սպանիլը, համա բանը բանից անց էր կացել:

Ինչ որ բըղես ուղիչի թասը, կգա քու գդալ:

20. ՖՈՐՍԿԱՆԻ ՏՂԵՆ

Ըլում և չի ըլում մի ֆորսկան մաղդ և ըլըմ: Մի կնիկ և ունենըմ, մի տղա: Էս մարդը օրը մի ֆորս անըմ և, բերըմ, ուտում եմ ու դրանով յուր գընըմ: Օրի մի օր ֆորսի ճամփումը արջ և պտահում, ֆորսկանին գգում և, ըտուց մահանում և:

Ֆորսկանի տղեն ոը մենծանում և, հա, ասըմ և. — Մերա, իմ հերը ի՞նչ գործ աներ:

Թե. — Տղա ջան, քո հերըդ ֆորսկան էր, գնաց ֆորս աներ, դրանով մեզ պահեր:

Տղեն թե. — Ես էլ եմ ուզում ֆորսկան ըլեմ:

Մերը թե. — Չէ, դաբուլ չեմ, տղա ջան, հերըդ ֆորսի ճամփումը մեռավ, դու էլ կմեռնես:

Տղեն ասում և. — Մերա, յա ես պտի կորչեմ, յա իմ հոր ղենքը պտի մեջտեղ հանեմ:

Կորչելու անուն տալիս և, ղենքը վեղ և ունում, գընըմ: Էդ օրը դարդակ և գալի, էքսի օրն էլ և դաղդակ գալի: Վրա իղեք օրը շատ հաց և վեր ունում, ասըմ և. «Ես պտի եմդար կենամ, ֆորս անեմ, որ դարդակ չգնամ տուն»:

Էդ օրը տղեն հացն ուտելիս և ըլըմ ծովի դրաղին: Տենըմ և մի սպիտակ բան էդ ծովովը գալիս և: Հացը դեն և դընըմ, ղենքը պատ-րաստ պահում, որ որսը գա՝ սըպանի: Գալիս և ծովիցը դուրս գալի, չորովը դբա տղեն և գալի:

Տրաքացնում և էդ ֆորսին, սըպանում: Քերթում և, վեր և ունում գալիս և տուն, մութն և ըլըմ, էդ մորթին լիս տալուցը ժողովուրդը չիմ թոփ և ըլըմ, թմաշա անըմ: Թագավորի նախարարը տենըմ և թոփ էլած ժողովուրդին, գալիս և, լիսը տենըմ և, տղին ասըմ և. — Էդ մորթին ծախի, ես առնեմ:

Տղեն ասըմ և. — Չէ, մենք ճրագլիս չունենք, որ ծախեն, բա մեր լիսը որդիան ըլի՞:

Մսըմ և. — Էնդար փող կտամ, որ լամփ էլ կառնեք, նավթ էլ կառնեք:

— Չէ, — ասըմ և, — տալ չեմ:

Նախաըարը տղի մասին հարց ու փործ և անըմ, իմանում, որ ֆորսկանի տղա և, ինքն և մերը, գընըմ թագավորին իաբար և տանըմ, թե. — Թագավորն ապրած կենա, քու եղգրումը սիե բան և լիս ընգել:

Ըրիգումը ոը մեր ու տղա մնում եմ մենակ, մերն ասըմ և. — Էդ նախարարը մեզ տնաքանդ կանի, որ ասե՞ի՝ հորդ մարիֆաթը բանացնիլ մի:

Ըռավորը ադոթարանի հետ թագավորը իրա ծառաներին դարգում և ֆորսկանի տղի տունը, տղին կանչում պալատ: Տղեն գընըմ և, գլուխ և տալի թագավորին: Սա թե. — Էրեզի դու քու տուն ի՞նչ ես բերել:

Թե. — Մի լիսով մորթի եմ բերել:

Մսըմ և. — Գնա բի ինձ տու:

Մսըմ և. — Չէ, մենք ճրագլիս չունենք, մեր տանը լիս և անըմ:

Թագավորն ասըմ և. — Թե կբերես՝ սաղ կմնաս, թե չէ՝ կսպանեմ, վե կկալեմ:

Տղեն ոը գնում և մոըն ասում և թագավորի ասածը, մերը վախում և, ասըմ և. — Նա-խարարի բալեն մեռնի, էդ չիմ նա և աղել, տար իրան սեցրու:

Տղեն տանըմ ա մորթին թագավորին տալի, եդ գալի: Տղի ընդի էլած վախտը լիս ա տալի, պալատից դուս ա գալի թե չէ, լիս չի տալի: Թագավորը նախարարին կանչըմ ա, ասըմ ա. — Էս ի՞նչ բան ա:

Նախարարն ասըմ ա. — Թագավորն ապրած կենա, փղի օսկրե պալատ շինի, որ լիս տա:

— Բա ո՞վ կանի:

Թե. — Ֆորսկանի տղեն:

Թագավորը տղին կանչըմ ա, եդ պահանջը դընըմ: Տղեն տխուր տուն ա գալի, մորն ասըմ ա, մերը նախարարին անըծում ա, ասըմ ա. — Տղա ջան, գնա թագավորից հարիր փիղ ուզի, հարիր բանվոր ուզի, դասաբ ուզի, հարիը փութ բանբակ ուզի, հարիր փութ աղ ուզի, հարիր տիկ արաղ ուզի, աղը կտանես թալըմը շաղ կտաս, բամբակովը ախպրների ակը կկալնես, որ նովերի մեջը ջուր չդառնա, արաղը կածես նովերի մեջը, փղերը կգան աղը կուտեն ու կծրավեն, կգան եղ արաղը կխմեն ու կհարրեն: Էտոմք չիմ նախարարի հաշվից տիս ուզիլ:

Տղեն տիե անըմ ա:

Փղերը արաղը խմում են, քեփոփսնըմ, իրար հետ կռվում են, վեր են դառնում, եդ դասարնին դուս են գալի մորթում, քերթում, տանըմ են պալատը շինըմ: Էլի տղի էլած վախտը մորթին լիս ա տալի, հենց ոտը դուս ա դընըմ լիս տալիս չի:

Նախարարը տղին կանչել ա տալի, ասըմ ա. — Պալատի էս կոնովն էլ, էն կոնովն էլ ռաղ գծի, որ շվսք ըլի, լիս տա:

Տղեն եղ էլ ա անըմ, չիմ նախարարի հաշվիցը:

Տղեն ծնակիցը որ ծառներ ա բերըմ, ընդի մի աղջիկ ա գդնըմ, իրան հմա կնիկ ա ռեըմ, տանըմ ա իրան մոր տունը: Նախարարը պտահում ա, եդ աղջկան տենըմ ա, գընըմ ա թագավորին ասըմ ա. — Թագավորն ապրած կենա, ֆորսկանի տղեն մի կնիկ ա բերել, նա քեզ ա կնիկ սագում:

Թագավորը տղին կանչում, ասըմ ա. — Քու

տան աղջկան բիր:

Տղեն գընըմ ա աղջկան վե կալըմ, գալի. թագավորը տենըմ ա, դիրը գալիս ա, տղին ճամփու ա դընըմ, աղջկան ասըմ ա. — Դու ինձ կնիկ տես ըլի:

Աղջիկն ասում ա. — Չէ: Որ են տղեն էլ մահկանացու ըլի, նրան էլ չեն ուզիլ, ինձ առնողը պետք ա մահ չունենա:

Թագավորը գարմանում ա, ասում ա. — Էդ ո՞նց կըլի:

Աղջիկն ասըմ ա. — Ես դրա ֆանդը գիդամ, շատ հեշտ բան ա:

Թե. — Ո՞նց ա:

Ասըմ ա. — Էփ էկան ջրի միջին անմահական կաթիլներ են կըթացընըմ, լղանալիս տեղը են կաթիլնին մաղդուն անմահացնում են:

Նախարարը որ եղ լսում ա, թագավորին խնդրում ա, որ իրան էլ անմահացնի: Թագավորն էլ ասում ա. «Լավ ա, աղաք նախարարիս լղացնել կտամ, եդով ես կփործեն»:

Տիե էլ անում են: Էփ էկան ջրի մեջ աղջիկը մի էրկու կաթիլ ա կթացընըմ, նախարարին գծըմ ա մեջը, նախարարը խաշվելուց ձեռ ու ոտով ա անըմ, թագավորն ասըմ ա. — Էդ ի՞նչ ա ասըմ:

Աղջիկն ասըմ ա. — Ասըմ ա՝ թագավորին ասեցեք՝ եզին աղի, թագավորին ասեցեք՝ եզին արի:

Թագավորը գծում ա իրան էփ էկան կաթսան, խաշվում ա, պրծընըմ:

Աղջիկը տղին կանչել ա տալի, տղեն տեղը նստում ա թագավոր, աղջիկը դառնում ա թագուհի:

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

21. ԿԻՍՍՏ ԱՆՊԵՐԸ

Ըլում ա չի ըլում մի պառավ ա ըլում, եդ պառավը էրեխա չի ունենում: Աստուծ խնդրում ա, որ իրան տղա տա: Աստուծ երգնքից իրեք խնձոր ա դրգում, ասում ա. «Տար օրորոցքիդ

մեջ պահի, դրանք էրեխա կդառնան»։ Պառավի իշտահը գալիս ա, խնձորներից մեկը կծում ա։ Երբ անցնում ա ռոռշ ժամանակ խնձորները էրեխա են դառնում, կծած խնձորը դառնում ա անգաճը, մի ոտը, մի ձեռը չունեցող երեխա։ Հմի էլ պառավը կրակն ա ընգնում, ուտելիք չի ունենում, որ էդ ըրեխեքին պահի։

Մեծ ախպերն ասում ա. — Դարդ մի անի, նանի, ես կեթամ էդ դիմացի սարի հետևի դևի ոսկիները կբերեմ, կխարջենք, կապրենք։

Պառավն ասում ա. — Այ տղա, չես կարա, գոռով գլուխդ թռցնիլ մի տա։

Մենձ ախպերը լսում չի։ Մի էշ ա վե կալում խուրջինը վրեն, գնում ա դևի տունը։ Դևը մի սիրուն աղջիկ ա ունենում, աղջկանը խնդրում ա, ասում ա. — Դուրս արի տես, մեր հողի դուռնը մարդ կա, թե չէ։

Աղջիկը դուս ա գալի, տենում ա մի տղա գալիս ա, գալիս հասնում ա աղբուրին, լվացվում ա, ջուր ա խմում, խաբարը տալիս ա դևին։ Դևն ասում ա. — Էդ արդեն իմ ձեռքումն ա։

Տղեն գալիս ա դևի տուն ա մտնում, դևը դրան րոթում, զցում ա հորը։

Միջնեկ ախպերը տենում ա, որ մեծ ախպերը չէկավ, պառավին խնդրում ա, որ ինքն էլ գնա։ Պառավն աղաչանք-պաղատանք ա անում, տղեն լսում չի, գնում ա։ Միջնակ ախպերը շատ ա գնում, քիչ ա գնում, մեկ էլ տեսնում ա էրկու դագ կռվում են։ Դագարածը հարց ա տալի տղին, թե. — Ու՞ր ես գնում։

Տղեն ասում ա. — Գնում եմ դևի ոսկիները խլեմ, ախպորս էլ ազատեմ։

Դագարածն ասում ա. — Թե ես սագերին իրարից անջատես, կկարողանաս դևի ոսկիները վե կալել։

Տղեն դագարածին չի լսում, թողնում ա դագերը կռվեն, ինքը շարունակում ա ճանապարհը։

Շատ ա գնում, քիչ ա գնում, հանդիպում ա էրկու կովող ցուլերի։ Ցուլարածն ասում ա. —

Թե կարենաս ես էրկու ցուլերին անջատես, կկարողանաս դևի ոսկիները վե կալես։

Հի լսում, շարունակում ա ճամփեն, գնում ա, գնում, հասնում ա մի մարդու, էդ մարդը ծառ ա կտրելիս ըլում, մարդն իմանում ա, ռոտղեն ուզում ա դևի ոսկիները խլր, ասում ա. — Այ տղա, թե կարենաս ես ծառը առանց կացնի ջարդես, կկարենաս դևի ոսկիները խլես։

Միջնեկ ախպերը դրան էլ չի լսում, գնում ա հասնում դևի տուն, մտնում ա ներս ու մեծ ախպոր նման ընկնում ա հորը։

Կիսատ ախպերը որ տենում ա մեծ ու միջնեկ ախպերները հետ չէկան, ինքն էլ ա ճամփա ընկնում դևի մոտ։ Գալիս ա, գալիս, հասնում ա դաղերին, տենում ա էրկու դագ իրար հետ կռվում են։ Դագարածն ասում ա. — Թե կարենաս ես դաղերին իրարից անջատես, դևի ոսկիներին կկարենաս տիրանաս։

Կիսատ ախպերը չուխին տալով գնում ա, էդ դաղերի վզից րռնում ա, ամենքին մի սարի ճկատովն ա տալի։ Դագարածն ասում ա. — Դու կարաս դևի ոսկիներին տիրանաս։

Կիսատ ախպերը շարունակում ա ճամփեն, գնում ա, գնում, հանդիպում ա կովող ցուլերին, դրանց էլ ա անջատում իրարից, ցուլատերն ասում ա. — Դու կարաս դևի ոսկիներին տիրանաս։

Կիսատ ախպերն էլի ա գնում, հասնում ա ծառը կտրող մարդուն, մի ոտը դնում ա ծառին, մի ձեռքով ծառը իրան ա քաշում, ծառը կոտրվում ա։ Օառը կտրող մարդն ասում ա. — Դու կարաս դևի ոսկիներին տիրանաս։

Դևը հարցնում ա աղջկան. — Տե՛ս հողի դուռնը մարդ կա՞, թե՞ չէ։

Աղջիկը տենում ա մի մարդ էկավ, մոտեցավ աղբուրին, ներքևը լվացվեց, վերևը խմեց։ Աղջիկը խաբարը տանում ա դևին, դևը վախենում ա, որ էդ տղեն իրան կսպանի։ Տղեն գալիս ա, մտնում ա դևի տունը, տենում ա աղջիկը նստած դևի կողքին. դևն ասում ա. — Ու՞ր ես եկել, այ տղա։

Տղեն ասում ա. — Էկել եմ ոսկիներդ տանեմ։

դւն ասում ա. — Որ էկել ես ոսկիներս տանելու, պտի կռվենք:

Տղեն ու դէր դուս են գալի դուռը, տղեն խլիում ա դէի գլուխը թոցնում, դիակը վեր ա գցում դէի դռանը: Մտնում ա ներս, ախպերներին հանում ա հորից, դէի ոսկիները ախպերների հետ լցնում ա խուրջիները, աղջկանն էլ վերցնում ա ու գալիս են տուն: Գալիս են, գալիս, մութն ընկնում ա, մի տախտ տեղ քնում են: Երկու ախպերը խորհուրդ են անում, որ էս ոնց մենք չկարեցանք դէի ոսկին խլենք, էս կիսատը էկավ, դէին սպանեց, ոսկիներն էլ առավ: Նախանձից որոշում են, իրանք առաջ ընգնեն: Գիշերը վեր են կենում տղի խուրջիները դատարկում են, տեղը մոխիր լցնում, ոսկիներն առնում են գնում տուն: Կիսատ ախպերը առավտոր վեր ա կենում, տենում ա ախպերները չկան, խուրջիների մեջ էլ ոսկու տեղակ մոխիր ա լցրած: Մոխիրը դատարկում ա, աղջկա հետ էշն առաջ արած, գալիս են տուն: Գալիս են, տեսնում են երկու ախպերները ոսկիները փռած ուրախանում են, պառավին աչքալուսանք են տալի, ասում են ոնց դէի ոսկուն տիրացան: Աղջիկը չի համբերում, պառավին պատմում ա, թե կիսատ ախպերը ոնց էկավ ագատեց իրա ախպերտանցը, ոնց սպանեց դէին: Պառավը էդ որ լսում ա, էրկու տղին թափն ա տալի, ասում ա. «Գնացեք ձեր հմար ապրեք, էլ ես կողմերը չերևաք»: Առնում ա իրա կիսատ տղին, պսակում ա աղջկա հետ ու երգար տարիներ ուրախ ապրում են:

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

22. ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇԱՀԸ

Պարսկաստանա շահը իրան վեզիրի հետը, վաճառականի շորընը, իրանց երկիրը ման են գալի: Դրանց երկիրը մորեխը կտրած ա ըլըմ, սով ա ընկած ըլըմ: Գալիս են մի քաղաքի դրաղին, մի աղորի կշտին նստում են, որ դինջանան: Են ժամանակ ա ըլում, որ արտ չի

ըլըմ, մորեխը կտրած ա ըլըմ: Տենում են էդ ախպրի դիմացը մի տուն կա, տենում են էդ տան միջին ճվճկոց ա գալի:

Շահն ասում ա. — Վեզիր, վեզիր, գնա տես ինչ ճվճկոց ա:

Վեզիրը գընըմ ա, որ հղի կնիկ ա, ագատվում ա, գալիս ա թագավորին ասըմ: Էդ դեպքի վրա իրեք հատ մարդ են գալիս, գնում են էդ տունը:

Շահն ասում ա. — Վեզիր, գնա տես էդ մարդիքը ինչի գնացին էդ տունը:

Վեզիրը գնըմ ա են ժամանակ, որ էդ իրեք մարդը դուս գալիս են ըլնըմ: Ասում ա. — Այ մարդիկ, ընչի՞ հմար էդ տունը մտաք:

Պատասխանում են. — Մենք եկանք մորածին մանուկի ճակատազիրը գրելու:

— Ի՞նչ գրեցիք:

— Գրեցինք, որ տասնհինգ տարի եղը էդ մորամանուկը պտի ըլի Պարսկաստանի շահը:

Գընըմ ա շահին հայտնում:

— Ի՞նչ գրեցին ճակատին, — ասում ա շահը:

Ասում ա. — Շահն ապրած կենա, ասելու թան չի, ո՞նց ասեմ:

— Ասա՛, ինչ ասել են, ասա:

— Ճակատին գրել են, որ տասնհինգ տարի եղը մորամանուկը պտի ըլի Պարսկաստանի շահը:

Աի քանի տարուց եղը էդ երկիրը լի ու ռուը ընկնում ա: Շահը վեզիրին էլ եդ ասում ա. — Դլա գնանք երկիրը ման գանք, տենանք ժողովուրդը մեզանի գր՞ի ա, թե անգրի:

Շահը իրան աղջկանը դընըմ ա իրան տեղը շահ, ինքը երկիրը ման ա գալի: Գալիս են մույն աղբըի վրա եդ նստըմ, որ դինջանան: Շահն ասում ա. — Վեզիր, էս են տունն ա, որ ընեն ծնվեց:

Էդ ասելուն պես տան միջից մե տղա ա դուս գալի: Շահն ասում ա. — Դլա կանչի էդ տղին:

Տղին կանչում ա: Տղեն գալիս ա: Շահն ասում ա. — Տղա, դու զիր գիտե՞ս:

— Ես զիր չգիտեմ, — ասում ա տղեն:

– Զանի՞ տարեկան ես:

– Ես իմ տարիքը չգիտեմ, բայց իմ հերն ու մերն ասըմ են, որ դու մորեխի էլած տարվա տղա ես:

Ասում ա ու գընըմ իրանց տուն:

Շահն ասում ա. – Վեգիր, էս էն տղեն ա: Ինչ անենք, պուճուր վախտը չկարացինք ռադ անենք, հմի բա ոնց անենք:

Վեղիրն ասում ա. – Շահն ապրած կենա, քու աղջիկը քու տեղը թագավոր ա, քեզ պեչատած թղթեր շատ ունես, թղթի միջին գրի. «Աղջիկ ջան էս տղեն իրիգունը հասնի, ըրիգունը գլուխը կտաս, ըռավոգը հասնի, ըռավոգը կտաս»:

– Կանչի տղին, – ասում ա շահը:

Տղին կանչում ա:

– Տղա ջան, էս թուղթը կարա՞ս տանես Թեհրան, Պարսկաստանի շահին տաս:

– Կտանեմ:

– Էս իրեք քիսա ոսկին առ, տար տուր քու մորը, քու մերն ապրի, մինչև դու գաս:

Տղեն գընըմ ա մոր կուշտը, մորն ասում ա. – Էս մարդիքը ինձ մի թուղթ են տալի, ասըմ են տար տուր Պարսկաստանի շահին, ետ արի: Էս ոսկիներըն էլ տվել են, որ տամ, դուք ապրեք, մինչև ես գամ:

Տղեն թուղթն առնըմ ա, գընըմ: Էն ժամանակ ա հասնըմ, որ արևը դուս ա էկել: Պալատի աղքին մի աղբուր ա ըլըմ: Աղբըի աղաքին մստում ա դինջանա: Անջըը դեմ ա անըմ չինարի ծառին ու քընըմ:

Շահի դարավաշները գալիս են շահի աղջկանը հայտնըմ, թե՛ վեր կաց, մի նամակարեր է էկել, տենանք շաեղ ինչ նամակ ա գըրըմ:

– Դեռ վախտը չի, գնացեք ձեր գործին:

Աղջիկն ինքը վեր ա կենըմ, գընըմ աղաքին կաղնըմ: Նամակը փափախի ծալըմը դրած ա ըլըմ: Նամակը հանում ա, կարդըմ, միջը գըած ա. «Էս տղեն իրիգունը հասնի, ըրիգունը՝ գլուխը կտաս, ըռավոգը հասնի, ըռավոգը՝ կտաս»: Տղեն աղչկա աչքումը դիր ա գալի:

«Է՛յ, – ասում ա, – հայրիկ, ես սրա գլուխը ոնց տամ, աշխարհի իրեսին ինձ մի մարդ ա հասնըմ, դու տասնութ կմիկ ունես, ուգում ես, որ էլի կմիկ առնես, դու ուգում ես, որ ես մարդ չառնեմ»:

Տղի նամակը վեր ա ունըմ, բանըմ ա նամակը, փոխըմ. «Աղջիկ ջան էս տղեն իրիգունը հասնի, ըրիգունը կպսակվես հետը, ըռավոգը հասնի, ըռավոգը՝ կպսակվես»: Նամակը տանըմ, դընըմ ա փափախի ծալումը, գալի եղմտնըմ իրա տեղը: Դարավաշնին գալիս են, ասըմ. – Շահի աղջիկ, վե կաց, վե կենալու ժամանակն ա:

Աղջիկն ասում ա. – Գնացեք պալատականներին կանչեցեք, որ բոլորն էլ իմանան, ինչ ա գըած իմ հոր նամակում:

Պալատականները գալիս են նստում, ինքն էլ նստում ա թագավորական թախտին, ասըմ ա. – Գնացեք կանչեցեք նամակարեր տղին:

Տղեն գալիս ա պալատ, փափախը վեր ա ունըմ, շահին գլուխ տալի, նամակը դնում աղաքին: Շահի աղջիկը նամակը կարդում ա, ու ինքն իրան ծիծաղում: Պալատականների միմն ասում ա. – Հլա բի տենամ էդ ինչ նամակ ա:

Նամակը վեր ա ունում, կաղդում թե. «Աղջիկ ջան էս տղեն իրիգունը հասնի՝ ըրիգունը կպսակվես, ըռավոգը հասնի՝ ըռավոգը կպսակվես»: Պալատականները ծափ են տալի, ուրախանըմ, հրսանիք անըմ, էդ աղջիկը վեր ունում, տալի էդ տղին:

Շահի աղջիկը կանչում ա տղին, երկու փաշի, ասում ա. – Էս տղին վե կալեք մի ամսումը են տեսակ ծի նստիլ, վահան, զենք վեր ունիլ սովորեցրեք, որ հատը չլինի:

Տանըմ են սովորցնըմ:

Աի ամսից հետո աղջիկը կանչում ա տղին, ասում ա. – Էս չգիտեմ ինչ ա կատարվել ձեր մեջը, եննա մաշուր կանի:

Տղին տալիս ա հիսուն հազարանոց գորք: Օրի մի օրը ասըմ ա. – Այ տղա, հերս մի նամակ ա գըել, որ այսինչ տեղը կգաս դիմավորելու: Դու քու հիսունհազարանոց գորքը վե կու-

նես, կեթաս կղիմավորես: Իմ հերը տասնհինգ շաբաթ քեզ ճանաչել տի, եթե քեզ կընդեմ-վի, կասի. «Ո՞վ ես, ի՞նչ տղա ես, էս գործը քեզ ով ա տվել», առաջի թրովը շահի գլուխը կկտրես, երկրորդ թրովը վեզիրի գլուխը ու կգաս: Եթե ասի. «Տղա ջան, ձիուցը իջի», ձիուցը կիջնես, թրիդ տակովը անց կկենա, կառնես կբերես, կգամք:

Տղեն գորքն առնում ա, գնում շահին դիմա-վորում: Շահը տենում, սողին ճընաչում ա, ձիուցը վեր ա գալի, թրի տակովը իրեք անգամ անցնում, ասում. – Թագավորությունս քեզ:

Գալիս են, նորից հրսանիք անում, տղին ա տալի թագավորությունը:

Ընդու հըմա են ասում. «Աստու գրածը ջնջվիլ չի»:

Խերն ըստի, շառը գեշ մարդի գլխին մստի:

23. ՎԱՃԱՌԱԿԱՆԻ ՏՂԵՆ ՈՒ ՆԲՍ ՄՆՔԱՎԱՏԱՐԻՄ ԿԻՆԸ

Ըլում ա չի ըլում մի վաճառական ա ըլում, դրան ունենում ա մի տղա, ենքան սիրուն, որ մարդիկ տենալիս ոտ են անում, հետը մի քանի խոսք փոխում, որ կառնուներն առնեն էդ տղի սիրունութենից: Հերն էդ տղին դպրոց դարգե-լիս ա ըլում: Էդ քաղքումը իրեք ավազակ են ըլում, էդ ավազակնին ամեն քշեր թալան են անում, դրանով ապրում, դրանց գործն էդ ա: Մի օր էդ տղեն դպրոց գնալիս ա ըլում, ավազակ-ների մինը դրան տենում ու հարց ու փորձ ա անում, իմանում ա, որ ֆլան վաճառականի տղեն ա, դպրոց ա գընում: Գընում ա դպրոց, գալի, տենում ա իրանց տունը թալանած: Մարդիկ տեհած են ըլում, վաճառականին խաբար են տալի, թե տղեդ սօրի ըռավողը են ավազակի հետ ոտն էր արե, զրից էր անում, մա ասած կըլի ձեր կարողութենի տեղը: Հերը հվատում ա, տղին տնից դուս ա անում: Էդ քաղքի մի ուրիշ վաճառականի կնիկ տենում ա, որ էդ սիրուն տղեն անտեր, անտիրական պտիտ ա գալի, մարդին ասում ա. – Էդ տղին

տար կուշտըդ պահի, քեզ հմա ճաշ կբերի. քոմակ կանի, մի բան էլ կսովորի, որ մեծանա, մարդ ա, իրա հմա մի բանի տեր ըլի:

Ասում ա. – Լավ ես ասում, այ կնիկ:

Տղին տանում ա իրա մոտ խանութումը պահում: Սա տանից վաճառականի հմա ճաշ ա բերում, խանութից այնոյին ա տանում տուն, մի խոսքով ինչի պետք ա ըլում, ինչ պետք ա ըլում՝ անում ա:

Էդ վաճառականի առըտուրը ավելանում ա: Կնիկը հսկանում ա, որ մարդի առըտուրը ավե-լացել ա, ասում ա. – Գիդաս այ մարդ, առը-տուրըդ ինչի՞ ա ավելացել:

Թե. – Ինչի՞:

Ասում ա. – Էդ տղի խաթեր գալիս են տե-նալու, ինչ որ առնելու ա՝ քեզնից են առնում, ուրիշի կուշտ չեն գընում:

– Ի՞նչ ես խոսում, են ա ժողովուրդը փող ունի՝ առնում ա:

– Դե որ հվատում չես, ինքը գրագետ տղա ա, կարդացած տղա ա, տար մի տեղ էլ խանութ դիր, դու էլ քու խանութումը կաց, տես հլա էդ տղեն ա շատ առըտուր անում, թե դու:

Վաճառականը ռերում ա, փորձի խաթեր մի խանութ րաց անում, ապրանք դնել տալի, իրեք օրումը տղեն առըտուրը պրծացնում ա, վա-ճառականի ապրանքը իրան տեղումը մնում ա դրած:

Կնիկն ասում ա. – Տենը՞մ ես, այ մարդ, որ ասում եմ էդ տղի հմար են քու խանութոց առըտուր անում:

Վաճառականը համոզվում ա, որ տիե ա: Կնիկն ասում ա. – Տեհար, ող տիե ա: Բեր էդ տղին մեզ վոա որդագրենք, մենք զավակ չու-նենք, դու հեսա մեծանալու ես, համ մեր խա-նութի առըտուրը կանի, մեզ կպահի, համ էլ կպսակենք՝ թոռներ կունենանք, մեզանից եղը ում ա մնալու մեր ունեցածը:

Համաձայնում ա: Գընում են տղին որ-դագըրում, դարձընում իրանց տղա: Հմի աչքնե-րը գծում են, թե եր տի մեծանա, որ դրան հրա-նիք անեն: Որ դառնում ա տասնութ տարեկան տղա, գընում են մի աղջիկ ուզում, նշանում, մի

Ժամանակ եղը աղջիկը բերըմ տուն: Աղջիկն ու տղեն մընըմ են մի սենյակումը պտի քնեն, աղջիկը ճամփա ա պահըմ, որ տղեն քնի, որ ինքն էլ մտնի կուշտը քնի: Համա տղեն բուքի ա տալի, ըղաքին ման ա գալի:

Աղջիկն ասըմ ա. — Ի՞նչ ա, մարդ ես գար-մացըմ, կարծես թե մարդ տիե րան չի տեհե:

Տղեն ջգրվում ա. — Հա, ուրեմն դու տիե բան էլ ես տեհե, մնաս բարի, — ասըմ ա, գընըմ:

Հորն ու մորն ասըմ ա. — Ուզում եք ձեր տված նշանը թողեք, ուզում եք եղ առեք, էլ դա ինձ պետքը չի, եղ դուք ինձ հմա աղջիկ չեք ուզիլ, մինչի ես կասեմ այսինչ աղջիկը կուզեք:

Դրանք սպասում են, թե եր դա մի աղջիկ կհավանի:

Թո դրանք սպասեն, իաբարը տանք մի քյասիբ կնգանից:

Էդ կնիկը մի աղջիկ ա ունենըմ, մի կով: Կովը կթում ա, մածուն մեքըմ, աղջիկը տանըմ ա քաղաք ծախըմ: Էդ տղեն տենըմ ա, որ ամեն օր էդ աղջիկը մածուն ա բերըմ ծախըմ, ինքը բոքիկ ոտով, կրկտած շորերով, մեղքը գալիս ա, կանչըմ ա, մի աման մածուն ա առըմ, մի մանեթ փող տալի:

Աղջիկն ասըմ ա. — Խուրդա չունեն:

Ասըմ ա. — Խուրդա չեմ ուզում, մանեթը վե կալ գնա:

Աղջիկը մանեթն առըմ ա, գընըմ ա տուն, մորը պատմում ա: Մերը գարմանըմ ա. — Ես տի էթամ էդ տղին տենամ:

Ըռավողը վեր ա կենըմ, գընըմ քաղաք, մտնըմ տղի իանութը, թե. — Դու ինչի՞ ես իմ աղջկանը մի մանեթ տվե, իուրդա վեր չես կալել:

Սա որ տղի ջանին հասցընըմ ա, սա ասըմ ա. — Մայրիկ, աստված, երգինք, ես տեհա չքավոր էք, մի աբասու տեղակ մի մանեթ տվո, թե նեղանում եք՝ իմ մանեթը տուր, քու աբասին առ, գնա:

Տղեն ասըմ ա. «Աա մաքուր կնիկ ա, ուրի-շի ապըանքի վոա աչք չունի, սրա աղջիկը մա-քուր կըլի, ես սրա աղջկանը պտի ուղեն»:

Խանութը կոխպում ա, գընըմ մի տուն վարձըմ, մի վարժապետ գընըմ, որ աղջկան գըել-կար-դալ սովորեցնի: Պատրաստութին ա տենըմ, ուտելիք-խմելիք վեր ունում, նստում ֆայտոն, գընըմ դրանց գեղը: Սալըիով գընում ա պա-ռավի տունը, ներս մտնում: Մտնում ա, տենըմ թոնրի դրաղին իսիլ գցած, մեր ու աղջիկ նստած: Բաղն ա տալի, բարն առնըմ, ասըմ ա. — Դոնսախ եմ էկե, դոնախ չէք ընդունի՞:

Պառավն ասըմ ա. — Դոնախն աստծունն ա, համա դե մենք քեզ հարմար տեղ չունենք, գնա միենց տեղ դոնսախ ըլի, որ քու հարմարու-թինը էլ ըլի, մենք հեսա քյասիբ օքմի, մեր ու աղջիկ կուչ ենք գալի ես թոնրի դրաղին, վեր ենք ընգըմ, ըռավողը վե կենըմ:

— Ոչինչ, — ասըմ ա, — դուք տարին տաս-ներկու ամիս ըստի կենըմ էք, ես էլ կկենամ:

— Դե դու գիղես, մեր հարմարութինն էս ա:

— Ես ձեր ուտելիքն էլ եմ րերե, հաքնելիքն էլ եմ րերե:

Հանըմ ա, սեղան բաց անըմ, ուտում են, խմում, պառավոն ասըմ ա. — Աայրիկ, գիղա՞ս ես իսի եմ էկե, ես էկել եմ քու աղջիկը ուղեն:

Պառավն ասըմ ա. — Ընչի ես վոես խնդըմ, ես քու ծիծաղատեղն ե՞մ:

Ասըմ ա. — Աայրիկ, ագնվութենով եմ ասըմ, ես էկել եմ քու աղջիկն ուղեն: Որ դու էդքան մաքուր կնիկ ես, դրա հմար էլ հավանել եմ քեզ էլ, քու աղջկանն էլ: Բայց էսպես չեմ առնելու: Ես ըռավողը քեզ կտանեմ քաղաք, մի տուն եմ վարձե, կտանեմ ձեզ եմ տունը, մի հատ էլ վարժապետ եմ բռնել, քու աղջկանը վեց ամսումը գըել, կաղդալ կսովորեցնի: Վեց ամիս էլ կտամ կաղել-ծնել սովորելու, մի տաղի եգը քու աղջիկը կուղեն, — ասըմ ա. — հմի ձեր կովն էլ, մի քյասիբ բարեկամ հարևան կունենաք, տվեք նրան, էլ ձեզ ոչ մի բան պետք չի. ըռավողը ես ձեզ տանըմ եմ:

Ըռավողը վեր են կենըմ, գալի քաղաք, դրանց դընըմ ա էդ տանը, ինքը գընըմ իրանց տուն: Հերն ու մեքը բեխաբար են: Դրանց ուտելիքը, հաքնելիքը, ինչ որ պետք ա, հասցընըմ ա մինչի մի տարի, գրել-կարդալն էլ

ա սվորում, կարել-ծաելն էլ, սեղան պատ-
րաստիլը, վեր քաղիլը, վերջապես ամեն բան
որ իրասց ոտրամց տամը ձեռք կտա: Հերն ու
մերն էլ սպասում են, թե յարաբ կըլնի որ մեր
տղեն ասի՝ մի աղջիկ եմ հվանել զնացեք.
ուզեցեք:

Տղեն մի օր ասըմ ա. — Հայրիկ, եմ ֆլամ
քուչունը մի մեր ու աղջիկ եմ ապրում, զնացեք
եմ աղջկանը տեհեք, թե հավանում եք՝
ուզեցեք:

Գընըմ են, տենըմ, ասըմ են. — Տղա ջան,
դու տես հվանիլ:

Ասըմ ա. — Ես հվանել եմ:

— Դե զնանք ուզենք:

Աղջիկն ուզում են, բերըմ: Ուզում են, բե-
րըմ, շատ են ապրըմ, քիչ են ապրըմ, աղջկա
միտքը ծովում ա: Դրանց տներումը մի ռուս
գեներալ ա ապրըմ, ընգըմ ա էղ գեներալի
հետ, դրանք՝ միամիտ: Միտքը դրել ա գեներա-
լի հետ փախնի: Մարդին ասըմ ա. — Ես
հիվանդ եմ, իմ հիվանդութիւնը մեր ժամիցն ա,
որ տանես ժամը, ես ուխտ ունեմ, կսաղանամ:

Տղեն կնիկն ինչ ասըմ ա՝ հվատում ա,
կնգանը սիրըմ ա, էղքան ծախս ա արել, մթամ
թե յալ կնիկ ա գղել: Գիդի ոչ թե գլուխն ինչ ա
բերելու: Ժամին էրկու դուռն ա ունենըմ,
գեներալի հետ պայմանավորված ա ըլըմ. որ
դու եմ դռանը ֆայտոնը ոտը կանես, ես էս
դռնովը նի կմտնեմ, եմ դռնովը դուս կգամ, ինձ
կփախցնես: Ոնց որ պայման եմ կապել,
գեներալը ֆայտոնը ոտն ա անըմ եմ դռան
ըղաքին, մարդի ֆայտոնն էլ ես դռանն ա ոտն
անըմ. մթամ որ կնիկը մտնի ժամը. ուխտ անի,
դուս գա, էլ եդ տանի տուն: Եդի դռնովը հենց
ուզում ա դուս գա, որ զնա գեներալի ֆայտոնը
նստի, ժամի շենքը փուլ ա գալի, մնում ա
տակը: Գռգռոցին գեներալն իրան ֆայտոնը
փախցընըմ ա, գընըմ, մարդը ժամն ա մտնըմ,
տենըմ ա շենքը փուլ ա էկե, կնիկը մեռել ա.
«Վա՛յ, հավար, քոմակ»: Գալիս եմ քարերի
տակիցը հանըմ, տանըմ տուն: Հերն ու մերը
պատրաստութիւն են քաշըմ, որ դռան պտի թա-
ղեն, մարդն ասըմ ա. — Չէ, ես պետք ա բժիշկ

բերեմ. կնգանս սղացնեմ:

— Լկ տղա, մեռած մարդն էլ մղանալ չի. եմ
ա մեռել ա, տանիլ տենք հողավորենք:

— Չէ որ չէ:

Էղքան ծախս ա արե, որ կնիկ ա գղե մթամ
թե, կնգանը թողնըմ ա մեյդանումը, ինքը
գընըմ ա բժիշկ բերի: Գընըմ ա քաղքիցը դուս
գալի, մի պառավ մարդ ա ռաստ գալի, ասըմ
ա. — Այ տղա, ու՞ր ես գընըմ:

Ասըմ ա. — Կնիկս մեռել ա, գընըմ եմ մի
ճար գտնեմ, բերեմ սաղացնեմ:

Ասըմ ա. — Այ տղա, նա լավ սատկելու շուն
ա ըլել, սատկել ա, զնա հողավորի:

Ասըմ ա. — Չէ, խի՞ ես տիե ասըմ:

Էղ մարդի վոեն նեղանըմ ա, ասըմ ա. — Ես
պետք ա նրան սաղացնեմ:

Որ մի քիչ էլ նեղանըմ ա, բիծեն ասըմ ա. —
Արի, արի, քու բժիշկը ես եմ:

Մի գիր ա տալի, իրեք թերթակի, ասըմ ա.
— Կտանես առաջի թերթը նրա վոա կկարդաս,
կսղանա, համա դու կփոշմանես: Եմ էրկու
թերթն էլ կապիես, քեզ պետք կգա:

Տղեն թուղթը բերըմ ա, կնգա մեյդիդի վոան
կարդըմ ա, առաջի թերթը կարդըմ ա՝ կնիկը
սղանըմ ա, դառնըմ ա նույն կնիկը: Էլի կապը
պաշտպանում ա գեներալի հետ: Գեներալին
ասըմ ա. — Ես անգամ չիաջողվեց, հմի ինչ
անենք, որ հաջողացնենք:

Ասըմ ա. — Բշեքվա տասներկուսին Ռու-
սաստանա պոեզը գընըմ ա, տոմսը կառնես,
ես մարդիս քնած կթողամ, դուս կգամ
կայարանը, ինձ ընդիան վե կունես՝ կգեսա:

Գեներալը գընըմ ա կայարանը, տոմս ա
հանըմ, դա էլ մարդին քնած թողըմ ա, վե
կենըմ, հայդե գընըմ: Գընըմ են իրար գղնըմ,
պոեզ նստըմ, գընըմ: Մարդը ըռավողը վեը ա
կենըմ, տենըմ ա կշտին կնիկ չկա: «Այ մարդ,
ես ի՞նչ էլավ, էս կնիկը ու՞ր ա»: Դես ա
պտտում, դեն ա պտտում, գեներալը կա ոչ:
Օհո, գեներալը տաըել ա:

Թող տանի, խաբարը տանք տղիցը: Տղին
կանչըմ են բանակ: Հերը վաճառական հա-
րուստ մարդ, ասըմ ա. «Մի տղա ունեմ, էն էլ

բանակ տանեն»։ Չընձն ա բժիշկների հետ խոսա, որ տղին ազատեն։

Տղեն ասըն ա. — Չէ, այ հեր, ես միտք ունեմ բանակ գնալ, ոչ մի ազատել, ես գնալ տեմ իմ ծառայությունը անեմ։

Չընձն ա րանակ, րանակի տեղը երկու լավ հնգեր ա բռնըն։ Իրանց զանյատիցը հետո քաղաքումը ման են գալի, մին էլ տենըն ա՝ հրե կնիկը մի հայաթի դռան կառնած։ Ասըն ա. — Այ կնիկ, դու ըստի՞ ես։

Գիդի, թե գենեղալն ա փախցրել, բերել, գիդի ոչ ինքն ա փախել։

Ասըն ա. — Հա, այ մարդ, ես շան տղա գենեղալը ինձ վախցրուց, բերուց ըստի դբուց։ Կացի գնամ տուն մտնեմ, շորերս վեր ունեմ, գամ ինձ տար։

Խափըն ա, մի մտնըն ու դուռը փագըն։ Տղեն տենըն ա, որ դուս չէկավ, րախա ա անըն, զընըն իրան գործին։ Ըրիգունը գենեղալը գալիս ա տուն, ասըն ա. — Բա ասիլ չես՝ մաղոս էկել ա ըստեղ, սաղաթ ա, ծառայում ա։ Ինձ էլ ուզեր ռոնի, տանի, իապեցի ասի՝ կացի գնամ շորերս հաքնեմ, գամ, տուն մտա դուռը փագեցի։

Գենեղալը զընըն ա բողոքում, որ այսինչ բանակայինը կնգանս բռնարարել ա։ Տղին կանչըն են սամասուդ անըն, որ պտի կախաղան բնծրացնեն։ Տղին տանըն են գծըն մի տուն, որ ըռավողը տանեն կախեն։ Իրան հնգերները պապիրոս են առնըն, հաց են առնըն, տանըն, որ հնգերը ըրիգու հաց ուտի, որ ըռավողը կախիլ տեն։ Չասավոյին համոզում են, ներս մտնում։ Տղեն հնգորտանցը ասըն ա. — Ես մի բան կասեմ, թե ինձ կլսեք ես սաղ եմ, եթե լսիլ չեք՝ եմ ա մեռած եմ էգուց ըռավող։ Ես իմ չամաղանիս մեջը մի հատ գիր ունեմ, իրեք թերթ ունի, ինձ որ կտանեն կախ կանեն, կախաղանի տակին, օրենք ա, ջանդաքըս մի սուտկա պտի մնա, նոր տանեն հողավորեն։ Չասավոյ կոնեն վոես։ Դուք էդ գիրը վե կունեք, մի շիշ էլ արաղ կամենք, ռուս ա չասավոյը, դուզ ա, թողալ չի, կուղա՞, կուղա՞ կանի, արաղը տեհավ թե չէ,

կթուլանա, կբերեք արաղը կտաք իրան, կիմի, երկու հոգի դուք մինը նա, դրան կբռնեք, թուլը ճիտը կգցեք, շորերը կհանեք։ Ես դրա շորերը կհագնեմ, կփախնեմ։ Թե որ էդ բանը կանեք, իմաց կացեք, որ ես սաղ եմ։

Էդ տղերքը սաղ քշեր քընըն չեն, ոնց կըլի, ոնց չի ըլիլ։ Ըռավողը տոին տանըն են, կախաղան են բանծրացնըն, իսեխտում են, վեր գցում։ Ըրիգունը հնգերտինքը գալիս են, թուղթը, արաղը բերըն են, չասավոյին համոզում են. արաղը տենըն ա, տենալու քիմին ասըն ա՝ հա, տալիս են էդ իսեղծին իմացնում, թոզը գծըն ճիտը, շորերը հանըն։ Գրի երկրորդ թերթը տղի վոա կարդում են, սաղանըն ա, շորերը հանըն ա, չասավոյի շորերը հաքնըն ա, փախչըն։

Փախչըն ա, գալի մի քաղաք, տենըն ա որ ժողովուրդը սև ա հագած։ Հարց ու փորձ ա անըն, իմանըն ա, որ թագավորի աղջիկը մեռել ա, սուգ ա։ Տղեն ասըն ա. — Գնացեք թագավորին ասեք, ըստի մի տղա կա, ասըն ա. «Ես կաղամ իրա աղջկանը սաղացնեմ»։

Ասըն են. — Գլխիցդ ձեռ չես քաշե, հիվանդ վախտը կաղացել չեն, հմի մեռած պտի սաղացնե՞ս։

Ասըն ա. — Արի պայման կնքենք, թագավորն ապրած կենա, թե սաղացնեմ աղջիկըդ էլ տուր, թագավորությունդ էլ, թե սաղացնիլ չեմ՝ գլուխս կտամ։

Համաձայնում ա։ Տանըն ա գրի երրորդ թերթը ղըա վոա կարդում, աղջիկը սաղանում ա։ Թագավորն ասըն ա. «Խոսքիս տերն եմ, աղջիկս էլ տվի, թագավորությունս էլ»։ Տղեն նստում ա ըստեղ թագավոր։ Աի ամիս կենըն ա. մի ամսից եղը գալիս ա, գորքը ստուգում ա, հնգորտանցը գոնըն ա, ասըն ա. — Տղերք, ես ես ա թագավոր եմ դառն։ Ես էգուց կգամ ձեր շարքը կստուգեմ, գենեղալը աջ կասի՝ ծախ կդառնաք, ծախ կասի՝ աջ կդառնաք, դա հո ձեզ կաղալ չի պատժի, ես ողդի եմ, որ պատժի, ես դրան մի նկատողություն կանեմ, ընդհան եղը ինչ պատիժ կտամ, ես գիտեմ։

Ասըն են. — Լավ։

Թագավորը ըռավողը գընըմ ա գորքերը ստուգում, գալիս ա դրանց չաստը, էդ էրկու տղեն կանգնած են. աջ ա ասըմ՝ ծախ են դառնըմ, ծախ ա ասըմ՝ աջ են դառնըմ, մատը թափ ա տալի գեներալի վոա, ասըմ ա. — Դու ի՞նչ գեներալ ես, բանակայինըդ էրկու տարու-մը աջն ու ծախը գիտեն ոչ:

Գեներալը կարմըընըմ ա. գեներալին նկատողություն ա գըրըմ, գալի պալատ: Աուրհանդակների միջոցով պալատ ա կանչըմ իրա իսկական հորն ու մորը, են մի հորն ու մորը, կնգանը, գանքաջին, գեներալին, էրկու սալդաթ, հնգորտանցը, ավազակներին: Բոլորը գալիս են, հավաքվում են ժողովի: Թագավորը նստում ա թախտին, ասըմ ա. «Գիդաթ, ինչի՞ եմ ձեզ կանչե, որ բոլորը իրա գլխի անցկացածը պատմի»: Էրկու հնգորտանցը՝ բանակայիններին կանգնացնում ա շենքում, որ ոչ մտնող, ոչ դուս էկող ըլի: Համա ամենքը, որ իր գլխի էկածը պատմի, ամիս կքաշի: «Բերեք ինձ լսեցեք, ես իմ գլխի անցկացածը կպատմեմ, լրավական ա», — թագավոր ա, ասածը օրենք ա»:

Տղեն պատմում ա գլխի անցկացածը, վերջում ժողովուրդը դատ ա անըմ, որոշում են կնգանը գցեն խոր ֆորի մեջ, օրական քառասուն գրվանքա իրա մսից կտբեն, իբան ուտացեն, եր սատկի, սատկի: Գեներալի պատիժը՝ ամեն ըռավողը մի չայնիկ ջուր վե կալի, գա են էրկու սալդաթի ձեռներին ջուր ածի, լվացվեն: Սալդաթներին ասըմ են՝ էդ ծառայությունը քաշեք, եդնա պալատում պաշտոն կտան: Պառավ գանքաջին թագավորն ասըմ ա. «Քեզ ոչ իսեր են անըմ, ոչ շառ, գնա կորչի»: Իրեք ավազակներին ասըմ ա. «Ես ձեզ պաշտոն եմ տալի, գնացեք կերեք, խմեք, ագատ ապրեք, գողություն անիլ պետք չի, հենց որ իմացել եմ տիե բան եք արե, երգրես կառտաքսեմ»: Առաջվա հերն ու մերը ծերացած են, դրանց թոշակ ա տալի՝ պալատում ապրեցեք: Էն մի հորն ու մորը պահում ա պալատում:

Ասսանից իրեք ինձոր ա վեր գալի, մինն՝

ասողին, մինը լսողին, մինն էլ՝ ալամ աշխարհին:

24. ՄԵԾԵՐԻ ՓՈՐՁԸ

Ըլում ա չի ըլում մի թագավոր ա ըլում: Էս թագավորը հրաման ա տալի, որ իրա երգրումը օխտանասունից վեր ինչքան մարդ կա, բոլորին սպանեն: Մի տղա, որ հորը շատ ա սիրում, նրան մեռած ա հայտարարում, հորը վահում ա: Անցնում ա մի առ ժամանակ, մի օր տղեն դուս ա գալի, գնում ա ջրի դրաղը, տենում ա թագավորը իր նազիրներով մի լիս են տեհե ջրի միջին, ուզում են հանեն, հմա կարում են ոչ: Գալիս ա տուն:

Հերը հարցնում ա տղին. — Այ որդի, աշխարհի վոա ի՞նչ կար, ի՞նչ չկար:

Տղեն պատմում ա, թե. — Հայ նաղըլ թագավորը իրա նազիրների հետ ջրի տակին լիս էին տեհե, ման էին գալի, որ ջրի տակից էդ լուսատու բանը հանեն, հմա կրացին ոչ հանին:

Հերը հարց ա տալի, ասում ա. — Այ որդի, ջրի դրաղին ծառ կա՞ր:

Թե. — Հա:

— Ծառի վոեն բուն կա, բնի միջին շողշողուն բան կա, դրա շողն ա ջրին տալի:


Մեկել օրը տղեն էլի գնում ա ջրի դրաղը, տենըմ ա՝ թագավորն ու նազիրները էլ էդ ընդի ջրի տակի լսին են ման գալի:

Ասում ա. — Թագավորն ապրած կենա, լիսը ջրի տակը չի, հրեն հա՛, ծառի վոեն ա:

Նազիրները բարձրանում են ծառը, շողշողուն բանը բնից գտնում, հանում են տալի թագավորին: Նազիրները նախաձեռնում են տղին, միտք են անում, թե իրանք չարչորվում, չէին կարըմ գտնի, սա գտավ, արի սրա վերջր տանք: Տգին կանչում են թագավորի պալատի հայաթը, ասում են. — Էգուց կգաս, մենք քեզ էրկու ձի շհանց կտանք, դու տի ասես որն ա ջահելը, որը ահելը, թե չգտար՝ գլուխըդ կթոցենք:



Մովսես Ֆադեյի (Թադևոսի) Խամ-Ազովը, (1853-1896) փիկնոջ՝ Եղեմա Պողոսովայի հետ: 1874թ.:



Եգոր Յադեյիչ Խան-Ագովը թոռների հետ: 1900-ական թվականների սկզբի նկար:



Սալակուն՝ Լևոն Եգորի Խան-Ագովը, աջից նրա եղբայր Արամ Խան-Ագովը, Թիֆլիս, 1901թ.:

Տղեն տխուր գալիս ա տուն: Հերը հարցը-
նում ա. — Հը, թագավորն ի՞նչ ասավ:

Տղեն թե. — Հար մաղըլ սիե:

Հերն ասում ա. — Դարդ մի անի, տղա
ջան, որ ծիանքը կհանեն ասելը շատ ար-
խային կգնա, էն որ անհամգիստ ա գնում,
խաղում ա ջահել ա:

Տղեն գնում ա: Թագավորը, մաղիրները
երկու իրար նման ծի են հանըմ, տղեն տենըմ
ա, որ մեկը հանգիստ ա գնում, մեկելը խաղում
ա, ասում ա. — Հանգիստն ասելն ա,
խաղացողը ջահելը:

Նազիրները մախանձում են տղին ու
ուզում են նրան կործանեն, ասում են. — Էգուց
էլ կգաս, մի ծառից երկու իրար չափսի փետ
չհանց կտանք, թե գտնես որն ա հաստ կուռը,
որը բարակը, լավ, թե չիմացար գլուխըդ
կթոցնենք:

Տղեն տխուր գալիս ա տուն:

Հերն ասում ա. — Այ որդի, թագավորն ի՞նչ
ասավ:

Տղեն թե. — Հար մաղըլ սիե ասավ:

Հերն ասում ա. — Դարդ մի անի, փետերը
կմտացնես ջրի դրաղին, կգցես ջուրը, ոռքի
կուռը ջրի տակը կանցնի, ծանդր ա, օերինը
ջրի երես կելնի, թեթև ա:

Տղեն ըտենց էլ անում ա: Թագավորն ու
մագիրները մնում են զարմացած: Թագավորը
հարց ա տալի տղին, թե որն ա իրա իմաստու-
թյան գաղտնիքը: Տղեն իմանում չի ինչ ասի:
Ասի՝ հերս ա սովորցընըմ, կասի՝ խի՞ ես հորդդ
պահե, չասի՝ բա ի՞նչ ասի:

Թագավորը պնդում ա թե. — Տի ասես,
մենակ թե ճիշտ տի ասես, թե չէ գլուխըդ
կթոցնենք:

Տղեն ասում ա. — Թագավորն ապրած
կենա, էս փորձերը իմ հերն ա ինձ տվե:

Թե. — Ո՞նց:

— Սիե ու սիե: Ես քու հրամանքը չկա-
տարեցի, որովհետև մեծերի փորձը մեզ շատ
ա պետք:

Թագավորը տենում ա, որ տղեն ճիշտ ա
ասում, կյանքը բախշում ա, իրա հրամանը փո-

խում ա, նոր հրաման ա արձակում. որ ով ինչ-
քան ուզում ա, ինչքան կարա, թող ապրի:

25. ԼՍՉԱՌ ԿՆԻԿԸ

Մի մարդ մի լաչառ կնիկ ա ունենում, եղ
մարդն ինչ անում ա, չի անում եղ կնիկը հոժար
չի, եղ մարդու միսն ուտում ա: Մտածում ա,
ո՞նց անեմ էս կնգանից ազատվեմ, ելք չի
գտնում: Իլսջը կտրվում ա, իր հմա մի տոպ-
րակ հաց ա դիզում, ասում ա. — Գնում եմ էս
կնգանիցը կորչեմ:

Վեր ա կենում գնում, շատ ա գնում, քիչ ա
գնում, մի անտառով գնալու տեղը տենում ա
մի խորը ֆոր կա: Մտիկ ա անում, տենում ա,
որ իսկապես խորն ա: Ասում ա. «Ինչ անեմ,
գնամ իմ կնգանը խարեմ, բերեմ գցեմ էս
ֆորը»:

Եղ ա դառնում, գնում ա գյուղը, գնում ա
տուն: Ճամբին հրևանի րաղն ա մտնում, մի
տաս հատ լավ լսնձոռ ա քաղում, ածում
տոպրակը՝ գնում:

— Եղ որդի՞ իր, եղ որ ջիանդամն իր, —
ասում ա կնիկը:

Մարդը թե. — Այ կնիկ ջան, ինձ խայտառակ
մի անի, անտառը ման էկա, ինձոր եմ գտել, թե
կգաս՝ գնանք քաղենք, բերենք:

Տոպրակի խնձորը հանում ա, կնգանը
շանց ա տալի: Կնիկը թե. — Վա՛ր, աման, էս ինչ
լավ խնձոր ա, ու՞ր ա, որդի՞ ա:

Ամանին թոփ ա անում, թե գնանք՝ բերենք:

Մարդը թե. — Այ կնիկ, էս գիշերվա կեսին
ու՞ր գնանք, թո լիսանա, իժում կեթանք:

Լիսը չրացվելու հիդը եղ կինը ամանները
եղ մարդու շլակն ա տալի, գնում են խնձոր
քաղեն: Գնալով, գնալով մարդը եղ կնգանը
տանում ա ֆորի կուշտը: Ֆորի կուշտն ա
անում ու կնգանն ասում ա. — Այ կնիկ, եղ
ֆորում ռնց որ մի պսպրան բան կա, կարող ա
պտահի եղ ֆորումը ոսկի ըլի, չէ՞:

Կնիկը կռանում ա, ֆորը մտիկ անի թե չէ,
ոտներիցը վեր ա քաշում, քյալլի վրա գցում եղ

Ֆորը: Տղեն ազատվում ա, վեր ա կենում, գնում: Մի քիչ գնում ա, մի աղբրի դրաղի նստում ա, որ դնջանա, մի կտոր հաց ա ունենում, հանում ա, որ ուտի: Դու մի ասա էդ ֆորումը մի օձ ա ապրելիս ըլում: Էդ ֆորումն էլ կնիկը կռիվ ա անում. «Էս ֆորն իմն ա, էս շատն իմն ա». դես, դեն, որ երկարացնեն ոչ, էդ օձի զահլեն գնում ա, էդ օձն ասում ա. – Էս ֆորն էլ քեզ, այ լաչառ, էս էլածն էլ քեզ:

Վեր ա կենում, քաշվում գնում: Ֆորից դուրս ա գալի, դառնում մի ամրելի մարդ, ճամբա ա ընգնում, գնում: Գնում ա գնում, տենում ա էդ մարդը նստած, հաց ա ուտում:

– Բարի աջողում, այ ախպեր:

– Ասուլ բարին:

Մարդը խըլըկըշտորում ա, նայում ա էս յան, էն յան, մարդ չկա: Էն ա իոսում ա, տենում ա մարդ չկա: Լսում ա. – Այ մարդ, դու ինձ տենում չես, բայց դու էն կնգա մարդն էս, չէ՞:

Թե. – Հա:

– Էդ կնգա հետ քանի՞ տարի ես ապրել:

– Հինգ-վեց տարի:

Թե. – Այ տնաքանդ, դու հինգ-վեց տարի ռնց իս ապրի, որ ես մի ժամ կարացի ոչ ապրեն:

Մարդն ասում ա. – Ըլածն ըլած ա, արի նստի, հաց ուտենք:

Նստում են, հաց են ուտում, իրար հարց ու փորձ են անում, ասում են. հնգերանանք, էթանք քաղաք, աշխատենք, ապրենք:

Գնում են, գնում, մի քաղաքի վրա դուս գալի: Ինչ անեն, ինչ չանեն, ամրելի մարդն ասում ա. – Ես կեթամ կփաթըթվեմ թագավորի աղջկա վիզը, ինչ անեն՝ պոկ գալ չեն: Թագավորը հրաման կտա, որ ով որ աղջկանը ազատի, մեծ կարողութիւն կտա: Էն վախտը դու կգաս, կասես, որ կարաս ազատի: Ես որ քեզ տենամ, թագավորի աղջկա վիզը կթողնեմ, կգնամ, քեզ թագավորը կարողություն կտա, կապրես: Մենակ թե իմացի, էլ ինձ հետ դու գողձ չունես, մենակ մի անգամ քեզ հմար կանեն էդ բանը, տենում եմ, էդ լաչառ կնգա ձե-

ռին շատ ես չըրջարվել:

Ամրելի մարդը գնում ա, օձ ա դառնում, փաթվում էդ քաղաքի թագավորի աղջկա վիզը: Աղջիկը ոչ սաղ ա, ոչ մեռած: Թագավորը հավաքում ա երգրի հեքիմներին, ոչ ոք կարում չի աղջկան ազատի: Թագավորը հայտարարում ա. – «Ով որ աղջկաս էդ ցավից ազատի, իրա քաշովը մեկ ոսկի եմ տալի»: Մարդն էթում ա պալատ, թե՛ ես կազատեմ:

Օձը հենց որ տենում ա դրան, թագավորի աղջկան թողնում ա, անհետանում: Թագավորը էդ մարդուն իրա քաշովը մեկ ոսկի ա տալի: Մարդը էթում ա իրա հմար տներ ա կառուցում, հագնում-կապում, առողջ-փառք ապրում ա:

Միխելի վախտ անց ա կենում, մին էլ իսարա ա գալի, թե հարևան թագավորի աղջկանը օձը փաթաթվել ա, էդ թագավորն իմաց ա տվե, որ գղեն, բերեն են մարդուն, ով փրկել ա այսինչ թագավորի աղջկան: Մարդը ուզում չի գնա: Էրկու թագավորները իրար հետ գալիս են էդ թագավորի ոտը, թե՛ յա աղջկան պտի փրկես, յա գլուխըդ կտանք: Մարդն ինչ անի, ճարը կտրած վեր ա կենում գնում: Օձը տեղից շարժվում չի, ջգրվում ա, ասում ա. – Խի՞ ես էկի:

Մարդը թե. – Էկել եմ ասեմ, որ կնիկը ֆորից դուս ա էկե, գալիս ա, գլխիդ ճարը տես:

Օձը էդ որ լսում ա, պոկ ա գալի ու անհետանում ա: Թագավորը մնում ա զարմացած: Էդ մարթուն ասում ա. – Քեզնից էլ լավը չկա, աղջկանս տալիս եմ քեզ:

Յոթ օր, յոթ գիշեր հրսանիք են անում, իրանք հասնում են իրանց մուրագին, դուք էլ հասեք ձեր մուրագին:

26. ՕՎՉԻ ՄՈՒՐԱԴԻ ՀԵՐԲԱԹԸ

Կար չկար մի Մուրադ անունով թագավոր կար, տասնհինգ տարեկանից ֆորսկանություն աներ, առանց ֆորսի տուն չէր գա: Նրա կնգա սովորությունն էր, գիդեր որ ժամին թագավորը

Ֆորսից պտի գեր, աղաքն էր դուս գալի, դիմավորում:

Օրերից մի օր թագավորը գնաց Ֆորսի, գնաց, տեհավ մի հաստ կաղնու ծառի վրա մի դուշ կա: Դուշ, քու տունը քանդվի, ի՞նչ դուշ, երգնքումը ինչքան որ ռանգ ասես, էդ դշի վրա կա: Թագավորը թվանքը ուղղեց որ դշին տա, դուշը էլավ. — է՛, — ասավ, — թագավորն ապրած կենա, ահել ժամանակդ էս հարստություն, կյանք ուզում, թե ջախել ժամանակդ:

Թագավորի ուշը գնաց, թվանքը են կոան վրա վեր էկավ, ինքը են կոան վրա, էլ կարաց ոչ պատասխանի: Թե մի ժամ մնաց, թե կես ժամ մնաց, վե կացավ, տեհավ՝ ոչ դուշ կա, ոչ բան կա, ինքն էլ էնպես ա սևացած իրան վախելից, զարգանդվելից, չեն կարա պատմի: Թվանքը վի կալավ, քոռ ու փոշման էկավ տուն: Թագուհին դուռը բաց անելուն պես տեհավ, որ թագավորի ռանգը ռանգ չի. — Թագավորն ապրած կենա, էդքան ժամանակ քեզ էդ թավուր դեպք պատահած չի, ինչ թավուր գազան ա քեզ ռաստ էկե, որ նա քեզ հաղթեր ա, քու ռանգը սիե ա:

Թագավորը պատասխանեց ոչ:

— Յա՛յ-հա՛յ, — ասավ, — էս ինչ փորձանք ա:

Թագավորը իոսաց ոչ, էկավ, նստեց, ձեռը դրեց ստուլին, չանի տակին: — Թագուհի, — ասավ, — էստեսակ-էստեսակ մի հատ դուշ կանգնած էր կաղնու ծառի վրեն, թվանքը ուղղեցի, որ սպանեն, նա ինձ ասավ. «Թագավորն ապրած կենա, ջախել ժամանակդ էս վայելչություն, կյանք ուզում, թե ահել ժամանակդ»: Ես մի բան էլ ա պատասխանել չեմ:

— Թագավորն ապրած կենա, թե էգուց էթաս, կասես. «Անել ժամանակն եմ վայելչություն, կյանք ուզում, ջախել ժամանակը ոնց ըլի կարելի ա ապրել»:

Թագավորը մեկել օրն էլ դենը գնաց. դուշն էկավ աղաքին կեցավ. — Յը՛, թագավոր, — ասավ, — իոսքիս պատասխանիր:

Ասավ. — Ջախել ժամանակը ոնց ըլի կարելի ա ապրել, ահել ժամանակն եմ վայելչություն, կյանք ուզում:

— Լավ, թող տիե ըլի:

Թագավորը իրիգունը էկավ տուն, տեհավ կինն ու մի հատը ըրեխա ունեին էրկու տաբեկան, կինն էլ օրերի վրա ա, հա էսօր, էգուց ա, չոր տափի վրա, գորքը թողե գնացել ա, ոչ պալատ կա, որ տուն ու տեղ: Թագավորը մնաց դառը աղքատ: Դե թագավոր մարդ ա, ոչ ռանչաարություն գիտի, ոչ նոքարություն գիտի, ոչ անասուն պահել գիտի, ի՞նչ անի: Կնգա կոնիցը բռնեց, ման գալով գնաց, մի հատ ջրի դեմ էլավ, դես տվուց, դեն տվուց, կարմունջ չկա անց կենա: Կնգանն ասավ. — Դու ըստի նստի, ես ըրեխեն տանեմ ընդե անց կացնեմ, նորից գամ քեզ տանեմ:

Էն էլ, որ փորին էր, ծնվել ա, բալուլ ա, դոշին ա: Ըրեխեն տարավ էն կռանը դրուց, էկավ շորերը հագավ. ջրի թեժ տեղը հասցրուց կնգանը, մին էլ մի հատ դել էկավ են էրեխուն փախցրուց: Կնիկն էլ ջրի թեժ տեղն էր, հա՛յ-հա՛յ արավ. վախելեն բալուլն ընկավ ջուրը, յալլա, բալուլն էլ գնաց: Աարդ ու կնիկ վի կացան, ընգան ճամփա, գնացին:

Են ըրեխեն, որ ջրի դրաղն էր, գնլը փախցրուց, էսի մոտիկ չորանի շներ կային, էկան գիլի ձեռիցը իլեցին էդ ըրեխին, չորանն էկավ տարավ, յափնջու տակին պահեց, տարավ: Կնքեց, անումը դրեց Չորանօղլի:

Էն ռալուլը գնալով գնաց, մի ջրաղացի ցրթոնի դեմ էլավ, ջրացպանն էլ ոչ էրեխա ուներ, էդ չորանն էլ, ասավ. «Պահ, փառք քեզ աստված, իսնից ինձ էրեխա չտվուց, ջուրն ինձ հմա ըրեխա բերուց»:

Տարավ տվուց մի ջինդայի, ասավ. — Ամսական ես քեզ իրեք փութ ալուր տամ, դու էս ըրեխին պահի, մեծացրու:

Էդ էլ կնքեց, անումը դրեց Դագիմաջօղլի՝ ջրաղացպանի տղա: Թող դրանք ըտի ապրեն, մեծանան, իսաբար տանք թագավորիցը:

Էդ թագավորը կնգանը վի կալավ, ընգան ճամփա: Գնալու ժամանակը մի հատ բագիր-գյան ճամփին ռաստ էկավ, թագավորից կնիկը խլեց, իրան տկլորացրեց, իպլիգ ակլոր, ձեռն ու ոտը կապեց, գցեց մի ցխնդվի մեջ:

Կնիկն առավ, գնաց էդ թագավորի քաղաքը ամռտուր անելու:

Մի հատ ճանապարհ գնացող մարդ էկավ, տեհավ էդ ջխնդվի միջից տնքոց-վնչոց ա գալի, ռիսկ չի անում գնա կուշտը, մենակ ա, ասում ա. «Ով գիդի ինչ գազան ա, ինչ անասուն կըլի»: Չէ, ռիսկ արավ, գնաց, տեհավ իպլիզ տկլոր մի մարդ, ձեռը, ոտը կապած ըտի:

– Այ մարդ, – ասավ, – էս ի՞նչ բան ա, որ քեզ սիւ են արե:

Թե ասավ, – Ինչ անեմ, դաչաղմին էկան, ինձ պլոկեցին, տկլորացրին, գցեցին, գնացին:

Էդ բարեխիղճ մարդը հանեց մի հատ շալվար, իրա բլուզը հագցրեց դրան, հետը ընգավ ճանապարհ, գնաց: Գնացին տեհան, որ թագավորի քաղաքի դրաղին դուլաթ դուշի գցեին: Դուլաթ դուշը էկավ ու էդ թագավորի գլխին վեր էկավ: Դրան տարան թագավոր նստացրին:

Թագավորի տղեքը հասել էին, էկան էրկուսն էլ սալդատ ընգան, էրկուսն էլ մի գվոդում էին ծառայում՝ էդ քաղաքումը: Ոչ թագավորը գիդե, որ դրանք իրա տղեքն են, ոչ էլ տղեքը գիտեն, թե ախարսիք են: Են բագրոյանն էլ, որ թագավորի կնգանը ամել էր գնացել, տարավ չաղիր վի թողեց քաղքի դրաղին՝ սկսեց ամռտուր անել: Ամբողջ իրեք օր թագավորի ամռտուրը ոտն էլավ, բռլորը էդ ջրիղիցն են ամռտուր անում:

Գնացին խաբար տվին թագավորին, որ «Թագավորն ապրած կենա, մի հատ բագրոյան էկավ, ամբողջ իրեք օր ամռտուրը նրա կշտին ա»:

Թագավորը մի օքմու դարգեց, ասեց. – Գնացեք բագրոյանին բերեք:

Բագրոյանն ասավ, – Թագավորն ինձ հետ ինչ հաշիվ ունի, ես իմ ընտանիքը, էսքան ապրուստս թողամ, դվորը գնամ:

Թագավորը իրա գինվորներին՝ Չոբանօղլուն և Դագիմաջօղլուն տվուց մի գրություն, ասավ, – Դուք գնացեք նրա ընտանիքին, ապրուստին դրավուլ էրեք, նա գա:

Գրությունը տղեքը վի կալան, գնացին ըտե դրավուլ են քաշում. դա էկավ թագավորի կուշտը:

Ըրիգունը որ մթնեց, դրավուլ տղեքը ասին. «Չինգ տարի մենք իրար հետ ծառայում ենք, մենք գիդանք ոչ ով ենք, ով չենք. էգուց մեզ թագավորը բաց պտի թողնի, մենք իրար տեղն էլ չպիտի գիդանանք, որ գնանք իրարի ճանաչենք»:

– Այ տղա, ես գիդաս ո՞վ եմ, – ասավ մեծ ախպերը, – իմ հերն ու մերը ման գալու ժամանակը ջրի էս դրաղին վեր են դրել, չոբանն ինձ գիլիցը խլել ա, տարել ա, իմ անունը դրել ա Չոբանօղլի:

– Այ տղա, ես էլ բալուլեմ ըլել, իմ մերը ջուրն անց կենալիս ձեռիցը ընգել եմ, գնացել փլան ջրաղագին դեմ եմ էլե, ջղացպանը ինձ տարել ա, պիել, անումս դրել Դագիմաջօղլի:

Ըտե մերներն ասում ա. – Մին էլ ասեք, մին էլ ասեք:

– Չէ, – ասում են, – այ մեր, մին մորից ծնվել ենք, մին ասինք, էլ ինչ ասենք:

Մերը հասնում ա, հյտտում, բերում ա, լավ ուտացնում, իմացնում, տեղը գցում ա, մի ճիտը մինի բերնին ա դնում, մի ճիտը մնի, մի կուռը մնի գլխի տակին ա դնում, մինը՝ մնի: Բագրոյանը գալի տենում ա շաղիկ-շաղիկ իրեքն էլ քնած են, տիե թողնում ա, հասնում թագավորին. – Թագավորն ապրած կենա, ես քեզանե դարավուլ եմ ուզե, թե ... արի գնանք քու աջքովը տես:

Թագավորը ջաննաթը վոր ա ունում, գնում. գնում ա ըտեդ, տենում ա, որ կնգա մի կուռը գինվորի գլխի տակին ա, մինը կուռը մնի գլխի տակին: Թագավորը ձեն ա տալի. – Ջաննաթ ...

Կնիկն ընդեան ասում ա. – Քննի, նոր ջաննաթ:

Ըտեդ բագրոյանի սպրուստը փակում են, բիրաննին տանում են քնեն, տենան, թե ինչ կա: Թագավորը հրամայում ա, ժողովողին հավաքում են, դատ պտի անեն, տենանք ինչ դատ ա:



Պետական խորհրդական Գևորգ Թադևոսի Խան-Ագուլը տիկնոջ հետ, ընտանիքի շրջապատում, 1860-ական թվականների սկիզբ:



Խնջույք Խան-Ագուլների կալվածքում, Ջալալօղլի, 1898թ.:



Ջալալօղլու (Ստեփանավան) դպրոցի տնօրեն Տիգրան Տեր-Դավթյանը թոռների հետ, որտեղ ապօրել է
Հովհաննես Թումանյանը:

Կինն ասում ա. — Թագավորն ապրած կենա, սրանք հալալ իմ արգանդից ծնված զավակնիս են, ես էլ սրանց ծնողն եմ: Դու բազրոյանին հարցրու, թե էդ կնիկը քեզ որդիան, թող աչոտ տա:

Թագավորն ասում ա. — Բազրոյան, էս կնիկը սիե բան ա ասում, էս ինչ բան ա:

Բազրոյանը պատմում ա, թե. «Սիե, սիե, ես ճանապարհով գնեի, մի տգեղ մարդ ռաստ էկավ, նրա կինն աչքումս դուր էկավ, իւեցի, գոռով դավի վրա կապեցի, բերի»:

Թագավորը ասում ա. — Ժողովուրդ սրա դատը էս ա. ապրուստը ձեռիցը առնենք, բաժանենք աղքատներին, իրան էլ մի հատ դաթրի պոչից կապենք, ի՞նչ եք ասում:

Ժողովուրդը ձեն ա տալի. — Հախ դատ ա, թագավորն ապրած կենա:

Բազրոյանին դաթրի պոչից են կապում, թագավորը եդ ա դառնում ժողովրդին, ասում ա. — Ես Մուրադ թագավորն եմ, սա իմ կինը՝ թագուհին ա, էս տղեքն էլ իմ տղեքն են:

Քեֆ, ուրախություն են անում:

Ասսանեն իրեք խնձոր վի գա, մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ աշխարհին:

27. ԿԱԿՈՆ ՈՒ ՄՂԵՆ

Աի խեղճ, քյասիբ մարդ ա ըլըմ, անունը Կակոն: Էս մարդը կարըմ չի իրագլուխ գնա, աշխատանք ճարի: Բայց իրանց գեղիցը մարդիկ գնալիս են ըլում աշխատելու: Կնիկը խնդրում ա, ասում ա. — Տղերք ջան, ինչ կլինի մեր Կակոյին էլ հետներդ տանեք, էրեխեքը սոված են, թող գա աշխատի:

— Է՛, թող գա, — ասըմ են, — մեկ չի, մեր աշխատանքը նրան չենք տալ, նրանը մենք չտենք ուտիլ:

Կնիկը հաց-մաց ա թխում, ճամբի պաշար հետը դնըմ: Շատ են գընըմ, քիչ են գընըմ,

սոված են, Կակոն իրան հացը հանըմ ա, ընգերդիքը ուտում են, հացը հատնըմ ա: Իրանց հացը շալակնին դրանք մեկ-մեկ եդ են ընգըմ, ուտում, կշտանըմ են, էդ մարդը մնում ա սոված:

— Մեր հացը կերել ենք, պրծացրել, բերեք ձեր հացն էլ ուտենք, սոված ենք, — ասում ա Կակոն:

Ասըմ են. — Շալակդ թեթևացրել ենք, վատ ե՞նք արել:

— Դե որ շալակը թեթևացնելը լավ ա, բերեք ձեր շալակն էլ թեթևացնենք:

Դրանք հաց տալիս չեն, էդ մարդը մընըմ ա սոված, էդ ծակումը նստած: Դրանք գնում են իրանց գործին: Կակոն մնում ա մենակ, մին էլ տենըմ ա մի ձիավոր էկավ:

— Բաբով:

— Ասու բարին:

— Էս իսի՞ ես նստել ըստի:

— Գնեի աշխատանք ճարելու, հնգերտինքս հացս կերան, իրանք էլ հաց չտվին, մնացի սոված, ոչ կարըմ եմ դենը գընամ, ոչ կարըմ եմ դեսը գընամ:

— Ծառա կըլե՞ս:

— Կըլեմ:

— Ես առևտրական մարդ եմ, ես եմ, էս մի ձին ու խանումս: Արի, գնանք տուն: Երբ կգամ տուն, ձիս կբեջարես, երբ կեթամ առըտուրի՝ խանըմի կշտին գըրըցաղնգեր կըլես, ինչ որ կասի, կանես:

— Կանեմ, հա, աղա ջան:

Կակոյին բերըմ ա տուն, ձին կապըմ ա, կեր տալի, գալիս են, նստըմ, հաց ուտըմ, մեկել օրը վաճառականը գընըմ ա առըտուրի, Կակոն էլ խանըմի հըմա փետ, ջուր ա բերըմ, կրակ ա անըմ, ինչ որ խանըմը ասըմ ա, անըմ ա:

Օրի մի օր էդ խանըմը գընըմ ա րադմիք: Բաղմիքից ուր վըղընընած գալիս ա, Կակոն նայըմ ա ու մի երգա՞ն ախ ա քաշըմ: Խանըմը գլխի ա ընգըմ, ասըմ ա. — Կակո ջան, ինչի՞ ախ քաշեցիր:

* Դե են վախտը պոեզդ չի լլել, ավտո չի լլել, ոտով ու գիդի որդի տի եասնեն, որ աշխատանք գդնեն (ծ.բ.):

– Հեջ, խանըն ջան, էրեխեքը միտս են ընգել, ախ քաշեցի:

– Չէ, – ասըն ա. – Կակո, դուզն ասա, ընչի՞ ախ քաշեցիր:

Վերջը էլ կարըն չի պահի, ասըն ա. – խանըն ջան, որ քեզ բիրդան տեհա, խելքս գնաց, ասի ինչ կըլի թողար մի հետ պաչեի:

– Կակո ջան, աղեն ըրիգունը կգա, կասեն, թէ թողաց, կպաչես:

– Վա՛յ, խանում ջան, գլխիդ մատաղ, ոտիդ մատաղ, ասես ոչ:

Հմել փոշմանում ա որ ասեց, վախըն ա ասի, աղեն դուս անի: Ըրիգունն ա գալի, թե էքսի ըրիգուն ա գալի, աղեն տուն ա գալի: Կակոն ձին տանըն ա, կապըն ա, կեր ա տալի, գալիս են, նստում: Կակոյի քեփը խարաբ ա, վախըն ա, որ ասի: Աղեն թե. – Կակո, իի՞ ա քեփդ խարաբ:

Ասըն ա. – Աղա ջան, խարաբ չի:

Ինչքան ստիպում ա, ասըն չի, ասըն ա՝ խարաբ չի:

Մարդը կնգա վըեն խոսըն ա, ասըն ա. – Այ կնիկ, վայ թե սրան լավ չես պահում, իմ գնացած վախտը սոված ես պահում, ցամաք ես պահըն, տուժ ես տալի, դրա հընա քեփը խարաբ ա:

Հմի, թե խանընը ասըն ա, Կակոյին ա խնայում, թե ասըն չի՝ աղիցն ա վախըն՝ իրան ա մեղ ղընըն, ասըն ա. «Ասեն՝ Կակոյին ի՞նչ տի անի»:

– Ասեն, այ մարդ, թե Կակոյի քեփը խի ա խարաբ: Գնացել ի բաղնիք, էկա բազնքից, Կակոն որ տեհավ, մի թունդ ախ քաշեց: Մսի՝ Կակո, ընչի՞ ախ քաշեցիր: Թե հեջ՝ խանըն ջան, էրեխեքս միտս են ընգել: Տեհա դուզն ասըն չի: Մսի՝ չէ, Կակո, դուզն ասա: Թե՝ խանըն, մի ըրիդան, որ տեհա, խելքս գնաց, ասի՝ ինչ կըլի մի թողար մը հետ պաչեն: Ես էլ ասի՝ աղեն կգա, կասեն, թե թողա՝ կթողան կպաչես: Բա հմել միակտաց, ասեց՝ ասես ոչ, խանըն ջան, ոտիդ մատաղ, գլխիդ մատաղ: Հըմի դու ասըն ես՝ լավ չես պաչըն, ցամաք ես պահըն, քեփը խարաբ ես անըն...

Աղեն Կակոյի թիկունքին ձեռով տալիս ա, ասըն ա. – Լավ, տարին տասներկու ամիս ես եմ պաչել, մը հետ էլ դու կպաչես:

Կակոյի քեփը դըլա ա խարաբ ըլըն: Ըրիգունը, որ տեղն են մտնըն, աղեն ասըն ա. – Այ կնիկ, ֆողեղեն ա, մարդ ա, մեղք ա, գնա էս քշեր Կակոյի օթախը, կշտին քնի:

Խանընը գընըն ա, մտնըն ա Կակոյի օթախը, ասըն ա. – Կակո ջան, աղեն դարգել ա, էս քշեր քու կշտին տել քնին:

– Չէ, խանըն ջան, գնա, գնա, ամոթ ա:

Խանընը գալիս ա, ասըն ա. – Հնար չե՛լավ, մոտ չի թողնում:

Աղեն ասըն ա. – Խելքը կտրում չի, հլե գիդի դաք եմ անըն, սկլորվի, ջլիգ տկոր գնա, որ հվատա:

Տկլորվում ա, գընըն ա, ասըն ա. – Կակո, մտիկ արա, հլա տկլոր եմ էկել: Աղեն դրգել ա, որ քու կշտին քնել դիմ:

Խանընը եղ ա գալի, ասըն ա. – Այ մարդ, յորդանը սիե էբեսին վե քաշեց, ձեռով ասըն ա՝ գնա, գնա, ըսկի տեհավ ոչ, թե վըես ինչ կա, ինչ չկա:

– Այ կնիկ, ուրեմն Կակոն մեղ հավադարիմ ծառան ա, ինչքան որ մինչև հմի ես մտիկ արե, էրկու էնքան ըստից եղը մտիկ կանես:

Կակոն իրա ձեռովը իրա պատիվը վե քաշեց:

Կնիկն ասըն ա. – Այ մարդ, էս ա իրեք տարի ա էս մարդը ըստի աշխատում ա, մեղք ա, դրա քուլփաթը, ինչ տալ դես տուր, թող գնա իրան տունը:

Աղեն գընըն ա մի ձի ա առնըն իրան այարովը, հաց են թխում՝ Կակոյի հմար ճամփու պաշար, հինգ հատ հաց սաղա են թխում, հինգն էլ խմորի մեջը ռսկին լցնում են Կակոյիցը թաքուն, թխում, ղընըն խուրջինի մի թայումը, սաղեն էլ՝ մեկել թայումը: Ասում են. – Կակո ջան, կսովես, սոված մարդ ռաստ գա՝ էս հինգ հատից կուտես, կուտացնես, էս հինգը ձեռը չտաս, կտանես քու էրեխեքը սոված կըլնեն:

Դրանից բացի իրեք հարիր մանեթ փող ա

տալի, մի ձի, մի ձեռք շոր: Կակոն քթի տակին ասըն ա. — Աղա ջան, շնորհակալ եմ, — մթամ թե քիչ ա տվե:

Կակոն ճամփա ա ընկնում, գալիս ա: Տակի ձիուն ա մտիկ անըն, հաքի շորին ա մտիկ անըն. «Ես ո՞վ, էս ո՞վ»: Տիե ասելով ծանկներով գալիս ա, հասնըն տուն: Դա էլ իրան հաշվովը մթամ թե քիչ ա բերըն, վայ թե կնիկը խոսա ոչ:

— Բարի ըրիգուն, այ կնիկ:

— Ասուո բարին:

Գալիս են, ձին ըռնում, գոմ էլ չեն ունենում, տանըն են հարեանի գոմում կապում: Կնիկը թե. — Ի՞նչ ես բերել, այ մարդ:

Կակոն թե. — Աղիս հերն անիծած, իրեք հարիր մանեթ փող, էս մի ձին, էս մի ձեռք շորը:

— Տո Կակո, դու իրեք եարիր մանեթ չարժես, են էլ ասըն ես քիչ ա տվե: Լավ ա, որ էդ էլ տվել ա:

Դե, որ տենըն ա կնիկը ուրախ ա, վոեն խոսըն չի, ասըն ա. — Դե, այ կնիկ, գնա խուրջինումը հաց կա, գնա հանի, ըե կտրի, էրեխեքը սոված կըլնեն, թող ուտեն:

Կնիկը զընըն ա, բերըն ա սեդանտախտակը, դընըն են, դանակը էտ սոմին կըտըրըն չի: Աի կերպ կտրում են, ըաց անըն, տենըն են մեջը լիքը ոսկի ա:

Աինն էլ բեր, մինն էլ ըեր, մինն էլ, վա՛յ ...

Քեզանե թաքու են դրե:

Թե. — Դա:

Կնիկն .ասըն ա. — էս ոսկու ձենն որ իմանան, էս ժողովուրդը մեզ կսպանեն: Արի ըռավողը քոչենք էթանք, ոչ ով չիմանա, թե մենք ոսկի ունենք, թե չունենք:

Ըռավողը վեր են կենըն, ոսկին խուրջինը լցընըն, իրանց տանիցն էլ ինչ որ պետք ա վեր են ունըն, հայդե, զընըն քաղաք: Ձին ծախըն են, քաղաքում ոնց պահեն ձին, մի լավ տուն են առնըն: Աեկել ըռավողը էդ մարդը զընըն ա բազար, տենում ա հրես մի եսիր են ծախում:

— Այ եսիր ալան, այ եսիր ալան:*

Գընըն, տենըն ա, իրան աղեն ա: Ասում ա. — Ի՞նչ տամ էս եսըրին:

Ասըն են. — Դարիր մանեթ:

Դարիր մանեթը տալիս ա աղին առնըն, տա-նըն տուն: Կնգանն էլ չի ասըն ով ա. աղին մի աչքումը դընըն ա, ասըն ա. — Այ կնիկ, էս մարդին ըռավող, ճաշին, ըրիգունը լավ կպահես:

Տիեց լավ պատվով պահում են: Էքսի օրը գնում ա, տենըն ա էլի մի եսիր են ծախըն, մի կնիկ ա: Էդ էլ խառնընն ա:

— Ի՞նչ տամ:

— Դարիր մանեթ:

Դրան էլ ա հարիր մանեթ տալի բերում, դե գիտի, թե դրանք ով են, տանըն գցում ա մարթի կուշտը, համա կնգանն ասըն չի դրանք ով են:

— Էդ մարթը հարիր մանեթ տվեց առավ, — ասըն ա կնիկը:

Մարթը թե. — Դարիր մանեթ էլ ինձ ա տվե, առե: Տենանք էս մարդը մեր գլուխը ինչ կբերի:

Ուտում են, խմում են, մնում են ըտի:

Կակոն միտք ա անըն, ձի ա մստըն, զընըն ա աղի տունը, տենա ինչ ա ըլել աղի տունը-տեղը, էս ինչ հար մադըլա, որ աղեն ու խառնըն դառել են եսիր: Գնա, ինչ տենա, տունը թալանած, գատ չկա: Ինչ որ տեհել էր էդ տանը՝ նոքաը վախտը, առնըն ա, դընըն ա տանը, դռները օլանիքով կողպում ա, բլանիքը դընըն ա ջեբը, եդ ա գալի: Գալիս ա, աղին ու խառնըն դընըն ա ֆայտոնը, բերըն իրանց տունը, դուռը բացում ա, ասըն ա. — էս ձե՞ր տունն ա:

Թե. — Դա:

— Դե, գնացեք, ապրեցեք:

Ասում ա ու ինքը եդ գալի իրան տուն: Էդ մարդն ու կնիկը մնում են ըրմացած: Աղեն ասում ա. — Այ կնիկ, ես դրա պարտքը տվողը չեմ, մի օր կգա կասի՝ էս իմ տունն ա, դուք իմ եսիրներն եք, գնամ էդ մարդին սպանեն, դրա պարտքիցը պրծնեն:

* Այ գերի առնող, այ գերի առնող (թրգմ. Կ.):

Կնիկն ասում ա. — Անիլ մի, տներին էլ տիրանա, մեզ էլ, մեր ունեցածն էլ, բան չկա, դրան սպանիլ մի:

— Չէ, պետք է գնամ դրան սպանեմ, ես դրա պարտքը տվողը չեմ:

Աղեն գալիս ա Կակոյի դռանն ա հասնում, անգաջ ա դնում, որ մարդ ու կնիկ զրից են անում: Ասում ա՝ հիւ տենամ, ինչ են խոսում, էս մարդն ի՞նչ ա պատմում: Լսում ա, որ Կակոն ասում ա. — Գիդա՞ս, այ կնիկ, թե ո՞վ ին են եսիրները:

Թե. — Ո՞վ ին:

— Սինն աղես էր, մինն էլ խանըմըս էր, գնացի, տեհա տները թլանած, տարած, տեղը բան չկա: Գնացել եմ առել, տեղը դրել, տարել իրանց տունը դրել, էկել:

Կնիկը թե. — Բա, վայ, այ մարդ, բա իսի չասիր, ող մի շնորհակալություն ասեմ, որ էս հարստության տեր են մեզ սարքել:

Աղեն նազանը ձեռին տուն ա մտնում, վե գցում. — Կակո, քու տունը քանդվի, իմ տունը իսի քանդեիր, ես եկել ի որ քեզ սպանեմ, որ Կակոն ես, ես հավատում եմ, որ տանն էլ չես տիրանա, որ փողն էլ չես ուզի:

Աղեն Կակոյին ա սովից փրկում, Կակոն աղին ու խանըմին եսիրությունից:

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

Ասսանից իրեք խնձոր վեր ընգավ, մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ ժողովուրդին:

28. ՆԱՄԱՐԴՆ ՈՒ ՋՈՄԱՐԴԷ

Երկու մարդ իրար հետ ճամփա են էքում, մինի անունը Նամարդ, մեկելինը՝ Ջոմարդ:

Էրկուսն էլ իրանց հմա հաց են վե կալած ըլըմ, որ ճամփին ուտիլ դեն: Որդե սովում են Ջոմարդը իրա հացը հանում ա, ուտում են, որդե սովում են, հանում են՝ ուտում են: Ջոմարդի հացը հատնում ա. Ջոմարդի հացը, որ հատնում ա, ասում ա. — Ատա սովել ենք, դու քու հացն էլ հանի ուտենք:

Ասում ա. — Ես իմ հացից տալիս չեմ:

Նամարդը իրա հացից Ջոմարդին փայ չի հանում, թողում ա զընում. Ջոմարդը մընում ա սոված: Ի՞նչ անի: Ջոմարդը ճամփա ա ընգնում զընում, շատ ա զընում, քիչ ա զընում, հասնում ա մի գեղի: Տենում ա գեղի դրադին մի մարագ կա, ժանգառքի վախտն ա, մտնում ա էդ մարագը, մարագի սարայում տենում ա գերանների ըրանքումը տեղ կա: Ասում ա. «Խամ մարդ եմ, էս գեղումը ծանոթ չունեմ, գնամ ու՞մը ասեմ էս չախին ինձ տեղ տվեք, մտնեմ գերանների արանքը քնեմ, կլիսանա, ըռավողը մի մարդի հմար գործ կանեմ, հաց կտան, կուտեմ, ճամփես կշարունակեմ»:

Մտնում ա եդ մարագի սարայը, մի քիչ կենում ա, տենում ա մի ասլան, մի դասիլան էկան, մտան սարայը, տեղավորվեցին, լեզու առան, սկսեցին զրից անելը:

— Ա ասլան, էս անդեր ժողովուրդը ախմախա ա:

— Խի՞:

— Մուկը ձախողերըմը ոսկին դուս ա տալի: արևին ա տալի, մինը գիդի ոչ, որ գնա էդ ոսկին հվաքի: Սաղիբագդի գյուղումն էլ ջուր չկա, դարբին Աալխասանց դռանը մի քար կա, վոեն մի թուխ դոչ մորթեն, քարը շուռ տան, տակիցը մեենց ջուր կգա, որ ժողովուրդը կլիանա: Մեկել ասում են՝ ֆլանքյաս թագավորի աղջիկը հիվանդ ա, ինչքան հեքիմ են րեւում, կարում չեն բուժի, իրանց մի հատ Աիշկո շուն ունեն, թե դրա արինը քսեն, կսաղանա:

Ջոմարդը լըսում ա, մտքումը պահում: Ըռավողը ասլանն ա, դասիլանը էքում են չուերը, Ջոմարդն էլ ա վե կենում, սովը մտահան ա, զընում ա ձախողերը, զընում ա, զընում, արևը դիպած ա ըլըմ, տենում ա մուկը ոսկին դուս ա տվե, փոել ա, հվաքում ա, ջեբն ա ածում, զընում ա Աաղիբագդի:

Գընում ա, գեղի նախագահ Ակոբանց Արապյանի կուշտը, ասում ա. — Ուզու՞մ ես գեղին մի լավություն անեմ:

Թե. — Ի՞նչ լավություն:

Ասում ա. — Կանեմ, կտենաք, հմի թույլ տուր մետր կանալ հանեմ մինչի գեղի ծերը, մի

հինգ-վեց հատ էլ բանվոր տուր:

Սիսիթարանց տղերքին կանչում են, ասում ա. — Սինչև գեղի տակը մի մետր կանալ որ փորեք, ի՞նչ տամ:

Ասում են. — Քսան մանեթ:

Ասում ա. — Հանեցեք, կտամ:

Կանալը փորել ա տալի, որ էդ ջուրը գեղի տներին վնաս չտա:

Ասում ա. — Ով թուխ դոչ կունենա, էթում են մի թուխ դոչ առնեն:

Ասում են. — Ջալընանց Աերգոն ունի:

Գընում ա Ջալընանց Աերգոյի կուշտը թե. — Քեռի Աերգո, թուխ դոչ ունե՞ս:

Թե. — Հա, ունեն:

— Ի՞նչ տամ:

— Յոթ մանեթ:

Դոչըն առնում ա, բերում: Տղեքը կանալը կըտըրում են, պըթոնըն, քարի վոեն դոչը մորթել ա տալի, ասում ա. — Դե էս քարն էլ շուռ տվեք:

Քարը շուռ են տալի, ջուրը գընում ա, ժողովուրդը լիանում ա, ուրախանում ա, բերում են ջրի վոեն մատուռ են սարքում, Ջոմարդին պատիվ են տալի, ասում են. — Քեզ ի՞նչ լավութեն անենք:

Ասում ա. — Ինձ ոչ մի լավութեն պետք չի, էս մատուռի վոա անունս գընեք, ինձ հեբիք ա:

Որդի՞ ես ֆլանքյաս թագավորի քաղաք: Գալիս եմ: Ջոմարդը ճամփա ա ընգնում, գընում: Շատ ա գընում, քիչ ա գընում, հասնում ա ֆլանքյաս թագավորի քաղաքը, գընում ա թագավորի պալատը, ասում ա. — Ես հեքիմ եմ, էկել եմ թագավորի հիվանդ աղջկան սաղացնեն:

Տանում են թագավորի կուշտը:

— Թագավորն ապրած կենա, ի՞նչ ես տալի քու աղջկան լավացնեն:

Թագավորը թե. — Էնքան հայդնի հեքիմի չեն կարեցել, հմի դու՞ տիս լավացնի:

— Հա, ես կանեն:

— Ի՞նչ ես ուզում, թե լավացրիր՝ աղջիկս էլ քեզ, թագավորությունս էլ հետը, լավացնել չես՝ գլուխդ կտամ:

— Լավ: Դե մի էրկու քույր տուր, որ դեղը տամ քսեն:

Թեթև-մեթև բաներ ա տալի, որ աղջկան քսեն, համա ինքը գիդի ինչը նրան կսաղացնի: Շանը գդնում ա, թիքա ա տալի, շունը իրան ճընաչում ա, շնից մի ստաքան արին ա հանում, տալի քույրերին, ասում ա՝ քսեցեք: Արինը հենց դիպնում ա աղջկա ջանին, սաղանում ա, նստում ա տեղումը, սկսում ա շորերը հագնիլը: Թագավորին իմաց են տալի, որ աղջիկը լավացել ա, թագավորը գալիս ա, տենում ա դուզ որ ոտի ա ելել: Տղի ճակատից համփուրում ա, ասում ա. — Սղջիկս էլ տվի, թագավորությունս էլ տվի:

Տղեն մընում ա թագավոր, համա իյորհուրդը ծեր թագավորի հետ ա: Օրերի մի օր ասում ա. — Թագավորն ապրած կենա, ես միտք ունեն քո յոթը խազնեքից միըն ժողովողին բաժանեն:

— Քու գործն ա, տղա ջան, թագավորությունը քեզ եմ տվե, ինչ ուզում ես արա:

Հայտարարություն են տալիս, որ ինչքան չքավոր մարդ կա, գան պալատ, թագա թագավորը ոսկի ա բաժանում: Ժողովուրդը հավաքվում ա, թագավորը ամեն մեկին մի բուռ ոսկի ա բաժանում: Սին էլ տենում ա՝ հե՛, Նամարդն էլ էկավ: Հեղթը որ հասնում ա Նամարդին, թագավորը էրկու բռով ոսկին տալիս ա ու հարցնում ա. — Ինձ ճանաչում չե՞ս:

— Նամարդն ասում ա. — Ես բանվոր մարդ, դու թագավոր, ես քեզ որդիա՞ն ճանաչեն:

— Չէ, — ասում ա, — լավ մտիկ արա: Գանաչեցի՞ր:

— Չէ:

— Ես Ջոմարդն եմ, որ ճամփին ինձ սոված թող արիր, էկար: Ես թագավորության եմ հասել, խազնի դուռ եմ բաց արել, խազնա եմ բաժանում, դու էկել ես ձեռքդ դեմ արել, ինձանից ոսկի ես ուզում: Ուրիշներին մի-մի բուռ տվի, քեզ էրկու բուռ եմ տալի, համա քու փորը կշտանալ չի, Նամարդ ես, Նամարդ էլ մնալ դիս:

– Ա, – ասըմ ա, – Նամարդը, – էդ ո՞նց ըլաւ, այ Ջոմարդ, որ ես հացի փող էլ չեմ գդել, դու էկել ես թագավորութեան ես տիրացել:

Ասըմ ա. – էդ էլ կասեմ: Ասըմ ա, որ դու ինձ թող արիր, գնացիր, ես գնացի, գնացի մի գեղի դրաղին մի մարագ կար, մտա էդ մարագի սարայը, տեհա ասլան, դափլան էկան ըտի, ոսկու տեղն ասեցին: Գնացի հանեցի, ջրի տեղն ասեցին, գնացի գեղի հմա ջուր հանեցի, հետո էլ ես թագավորի աղջկա հիվանդութեան պատճառն ասին, ես էլ էկա սաղացրի:

Նամարդը մտքումն ասում ա. «Ես էլ էթամ էդ մարագը գդնեմ, բալքի մի բան իմանամ, հարստանամ»: Գընըմ ա, գընըմ, հասնըմ ա էդ գեղը, մտնըմ ա մարագը, որ ասլան, դափլանը գան մի բանի տեղ ասեն, գդնի, մի բանի տեր դառնա: Տապ ա անըմ: Տենըմ ա՝ հրե ասլան, դափլանն էկան: Արանք էլի իրար հետ գրից են անըմ:

– Մ, ասլան, էստի վայ թե քշերը օքմի ա ապրըմ:

– Ոնց իմացա՞ր:

– Համ են գեղի ջուրն ա րաց ըլել, համ են ոսկին չկա, համ էլ թագավորի աղջիկն ա սաղացել:

Ասըմ են, մտիկ անըմ, տենըմ են՝ հրե մի մարդ ըտի: Քաշըմ են ներքէ, հուպ տալի, կուլ տալի:

Բարին՝ մեր կուշտը, չարը՝ ասլան, դափլանի:

29. ՔԱՋ ՆԱԶԱՐԸ

Մի աղքատ ու թամբալ մարդ ա ըլում, անունը Նազար: Էդ Նազարը օրերով վեր ա ընգնըմ շվաքումը, քընըմ, ճանճերը վրա են տալի, նստոտում քթին, բերնին. սա քըշըմ ա, ջարդոտում: Դրա գործը էդ ա ըլում: Մի ազնաւոր կնիկ ա ունենում, անունը Ուստիան: Աա թե. – Այ մարդ, վեր կաց, գնա գեղամեջ, աշխատանք արա, ապրուստ բեր տուն, մարդավարի ապրենք:

Նազարը թե. – Իմ բերածը յա էշաբեռ պտի ըլի, յա դավաբեռ, օրվա հացի հմա ես աշխատող չեմ:

Տե՛հ որ շատ ա ասըմ, կնգա համբերութիւնը հատնում ա, դազանակը վեր ա ունում, Նազարին տնից դուս ա անում թե. – Գնա՛, էլ քեզ կնիկ չեմ:

Գշեր վախո, Նազարս էլ վախկոտ, լեղին ճաքում ա, թե. – Այ կնիկ, ավազակները էկան, դուռը բաց, գենքերս վր կալեմ, գլխները կտրեմ:

Կնիկը ըրերում ա Նազարի ժանգոտ սուրը, ճանճ քշելու փետն ու չուխեն, դոան արանքից դուս գցում: Նազարը տենում ա, որ ճար չկա, սուրը, փետը ու չուխեն վեր ա ունում, քոռեքոռ առաջանում ա դրա իրանց քուչի մեծ ծառը, որ բարձրանա վրեն մինչի լիսանալը: Հենց էդ վախտը էրկու օտարական, ճամփեն կորցրած, գալիս են դբա էդ յանը: Մեկը մնին ասըմ ա. – Այ տղա, ձին կապի ծառից, տենանք ու՞ր ընգանք:

Մեկելը թե. – Ջահանդամ – դարասին ենք ընկել, ձեռից գնացինք:

Էդ ող Նազարը լսում ա, ծառի վրից ձեն ա տալի. – Քաջ Նազարն եմ հա՛, մին կզարկեմ, կջարդեմ հազար:

Սրանք ձին թողնում են ու պու՛կ փախչում: Նազարս իջնում ա ծառից, նստում ձին ու հայդա՛: Շատ ա գնում, քիչ ա գնում, հասնում ա մի մեշա, տենում ա մարդիկ սուփրեն գցած, քեֆ են անում: Ձին կանգնացնում ա, իջնում, սուս ու փուս նստում ա սուփրի կուշտը: Մարդիկ զարմացած նայում են Նազարին, սիրտ չեն անում հարցնեն ով ա: Նազարը սեղանից վեր ա ունում ամենամեծ թասը, գինին լցնում ա բերնեբերան ու քաշում ա գլուխը: Ջարմացած մարդիկ իաշլամա են համեցեք անում: Նազարը ախորժակով ուտում ա: Ող ուտում ա, կշտանում ա, մարդիկ հարցնում են, թե՛ ով ա, պատասխանում ա Քաջ Նազարն եմ:

Ժողովրդի միջ խլրտում ա ընգնում, մեկը մեկու հարցնում ա, թե ո՞վ ա Քաջ Նազարը:

Հենց էդ վախտը Նազարի ծենից վախեցած են երկու գեղացին շունչները կտրած հասնում են գեղ, որ պատմեն գլխները էկածը, մին էլ տենում են իրանց ձին հրե կապած ծառիցը, մարդկանց բերանում էլ Քաջ Նազարի անունն ա պտտվում: Լեդիները պատռվում ա, գալիս են ընկնում Նազարի ոտները, որ բաղչի: Մարդիկ հարց ու փորձ են անում, թե էս ինչ բան ա, գեղացիք էլ մի ստի պատմութիւն են անում, թե Քաջ Նազարը իրանց կյանքը փրկել ա, ու իրանց աչքի առաջ քառասուն ավազակին կոտորել: Գինուց զլուխները տաքացած մարդիկ գովում են Նազարին, սրտները րացում առաջը, ու խնդիրք անում, որ իրանց ազատի հսկաների տիրապետութունից: Նազարը գովասանքից թե առած պարծենում ա, թե հսկաներին պտի կոտորի, թոզները քամուն տա: Բոլորը ոտի են կանգնում, գոռում են՝ կեցցե Քաջ Նազարը, Նազարին առաջները արած գնում են դբա հսկաների երգիրը: Գոռում-գոչումով հասնում են հսկաների երգիրը: Հսկաները մեկ-մեկու ձեն են տալի, թե՛ էս ի՞նչ իյարաը ա, ժողովուրդը էս ի՞նչ ա անում:

Ժողովուրդը թե՛ Քաջ Նազարն էկել ա, որ ձեզ աշխարհի էրեսից ջնջի: Հսկաները ծիծաղում են, ասում են. «էդ Քաջ Նազարին մի շանց տվեք»:

Նազարը վախից դողում ա, պինդ կպել ա ծառից ու չի իմանում զլուխը ոնց ազատի: Ժողովուրդը կանգնում ա Նազարի մեջքին, բրդում ա, Նազարը ծառից պոկ չի գալի, էլի ա բրդում, ծառը քոքից դուս ա գալի: Հսկաները իմանում են, թե Նազարը իրա ուժով ծառը քոքից հանեց, լեզուները կծում են, մտիկ են անում իրար, թե՛ սա սովորական մահկանացու չի: Նազարն էլ միտք ա անըմ, որ ժողովուրդի ուժով հսկաներին չես զարմացնի, մտադրվում ա դիմի խորամանկության: Ասում ա. – էկեք մարջ գանք, ով որ կարենա քաղից ջուր քամի, նա ա հաղթողը:

Հսկաներն ուրախանում են, վստահ են իրանց ուժի վրա, ամեն մեկը մի-մի քար ա առնում ու բռնի մեջ հուփ ա տալի: Նազարը

քարի տեղակ ծու ա հուփ տալի, ծուն փխլվում ա, միջինը թափում: Հսկաները զարմանում են:

Նազարն ասում ա. – էկեք քար չարտենք, ում չարտածը հեռու գնաց, նա ա հաղթողը:

Հսկաները մի-մի քար են չարտում, քարերը գնում են ծորումը վեր թափվում: Նազարը քարի տեղ մի ծիտ ա բաց թողնում, ծիտը թռչում ա գնում... Հսկաները զարմանք են կտրում:

Նազարն ասում ա. – Ով որ մի գոմշատիկ ջուրը դրեց ուսին, ռեղեց, հասցրեց ըստի ու ամենը խմեց, նա ա հաղթողը:

Հսկաները հերթով ճկած բերում են ջուրը, համա չեն կարում խմի, գոռով են խմում: Նազարը դատարկ տիկը գցում ա ուսը, իջնում ա ծորը, մի խուլվաթ տեղ փչում ա, օդով լցնում ա, ուսին ա դնում ու հանգիստ գալիս ա: Զորից դուրս ա գալի, տիկը դնում ա ռերանը, մթամ թե ջուրն ա խմում, օդը բաց ա թողնում: Հսկաները էս էլ որ տենում են, ընկնում են Նազարի ոտները, թե՛ հաղթողը դու ես, մնա ու դառի մեր ընգերը:

Ատքներումը դնում են իաբելով Նազարին սպանեն, որ պրծնեն դրանից էկող փորձանքից: Նազարը հսկաների միտքը հասկանում ա: Գշերով գնում ա բաղը, թե՛ ես ըստի եմ ուզում քնի:

Յափնջին գցում ա մի էրկան կոճղի վրա, ինքը բարձրանում ա ծառը ու ծեղից դիտում ա, թե ինչ ա ըլելու: Հսկաները գշերվա մի վախտը ամեն մեկը մի-մի սալաքար շալակած գալիս են, գցում յափնջու վրեն ու փախնում, կարծելով, թե յափնջու տակ քնած Նազարին սպանեցին: Առավոտը Նազարը վեր ա կենում, յափնջին հանում ա սալերի տալից, գցում ա ուսերին ու գնում ա հսկաների մոտ: Հսկաները զարմանքից քար են կտրում, մեկը թուքը կուլ տալով հարցնում ա. – Նազար ախպեր, դիշերս ո՞նց քնեցիր:

Նազարը թե. – Սադ գշեր լվեղը թողին ոչ քնեմ:

Մեկել օրը Նազարը էլի գնում ա բախչեն, յափնջին գցում ա, բարձրանում ծառը: Հսկա-

ները կաթսաներով ջուր են տաքացնում, գշերվա մի վախտ բերում, թափում են յափնջու վրեն: Նազարը առավուող ծառից վեր ա գալի, յափնջին քամում ա, գցում ա ուսերին ու գնում ա հսկաների մոտ: Հսկաները գարմանքից քար կտրած՝ վախենում են Նազարի երեսին մայեն: Մեկը չորացած լեզվով կմկմալով հարց ա տալի. — Նա ... զար ախ ... պեր, գշերս ո՞նց քնեցիր:

Նազարը թե. — Այ մարդ, սադ գշեր քրտինքի մեջ մեռա, երկի մբսել էի:

Հսկաները տենում են, որ Նազարից պրծում չկա, ասում են. — Նազար ախպեր, մենք պտի բաժանվենք, գնանք մեր երկիրը, բայց գնալուց առաջ ուզում ենք մեր հաբստոթյունը բաժանել էրկու մասի, կեսը՝ քեզ, կեսը՝ մեզ:

Էդպես էլ անում են: Նազարը հսկաներին բարձում ա ոսկիները, գալիս ա գյուղ, առողջ փառող ապրում ա, քեֆ ա անում ու ծիծաղում աշխարհի վրա:

30. ՏՄՍԸ ԿԻՂՈ ԼՈՒ ԿՍՄ ՓԵՏԻ ԳԻՆ

Մի հարուստ մարդ մի գյուղում դռնախ ա ընգնում, տանտիրոջն ասում ա.

— Այ մարդ, էս ինչ քյասիր ես:

Էդ մարդն ասում ա. — Այ մարդ, էս ի՞նչ քյասիր եմ, գյուղի հարուստը ես եմ:

Դռնախը դրան պատմում ա, թե ոնց հաբստանա: Մտում ա. — Մեզ մոտ փետը ոսկու հետ բարեբար փռիսվում ա, քառասուն դավաբեռ փետ վեկալ բե, քառասուն դավաբեռ ոսկի ետ բեր:

Էդ մարդը ամբողջ ապրուստը ծախում ա, քառասուն դավա ա առնըմ, քառասունն էլ փետ ա բարձում, գնում ա հաբուստ մարդու քաղաքը: Քաղաքին ծերին դրան մի տղա ա ռաստ գալի: Էս տղեն մի խմբից ա, դբանք տասնմեկ հոգի են, մեկը փաստաբան ա, մնացած տասը գողեր են: Էս ռաստ էկած տղե մի աչքը քոռ ա, սա ասում ա. — Ի՞նչ տամ էդ փետին:

— Ոսկուն հետ բարեբար ա. — ասում ա մարդը:

— Այ մարդ, քսան կիլո ոսկի տամ, են ով փետին բարեբար ոսկի կտա, — ասում ա քոռ տղեն:

Փետատերը չի տալըմ, գնում ա քաղաքի մեջը, քոռ տղեն շորերը փոխում ա, գալի փետատիրոջ առաջը, հարցնում ա. — Ի՞նչ տամ փետին:

Թե. — Ոսկու հետ բարեբար ա:

— Այ մարդ, ով փետին բարեբար ոսկի կտա, տասնհինգ կիլո ոսկի տամ, — ասում ա տղեն:

— Չէ, ըսկի քսան կիլո ոսկի տվին՝ չտվի, տասնհինգին կտա՞մ, — ասում ա դավատերը:

— Դու գիտես, — ասում ա քոռ տղեն, շուռ ա գալի մթամ գնում ա, համա գնում ա շորերը փոխում ա, որ էլի էդ մարդու առաջը դուրս գա:

Փետատերը դավեքը քշում ա քաղաքի ներքին ծեբը, տղեն առաջը դուրս ա գալի, հարցնում ա. — Ի՞նչ տամ փետիդ:

Մա թե. — Ոսկու հետ բարեբար:

Տղեն ասում ա. — Տաս կիլո ոսկի կտամ:

Փետատերը մնում ա մլորված, թե. «Այ մարդ, քսան տվին՝ չտվի, տասնհինգ տվին՝ չտվի, վայ թե տասին էլ չտամ փետս մնա ծախելու»: Համոզվում ա ու տալիքը տանում ավազակների պադվալում դատարկում:

Քոռ տղեն ասում ա. — Կգաս առավիտը ոսկին նտանես:

Փետատերը դավենին տանըմ ա դվիրը, դվիրի պահակին պատմում ա եղելությունը, պահակն ասում ա. — Դրանք փաստաբան ունեն, քանի շուտ ա գնա նրանց տանը տափաբա, կառավաթի տակին, ըրիգյունը ավագակները թռփ կըլնեն, ամենն իրանց գողությունը կպատմեն: Ըտեղ իրանց փաստաբանը կասի, որ գործը ոնց անց կկենա:

Ըրիգյունը թռփ են ըլնում: Մեկը պատմում ա, թե՛ մի աղջիկ են բռնե, մեկը պատմում ա, կաս եմ կտրե, քոռն էլ պատմում ա, որ մի մարդու խաբել եմ, քառասուն դավաբեռ փետ

եմ ամեն, տաս կիլո ոսկի պտի տամ: Փաստաբանը դրան հարց ա տալի. — Ոսկին տվե՞լ ես, թե չէ:

Ասում ա. — Չէ:

— Բա որ փետատերը գա առավոտը, ասի ոսկի չեմ բարըշել, տաս կիլո լու եմ բարիշել, կեսը էգ, կեսը ործ, ո՞նց չես տա, — ասում ա փաստաբանը:

— Էդքան ֆահլըմ չունի, որ ասի, — ասում ա քոռ տղեն:

Փետատերը լսում ա, փախչում, գնում ա իրա դավեթի մոտ: Առավոտը գալիս ա, թե. — Հախս տու:

Ավագակը թե. — Առ քու տաս կիլո ոսկին:

Փետատերը թե. — Ես ոսկի չեմ բարըշել, լու եմ բարըշել, տաս կիլո, կեսը էգ, կեսը ործ:

Քոռ տղեն պատասխանում ա թե. — Էգուց կտամ:

Փետատերը էլի գալի տափ ա անում կառավաթի տակին:

Փաստաբանը հարցնում ա. — Ինչ արի՞ր:

Թե. — Լու ա ուզում:

Քոռ տղեն ասում ա. — Ես միաչքանի եմ, դատարան կտամ, փետատիրոջը կասեմ. «Ես իրա մոտ եղել եմ նոքար, իրա մի աչքը իյարաբ էր, նոքար ժամանակս իմ աչքը հանել ա, իրա աչքի տեղը դրել»:

Փաստաբանն ասում ա. — Բա որ փետատերն էլ ասի թե. «Որ իմ աչքը իրանն ա, աշխարհի արդարությունը կշեռքն ա. որ աչքս իրանն ա, թող հանեմ, իրանն էլ հանեմք, կշեռքով քաշենք, թե որ իրար բռնի քաշը, կնշանակի իրանն ա աչքը»:

Քոռ տղեն թե. — Ֆահլըմը չի հասնի, գեղացի մարդ ա:

Փետատերը արդեն իմացել ա, ամեն բան լսել ա:

Առավոտը քոռ տղեն դատարան ա տալի, փետատիրոջը կանչում են, փետատերն ասում ա. — Եթե իրա աչքն ա, իմ աչքն էլ հանեք, իրա աչքն էլ հանեք, դրեք կշեռքին, եթե քաշը բռնեց, կնշանակի իրա աչքն ա:

Դատարանը որոշում ա ավագակի աչքն էլ

հանել, փետատիրոջ աչքն էլ հանել, համա քոռ տղեն չի համաձայնվում, որ իրան մի աչքն էլ հանեն, ոսկին տալիս ա:

Փետատերը հասնում ա իրա մուրագին, դուք էլ հասնեք ձեր մուրագին:

31. ԱՆԲԱՆ. ԱՂՋԻԿԸ

Ըլնում ա չի ըլնում մի թագավոր ա ըլնում: Օրերից մի օր էս թագավորը ուզում ա տենա մարդիկ ոնց են ապրում: Այ դաշտի միջով անց-կենալուս սարսափելի մի բան ա տեսնում: Տեսնում ա մի մարդ կնգանը լծած մի եզի հետ չուք ա անըմ: Ասըմ ա. — Այ մարդ աստժռ, էս ի՞նչ ես անըմ, բա կարելի՞ է կնոջը գութան լծել:

— Է՛, դարդերս շատ ա, դարդերս ոնց պատմեմ քեզ: Էրկու եզ ունեի, էս կնիկը աշունքը ինձ խեխտեց, թե արի եզմանց մինը մորթենք: Էս կնիկը իմ մերն ա, ասի. «Այ մեբա՛, էլել մի, անել մի, եզը որ մորթենք, ինչով ես վար ու ցանք անեմ, ընչով մենք ապրենք, արի եզը չմորթենք»: «Այ բալա, որ եզը չմորթենք, բա ձմեռը ինչով ապրենք, եզը մորթենք, ամառը մի բան կըլի»: Ասի. «Այ մերա, տես որ եզը մորթեցիր, ամառն էլ ես լծկան չունեմ, քեզ տեմ եզի տեղ լծի»: «Հա՛, ինձ կլծես»: Համաձայնվեցինք, եզը մորթեցինք կեղանք, հմիկ էլ իրան լծեցի, ինչ անեմ, եզ չունենք, մեզ էլ վարել ա պետքը:

Էս թագավորն ասըմ ա. — Այ մարդ, դե որ դու սինց տղա ես, արի գնանք մի հատ աչառ ունեմ, էդ աչառը մեզ վառել ա թողել, արի էդ աչառը տամ, սովորացրու, էս եզի հետ լծի, էս կինն էլ մեղք ա:

Ասըմ ա. — Գնանք:

Գալիս են: Ասըմ ա. — Ու՛ր ա աչառը:

Ասըմ ա. — Հրեն գոմումը:

Ասըմ ա. — Դէ էլ դուք գործ չունեք, էս աչառն իմն ա արդեն:

Աչառին իրեք օր ոչ խոտ ա տալի, ոչ ցուր: Որ գոմի դուռը բաց ա անում, ժողովուրդն

ասըն ա. — Արա, էս ինչ ես անըն, գոմի դուռը բաց մի անի, էդ աչառը քեզ կտրորի, կըսըպանի, վերունի անդեր ա:

— Ոչինչ, ես վերունիքներին եմ մարդ շինըն:

Գոմի դուռը բաց ա անըն, զընըն աչառին եդ անըն, տենըն եմ որ էս աչառը եդնոցը խելոք զընըն ա: Գալիս եմ, հասնըն գեղը, էդ աչառին լծում ա սայլին, զընըն եմ հանդը վար անելու: Գընըն եմ հանդը աչառին եդ ա անըն, լծում չուքը: Վարի Ժամանակ ակոսի եմ ծերին էլ ա խոտ դընըն, էս ծերին էլ: էդ աչառն էլ սոված աչառ, չարչարվում ա, որ հասնի խոտին, խոտիցը հլա էրկու բլդուդ չկեըած, էլի քշում ա, եմ եզն էլ չէ, դրա հետ քաշըն ա, քաշ եմ տալի, հասնըն հըմել եզին, զընըն ա, հասնըն ընդեղ: Դա դառնըն ա շատ լավ եզ:

Էս թագավորը մի քանի վախտուց եղը գալիս ա, տենըն որ էդ դառել ա մի լավ եզ: Ասըն ա. — Այ բալա, որ դու էդքան շնորքով ես, ես մի անբան աղջիկ ունեմ, արի իրա ապրուստն էլ հետը տամ քեզ, բալքիմ դըան մի ճամփա շանց տաս:

Էդ աղջկանը տղեն բերում ա տուն, աղջիկը գալիս ա, տան կես տեղը նըստում: Ըրիգունը գալիս ա տուն, տղեն մորն ասըն ա. — Այ մերա, բանն ո՞վ ա արել՝ ես ու դու, հացն ո՞վ ուտի՝ ես ու դու:

Հացն ուտում եմ, քընըն, ըռավոդը քշերհանա ասըն ա. — Այ մերա, բանն ո՞վ տի անի՝ ես ու դու, բա հացն ո՞վ տի ուտի՝ ես ու դու:

Հաց եմ ուտում, տղեն զընըն ա իրա գործին, մեըն էլ իրա տան գործն ա անըն: Էս աղջիկը տենըն ա սովիցը պտի մեռնի, ավիլը ուզում ա, իրա չորս կուռը ավում: Ըրիգունը որ տղեն գալիս ա տուն, ասըն ա. — Այ մերա, բանն ո՞վ ա արել՝ ես ու դու, եացն ո՞վ ուտի՝ ես ու դու:

Ասըն ա. — Բալա ջան, — ասըն ա, — մի բլդուդ հարսին տամ:

Թե. — Խի՞:

— Իրա կողքերը մաքրել ա:

Աի բլդուդ էլ հարսին եմ տալի: Հարսն ասըն ա. «Յավաշ ըռավոդը քիչ ավել մաքրեմ»: Դրանց տունն էլ գեղացու տուն, մի փոքր խրճիթ, էդ հարսը վեր ա ունում էդ տունը մաքրում: Տղեն ըրիգունը գալիս ա, ասըն. — Այ մերա, բանն ո՞վ ա արել՝ ես ու դու, հացն ո՞վ ուտի՝ ես ու դու:

— Բալա ջան, մի տարիլկա ճաշ, մի ստաքան չայ հարսին տանք:

Թե. — Խի՞:

— Տունն ավել ա:

— Հա՛... հարսին տանք:

Էքսի ըռավոդը հարսն ասըն ա. «Յավաշ դուռն էլ ավել, բալքիմ մի քիչ շատ բան տան, որ սովից չմեռնեմ»: Էքսի ըռավոդն էլ դուռն ավում ա, ըրիգունը մարդը գալիս ա տուն, եզնիքն անջատում, գալիս եմ, նստում հացի:

Աերն ասըն ա. — Բալա ջան, հըմի հարսին մի տարիլկա ճաշ տանք, մի ստաքան չայ տանք, մի ստաքան կամպոտ տանք, դուռն էլ ա ավել:

Այուս օըն էլ հարսը ասըն ա. — Մայրիկ, — ասըն ա, — ավիլը տուր, գոմն էլ ավել, սոված մեռա, մի կտորը հաց էլ տուր ուտեմ:

Աերն ասըն ա. — Չէ, մենք հացը ջոկ-ջոկ չենք ուտըն, տղես կգա իրար հետ կնստենք, հաց կուտենք:

Տղեն, որ գալիս ա, ասըն ա. — Բալա ջան, բանն արել ենք իրեքով, հացն էլ տինք ուտի իրեքով:

Դրանից հետո էդ հարսը դառնըն ա լավ հարս, գեղումը գովված հարս: Հերը գալիս ա տենըն, որ իրա աղջիկը դառել ա լավ կնիկ: Հերը հենց ոը գալիս ա, աղաքն ա վագում, ասըն ա. — Այ հեր, էս ավիլը վեկալ, էս տունն էլ ա ավիլ:

Թե. — Խի՞, բալա ջան:

Թե. — Ոը չավելս, հաց չեն տա, եացը աշխատողին եմ տալի:

Եոկնքից իրեք խնձոր վեր ընգավ. մեկն՝ ասողին, մեկը՝ գրողին, մեկն էլ՝ անբանին աշխատող սարքող տղի նման տղին:

Ըլում ա չի ըլում մի թամբալ մարդ ա ըլում: Էդ թամբալի հերը ունևոր մարդ ա ըլում, որ հերը ծերանում ա, գնում ա մի աղջիկ ա ուզում տղին, ամուսնացնում ա: Ինքը մահանում ա: Տղեն էլ թամբալ տղա ա ըլում, հոր ապրուստը լրիվ ուտում ա, ապրուստը հատնում ա: Հարսի տեղը, որ նեղանում ա, գնում ա հարևանին բողոքում ա, թե. — Իմ պատրոնի ապրուստը կերանք, հատավ, էդ տղեն էլ ամառ, ծմեռ ոտները տաք թոնրումը կախած աշխատանքի չի գնում, ես ի՞նչ անեմ:

Հարևան հալիվորն ասում ա.

— Գնա մի գրվանքա քիշմիշ առ, տար քմակի յանից քիշմիշը թաքուն շաղ տալով տար, ծեբը թող դուս գնա. իժուս դու տապարա, նա խըշկոտալ տի, տենա որ քիշմիշ կա, ուտելով եղեն գնալ դի դռան յանը: Եղնով դուռը փակի, ասա գնա աշխատանք արա, աշխատանք բի, եղնով դուռը բաց անեմ:

Հարսը նույն բանը անում ա: Տղեն աղաչանք ա անում թե. — Մթսում եմ, դուռը բաց արա:

Կնիկը թե. — Չէ, գնա աշխատանք արա, գնա աշխատանքը բի, տենամ, դուռը կբանամ:

Տղեն տենում ա, որ կնիկը դուռը բաց չի անում, գնում ա, հասնում թագավորի բաղը, բաղի դբաղով գալիս ա ըլում, թագավորի աղջկա գլխի քլաղեն քամին փախցըած ա ըլում, գցած ա ըլում քուչեն: Վիր ա ունում, վազելով գալի տուն, կնգան ասում ա. — Գյուլի ջան, ես աշխատանք եմ արե, դուռը բաց արա:

Քլաղեն դռնի աբանքովը շանց ա տալի: Կնիկը տենում ա իսս քլաղեն, դուռը բաց ա անում, կնիկը տենում ա թագավորի աղջկա քլաղեն ա, ասում ա. — Էդ թագավորի աղջկա քլաղեն ա, տար, տուր իրան, մուշտուլուղ կտա, կբերես մի քանի օր հացի փող կանենք:

Տղեն քլաղեն վեր ա ունում, որ տանի տա, տենում ա թագավորի բաղչումը նազիր-վեզիրները վագում են դես-դեն, աղջկա քլաղեն են փնտրում, վախից քլաղեն պահում ա քաղի

ըրանքումը: Գալիս են տղին բռնում, ասում են. — Թագավորի աղջկա քլաղեն քամին գցել ա դուսը, դուն ես էստի, դուն վե կալած կըլիս, տուր:

Տղեն թե. — Ես տեհել չեմ:

Դրան տանում են թագավորի կուշտը, տղեն ասում ա. — Ես վի չեմ կալե, համա ես կգտնեմ:

Ղունգը սրբում ա, նայում, ասում ա. — Բաղի պոզումը, իրեք քար կա, էդ քարերի արանքում ա, գնացեք բերեք:

Իրան իմաստուն ա ձևացնում: Նազիրները գնում են, քլաղեն քաղի տակից հանում են, բերում: Թագավորն ասում ա. — Այ տղա, ես իմաստուն վեզիր չունեմ, արի ինձ վեզիր ըլի:

Տղեն ասում ա. — Շատ լավ, թագավորն ապրած կենա:

Թագավորն ասում ա. — Ամիսը քսան ոսկի կտամ, էսօրվանից իմ իմաստուն վեզիրն ես:

Ըրիգումը որ գալիս ա, տղեն ասում ա. — Թագավորն ապրած կենա, մի տաս ոսկի տուր, տանեմ, ըրեխեքը սոված են, յուլա գնան, մինչև ամսի վերջը:

Թագավորի տված տաս ոսկին առնում ա, ծուլ ըլելով գալիս ա իրա կնգա կուշտը, թե. — Կնիկ ջան, դուռը բաց արա, տաս ոսկի եմ բերե:

Կնիկը դուռը բաց ա անում, տենում ա դբուստ որ մաքրը ոսկի ա բերե, մարդն ասում ա. — Այ կնիկ, ես հմի թագավորի առաջին իմաստուն վեզիրն եմ:

Կնիկն ուրախանում ա. — Այ մարդ ջան, գնա ծառայի, ամիսը մեզ քսան ոսկին բոլ-բոլ ա:

Մարդը մի քանի վախտը աշխատում ա, մի օր էլ թագավորն ասում ա. — Այ իմաստուն վեզիր, գնանք բաղը ման գալու:

Որ բաղն են մտնում, թագավորն ասում ա. — Դու բազի էս դրաղովն արի, ես մեկել դրաղովը: Կգանք իրար կհանդիպենք:

Թագավորը մի ծաղիկ ա քաղում, պահում ա բռան մեջ, որ գալիս են իրար հետ հանդիպում, ասում ա. — Հը, իմաստուն վեզիր, ի՞նչ ա բռնումս:

Մարդը մտքում հայտնում ա կնգանը, անունն էլ բարձր Գյուլի-Գյուլի ա ասում: Թագավորը բանում ա բուռը, ասում ա. — Ճիշտ որ իմաստուն ես:

Բռան մեջ վարդ ա ըլում:

Թագավորը էդ մարդու ամսականը սարքում ա եռեսուն ոսկի: Տղեն մի առ ժամանակ ծառայում ա, էդ վախտն էլ ավազակները գալիս են թագավորի գանձը կտրում: Թագավորը կանչում ա մարդուն, ասում ա. — Իմաստուն վեզիր, էս գիշեր իմ ոսկին կտրե տարել են, պտի գոնես:

Տղեն մտածում ա, ասում ա. — Թագավորն ապրած կենա, գործը ծանր ա, ինձ քառասուն օր ժամանակ տուր:

Մարդը գնում ա տուն, կնգան ասում ա. — Գյուլի, ինձ կրակի մեջ գցեցիր: Ես քառասուն օր ժամանակ եմ խնդրե, ես երգիցը պտի հեռանամ, ինձ հըմաը պատրաստություն տես:

Կնիկը բերում ա վեց հատ ձու ա էփում, որ ուտե, ճանապարհ ընկնի: Գողերը գալիս են իմաստուն վեզիրի կտուրը, հերթով գալիս են երթիկից նայում են, տենում են, որ նստած ա, ասում են. — Միտք ա անում, թե մեզ ոնց ռմնի:

Մարդը վեր ա ունում մի ձու, ջարդում ա, ասում ա. — Այ կնիկ, էս մինը գնաց:

Գողը վախեցած փախչում ա, ասում ա. — Իմ տեղն իմացավ:

Յետո մարդը երկրորդ ձուն ա վեր ունում, երկրորդն ա մոտանում կտրանը և էսպես հերթով գալիս են, մոտանում կտրանը, վերջը իմբապետն ա մոտանում, իմաստուն վեզիրն ասում ա. — Էս վեցն էլ էկավ ու գնաց:

Խմբապետն ասում ա. — Վա՛յ, իմաստուն ա, բոլորիս էլ տեղն իմացավ, իմացավ որ ես իմբապետն եմ: Էտա մեզ չմուս էլ գիդե, տանենք ոսկին իրան տանք թագավորը չիմանա:

Ավազակները ներս են մտնում, ընկնում են մարդու ոտները, թե. — Ոսկին տանք, մեզ մի մատնի:

Մարդն ասում ա. — Թագավորից յոթ ջվալ ոսկի եք տարե, գնացեք վեց ջվալը բերեք,

մինն էլ ձեզ ըլի:

Գնում են վեց ջվալ ոսկին՝ էլ շալակում, բերում են տալի դրան: Մարդն ասում ա. — Դուք գնացեք, դուք ազատ եք:

Մի ջվալն էլ տալիս ա կնգանը, ասում ա. — Գուլի ջան, էդ էլ դու պահի:

Խաբար ա անում թագավորին, որ ոսկին գդել են, էկեք տարեք: Թագավորը գալիս ա, տենում ա հինգ ջվալը, ասում ա. — Բա էրկու ջվալն ու՞ր ա:

Մարդն ասում ա. — Էրկու ջվալը դառել ա ջուր, գնացել ա, ջուրը տարել ա:

Ոսկին տանում են: Մարդն ասում ա. — Թագավորն ապրած կենա, շատ եմ չրջարվել, ինձ մի քսան օր թող գնամ, հանգստանամ:

Թագավորն ասում ա. — Գնա հանգստացի:

Մարդը իրան նվաղկոտ ա, ձևացնում, ուշքը գնում ա, ասում ա կնգանը. — Կնիկ, գնա թագավորին ասա, իմաստուն վեզիրդ խելագարվել ա:

Թագավորը հենց որ լսում ա ափալթափալ վազում ա, գալիս ա. մարդը հենց որ տեսնում ա թագավորին, սկսում ա գոռալ. — Չէ, չէ, թագավորին տալ չեն, իմ թագավորն ա, իմաստությունը տանում էք, տարեք:

Թագավորն ասում ա. — Իմաստուն վեզիր, էդ ի՞նչ ես ասում:

Թե. — Թագավորն ապրած կենա, — ասում ա մարդը, — հրեշտակները եկել են, յա իմ իմաստությունն են ուզում, ուս քեզ:

Թագավորն ասում ա. — Ինձ տալ մի տանեն, իմաստությունդ թո տանեն, իմաստությունդ թո տանեն, դու էլի իմ իմաստուն վեզիրն ես, քու ամսական քառասուն ոսկին առ, ազատ ման արի:

Թամրալը հասնում ա իրա մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

33. ԽՈՓԸ

Մի կնիկ ա ըլըմ, մի տղա յա ունենըմ, էլ ուրիշ բան ունի ոչ: Դրանք շատ քյասիբ են ըլըմ: Մի տիրացու էլ մի ֆորի միջի մի բանի

տեղ ա գիղենալիս ըլըմ, համա կարենալիս չի ըլըմ հանե: Գալիս ա էդ կնգա կուշտը, ասըմ. — Ես անհիշատակ մարթ եմ, քո տղին ինձ տու, պըհեմ, ինձ տիրացու շինեմ, համ էլ գիր կսովրեցնեմ, գրաճանաչ կշինեմ:

Էնա էդ կնգանը փող էլ ա տալիս, մըթամ լափութին անում, տղին վեր ա ունըմ, տանըմ: Էտ տղին տանըմ ա մի խորը ծըմակ, մի ֆորի գըլիսի կաղըմ եմ: Էդ ֆորի գըլիսին մի ջղացքար ա ըլըմ դրած, էդ տիրացուն չըրջարվում ա, չըրջարվում, կաղըմ չի վեր ունե: Էդ տղեն մի ձեռը տանըմ ա, քարը եդ ա քաշըմ, **գըլիսի** վրա ցից անըմ:

Ֆորը բաց եմ անըմ, տենըմ եմ միչին մի գութանի խուփ կա վեր ընգած: Էդ խուփը վենձ գորութին ունի: Տիրացուն ասըմ ա. — Մեչը մտի, խուփը հանե: Մեչն ա մըտնըմ: Տիրացուն ասըմ ա. — Խուփն ինձ տու, եղնա քի կհանեմ:

— Չէ, — ասըմ ա տղեն, — ինձ հանե, ես ձեռիս կըրերեմ: Ծանղըրն ա, դու կարալ չես խուփը պըհես, գըլիսիս կըքըցես:

Էնա որ շատ կըռանում ա, ջըղացքարը գըլիսի վրա կաղնած տեղիցը ըռաթըմ ա, թողըմ ա, գնըմ:

Էն տղեն էլ խուփի գորութինը գիղենալիս չի ըլըմ, մատով տալիս ա, հլե մին էլ տենըմ ա ջըղացքարը եդ գնաց, ֆորի ըրանը բաց էլավ:

Էդ գութանի խուփի գորութենով ֆորիցը դուս ա գալի, ջըղացքարը եդ վրա գծըմ, թողըմ, խուփը վեր ունըմ գնըմ: Էդ ժանգոտ խուփով ինչ ուզըմ ա շինըմ ա. իրան համար մի կարքին օթախ ա շինըմ, ապրուստ դգըմ, մորն էլ ըրերըմ ա կուշտը, եղնա հըրսանիք անըմ, մի սիրուն աղչիկ ա ուզըմ, լավ պըհըմ:

Էդ տիրացուն էլ հե գիղե տղեն ֆորըմը մեռել ա, հըմա մի օր դրանց դմնովն անց կենալիս ա ըլըմ, տենըմ ա էդ սիրուն օթախը:

«Էս ու՞մ տունն ա, որ չըհել հըմի գիտեմ ոչ», — ասըմ ա տիրացուն: Եդո իմանըմ ա, որ եմ տղինն ա, մըտածըմ ա, մըտածըմ ա. «Ոնց անեմ, որ կարենամ եմ գութանի խուփը ձեռիցը ճանգըս գըծեմ»:

Չարչու շորեր ա հաքըմ, մեշոկն ուսն ա

գըծըմ, տանըմ ա, որ ասեղ, քորոց. կոճ. հուլունք ծախի: Գալիս ա նհանց դրանը կաղըմ. — Առեք քորոց, ասեղ:

Պառավն ասըմ ա. — Ի՞նչ աժե:

— Ինչով ըլի կըտամ, ժանգոտ պըղընձի կըտոր ըլի, գութանի հինումին խուփ ըլի, կտամ:

Ախչի, — կանչում ա պառավը հարսին, — գնա մեր տունը մի ժանգոտ խուփի կտոր կա վեր ընգած, բի, տանք առնինք:

Էնա հարսը գնըմ ա ըրերըմ, տալիս եմ, մաստակից, բանից առնըմ:

Եղնա անց ա կենըմ մըխելի վախտ, եմ նաչար տղեն գարթըմ ա քընիցը, տենըմ ա, որ ոնչ օթախն ա ընդի, ոնչ խուփը, ոնչ էլ կնիկն ա ընդի: Ինքն ա ու մերը, էլ եմ ջըլոտն եմ, էլ եմ գըրչոտը, դառ ու դարդակ ընդի մնացած:

Էնա նաչարը վի յա կենըմ, դարդ անըմ: Վեր ա կենըմ, գնըմ ա, գալի տիրացվի տունը գըղըմ: Տենըմ ա տիրացուն տանը չի, կընիկն ա տանը, եմքան լաց ա էլել՝ աչքերն ուռել եմ:

Ըտի դրանք իրար փըթաթվըմ եմ. ասըմ ա. — Դե ես ինչ անեմ, գութանի խուփի գորութինը գիղեի ոչ, համ էլ քու մերն ասավ, ես էլ տվի: Ես ի՞նչ անեմ:

Էտ տղեն խուփի տեղը իմանըմ ա, թե որդի պըհեց, իրան կնիկն էլ թաքուն դուռը բաց ա թողըմ, դա խուփը վեր ա ունըմ ու գնըմ:

Խուփին թըրիակացնըմ ա, ասըմ — Քեզանի խընթըմ եմ, որ էլեադ իմ տունը, իմ ապրուստն ըստի ըլի, ես ու իմ մերն էլ միջին, իմ կնիկն էլ՝ կողքիս:

Քընըմ ա: Էդ ըուսվողը վի կենըմ, տենըմ ա ամեն բան էլ ուսլուրին, սագով իրա տեղն ա, կնիկն էլ՝ կողքին քընած:

34. ԵՐԿԱԹՍԳՈՐԾ ԱՇԿԵՐՏԻ ԵՐԱԶԸ

Ըլում ա չի ըլում մի մաղդ ա ըլում, ինքը մեծ հասակում մի տղա ա ունենում: Գալիս ա էդ մարդու մեռնելու ժամանակը, որ հիվանդանում ա, կանչում ա իրա հարազատներին,

ասում ա. — Մենք ես ու կողակիցս, շուտով կմեռենք, մեր էրեխեն պուճուր ա, կտանք մի արհեստի կտանք:

Մարդ ու կնիկ որ մեռնում են, էդ մարդիկ ըրեխին տանում են քաղաք, մի արհեստի են տալի: Էդ արհեստը երկաթագործություն ա ըլում: Մի օր էլ երկաթագործի արհեստանոցում աշխատելիս են ըլում, ուստեն ասում ա. — Դու էս գործն արա, արհեստանոցին նայի, մինչև ես գամ:

Էրեխա տղա, քունը տանում ա, արհեստանոցում քնում ա: Թագավորը հենց էդ վախտը իր նազիր-վեզիրներով ման գալիս ա ըլում քաղաքում, թե տենա ժողովուրդը, արհեստավորներն ինչ դրության մեջ են: Էդ շքախումբը անցնում ա արհեստանոցի մոտով, թագավորը տեսնում ա, որ էդ էրեխեն արհեստանոցում քնած ա, մի մաթախտով ոտին տալիս ա, վի կացնում ու դուս գալի: Տղեն ասում ա. — Օ՜ֆ, տունըդ քանդվի, կթողնեիր էրազըս կշարունակեի, էլի:

Թագավորը եդ ա դառնում, էդ էրեխին ասում ա. — Ի՞նչ էրազ տեսար, պատմի:

Տղեն ասում ա. — Չէ, պատմիլ չեմ:

Թագավորը հրաման ա տալի, տղին տանում, րանտարկում են: Բանտապանները ինչքան ստիպում են, էդ էրեխեն էրազը պատմում չի: Թագավորը մի քառասուն մետրանոց հող ա ունենում, էդ տղին տանում ա, գցում ա էդ հողը, որ տանջվի, տուժվի, էրազը պատմի: Մի էրկու հետ գնում ա, հանում ա, որ էրազը պատմի, պատմում չի: Տղեն ֆորումը երգյար ա մնում, դես ա նայում, դեն ա նայում, տեսնում ա էդ ֆողումը մի ծակ կա, հողը քիչ-քիչ քանդում ա, տեսնում ա գեղնի տակից լիս ա դիս գալի: Տեղ ա բաց անում, ընգնում ա էդ լիս տեղը: Դու մի ասա, թագավորը մի շատ սիրուն աղջիկ ունի, գեղնի տակը թունել ա փորել տվել, թունելում պահում ա, որ ուրիշ թագավորները տեսան ոչ, գան գողով տանեն: Տղեն իջնում ա ներքև, դես ա ման գալի, դեն ա ման գալի, տեսնում ա մի սիրուն աղջիկ քնած, ուտելիքն էլ կողքին

դրած: Վեր ա ունում էդ ուտելիքից ուտում ա, աղջկան էլ պաչում ա, եդ բարձրանում ա իրա հորը: Աղջիկը պաչից զարթնում ա, տեսնում ա իրան ճաշը կերած ա, իրան թուշն էլ, հայլում մտիկ ա անում, որ պաչած ա: Մի քանի օր տղեն նույն կարգով ուտում ա, տափ կենում, մի օր էլ աղջիկը սուտ քուն ա դնում, ասում ա. «Կաց տենամ էս ով ա, որ ըստի մուտք ա կատարում»: Տղեն նորից իջնում ա, ճաշը ուտում ա, կռանում ա, որ աղջկան պաչի, դայիմ բռնում ա. — Բա դու ո՞վ ես, ի՞նչ արարած ես:

Տղեն թե. — Սիե, սիե, թագավորն ինձ գցել ա տվե ֆորը, պատճառն իմ էրագն ա, ասում ա՝ պատմի, ես չեմ պատմում:

Աղջիկն ասում ա. — Ճիշտ ես անում, մի պատմի:

Տղեն տհենց աղջկա շնորհիվ ապրում ա:

Մի անգամ հարևան թագավորը էս թագավորին մրցության ա հրավորում, մի խնդիր ա դնում, ասում ա. «Ես վեց հոգի եմ դրգում, դու պտի որոշես, թե էդ վեցից աղջիկն որն ա, տղեն որն ա»: Վեցից իրեքը տղա ա, իրեքը՝ աղջիկ: Թագավորը խորհրդի ա կանչում երգրի իմաստուններին, ոչ ոք կարում չի լուծի էդ խնդիրը, ման ա գալի երգրումը՝ կարում չի դրա պատասխանը տա: Աղջիկը որ իմանում ա էդ բոլորը, տղին ասում ա. — Իմ հոր տեղը նեղացել ա, կարող ա քեզ էլ տանի: Դու կերթաս մի չայդան ջուր լավ կտաքացես, կասես՝ դրանց լվացվելու հարգանքը ես տիմ տանի: Դրանք, — ասում ա աղջիկը, — որ վի կենան լվացվելու, չայդանի եռացրած ջուրը կտանես ձեռներուն կածես, որը որ ձեռները տաք ջրով լվաց՝ նա աղջիկ ա, որովհետև նա տաք ջրի հետ գործ ունի, ամեն րան լվանալով սովորել ա տաք ջրին, դիմանալ դի, որը որ տաք ջուրն ածիր վեր ածավ, նա տղա ա: Էտա տհենց կընդրես, կըջոկես ու կասես՝ իրեքը տղա են, էս իրեքը աղջիկ:

Թագավորը կանչում ա տղին, ասում ա. — Կամ պտի մի հնարով իմանաս դրանց աղջիկ, տղա ըլնելը, կամ՝ գլուխդ տալու եմ:

Տղեն ասում ա աղջկա ասածի նման, տանում ա կնգնացնում ա, լվացվելու վախոյր տաք ջուրն ածում ա, որն որ ազատ ձեռները լվանում ա, նա ասում ա՝ աղջիկ ա, որն որ թափում ա, կարում չի լվանա՝ նա էլ տղա ա: Էդ ա տհենց ջուկում ա, կանչել ա տալի թագավորին, ասում ա. — Թագավորն ապրած կենա, էս իրեքը տղա են, էս իրեքը՝ աղջիկ:

Թագավորն ասում ա. — Լա՛վ, դրանց ջկեցիր, ես ազատվեցի էդ թագավորից, հմի էլ արի դու ինքդ քեզ ազատիր: Էրազդ ի՞նչ էր, ասա:

Տղեն ասում ա. — Ասիլ չեմ:

Ասում ա. — Ասա ազատեմ, ֆորը չգցեմ:

Թե. — Չէ, ասիլ չեմ:

Եդ տանում են, ֆորը գցում: Տղեն գնում ա աղջկա հետ ուտում, խմում, ուրախանում են, մին էլ օրերից մի օր, մի ուրիշ թագավոր էս թագավորին իրեք հատ ձի ա դարգում մի չափսի, մի քաշի, մի ռանգի, բայց մինը՝ մի տարեկան, մինը՝ երկու տարեկան, մինը՝ իրեք տարեկան: Պահանջում ա, որ ջգեն, թե որը քանի տարեկան ա: Թագավորն էլի կանչում ա իրա իմաստուններին, շրջում ա երգիրը, ոչ ոք չի կարում ջուկի:

Թագավորի աղջիկն ասում ա. — Այ տղա, թագավորը շատ մարդկանց հետ կալաքին ոչ ջկեն էդ ձիանքը, բայց ես գիտեմ էլի քեզ կանչել դի, կերթաս էդ ձիանքը մի սաղ օր սոված կպահես: Էդ գիշերն էլ չես բան տա: Ըռավորը ձիանքը կտանես քու ձեռով ջուր կտաս, կրերես ամենքի ախոռումը մի իյան գաղի կածես: Որը որ գարին իյառնեց, կեղավ ոչ ուրեմն մի տարեկան ա, որը որ խառնեց, իյառնեց ու կերավ՝ երկու տարեկան ա, որը որ հասնելուն պես վրեն էլավ, կեղավ, նա իրեք տարեկան ա:

Թագավորը կանչում ա տղին, ասում ա. — Հաը նաղըլ, կամ պտի ջկես, կամ գլուխդ տալ դիմ:

Տղեն ասում ա. — Թագավորն ապրած կենա, ինձ մի օր ժամանակ տուր ձիանքի մոտը մնամ:

Թագավորն ասում ա. — Քեզ էրկու օր եմ ժամանակ տալի:

Տղեն ձիանքին մի սուղկա սոված ա պահում, լիսանում ա, տանում ա ըռավորը ջուր ա տալի, բերում ա ամենքի աղաքումը մի իյան գաղի ա ածում: Էդ գարին, որ ածում ա, քուռակը որ գարու սովոր չի, իյառնում ա, չի ուտում, էն մինը սովոր ա, իյառնում ա էդ գարին ու մի քիչ ուտում, իսկ որը որ իրեք տարեկան ա՝ վրեն ա ըլում, ազատ ուտում:

Ասում ա. — Էս մի տարեկան ա, էս՝ երկու տարեկան ա, էս՝ իրեք:

Թագավորը էդ մի հըկառակորդ թագավորից էլ ազատվեց: Էդ թագավորի մարդիկ վի կացան, քաշվեցին, գնացին: Թագավորը կանչում ա տղին, ասում ա. — Այ տղա, դու ինձ իմ հարևան երկու թագավորների թշնամությունից ազատեցիր, էրազդ էլ ասա, ես քեզ ազատեմ, ֆորը չգցեմ:

Տղեն ասում ա. — Չէ, թագավորն ապրած կենա, չեմ ասի:

Տղին եղ տանում են, գցում ֆորը: Թագավորը տենում ա, որ տղեն ֆորումը օրեց օր չաղացել, կտաղել, դառել ա մի գըրդ տղա: Տղեն թագավորի աղջկա հետ բարեբար ուտում ա, իրան հմար ապրում ա:

Շատ ժամանակ ա անց կենում, քիչ ա անց կենում, հարևան թագավորներից մեկը էլի մարդ ա դրգում իրեք հատ խնձոր հետը: Խնձորներից մինը մի տարու խնձոր ա, մինը՝ երկու տարու խնձոր ա, մինը՝ իրեք տարու ա, ասում ա. «Պտի ջկես, թե էս խնձորների որն ա՝ մի տարու, որն ա՝ երկու տարու, որն ա՝ իրեք տարու»: Թագավորն էլի մարդ ա դրգում էս կողմ, են կողմ, ամեն տեսակ մարդ էլ կանչում են, կարում չեն ջկեն: Վերջը եղ տղին ա կանչում: Աղջիկը տղին ասած ա ըլում. «Էս անգամ կասես՝ գիտեմ ոչ»: Տղին ըբրում են, գցում ֆորը: Հարևան թագավորն էլ իյաբար ա անում, թե. «Պտի գդնուս, յա պտի գորք քաշեմ, գամ քու վրեն»: Վերջը, որ թագավորի տեղը շատ ա նեղանում, հայտարարում ա, թե՛ ով որ գդավ էդ խնձորների տաղիքը, իմ

աղջիկը կտամ նրան: Շատ են գալիս, գնում. գտնող չի ըլում: Թագավորի աղջիկը տղին ասում ա. — Իմ հերը սհենց, սհենց խոստում ա տվել, համա կեթաս ի՞նչ կասես. «Թագավորը ապրած կենա, եթե խոստումը ճիշտ ա, ես կգտնեմ, եթե խաբել ղիս, ես գդնել չիմ»:

Թագավորն ասում ա. — Իմ խոստումը խոստում ա, ով էդ խնձորների տարիքը որոշեց, ես իմ աղջիկը տալու եմ նրան:

Տղեն ասում ա. — Թագավորն ապրած կենա, ինձ մի օր ժամանակ տուր, ես կգտնեմ:

Թագավորը օրը տալիս ա, տղին բերում են էլ եդ գցում հորը: Աղջիկը տղին ասում ա. — Կեթաս էդ խնձորները կենդ-կենդ կգցես ջուրը, որը կերթա տակը՝ իրեք տարեկան ա, որը ջրֆորի կես տեղը կմնա՝ էրկու տարեկան ա, որը ըրեսին կմնա՝ մի տարեկան ա:

Տղեն տհենց էլ անում ա, գնում ա խնձորները ջրֆորը գցում, ասում ա. — Էս՝ իրեք տարեկան ա, էս՝ էրկու տարեկան ա, էս էլ՝ մի տարեկան ա:

Հարևան թագավորի կողմից էկած մարդիկ ասում են. — Ճիշտ ա:

Թագավորը աղջկան հանում ա թաքցրած տեղից, օխտը օր, օխտը զիշեը հըրսանիք անում, տանում տղին թագավորական թախտին նստացնում:

Տղի էրազը կատարվում ա:

35. ՇԱԽՈՂԻ ՇԱԽԱՔԱՏԻ

Կար չկալ մի թագավոր, անունը՝ Շախոլի Շախաբատի: Շախոլի Շախաբատին եռեսուն-ինը կին ա ունենում, մինն էլ ուզիլ տի, որ քառասունը թմամի: Դրան ուներ վագիր, անունը՝ Չուղուշլեյլի: Թագավորի եռեսունինը կնգա ամենագլխավորը աչքը գցեց, որ Չուղուշլեյլիի հետ միանա:

— Չուղուշլեյլի, թե ինձ միանաս ոչ, թագավորին ասիլ տիմ՝ գլուխդ տա:

Արի որ օրենք էր, որ թագավորը առաջի օրերը մարդկանց գլուխ տա: Կինը էկավ թա-

գավորին ասավ. — Քու թագավորությունը վերջանա, դու ինչ թագավոր ես, որ քու Չուղուշլեյլին ինձ ոտ գցեց:

Թագավորը կանչեց վեզիրին, ասավ. — Շան որդի, սհե բան ես արե. արի առ էս իրեք մանեթ փողը, կտանես ինձ հմա մի հատ դոչ կառնես, փողն էլ ետ կբերես, դոչն էլ սաղ ետ կբերես, դոչից էլ էրկու շամփուր միս կբերես, թե չէ՝ էլ երգրումս ոտ չկոխես:

Վագիրը գլուխն առավ, հայդա, ճամփա ընգավ. գնաց: Գնալիս մի նախրչի մարդ քաղքիցը գներ, ընգավ հետը, գնաց: Էդ մարդը հետը գրից անում չի:

— Այ մարդ, — ասավ վեզիրը, — արի մաղ-ղիվան գցենք, մարդիվանով գնանք, բալքի թեզ գնանք:

Էդ մարդը խոսաց ոչ: Էկան մի մեյնով անց կացան, ասավ. — Այ մարդ, արի ամենքս մի հնգեր գտնենք, վի կենանք, գնանք:

Վի կացավ խանչալը հանեց, ծառի ճուղքը կտրեց, մինը տվուց էդ մարդին, մինն ինքը վի կալավ. Ասարը անցնիլիս եղան, օխտը սուրու ոչխար կա, էդ օխտը սուրու ոչխարի շունը էկավ ու դրանց չորսի կուռը փաթվեց:

— Այ մարդ, թիկունքդ թիկունքիս դեմ արա, մուղայիթ կաց, մեզ շունն ուտիլ տի:

Չորանն ընդեյան ձեն ա տալի. — Քա տվեք, շներին տվեք, վախիլ միք, վախիլ միք, չուրի հասնիմ:

Շունը փաթվել ա, կարըն չեն ագատվեն, ոնց որ չորանը հասավ, դրանց ագատեց:

Մի քիչ որ գնացին, մի հատ ջուր կար:

Այ մարդ, — ասավ. — արի ըստի մինս կարմունջ ըլնինք, մընիս անցկացնինք, վոռվը անց կենանք: Էդ մարդը էլ եդ չհասկացավ: Վի կացան, ոտներուն հանեցին, ջուրն անց կացան, գնացին էդ նախրչու գեղի դրաղը:

— Այ մարդ, — ասավ, — արի ըստի թեթևանանք, հանգստանանք, նոր գնանք:

Վի կացան, որ գնան, նախրչին ասավ. — Այ տղա, իրար հետ սաղ օրը էկել ենք, էս գիշեր դոնախացու չունենք, խնորում եմ ինձ դոնախ անես, արի, գնանք:

Վազիրին վր կալավ. գնաց տեհավ մի գետնափոր տունն ա, խոռոմ, ասավ. — Այ մարդ, հազա, նոր տուն մտի:

— Այ տղա, իմ սովորական տունն ա, ինչ հազամ, նոր մտնեմ:

Տուն մտնելն ու հազալը մին էլավ. աղջիկը գլուխը լվաներ, սիւն արավ որ ծածկի հա, գլուխը դիբավ սնովր գլուխը պատռեց: Գլուխը փթաթեց, էկավ. նստեց, դես զրից, դեն զրից. մտիկ արավ. ասավ. — Դիվոր, ամեն բան լավն ա, լավն ա, բայց բուխարին ծուռն ա:

Աղջիկն էլ ընդեյան ասավ. — Բուխարու ծռությանը մի մտիկ անի, ծուխը դուզն ա քաշում:

— Այսինքն աղջկա աչքերը ծուռն ա:

Վազիրն ասավ. «Մի կերպ իմ դարդին դարման արավ էս աղջիկն ա, արավ ոչ, ոչ ոք կարա ոչ անի»:

Դերն ա հմի պատմում աղջկանը. — Աղջիկ ջան, էս մարդը սաղսաղ ա, զիժ ա, զիդամ ոչ. էկել ենք ճամբին ինձ ասում ա. «Այ տղա, արի նարգիվանը դնենք, նարգիվանի վրովը գնանք»:

Աղջիկն ասում ա. — Այ հեր, բա դա շաշ ա, շաշը դուն ես. ասել ա զրիզ արա, զըցով գնանք ճամբեն կրճանա, դու հըսկացել չես:

Վազիրը մատը կծեց, ասավ՝ իմ դարդին դարման կանի:

— Էկանք ռաստ էղանք մերուն, ասավ՝ արի հնգեր կտրենք, գնանք: Փետը կտրուց, մինը ինձ տվուց, մինը՝ իրան, էկանք, շները վրա դառան, մենք անց կացանք:

— Բա այ հեր, էս մարդը սարսաղ ա, ամեն մեկը մի փետ վերուք, շուն, չորան ռաստ կգա, շները ձեզ կուտեն, սաղսաղը դու էս եդե, հըսկացել չես:

— Այ աղջիկ ջան, էկանք ջրի դրարը, ինձ ասում ա. «Արի կարմունջ ըլնենք, մինս մնի վրով անց կենանք»:

— Է՛, այ հեր, բա հսկացել չե՞ս, քեզ ինչ ասեմ: Ասել ա՝ մինս ոտներս հանենք, մնիս շլակենք անց կենանք:

— Դա՛: Այ աղջի, էկանք տուն ինձ ասում ա հազա, նոր մտի:

— Այ հեր, մա շաշ չի ըլել. բա որ հազել իր իմ գլուխը կպատռե՞ր:

— Ապրես, ուրեմն էս մարդը լավն ա ըլել, ես չեմ հըսկացել:

Վազիրը սկսեց աղջկան իրա պատմութիւնն էնելը, ասավ. — Աղջի ջան, ես հավատում եմ, որ իմ դարդին դարման անողը դու ես. Շահողլի Շահաբատին էս իրեք մանեթ փողը տվել ա, ասել ա՝ մի դոչ կառնես, դոչը կբերես, էս փողը եդ կբերես, դոչիցն էլ էրկու շամփուր իյրոված կբերես:

— Դը, քու տունը քանդվի ոչ, դրանից էլ հեշտ բա՞ն:

— Ի՞նչ կարամ անեմ:

— Ինչ կանե՞ս. առ էս պասվենդին, սրան չոբանը մնին տասը դոչ ա տալի, չեմ տալի. էս պասվենդին ջեթը դիր, գնա, հրեն չոբանը, տենու՞մ ես, գնա նրան ասա, դոչ ունի՞ս ծախու: Կասի՝ հա: Ինչ որ ուզի, դաստի ձեռդ ծոցդ տար պասվենդու ծեթը շանց տու, մա դայիմ կկաչի, դայիմ որ կկաչի, կասես տասը դոչ: Տասը դոչը կբերես, մինը քեզ կտամ, կասեմ՝ ինչ կանես, էն մնացողը՝ ինձ հմա:

Վազիրը գնաց, թե. — Բաղիաչողում, այ չոբան:

— Այ սաղ ըլես, րաբով էկար:

— Այ չոբան, դո՞չ ունիս ծախու:

— Ունիմ:

— Ի՞նչ տամ, զինն ի՞նչ ա:

— Տաս մանեթ, տասնհինգ մանեթ:

Էլ իյոսաց ոչ, ձեռը տարավ. պասվենդիի տուտը տեհավ թե չէ, չոբանը վրա էլավ, որ փախցներ:

— Այ մարդ, հո թալան չի, փող եմ բարըշել, առ քու փողը, ի՞նչ ես ուզում:

— Զէ, — ասավ չոբանը, — դրան ի՞նչ տամ, տաս դոչ տամ, տուր:

Տվուց, դոչերն առավ, ջզուց, աղաքն արավ, բերեց դրա տունը:

Աղջիկն ասավ. — Առ էս դոչը, կտանես դոչի պոզիցը կկապես իրեք մանեթը, դոչը կտանես

կկռտես, ամեն մի պլորը կկտորես, շամփուր կանես, խորովածը ձեռիդ կբռնես, դոչն էլ եղնեն կտանես, կտաս թագավորին, նա քեզ կագասի:

Դոչը վի կալավ, բերուց: Թագավորի աղաքը գնաց շամփուրը ձեռին, սաղ դոչն աղաքն արած, փողն էլ դոչի պոզից կապած:

— Այ Չուղուշլեյլի, քյոփոդլի, էս ով շանց ատվե, նրան պտի ինձ բերես:

Վագիրը գնաց էլ աղջկա նկարը քաշեց ու բերուց: Թագավորը նկարին մտիկ արավ. ասավ. — Քոռ ա, շիլ ա, պետք ա բերես:

Թագավորը հրաման տվուց քեթեվանի բերել, նշան սարքել, հագուստ, ռան սարքել, տվուց վագիրին դարձեց:

Աղջիկն ասավ. — Թագավորն ո՞վ, ես՝ ո՞վ, էս չեմ կարա գնամ, մինչև ինքը չգա:

Էկավ թագավորն իրա ոտքով. իրա գորքով, աղջկան բերուց հանեց քառասուն հարկի գլուխ: Ըրիգունը էկավ. թագավորն ասավ. — Աղջի, էս քեզ կտամ մի դադր շուն, մի մաղեան ձի, քեզանե կուզեմ ազափ աղջիկ ըլիս, բայց՝ մի տղա, շանիցը՝ մի ջուխտ թուլա, ծրուցը՝ մի քուռակ: Ես գընըմ եմ խրիդ տասը տարով:

Աղջիկն ասավ. — Թագավորն ապրած կենա, ըտթավուր բան ըլել չի:

Թագավորը թե. — Շատ լավ էլ կըլի, ըլիլ չէ՝ կանես, կանես, անիլ չես՝ գլուխդ կտամ:

Թագավորը վո կացավ, ձին վի կալավ, շունը վի կալավ դվալով. գնաց Ալեքսոլ: Թռ գնա:

Աղջիկը միտք արավ, միտք, իմացավ՝ թագավորը որ թավլումը վեղ էկավ, գնաց թավլաչուն մի գումար տվուց, ձին ձիու տակը քաշեց, շունը՝ շան: Ինքը գնաց, տեհավ թագավորը նստած նարդի իաղ աներ: Ասավ. — Թագավոր, արի նարդի իաղ անենք:

Թե. — Ինչո՞վ իաղ անենք:

— Ես մի ազաբ աղջկանով, դու ընչո՞վ ես իաղ անըմ:

— Ինչով կուզես ընդով:

Ակսեցին նարդի իաղ անիլ: Ինչքան խաղըմ են, աղջիկը տանըմ ա թագավորին: Վերջը աղջիկը բոշ արավ. տարավ: Քնելու ժամանակը գնաց շորերը փոխեց, ուրիշ աղջկա ֆորմ մտավ. էկավ թագավորի ծոցը մտավ. Ըռավոդը գիշերհանա թագավորին թողուց, գնաց իրա ձին էլ, շանն էլ վի կալավ ու գնաց:

Էկավ ինձը ամիս թմամվեց, իրան էրեխա էլավ, ձիուն՝ քուռակ, շունն էլ էրկու թուլա ռիորուց: Էկավ տասը տարին թըմամվեց, թագավորը էկավ: Որ էկավ, ասին. — Թագավորը գալի՞ս ա, գալի՞ս ա:

Աղջիկը ըրեխուն չերքեզի ֆորմը հագցուց, իրան ձիուցը վերցրած քուռակին նստուց, շան թուլեքին էլ կապեց, վի կալան, տարան թագավորի աղաքը: Ասավ. — Թագավորն ապրած կենա, էս քու ըրեխեն, էս քու ձին, էս քու շան թուլեքը:

Թագավորը ձին կաղնեցուց, ըրեխեն դրուց իրա քեթեվանը, վի կալան, էկան: Էկան տուն, կանչեց աղջկանն, ասավ. — Դու ի՞նչ արեցիր, ո՞նց արեցիր, որ ինձանե ըրեխա էլավ, ձիուցը՝ քուռակ, շնիցս էլ թուլեք:

Ասավ. — Հանի քու ստորագրությունը որ տվեցիր այսինչ թավլումը, քու կշտին ո՞վ էր քնած, քու ձիու կշտին՝ ո՞վ, քու շան կշտին՝ ո՞վ:

Հանեց թագավորը իրա ծոցիցը ստորագրությունը, տեսավ որ ճիշտ ա ասըմ:

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնիք ձեր մուրազին:

36. ԻՐԵՔ ԳՈՂԵՐՆ ՈՒ ԹՍԳԱՎՈՐԸ

Աի թագավորության մեջ շատ գողություն ա ըլում, էն տեղը հասնում, որ ժողովուրդը պահանջում ա թե. «Թագավորն ապրած կենա, խի՞ չես առաջն առնում»: Թագավորն ինչքան դարավուլ ա նշանակում, կարաց ոչ դրանց առաջն առնի: Գարը կտրում ա, ինքը հին շոր ա հագնում, գիշերով դուրս ա գալի, մտնում ա

ստանցեն, վագոնների տակը, տեհավ իրան
նման մի իրեք հոգի էլ ման են գալի, գնաց, մո-
տացավ. ասավ. — Ես ոնց որ տենում եմ, դուք
էլ ինձ նման ջեբ կտրող էք, ինձ էլ ձեզ ընկեր
արեք:

Դրանց մեծը ասավ. — Իսկ ի՞նչ հունար
ունես դու:

Սա թե. — Ոչ մի հունար չունեմ, գող եմ:

Ասին. — Դու մեզ հնգեր չես ուլիլ, պետք է մի
հունար ունենաս:

Թագավորն ասավ դրանց մենծին. — Դուն
ի՞նչ հունար ունես:

Ասավ. — Ես եմ հունարն ունեմ, որ գիշերով
մի տեղից, որ գնալու լինենք, շունը որ հաչի,
ես կասեմ, թե շունն ինչ ա ասում:

Են մեկին ասավ. — Դու ի՞նչ հունար ունես:

Ասավ. — Ես էն հունարն ունեմ, որ յոթ րա-
նիքով փակած ըլի, ձեռիս վրեն բաց կըլի:

Էն մյուսին հարցրեց. — Դու ի՞նչ հունար
ունես:

— Ես որ գիշերվա մեջ մի տեղով գնալով
ըլենք, մի շփթուն ոտնաձեն լսես, ըռավողը,
որ լիսանա, ես կասեմ, թե եմ շփթունը ունմ եր:

Թագավորն ասում ա. — Ես հունար չունեմ,
բայց որ ձեզ կախաղան հանելիս ըլեն, ես
կարող եմ ագատել:

Հնգերացրին: Ասին. — Աեզ էղ ա պետք:

— Ի՞նչ պաի անենք:

Աենձն ասավ. — Պոի գնանք, էս զիշեր թա-
գավորի իազինեն կտրենք:

Գնացին: Առտեցան թագավորի պալատին,
շունը հաչեց: Կաղնեցին:

Ասին. — Շունը ի՞նչ ա ասում:

Ասավ. — Ասում ա. — Էղ ձեր հետի նոր
հնգերը թագավորն ա:

— Է, — ասին, — թագավորը րան ու գործ
չունի, որ գա ջեբզիրություն անի:

Էլի շունը հաչեց, չհավատացին: Մեկել
հնգերը իազինի դռանը ձեռը տալով. դռները
բաց արավ: Ներս մտան, ինչքան կըացան շա-
կեցին, գողացան, գնացին, չորս տեղ բաժա-
նեցին ու պայմանավորվեցին, որ չորսն էլ
իրանց փայնին տանեն տուն, չորս էլ

հավաքվեն ըստե, որ ուրիշ գործի գնան: Էն,
ինչ իրեք հնգերներն են. գնում էն իրանց նշան
արած տեղը, են ինչ թագավորն ա, գնում ա
պալատը, հրաման ա տալի, որ գողերը այսինչ
տեղն են՝ գնացեք, բռնեք: Գալիս են, շրջա-
պատում են դռանց, բռնում:

Թագավորը հրամայում ա. — Կախաղան
պատրաստեք, ըռավողը դրանց կախել պոի
տամ, իրանց էլ տարեք, հսկեցեք վրները:

Թագավորի հրամանը լսում են, ամբողջ
ժողովուրդը հըվաքվում ա կախաղանի տեղը,
իսկ թագավորը մի պառավ կնգա շոր ա հագ-
նում, գալիս ա, ասում ա. — Ո՞րն են գողերը:

Ասում են. — Հեն են:

Առտենում ա, ասում ա. — Ափսոս երիտա-
սարդներ, որ ձեզ կախաղան պոի բարձրաց-
նեն, ձեր մեղքը ո՞րն ա:

Հնգերներից մեկը ասում ա. — Էն ա, որ քեզ
նման շեթանը գշերով մեզ հնգեր դարձավ.

Թագավորն ասում ա. «Ըհը, էս էլ սրա հու-
նարն ա»: Գնում ա, բարձրանում ա կախաղա-
նի տախտակի վրեն, ասում ա. — Դուք ձեր հու-
նարը ցույց տվիք, ես էլ իմն եմ անում, ձեզ
ազատում եմ կախաղանից:

Թագավորը գողերին տանում ա պալատ,
ամեն մեկին մեծ կարողություն ա տալի, գործի
ա դնում, ասում ա. — Գնացեք ձեզ հըմար հան-
զիստ ապրեք, էլ գողություն մի արեք:

Դբանք էլ թագավորի խազինից տարած
հարստությունը հետ են բերում, աշխատում
են, հալալ քրտինքով ապրում:

Երկնքից իրեք խնձոր ընկավ, մեկը՝
ասոզին, մեկը՝ լսոզին, մեկն էլ՝ արդար թա-
գավորին:

37. ԹԱԳԱՎՈՐՆ ՈՒ ՀՄԼԵՎՈՐԸ

Աի թագավորի նազիր-վեզիրը, դբրված
մարդ ա ըլում: Թագավորն ասում ա. — Ես
դրան տանեմ ռտով ճանապարհ, տեսնամ հլա
ինչ ա դառնում:

Շատ են գնում, քիչ են գնում, տեսնում են

մի պառաւ մարդ, հալեվոր, տատրի՞ ա անում, վառելու համար: Թագավորը էդ հալեվորին ասում ա. — Հալեվոր, ուշացել ես:

Հալեվորն ասում ա. — Ուշացել չեմ, տարել եմ:

Թագավորն ասում ա. — Սարերը ծնել ա:

Հալեվորն ասում ա. — Փեշերիցը հետ:

Թագավորն ասում ա. — Հալեվոր, երկուսդ իրեք ա դառն:

Հալեվորն ասում ա. — Շատ վաղ:

Թագավորն ասում ա. — Հալեվոր, թեփում փետռել գիդե՞ս:

Պատասխանում ա. — Շատ լավ:

Թագավորն ու վեզիրը գնում են պալատ: Թագավորն ասում ա նազիր-վազիրին. — Գնա հալեվորից իմացի իմ հարցերի և նրա պատասխանների նշանակությունը:

Նազիր-վեզիրը գնում ա թագավորի մոտ, ոսկի վերցնում ու ճանապարհ ա ընկնում: Գնում, հասնում ա հալեվորին, ասում ա. — Ի՞նչ հարցրեց քեզ թագավորը: Դու ի՞նչ պատասխան տվիր, հալեվոր:

Հալեվորն ասում ա. — Թագավորը ասեց՝ ուշացել ես, ուզեց ասի, որ ուշ ես հըսանիք ըլել, էրեխա չունես, որ գա տատրի անի, տանի վառեք: Ես ասեցի՝ չէ տարել եմ, ուզեցի ասեի իմս աղջիկ ա, մարթի եմ տարել:

Նազիր-վեզիրն ասում ա. — Երկիրդ հարցն ի՞նչ էր:

Հալեվորն ասում ա. — Գնա էրկու ոսկի բի, ասեմ:

Նազիր-վեզիրը էրկու ոսկի ա տալի: Նազիր-վեզիրին ասում ա. — Թագավորն ասեց՝ սարերը ծնել ա, ուզեց ասի մազերդ սպիտակել ա, ես ասեցի՝ փեշերից հետ, ուզեցի ասի՝ միտքս տեղն ա:

Նազիր-վեզիրն ասում ա. — Բա էն ի՞նչ ասեց թագավորը, թե էրկուսդ իրեք ա դառն, դու էլ ասեցիր՝ շատ վաղ:

Հալեվորն ասում ա. — Հինգ ոսկի տու, ասեմ:

Նազիր-վեզիրը հինգ ոսկի ա տալի:

Ասում ա. — Թագավորն ասեց՝ սարիսլ ես ման գալի, էրկու ոտքդ իրեք ա դառնել:

Նազիրն ասում ա. — Թագավորն ի՞նչ ասեց՝ թեբում փետռել գիտես:

Հալեվորն ասում ա. — Տաս ոսկի տուր, ասեմ:

Նազիր-վեզիրն ասում ա. — Առ տասը ոսկի, ասա:

Հալեվորն ասում ա. — Թագավորն ասեց՝ թեբում փետռել գիտե՞ս, ես ասեցի՝ շատ լավ: Նա ուզեց ասի, սրանից ոսկի կարա՞ս պռկի, ես էլ ասեցի՝ շատ լավ, ու էդ ա ոսկիներդ թեբեցի, վեր կալա:

38. ԹԱԳԱՎՈՐԻ ԻՐԵՔ ԵՐԱՋԸ

Ժամանակին մի թագավոր ա ըլըմ: Օրերից մի օր նա էրագումը տենըմ ա, որ երգնքից մի աղվես ա քաշ ելած, կանչում ա պալատականներին, հայտարարում ա, ասում ա. «Ով գա էրագս մեկնաբանի, նրան մի կոտ գումար ոսկի կտամ»: Ամենքն էլ գնում են, մի աղքատի մինն էլ գընըմ ասըմ ա. «Գնամ հլա տենամ ինչ կա, յա մեկնաբանեմ՝ ոսկի կտա, յա, ինչ՝ թող գլուխս տա, էլի»:

Մի օձ ճամփին առաջն ա դուս գալի, ասըմ ա. — էդ ու՞ր ես գընըմ:

Ասըմ ա. — Գընըմ եմ մեկնաբանեմ թագավորի էրագը:

Օձը թե. — Ի՞նչ պտես մեկնաբանի:

— Եսիմ, մի բան կասեմ էլի. — Թե դուզ կըլի՝ լավ, թե դուզ չի ըլի՝ թող գլուխս տա:

— Որ ես ասեմ, թե ինչ տի ասես, ոսկու կեսը կբերես, կտա՞ս ինձ:

Ասում ա. — Հա:

Ասում ա. — Կեթաս կասես՝ քու երգումը իյաբեություն, սատանայություն, անշնորհություն պտի ըլիլ:

Մարդը գընըմ ա, թագավորին ճիշտ բացատրում ա էրագի գաղտնիքը, ոսկին առնըմ, էլ օձի կշտովը չի գալի, ուրիշ կոնով ա գընըմ:

* Չորացած փայտեր հավաքել (Մ.Ա.):

էդ անց ա կենըմ:

Թագավորն էլի մի էրագ ա տենըմ, երգնքից մի գել քաշ էլած, թե. «Ով գա մեկնաբանի, էրկու կոտ ոսկի կտամ»:

Էլի էդ մարդը գընըմ ա, օծը աղաքը դուս ա գալի, թե. — Էս ու՞ր ես գընըմ:

Թե. — Գընըմ եմ թագավորի էրագը մեկնաբանեմ:

Թե. — Ի՞նչ տես ասի:

Ասըմ ա. — Մի բան կասեմ էլի, թե դուզ կը՞լի լավ, թե դուզ ըլիլ չի թո գլուխս տա:

Օծն ասում ա. — Էն վախտը, որ էրագի գաղտնիքը քեզ ասի, ոսկու կեսը չբերիր, հմի որ ասեմ, կբերե՞ս:

— Հա, — ասում ա, — անպայման կբերեմ:

Օծն ասըմ ա. — Կգնաս, կասես պատե-րագմ պտի ըլիլ, նեղություն պտի ըլիլ, դժվարություն պտի ըլիլ, մեր ու մանուկ պտի ուրանան:

Աղքատը գնում ա, ասում ա, ոսկին առնըմ ա, դուս գալի, գընըմ, օծը եղնուցը հասնըմ ա, դա տալիս ա օծի պոչը կտրում:

Թագավորն էլ եդ քնում ա, մի էրագ ա տենըմ, որ երգնքիցը մի ալապստրակ ա քաշ էլած, հայտարարում ա, թե. «Ով որ գա, մեկնաբանի, էսքան ոսկի կտամ»: Էլ եդ էդ մարդը գընըմ ա, օծը աղաքն ա ըլնըմ. — Էդ ու՞ր ես գընըմ:

Ասըմ ա. — Գընըմ եմ թագավորի էրագը մեկնաբանեմ:

Թե. — Ի՞նչ տես ասիլ:

Ասում ա. — Եսիմ:

Ասում ա. — Դու էրկու անգամ ինձ իյա-րեցիր, հմի էրագի գաղտնիքը որ ասեմ, ոսկու կեսը կբերես, կտա՞ս:

Ասում ա, թե. — Հա:

Ասում ա. — Կգնաս կմեկնաբանես, որ եր-գրունդ իյաղաղություն պտի ըլլի, համեղաշ-խություն պտի ըլի, գելն ու գառը իրար հետ պտի արածեն, միություն պտի ըլի:

Մարդը գընըմ ա, մեկնաբանում ա էրագը, ոսկին առած եդ գալի, որ օծի փայը տա, օծն աղաքն ա դուս գալի, ասում ա. — Առաջին ան-

գամը աղվեսութոյն արիր իյաբեցիր, ուրիշ ճամբով գնացիր, երգրորդ անգամ գել դառար, տվիր պոչս կտրեցիր, հմի նապաստակ ես դառել, իյաղաղություն ես ուզում, ոսկին քեզ հալալ ըլի, տար:

39. ԳՈՂԸ ԵՎ ԹՍԳՄՎՈՐԻ ԱՂՋԻԿԸ

Ըլում ա չի ըլում մի թագավոր ա ըլում:

Էդ թագավորի երգրում գողություն ա պատահում: Թագավորը հրամայում ա գողին գտնեն, բերեն: Գտնըմ, բերում են, մի տղա ա ըլում: Թագավորը կարգադրում ա, որ էդ տղին գցեն դագանոցը: Տղեն քնում ա դագանոցու-մը, ըռավողը վեր ա կենում, տենում ա թագա-վորի աղջիկը մի նհենց լավ ձենով լաց ա ըլում, որ էլ չեմ կարա ասեմ:

Տղեն ասում ա. — Աղջի, ինչի՞ ես լաց ըլում:

Աղջիկը թե. — Այ տղա, դու հո իմ դարդին դարման անող չես, լաց եմ ըլում, ինձ հմար եմ լաց ըլում:

Տղեն թե. — Բա որ դարման անեմ:

— Իմ դարդին դու ո՞նց դարման կանես, սաղ գիտունները չեն կաղեցել, դու պտի իմ դարդին դարման անես:

— Կանեմ, մենակ թե ինձ էս դագանոցից հանել տուր, կանեմ:

Աղջիկը հրամայում ա, տղին դագանոցից հանում են, բերում են աղջկա մոտը: Աղջիկն ասում ա. — Իմ դարդն էն ա, որ հարևան թագա-վորը հորս էրկու դանակ ա դաղգել, որ գտնի, թե որն ա ուստեն շինել, որը՝ աշկերտը, երկու դանակը մե չափի, մե կապսի, մե քաշի: Ում շհանց ենք տալի, ոչ ոք գտնում չի:

Տղեն ասում ա. — Ես կասեմ: Գնա պղինձը ջուր ածա, դիր կըակին, թող եռա, էրկու դա-նակն էլ գցի մեջը, որը որ տակն անի, են ուստեն ա շինել, մուխը շատ ա աղել, լավ ա շինել, իսկ որը ջրի երես կմնա աշկերտն ա շի-նել, ծուխը բոշ արած կըլի:

Թագավորի աղջիկը ահե անում ա, տենում ա՝ ծիշտ ա: Դանակներից մեկի պոչին ուստեն,

մեկի պոչին աշկերտ գրում, դրգում ա թագավորին: Թագավորն ասում ա. — Գտել ա, ճիշտ ա:

Թագավորն ասում ա. — Մի բան էլ հարցնեմ, թե գտավ, ուրեմն ինձանից ուժեղ թագավոր ա:

Ասում ա. — Պտի քու ժողովողովը երկնքի աստղերը հմբարես ու գտնես, թե երգնքումը ինչքան աստղեր կան, թե չգտնես, գալիս եմ աղջիկըդ խլեմ:

Տղեն հլա մի օթախում պահ ա տրված: Տղեն լսում ա, որ աղջիկը լաց ա ըլում: Չեն ա տալի աղջկան. — Էլի խի՞ էս լաց ըլում, ասա դարդիդ դարման անեմ:

— Էս մի դարդիս էլ որ դարման անես, — ասում ա աղջիկը. — ես քեզ կառնեմ, ոչ թե քեզ ազատել կտամ: Դարդըս էս ա. էս ինչ թագավորը գրել ա հորս, որ երգնքի աստղերը հմբարենք ու գրենք իրան:

Տղեն ասում ա. — Էդ հեշտ ա, գնա մի հատ անասուն րի:

Աղջիկը մի հատ անասուն ա րեղել տալի, տղեն անասունի անդամի շուրջից մագերը փնջում ա, ասում ա. — Առեք, դարգեք թագավորին, ասեք ըստե էնքան մագ կա, ինչքան երգնքումը աստղ կա, համբարե, տես:

Թագավորն ասում ա. — Քո սովոացնողի աչքը դուս գա, էս մագը կհամբարվո՞:

— Բա որ էդ մագը համբըրվոլ չի, աստղերը կհամբըրվո՞:

Թագավորն ասում ա. — Ծիշտ ա, դու հաղթեցիր:

Ու հանգիստ ա թողնում հարևան թագավորին: Թագավորի աղջիկն էլ իրա խոսքի տերն ա ըլում, պսակվում ա տղի հետ: Յոթ օր, յոթ գիշեր հարսանիք են անում, ուտում, խմում, ուրախանում:

Երկնքից իրեք խնձոր ա վեր ընգնում, մեկը ասողին, մեկը լսողին, մեկելն էլ՝ էդ երկրի ժողովողին:

Մի մարդ ճանապարհ գնալիս ա ըլում, գնում ա, տեսնում, որ մի մարդ հրե նստած իրեք կուշկա հող կիտած:

Ասում ա. — Այ մարդ. էս ի՞նչ հողեր ա, որ ըսենց կիտուկ-կիտուկ ես արել:

Ասում ա. — Էս մի՞նն են հողերն ա, որ կնիկդ ուրիշի մալաթ չգնա, էս մի՞նն են հողն ա, որ ծիդ ուրիշի, քավորիդ էլ չտաս, էս մի՞նն էլ են հողն ա, որ փողիդ քիսեն ուրիշի չտաս:

Էդ մարդը գնում ա տուն, շատ ա կենում, քիչ ա կենում, դրա գաքանջը գալիս ա, ասում ա. — Տղիս հրսանիք եմ անում, աղջկաս տուր:

Ասում ա. — Կտամ, այ մեր, րայց իրեք օրով, ոչ ավել:

— Չէ, — ասում ա, — պետք ա մի ամիս տաս, մաքրել, թափել կա, թիտել ունենք, էփել ունենք, կրկատել ունենք, որ հրսանիք ենք անում, ախր:

— Լավ, — ասում ա, — դե տար:

Տանում ա, ու էդ կնիկը էլ չի գալի:

Օրի մի օր էդ մարդը ուրիշ հագուստ ա հագնում, որպես ուրիշ մարդ, գնում ա դրանց տուն: Չեն ճանաչում: Կնգա մորն ու ախպորն ասում ա. — Էս գիշեր թռչեք աղջկադ, քոռոջ կշտին քնեմ, ծեզ էսքան ոսկի կտամ:

Մեր ու տղա խոսք են անում, տղեն ասում ա. — Այ մեր, գիշեր ա, օքմին չկա, բան չկա, տանք էլի:

Քվորը տալիս ա, քնում ա հետը, ոսկին առնում ա: Տեսնում ա, ոսկին ախպերը որդի դրավ: Գիշերվա մի վախտը վեր ա կենում, էդ ոսկին էլ վեր առնում, իրա էրեխուն էլ շալակն առնում, գալիս ա իրան տունը: Գալիս ա տուն, տեսնում ա, քավորն էկել ա, ծին ա ուզում: Տալիս ա, բայց հետևում ա, տեսնում, որ ծին քուռակ ունեցավ, ու քավորը պահեց քուռակը: Գնում ա, քուռակը բերում, կապում ա իրա տանը:

Օրի մի օր գնում ա կնգան ասում ա. — Արի գնանք տուն, ընչի՞ չես գալի:

Ամիսը ծանաթ ա ըլում ու անցաթ ա ըլում:
Կնիկն ասում ա. — Ընչի՞ չեն գալի, ըրեխեն
մեռել ա, նրա հըմար գալիս չեն:

Մարդն ասում ա. — Լավ: Աեռել ա, թաղել
ես, որդի՞ ես թաղել, շանց տուր:

Ասում ա. — Այսինչ տերտերը, այսինչ գե-
րեզմանոցումը թաղեց, ուզու՞մ ես գնա
տերտերին հարցրու:

Գնում ա տերտերի մոտ, ասում ա. —
Տերտեր, ըսենց էրեխա թաղե՞լ ես:

— Թաղել եմ, — ասում ա տերտերը:

— Դե գնանք, գերեզմանը շանց տուր:

Գնում են, տերտերը գերեզմանը շանց ա
տալի, թաղաթ գերեզման արաթ:

— Դե, — ասում ա, — բաց:

Տերտերը ռաց ա անում: Պատանաթ, թա-
ղաթ:

— Դե, — ասում ա, — քանդի, տենամ
երեխին:

Պատանը բաց ա անում, տենում ա մի մեթ
մաքի մորթաթ մեջին: Ասում ա. — Բա էս
երեխա՞ ա, մաքի ա:

Կռվում ա, տերտերին ուշունց ա տալի,
կնգանը առնում ա, գալի տուն: Տան պատին
կախաթ ա ըլում ախպորից վերցրաթ ոսկու քսա-
կը: Կնգա ախպորն էլ ա տանում հետը, քա-
վորին էլ ա կանչում, որ մթամ մեռելի հաց տա:
Քավորին ասում ա. — Գնա ամբարից գինի բե:

Քավորը գնում ա, տենում քուռակը
կաւաթ:

«Վա՛յ էս են քուռակն ա, էս ի՞նչ ռան», —
ասում ա քավորը ու սուս ու փուս գինին
բերում ա, դնում սեղանին:

Կնգանն ա դրգում, թե. — Գնա, էն սենյակից
հաց բեր:

Գնում ա, տենում, որ ըրեխեն հրեն ընդե:

— Վա՛յ, էս ինչ զուլում էր: էս ինչ օյին էր:

Կնիգն էլ ընդեյան դուս չի գալի:

Ախպորն ասում ա. — Գնա, քվորդ ասա
դուս արի, շուտ արա:

Ախպերն էլ գնում ա, տենում իրա քիսան
ընդե կախաթ:

Ամենքն իրանց պատիժը առնում են:

41. ԸՄՇՆ ՈՒ ՆՐԱ ԻՄԱՍՏՈՒՆ ԱԽՊԵՐ ՓԱՅԼՈՒՆԸ

Ըլնում ա չի ըլնըմ մի շահ ա ըլնըմ, էս
շահին մի իմաստուն ախպեր ա ունենում:
Սրանք հալալ ախպերներ են, համա աստվաթ
մեկին բախտ ա տվել, մեկելին՝ իմաստություն:

Մի օր շահը իրան վեգիրի հետ գնալիս ա
ըլում, վեգիրն էլ տենում ա, շահի ախպեր
Փայլունը կարմունջի քոքին նստաթ իրեք
բլուր ավազ ա իրար գլխի կիտել: Շահին
ասըմ ա. — Շահ, հլա հարցնենք, էդ ի՞նչ ա
անըմ:

Շահն ասում ա. — Է հ, դամազ, — հիմարին
ինչ հարցնենք, էրեխու պես նստաթ հող ա
կիտում:

Համա վեգիրը գիտենում ա, որ դա իմաս-
տուն մարդ ա, ուզում ա դրա արարմունքի
իմաստն իմանա: Հետ ա գալի, հարցնում. — Էդ
ի՞նչ ես անում:

Փայլունը պատասխանում ա. — Էս առաջի
կուչկեն նրա գլխին, ով իրա գաղտնիքը
կնգանը կասի, երկիրդ կուչկա հողը նրա
գլխին, ով իրա հին թարեկամներին հեչ կանի,
թագա բարեկամներ կընտրի, երրորդն էլ նրա
գլխին, ով իրա թագավորին կամ գլխավորին
կհաշվի իրան հարազատն ու պաշտպանը:

Վեգիրը գալիս ա տուն, պտի ստուգի
ասաթների ճշտությունը: Ամեն մարդ իրա
օջախումը սեր ա ունենում, դրա խաթեր տուն
ա գալի, էս շահն էլ մի հատ կիտար ա
ունենում, շատ սիրելիս ա ըլում, սինոդից
առաջ էլ ա կիտարի հետ խաղում, սինոդից
հետո էլ: Աի օր գալիս ա, տենում կիտարը
չկա:

Վեգիրը կիտարին վեր ա ունում, տանում
ուրիշ գոմում պահըմ, մի ուրիշ կիտար բերում
են մորթում, ուտում, կնգանն ասում ա. — Էս
թագավորի կիտարն էր, աչքն էլ հանեցի:

Իրեք-չորս օրից եղը վեգիրը կնգանը մի
լավ ծեծում ա, կնիկն էլ գոռալեն դուս ա գալի,
ասըմ ա. — Հը... ես քու սհենցն ու մեռնը... էդ
էլ չըլլի թագավորի կիտարը բերիր կերա՛ր...

Թագավորին էլ ինչ էր պետքը, էդ մարդին վեր ունում, տանըմ կախաղանի տակ կայնացնում: Իրա հոր հին բարեկամներն բոլորը լաց են ըլում, իսկ նոր բարեկամները բոլորը ուրախանըմ: Դե, դրան մի վերջին խոսք էր հասնըմ, որ ասի: Վեզիրն էլ ասըմ ա. — Իմ վերջին խոսքն էն ա, որ թագավորի կիստարը են ֆլան դոմումն ա: Էս ամենը ես աղեցի, որ քու ախպոր կիտած իրեք բլուր ավագի գաղտնիքը պարզեն:

42. ԻՐԵՔ ՉԱՆԳ

Մի կաստիլավոր մարդ ճամբա գնալիս ա ըլում: Շատ ա գնում, քիչ ա գնում, տեսնում ա իրեք մարդու գանգ, գլուխները կտրած, դեն գցած: Մարդը մնում ա շշմած ու կասսիլներով խփում ա էդ գլխներին: Մի գլխին խփում ա, խփում, դնում ա են կռանը: Մի գլխին էլ խփում ա, կասսիլը դուս ա գալի: Երրորդ գլխին ա խփում, կասսիլը մնում ա միջին: Ճամբորդը մնում ա կիակի մեջ, ասում ա. «Իմ կասսիլը գլխի միջին կմնա, կասեն դու ես էս մարդու գլուխը կտրել: Ո՞նց անեն, ի՞նչ անեն»:

Կասսիլն ու գլուխները տանում ա իմաստունի մոտ ու պատմում ա, թե. — Էսենց ու Էսենց, թե կաստիլս թողնում եմ՝ ափսոսում եմ, թե չեմ թողնում՝ վախենում եմ ինձ շառ գա:

Իմաստունն ասում ա. — Տղա, մի վախենա, էս գլուխները են գլուխներն են, որ կան կենդանի մարդկանց վրա, մեկը են ա, որ ասածը չի մտնում, երկրորդը են գլուխն ա, որ էս կռանը տվել են, են կռանը դուս ա արել, երրորդն էլ են գլուխն ա, որ հասկացել ա, գլխումը մնացել ա:

43. ԿՅԱՆՔՈՒՄ ԿԱՐԵՎՈՐԸ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՆ Ս

Ըլնում ա չի ըլում մի թագավոր ա ըլնում: Էս թագավորը ուզում ա փոքձի իրա վեզիրին: Սսում ա. — Մենձ վեզիր, մարդկության հըմա

ի՞նչն ա կարևոր:

Թե. — Փողը:

— Հա՛..., — ասըմ ա, — Ինչքա՞ն ես ստանում ինձանից:

Թե. — Մմսական մի մանեթ:

Ասըմ ա. — Ամսական մեկի տեղակ հարուր մանեթ եմ տալի:

Վեզիրն էլ մինչև էդ օրը ոտով էր գալի պալատ, ըստիան եղը մի էշ ա առնըմ, ըստիան եղը իշով ա գալի: Օրերից մի օր գալու վախտը պալատի դռանը հանդիպում ա մի աղքատ ծերունու: Ծերունին ասըմ ա. — Մրքան ապրած կենա, աստված էլ ապրած կենա, աստված արքային կյանք տվեց, արքան էլ քեզ փող տվեց, մի մանեթի տեղակ հարիր մանեթ, դու էլ ինձ աղքատիս մի կոպեկ տուր:

Մի կոպեկ հանըմ ա, տալի, էքսի օրն էլ որ գալիս ա տենըմ, ասըմ ա. — Այ բիձա, եթե քեզ ամեն օր մի կոպեկ տամ, ես էլ քեզ նման աղքատ կմնամ:

Էդ խեղճ աղքատը իրան ճամբով ա գընըմ, վեզիրն էլ իրան գողժին ա գընըմ:

Մի օր էլ թագավորն ասըմ ա. — Վեզիր, գնանք ախոտի:

Գնում են դաշտը: Շատ են գնում, մութն ընգնում ա, մութը վրա ա հասնըմ, իրանք մի էսի վրա գընըմ են, գընըմ են, տենըմ՝ մի չորան, շները վրա են տալի, չորանը սաստում ա, շները հետ են կանգընըմ: Գընըմ են, բարև են տալի, չորանը բարևներուն առնըմ ա, ծիանուց վեր են գալի, ծիանը կապըմ ա, նստում են, ասում ա. — Ղոնախներ ջան, բարով էք էկե, ձեզ հըմա ոչխար մորթեն, հաց կերեք:

Թագավորը դռա ձեռը բռնում ա, ասըմ ա. — Էս ու՞մ ոչխարն ա:

Թե. — Թագավորի:

— Բա ո՞նց ես մորթում:

Թե. — Էս հոտի մեջին ունեն իրեք հատ մաքի, իմ ղոնախների հըմա մեկը կմորթեն:

Մեկը մորթում ա, ինքը մի կտոր ա ուտում, ասըմ ա. — Էս իմ ամբողջ կյանքումը օրթում ունեն կերած, որ իմ մորթած ապրանքից մի կտոր եմ ուտում:

Երկրորդ մաքին ա մորթում, մի կտոր էլ ա ուտըմ, երրորդ մաքին ա մորթում, մի կտոր էլ ա ուտում: Հետո ասըմ ա. — Էլ ուրիշ բան չկա դոնախներիս հըմա, ի՞նչ անեմ:

Թագավորն ասըմ ա. — Ոչինչ, մենք հագեցել ենք, մենակ անկողին տուր, քնենք:

Հովիվն էլ ունենում ա մի հատ յափնջի, իրա քնելու հըմա, մի ձեռք գողինք մոր հըմա: Մոր գողինքը տալիս ա էդ դոնախներին, ինքն էլ յափնջումը կլուվում ա, քընըմ:

Ըռավողը վեր են կենըմ, վեր են գալի իրանց գործին: Մի օր սինոդից հետո թագավորը վեզիրին հարցընըմ ա. — Վեզիր, մարդկության հըմա ի՞նչն ա կարևորը:

Սա թե. — Փողը:

Ասըմ ա. — Սխալվում ես, մարդկության հըմա կարևորը ռարութիւնն ա. եմ սարի չոբանին մենք ինչ էինք արել, որ իրեք հատ մաքի մորթեց:

44. ԲՅԱՀԱԼԸ

Մի քյաչալ ա ըլըմ, էդ քյաչալը իրա մորն ասըմ ա. — Գնա տերտերակնգանը ասա, որ ըրիգունը գալ տեմ ձեր տունը:

Մերն ասում ա. — Ես ոնց գնամ ասեմ, ամոթ ա:

Տղեն թե. — Գնա, ասա:

Քյաչալի մերը գընըմ ա: Տերտերակնիկը ասում ա. — Թող գա մեր մարաքը:

Ըրիգունը տերտերն ու տերտերակինը գնում են մարաքը, որ տեման դարման կա, թե հատել ա: Գընըմ են, տենում են քյաչալը մաղաքում ա:

Տերտերն ասում ա. — Էս ի՞նչ ռանի ես ըստի:

Քյաչալն ասում ա. — Տերտեր, մի հավ ենք թուխս դըել, հավը ձվի վըա կենում չի, ասել են՝ գնա տերտերի մարաքիցը դարման գողացի, որ թուխսը դաղմանի վրեն կենա:

Տերտերն ասում ա. — Օրշնած, դե դարմանը տար:

Քյաչալը թե. — Ես դարմանը գողանալ տեի,

որ դուք տեսնեիք ոչ, որ հավը դարմանի վրա կենար:

Ըռավողը լիսանում ա, քյաչալը մորն ասում ա. — Գնա տերտերակնգանը ասա, որ ինձ չրչարիլ մի: Քյաչալի մերը գընըմ ա, ասըմ ա: Տերտերակինը ասըմ ա. — Ըրիգունը թող գա մեր թագա շինած օթախը:

Քյաչալը ըրիգունը գալիս ա թագա շինած օթախը: Ըրիգունը տերտերն ու տերտերակինը գալիս են թագա շինած օթախը, տենըմ են քյաչալը ըստի: Տերտերն ասում ա. — Հմի էս ի՞նչ բանի ես:

Քյաչալը թե. — Հմի էլ էկել եմ, որ քո տների չափ ու ձևն անեմ, ըտենց տներ շինեմ:

Տերտերն ասում ա. — Օրշնած, թելի ծերը բռնի:

Հափ ու ձևն են անում, թելը տալիս ա քյաչալին, քյաչալը գընըմ ա:

Ըռավողը եդ մորը դրգում ա, ասըմ ա. — Գնա ասա՝ ինձ չրչարիլ մի:

Տերտերակինն ասում ա. — Ըրիգունը թող գա մեր տունը, թելի մի ծերը կկապեմ մեր դռան աջիցը, մի ծերն էլ կկապեմ իմ մատիցը, թելի ծերը կրռնի, կգա իմ կուշտը:

Քյաչալը ըրիգունը գընըմ ա, աջից թելը գտնըմ, թելի ծերիցը բռնըմ ա, գընըմ: Դու մի ասա, տերտերակինը թելի մի ծերը կապել ա աջիցը, մի ծերն էլ տերտերի անդերիցը: Տերտերը թե. — Էս ի՞նչ ա:

Քյաչալն ասում ա. — Տերտեր, խանութումը մարջ ենք կապել, թե դու մի սլոր ունես, թե ջուխտ:

Տերտերը թե. — Դե լավ, մի լավ տես:

Ըտուց եղը քյաչալը գընըմ, գալիս ա տերտերակնոջ մողը:

Քյաչալը հասնում ա իրա մուրագին, դուք էլ հասնեք ձեր մուրագին:

45. ՄՂԵՍՏ ՄԱՐԴԸ

Ճաճկուտը կարկուտը տարել ա, հաց չունեն, մի կնգա մարդ չոբան ա ըլել, սարիցը էկել ա: Կնիկն ասում ա. — Այ մարդ, խի՞ չես

գնում ըշիատանք ընես, վըրև, ներքև քեզ հը-
մար են գնը՞մ, ըրեխեքդ սովիցը կտորվեցին:

Մարդն ասում ա. — Այ կնիկ, փեշակ չունեմ,
դվո՞րը գնամ:

Կնիկն ասում ա. — Արի մի լավ քյանդիլ,
թոկ տամ, գնա թիլվիդ մշակութային արա:

— Լավ, — ասում ա մարդը, — տուր, գնամ:

Թոկը վերցնում ա, գնում ա ռազարումը
մշակների կշտին կաղնում ա: Սարիցը վեր
էկած, թուշը կարմիր, ջահել, շատ սիրուն
տղա: Մի աֆիցերի կնիկ գալիս ա, ասում ա. —
Մշակ, համեցեք էստեղ:

Տղան թե. — Ասա, իսանում, ի՞նչ ա:

Ասում ա. — Մի հատ ռուֆետ են առե, արի
տար մեր տուն:

— Լավ, — ասում ա. — գամ, իսանում:

Բուֆետը տանում ա տուն, շուշարանդումը
վեր դնում: Խանումը տուն ա մտնում ու դուս
չի գալի: Դռանը տալիս ա, ասում ա. — Խա-
նում, դուրս արի, հաշիվս տուր, գնամ է՛:

Դուռը որ ըաց ա անում, տեսնում ա
խանումը շորերը հանել ա, շապիկով պառկել
ա դիվանի վիս: Խանումն ասում ա. — Հա-
մեցեք, արի տուն:

Տղան թե. — Չէ, գնում են, հաշիվս տուր:

Ասում ա. — Արի, հաշիվդ տամ:

Հաշիվը տալիս ա, դարդակ ճամփու գնում:

Մշակը գնում ա, էլի ռազարումը կանգ-
նում: Տեսնում ա մարդ չկա, գնում ա իրանց
գյուղը:

Տանը կինը հարցնում ա. — Այ մարդ, ի՞նչ
ես ըրել:

Ասավ, — Ոչինչ էլ չեմ ըրել, խանումը ռու-
ֆետը շալակս տվավ, տարա շուշարանդումը
դրի, տուն մտավ խանումը, դուրս չեկավ,
դռանը տվի, խանումը ըսավ՝ ներս մտի, արի
հաշիվդ տամ, դարդակ ճամփու դրեց:

Կնիկը հարցնում ա. — Բա դրա մարդը
որդի՞ էր:

Ասում ա. — Աֆիցեր էր, լագերումն էր:

Կնիկն ասում ա. — Գնա ասա, որ ես քո
մարդն եմ, էլ ըստեղան ժաժ չեմ գալի:

Մարդը գնում ա խանումի մոտը, ասում ա.
— Ես քեզ ուզում եմ, էստեղ մնամ:

Խանումն ասում ա. — Վա՛յ գլխիդ մեռնեմ,
չորան-մշակ ջան. ինչ որ ուզում ես տամ.
մենակ թե շուտ գնա:

Վերցնում ա եինգ հարիր մանեթ փող
տալի, փողով ըերանը փակում ա, ճամփու
դնում: Աշակը գնում ա կնգա մոտ: Կնիկն
ասում ա. — Հը՞, ինչ արիր, ասածս արի՞ր:

Ասում ա. — Արի, այ կնիկ, գնացի, վախցրի,
մարթուց վախեցավ, հինգ հարյուր մանեթ
տվեց, հմի էս փողով մենք կարանք էրկու ամիս
ապրի, հլա չի հատնի:

Կնիկն ասում ա. — Բա՛, էլի ես: Տունդ
քանդվի ոչ, որ գլխի գցեի ոչ, ըա դու մի ըան
չհասկացար, որ անեիր:

46. ՄԱԼԱԳԵՑ (ՔԱՋ) ՎԱՆԿԱՆ

Մեր Ջալալուդդին մի մարդ կար Վանո
անունով, դրան մալադեց (ռուսերեն քաջ)
Վանկա էին ասում: Խզարչի մարդ էր, արարա
էր սարքում, թիլվիդ հնգերների հետ քրե-
քյարվան են անում:

Այ լավ պահապան շուն ա ունենում: Հաս-
նում են թիլվիդ, ընդեդ մի ադա մարդ տեսնում
ա շունը, ասում ա. — Այ մարդ, էս շունը ծախիլ
չե՞ս:

Թե. — Կծախեմ, ադա ջան:

— Ի՞նչ արժե:

— Տաս ռուբլի:

Տաս ռուբլին են ժամանակ մեծ գին ուներ:
Տալիս ա, առնում:

— Ադա ջան, ցերեկը կկապես, ըայց քշերը
սովոր չի, վեր կթողաս արծակ ման գա:

Հնգերները Վանկային քարկոծում են, թե՛
ըղթավուր շունը կծախեմ, ըաններըս պահում
էր, իմացնում էր գողից, ըանից:

Գնում են. կես ճանապարհին մեկ էլ
տեսնում են շունը հասավ հետները: Վանկան
ասում ա. — Տաս ռուբլիս կորցնելու էիք, էն
ադից առա:

Թիվիզում մազագիւնների աղաքով գնալիս ա ըլում, դե ընդեղ էլ նստած Թիվիզա խալիը գյավազա մարդիկ են, կինտավուրի, դա էլ կարծ մարդ, ուզում են ծաղրեն, կանչում են.

— Տո՛, կարա՞ս ջուր պնդացնես:

— Աղա ջան, խի՞ չեմ կարա:

— Դե արի, գնանք:

Վանկային տանում են պահեստը, որդի հրդեհի համար բռնկաներով ահագին ջուր ին պահում: Վանկան տենըմ ա, որ պահեստը լիքը շաքար, բրինձ մեշկներով:

— Հա, — ասում ա, — աղա ջան, կարամ պնդացնի: Համա իմ գաղտնիքը չեմ ցույց տա: Գնացեք, էկեք, տեսեք ճիշտ պնդացրել եմ, թե չէ:

Դրանք տաս ռուբլի են բարիշում, թե՛ եթե պնդացնի՝ տաս ռուբլի կտանք, ու գնում են: Վանկան վերցնում ա էդ բոլոր շաքարը, բրինձը լցնում ա ջրի մեջ, իյառնում իրար, ջուրը պնդանում ա. դուս ա գալի թե.

— Պնդացրի՞ր:

Թե. — Պնդացրի, աղա ջան:

Գընըմ են, տենըմ, որ իսկապես պնդացրել ա, շաքարը, բրինձ չի մնացել՝ լքցրել ա ջուրը: Բռնում են սըլան, գաղադավոյ, պուլիցմեստր են կանչում. եքա գործ ա դառնում:

— Բա էս էսքան վնաս ա տվել մեզ:

— Ո՞նց էք բարշել:

Թե. — Աղա ջան, ես բարըշել եմ տաս ռուբլի, դրանց ի՞նչ գործն ա, ես պնդացրել եմ:

Գարադավոյը տենըմ ա, որ էդ մարդին ձեռ են առել, իյսբել են, ասըմ ա.

— Ոնց ըարիշել եք՝ ընենց արել ա, դե տաս ռուբլին էս մարդի տվեք, թող գնա:

Տաս ռուբլի առնում ա, տալի Վանկին, ասում ա՝ գնա:

47. ԹԱԳԱՎՈՐԻ ԿՈՆԴ ՏՂԵՆ

Ըլում ա չի ըլում մի թագավոր, էդ թագավորի տղեն կոնդ ա ըլում: Էդ թագավորը երգի-

րը ման ա գալի, բժիշկներ, փիլիսոփաներ, գուշակներ, հեքիմներ բիրում, իոսացնում ու ասում ա. — Տղիս ազատեցեք. թագավորությանս կեսը ձեզ տամ. թե որ չազատեցիք ու չլավացրիք, գլուխներդ թռցնել կտամ:

Տղեն մորուց կոնդ ա, չարչարվում են, չի լավանում: Թագավորը պայման ա անում, հասար ա քաշում, էդ մարդկանց գլուխները կտրում ա, հասարի վրեն տնգում: Վերջը մնում ա մի հատ գլխի տեղ. իրա երգրումն էլ ոչ բժիշկ ա մնացել, ոչ հեքիմ ու գուշակ:

Թագավորը պաշար ա բարձում նավին ու դուս ա գալի բաց ծով, միտք ա անում, որդի որ երգիր երևա, ենդի վեր գա: Գնում ա, գնում, օրն ու թիվը հայտնի չի, հասնում ա մի երգիր, իմանում ա, որ էդ երգբումը մի բժիշկ կա, որ մեռնելու ենթակա մարդուն սղացնում ա, ինքն էլ հայտնի մարդ ա: Թագավորը գնում ա էդ բժշկի մոտ, ասում ա. — Եթե դու իմ տղին սղացնես, իմ թագավորությունը քեզ եմ տալի:

Էդ մարդը համաձայնում ա, թագավորի հետ գալիս ա էդ երգիրը, տենում ա թագավորի կոնդ տղին, ասում ա. — Թագավորն ապրած կենա, ես էլ մի խնդիրք եմ առաջարկում, թե իմ խնդիրքը կճարես, ես քո տղին կլավացնեմ:

Թագավորն ասում ա. — Ասա, ինչ տի ասես, որ ես կարենամ ոչ:

Մտում ա. — Թագավորն ապրած կենա, դու ինձ մի բուռ հող ըիր, որ իսանի հող չըլնի հետը իյսռնած, ես քու տղին ազատեմ:

Թագավորն ամբողջ երգիրը հալեց, մաշեց, գդավ ոչ: Թագավորի հնարը կտրեց, ասավ: — Թե՛ որ ճարում չեմ, ի՞նչ անեմ:

Մարդն էլ թե. — Բա երգրի թագավոր ես, գդի է՛: Դու երգրի տերն ես ու քու եողից մի բուռ հող կարում չես գդնիս, րա ես ոնց անկարելին անիմ:

Թագավորը մնում ա սասը կտըած: Մարդն ասում ա. — Թագավոր, էս մի ցիցը իմ գլխի հմար էր չէ՛:

Թագավորը թե. — Հա:

— Հմի քու գլուխը պտի ըտի ըլի, որ էդ

բանը հսկացել ես ոչ ու էսքան մարդու կյանքին վայիս ըլել:

Թագավորը տեսնում ա, որ ճարունը ճար չկա, էդ մարդուն ճամբում ա իրա երդիրը:

Էդ հնարով էլ էդ մարդը իրա գլուխն ազատում ա:

Երկրի վրա կյանք էլ կա, մահ էլ կա:

48. ՄԱՐԴԸ ՄԱՐԴՈՎ Ա ՄԱՐԴ

Մի հարուստ մարդ քուլփաթը հավաքում ա, վեր ա կենում գեղիցը գնում ա մի սարի ծերի վե կալի, մտքունը մտածում ա, թե քյասիբ-քյուսիբնին ինձ շատ են վեր տանըմ: Մի ժամանակ էդ սարի ծերին հանգիստ ապրում ա, բիրդան մի ասեդ ա պետքը գալի, էստի ա դիպչում, էնդի ա դիպչում, քարովն ա դիպչում, ասեդ գդնում չի: Միտք ա անըմ, միտք, թե՛ ես էս հարստության տերն ըլեմ. մի ասեդի ծեր ա, խի պտի դրան ման գամ: Ինքն իրան փոշմանության ա տալի, էդ սարիցը եդ վեր ա գալի, եդ-եդ ի՞նչ տեղում ապրում: Տենըմ ա, որ մարդը մարդով ա մալը:

49. ԱՇԽԱՐԲՈՒՄՆ ԱՆԴԱՐԴ ՄԱՐԴ ԿԱ ՈՉ

Մի թագավորի կնիկը մեռած ա ըլում, թագավորը սբտի կսկիծից մտել ա հին շոր, մագիր-վեգիրներից մի իրեքին վեր ա կալել, քաղաքները, գեղերը, երգրները ման գալիս ա ըլել, մարդկերանց հալն ու քեֆն ա հարցրել: Աշխարքումն անդարդ մարդու ռաստ չի էկել: Մինն ասել ա՝ տղես ա մեռել, մինը՝ կնիկս, մեկելը՝ հարսըս, էն մինն էլ՝ թռչու. հեչ անդարդ մարդ չի գդել: Գնացել ա, գնացել, շատ ա գնացել, քիչ ա գնացել, պատի տակ թու ըլած մի հլեվոր մարդի ա տեհել: Բիծուն ձեն ա տվե, վե կացրե:

– Բիծա, դարտըդ ի՞նչ ա, որ էկել ես էս պատի շվաքին քնել:

Բիծեն թե. – Տղա ջան, տնից խռովել եմ:

– Ի՞նչ միջոց ունես:

– Օխտը տղա ունեմ, օխտը հարսն ունեմ, իրեք աղջիկ ունեմ, կնիկ ունեմ, տունըս լիքը կով ու գոմեշ ա, եզն ա. համա շապիկ չունեմ:

– Բիծա, է՞դ ա քու դարդը:

– Հա, տղա ջան, իմ դարդն էլ էդ ա, մեծ մարդ եմ, շապիկ չունեմ:

Թագավորը տեսնւմ ա, որ աշխարքումն անդարդ մարդ չի գդնվի. էլ եդ դառնում ա ի՞նչ երգիրը:

50. ԽՄՄԱԹ

Մի դրողչի հանդումը ոչխարներ ա արածացնըմ: Ճաշ վախտը ոչխարները բերում ա գետի դրադին նստըցնըմ, միել տենըմ ա իրես մի ոչխար դրադ ըլավ ու մենակ գնաց: Ասըմ ա. «Ես սրա եղնա գնալ դեմ, տենամ էս ուր ա գընըմ»: Էս ոչխարը գընում ա, գընըմ, մտնըմ ա մի մեծ էք, դրողչին եղնիցը գընըմ ա մտնըմ էդ էլը, տենըմ ա ըտի մի քռ գել վեր ընկած, էս ոչխարն էլ քթի տակին նստած, գելը դրան ուտում ա: Դրողչին արմանքից քար ա կտըրմ. «Տեր աստված, բա սա ըլլական բան էր, որ էլավ»: Ըրիգունը գալիս ա տուն, ասըմ ա. – Ա կնիկ, ես հիվանդ եմ, էքուց դու տար աբածցրու:

Էքսի օրը կնիկն ա ոչխարը տանըմ, ոչխարներն արածում են, ինքն էլ մոշ ա քաղում: Մեկել տենըմ ա մոշուտի միջին մի մեծ ֆռ ու մի պուլիկ ա ըրեվում, մեջն էլ լիքը ոսկի: Ուզում ա մտնի մոշուտը, կարըմ չի: Ըրիգունը գալիս ա տուն, մարթին ասըմ ա. – Այ մարթ, էս ինչ տեղը մի պուլիկ ոսկի եմ տեհել, արի, գնանք, բերենք:

Մարդն ասում ա. – Որ աստված տալու ըլի, ինքն առանց մեզ էլ կբերի, մեր կտրուվը ղվեր կածի:

Մարդը գընըմ չի:

Կնիկը գընըմ ա տերտերի կուշտը, ասում ա. – Տեր հայր, ըսենց, ըսենց, տեդ մի պուլիկ ոսկի եմ գտել, ես կարըմ չեմ բերեմ, արի գնանք բերենք, կես անենք:

Տերտերն ասում ա. — Օրշնյալ, ըսօր կնունք ունեն, կարալ չեն, թող մնա մի ուրիշ օր:

Տերտերն ուզում ա ինքը թաքուն գնա բերի, էդ կնգանը փայ չտա: Տիե էլ անըմ ա: Քշերը թաքուն բերըմ ա պուլիկը, բաց ա անրմ, որ ոսկիքը հըմբարի, տենըմ ա ի՞նչ ոսկի, մեջը լիքը օծ: Ասըմ ա. — Այ դու անհիծվես, անիրավ կնիկ, ոնց ա ինձ խաբել, սպասի ես քու գլխին ինչ օյին եմ բերըմ:

Տանըմ ա էդ սուլիկը էդ կնգա տան բուխարիկովի դվեր ա ածըմ:

Ըռավիդը դրողչին ու կնիկը վեր են կենըմ, տենըմ են տունը լիքը ոսկի: Աարթն ասըմ ա. — Բա, այ կնիկ, որ ես ասի, թե աստուծ տա, ինքը կբերի իրան ձեռովը բուխարիկովը կլցնի:

51. ԿՆԻԿՆ ԻՄՆ Ա

(Իրական պատմություն)

Աի պառավ կնիկ ա ըլնըմ, մի պուճուր տղա ա ունենըմ, ամեն օր քոխավից հաց ա ուզում տղի համար: Քոխավեն մի օր էլ պատասխանում ա. — Դե բռլ ա, հերիք ա, ես քու քյուլփաթը պահող չեմ:

Պառավը խնդրում ա. — Դե որ տիեց ա, տղիս վեկալ նոքար, թըղ աշխատի, մի փոր հաց ուտի:

Քոխավեն համաձայնվում ա:

Տղեն գրնըմ ա նոքար, աղեն էլ մի աղջիկ ա ունենում, դբանք թաքուն իրար սիրում են: Օրերից մի օր աղջկանը երկու հոգի ուզող են գալի, աղջիկը գալիս ա, տղին ասում. — Աորդ ասա ըրիգունը գա խնամախոս, էս էլ փողը, թող աբաղ առնի, գա: Ուզողները, ամենքը մի բաժակ կվեքցեն օխնեն, ես էլ իմ հորը կասեմ՝ ես ում բաժակը վերցրի, նբա տղին եմ ուզում:

Պառավն ասում ա. — Աղեն մեզ աղջիկ չի տալ, ինձ խայտառակ կանի, գնալ տիմ ոչ, մենք քյասիբ, նա հարուստ:

Տղեն ասում ա. — Հո քեզ սպանիլ չի:

Ըրիգունը պառավը գընըմ ա քոխավի տուն

խնամախոս: Աղջիկը պատասխանում ա հորը. ում օխնած բաժակը վեր կալեն, նրա տղին դիմ ուղիլ: Բաժակները օխնում են, դնում, պառավի բաժակը աղջիկը վեր ա կալըմ, իմում: Հերը ուշունց ա տալի, տղին էլ, աղջկան էլ դուս ա գցում տանից:

Աղջկա մերը հորից թաքուն փող ա տալի աղջկանը, մի քանի տարի եղը, լավ տներ են շինում:

Հենց էդ ժամանակ թուրքը գալիս ա՝: Թուրքի փաշեն գալիս ա էդ տղի տունը հավանում, որ ինքը կենա: Պառավի տղեն կնոջը թագցնում ա պաղվալում: Փաշեն քյոխավից պահանջում ա մի սիրուն հարս, գյուղից մատնում են, որ էդ տան հարսը սիրուն ա: Պառավին ծեծում են, ասում ա. — Ոչ, — թե՛ իմ տղեն ազապ ա, ես հարս չունեմ, քյոխավի աղջիկը փախել ա թուրքերի հետ:

Թուրքի փաշեն տենում ա պառավի տղեն լավ տղա ա, ասում ա. — Ես քեզ կուղարկեմ մեր երկիրը:

Ալեքպուլի սահմանից անց ա կացնում սահմանը, տղեն գնում ա փաշի տուն: Փաշեն մի քանի կնիկ ա ունենում, իրա մեծ կնգա վիա թուղթ ա գրում, թե՛ էս տղին լավ նայի, դպրոց տուր:

Թուրքը ոսի օգնությամբ փախչում ա, փաշեն էլ ա գընըմ: Լուր ա տարածվում, որ պառավի տղին թուրքերը սպանել են: Փաշեն գընըմ ա իրանց տուն: Տղեն ավարտած, սիրուն տղա ա ըլնըմ: Մի քանի տարի հետո տղեն պահանջում ա, որ գնա մորն էլ բերի: Փաշեն թույլ ա տալի:

Տղի տանը հարս ու կեսուր ապրում են: Կեսուրը ասում ա. — Քու մարթը չկա, գնա մարթի:

Հարսը չի գնում: Իրանց գյուղի կշտին մի գյուղ կա, նրանց նախագահի կնիկը մահացած ա ըլնըմ, առնըմ ա: Աղջիկը մի երեխուս ա ունենում:

Տղեն գալիս ա, որ մորը տանի, իրանց գյուղացիք չեն ճանաչում պառավի տղին,

* Խոսքը 1918թ. մասին է (Ծ.Կ.):

ասում են. «Թուրք ա, սպանանք»: Տղեն ասում ա, որ ինքը պառավի տղեն ա: Իրանց տուն ա զընըմ, տենըմ ա կնիկը չկա, ասում ա. — Ես պտի գնամ իմ կնիկը բերեմ:

Մերն էլ թե. — Բեզ վնաս կտան:

Հմա տղեն գնում ա: Գընըմ ա, ասում ա. — Էկել եմ ձեր տուն:

Գընըմ ա տուն: Դռանը կոպը կթելիս են ըլում, տղին ասում են. — Գնա տուն, կգանք:

Տղեն գնում ա, հարսը չի ծանաչըմ: Հարսին պատմում ա, թե ես քո մարդին գիտեմ, աղջիկը չի հավատըմ, վերջապես պատմում ա գլխի էկածը, հասկացնում ա, որ ես քու մարդն եմ: Հարսը փաթաթվում ա, համբուրում ա. — Դե, — ասում ա, — ես կին եմ, էրեխա ունեմ, էլ գործը չի ըլնի:

Տղեն թե. — Բեզ զոռով պտի տանեմ:

Ըրիգունը նախագահը զալիս ա, հաց են ուտում: Տղեն պատմում ա, ու իրա կնգանը ուզում: Նախագահն ասում ա. — Որ քունն ա, վե կալ, տար:

Նախագահի կողմից մի քանի մարդ հրացան առնըմ, զընըմ են թաք կենում, որ էդ մարդուն սպանեն: Նախագահը թույլ չի տալի:

Տղեն, իրա կինը զընըմ են, Դուկասյանի սահմանով անցնում են: Սոխբուլախ գյուղից իրեք հոգի դաչաղ են ըլնում, տղին ու հարսին առանձնացնում են, տղի մոտ մնում են էրկու դոչաղ: Մեկն ա զընըմ: Տղեն պահանջում ա թուրքից, որ շորերը հանի, սպանում ա թուրքին, դենքը վե կալում: Էն մնացած էրկուսին էլ ա սպանում, իրանք զընըմ են: Գընըմ են Թիլվիզ՝ հմի էլ Թիլվիզում են ապըում:

52. ԹՈՐԼՄԵՔ ԱՐՈՒՆԸ

Էս պատմութիւնը պապիս մերն ա պատմել, իր աչքով տեսած պատմութիւն ա:

Մի տղա ու՝ աղջիկ պսակվում են, սիրով մարդ ու կնիկ են դառնըմ, համա աղջկա մորը պահող չի ելնում, կնիկն ասում ա՝ պտի բերենք մենք պահենք: Մարդը համաձայն չի

ելնում. կնիկն ասըմ ա՝ կամ պտի բաժանվեմ. կամ պետք ա իմ մերը զա ըստի՝ կենա:

Ձանքաջին բերում են տանը պահում, մի ժամանակ անց ա կենըմ, մարդը դառնըմ ա խմող: Դրանք էլ լավ արաղ քաշող են ըլել, իրանց միրգն են ունեցել, բոլ արաղ են քաշել, էս մարդը խմել ա ու կնգանը քորլուղ տվել:

— Աղա, քեզ ասըմ եմ, իմ աղջկանը քորլուղ մի տա, քեզ ասըմ եմ իմ երեխին քորլուղ մի տա, իմում ես՝ ջիանդամը, իմի, խմի, գնա ընդի վերսև ըլի, մինչա քեֆդ թողա, նոր արի տուն, ինչի՞ էս գալի իմ ըրեխու օրը սևընըմ, — մին ա ասըմ զոնքաջը, էրկուսն ա ասըմ՝ հնար ըլում չի: Իրանք էլ աղղեն վեց տարեկան էրեխա ունեն:

Ձանքաջը մի օր ասում ա. — Այ րալա, արի մի հնարք անենք, բալքի դա մի բանից զգվի՝ էլ չխմի:

— Բա ի՞նչ անենք, այ մերա:

Դու սուս, — ասըմ ա, — են մեր թորլանին մորթինք, արինը լցնինք շուշեն, տանք իմի՝ կզգվի, են ինչ որ զգվալ շան արունից, էլ իմիչքի ձեռ չի տա, իմիլ չի:

— Բա դե կըլի այ մերա, — ասում ա աղջիկը, — բա որ իմանա ինձ սպանի, քեզ էլ ինձ հետ սպանի:

— Ոնց կիմանա՞, — ասում ա մերը, — իմող մարթ ա, մի բան էլ չի հասկանա:

Էս վեց տարեկան տղեն լսում ա մոր ու աղջկա մսլահաթը: Լսում ա. «Հա՞, լավ ես ասըմ, հլա սրանց տեհեք, որ ուզում են իմ ապուն շան արին խմցնեն»: Մտքումը պահըմ ա, հենց որ ապին հանդից ըեզարած տուն ա գալի, վազում ա աղաքը, ասում ա. — Էսօրվա գինին չխմես, մեղ Թորլանի արինն ա, մեր ջոչոն ու մերս որոշել են քեզ արինը խմցնեն, որ զգվես, էլ չխմես:

Մարդը սուս-փուս նես ա մտնըմ, տենըմ ա սեղանին հացն ու գինին դրուկ, զանքաջն ու կնիկն էլ շատ սիրով են, ասըմ են. — Արի, այ բալա, հաց կեր, ամեն օր արաղ ես խմում, էսօր էլ գինի խմի:

Մարդը ձեռը տանըմ ա ջեբը, ասըմ ա. — Ա

տա, պայպիրոզս պոժել ա, էթամ իսանութ մի պաշկա պայպիրոզ առնեն, գամ:

Խանութն էլ մի պուճուր բութկա ա իրանց տան կողքին: Ձանքաջը թե. — Վա՛յ, քոռանամ ես, դու հացըդ կեր, ես պայպիրոզ բերեմ:

Մարդն էլ. — Անհարմար չի, այ ջոջո, դու էթաս պայպիրոզ առնես:

Ինքը վեր ա կենըմ, էթում ա բութկեն, էդ շուշի դայդի մի շիշ գինի ա առնըմ, դընըմ ա ծոցը, գալիս ա տի նստում ա, սեղանի շուշեն վեր ա ունում, պահում ա ոտների տակին, իրա առած գինին դնում ա սեղանին, սկսում ա լցնել ու խմել: Ձանքաջն ու կնիկը թեզ-թեզ նայում են իրար, ասըմ են տենըմ ես, որ զգվըմ չի, շուշեն լրիվ խմեց:

Մարթը խմում ա, պոժնում ա, մըռըցնըմ ա մըռըռ... մըռըռ... մթամ շան արունը խմել ա, դառե շուն: Մըռըցնըմ ա, հասնըմ ա զանքաջին, քցում ա տափին, քրքրում ա հա ատամներով, հա ձեռքերով, հա ոտքերով, էնքան ա քրքրում, հալից քցում ա: Աղջկա ջանին ցավ ա տալի, վագըմ ա, մորը վոա ա քցում, հմել աղջկան ա քրքրում: Մըռըցնըմ ա, մորն ու աղջկան շինում ա աղցան, քցում ա դրադ: Հարևանները էս ձենը լսում են, մինը վագ ա տալի, տենում ա, որ զանքաջն ու կնիկը զեղնին ընգած ին, ինքն էլ հենց հարևանին տենում ա, սկսում ա մըռնըռացնիլը, հարևանը դուռը հեղ ա անըմ, եգին-եգին վագ տալի: Մարդը սեղանի տակն ա մտնում, կոտրում ա, գլուխը միջից հանըմ, շան արունից էլ սեղանի չորս կուռը քսում: Հարևանները, միլիցիան գալիս են. — էս ի՞նչ իսարար ա, էս ի՞նչ իսարար ա:

Թե. — Բա ասում չե՞ք էս մարդը կտաղել ա, զանքանջին ու կնգանը խեխտել ա:

Վռագ սկորին բերում են, հասցընում են հիվանդանոց, մարդն էլ հա մըռըցնըմ ա: Միլիցեքը դրան բռնում են, սա շշի արինը շանց ա տալի, պատմում ա, թե՛ հար-մաղըլ, զսնքաջս ու կնիկս ուզում ին ինձ շան արին խմացնեն, ես էլ նրանց էդ օրը զցեցի:

Ըլում ա չի ըլում մի թագավոր ա ըլում: Օրերից մի օր էս թագավորը մեկ իսաբար է դարգում, թե ով կարենա մի էնթավուր լավ սուտ ասի, որ ինքը հավան կենա և ասի սուտ ա, նրան մի ոսկի խնձոր կտա:

Երգրի սուտասանները մին-մին գալիս են թագավորի կուշտը, իրանց հորինած սուտը ասում, թագավորը դրանց ստից բեթար ստով պատասխան ա տալի, ճամփու դնում: Մի խեղճ, քյասիբ, օրվս հացի կարոտ մի վենձ բղուղ վեր ա ունում, գալի թագավորի կուշտը: Պալատի պահապանները ծաղր են անում, ասում են՝ դու էիր պակաս, ուզում են ճամփու զցեն, համա էս աղքատը, թե՛ թագավորն ինձ էս բղուղով մին ոսկի ա պարտ, էկել են պարտքս ուզեն: Ծառաները մասխաւրա են զցում, համա թողնում են, որ բանձրանա թագավորի կուշտը:

Թագավորը մտիկ ա տալի էդ մուրացկանին, ձեռի վենձ բղուղին, ծիծաղում ա.

— Այ մարդ, էդ ի՞նչ բղուղ ա, էդ ինչի՞ էս վե կալե, էկե:

— Թագավորն ապրած կենա, էկել են պարտքս ուզեն: Էդ բղղովը մին ոսկի էս պարտ, տու:

— Սուտ ես ասում, — ասըմ ա թագավորը, — ես քեզ գատ էլ պարտ չեմ:

— Սուտ են ասում՝ ոսկե խնձորը տու, ոնց որ իոստացել ես:

Թագավորը խոսքը փոխում ա:

— Չէ՛, դորթ ես ասում, — ասում ա:

— Դորթ են ասում, մի բղուղ ոսկին տուր:

Էլ ինչ ա մնում թագավորին, բղուղը լիքը ոսկի ա լցնել տալի, տալիս ա էդ աղքատին, ճամփու դնում:

Աղքատն էլ աստծուն փառք տալով, ուրախ-ուրախ գընըմ ա, տուն տեղ ա ըլում, մուրացկանությունը թարգ ա տալի:

Ասսանե իրեք խնձոր ա վեր գալի, մինը՝ պատմողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ նաչար մարդուն:

54. ՊՁՏԻ ՀԱՐՍԸ

Մի կեսուր վեց հարս ա ունենում, հետո մի հարս էլ ա բերում, յոթն ա դառնում: Էդ կեսուրը գնդերը հաշվում ա, հացը փակում ա, որ հարսները առանց իրա տալու հաց չունեն: Նոր էկած հարսը իրա տեքերկնիկներին ասում ա. — Կացեք, ես ձեր կյանքը ազատեմ:

Կեսուրը գնդերը գնդում, հմրարում, շարում ա: Պզտի հարսը գնդերը կտրելով, կտրելով կտրում ա, թխում ա իրա հմա, մեջը ծակում ա, իրար կապում: Կեսուրը տենում ա գնդերը պուճուրացել են, ասում ա. «Հարսներին ռերեն պար ածեն, անպայման նրանց ծոցումը կըլի, որ թափի»: Հարսներին պար ա ածում, պզտի հարսն էլ հացերի շարանը դռնից կապում ա ու որ պարում ա, հետն էլ երգում ա.

Լեն ծակել եմ, պինդ կապել եմ, այ պառավ,
Լեն ծակել եմ, պինդ կապել եմ, այ պառավ,
Հայ վախում չեմ, հայ վախում չեմ, այ պառավ,
Աչքդ հանել եմ, այ պառավ,
Գնդերը կտրել եմ, այ պառավ,
Հա վախում չեմ, հա վախում չեմ, այ քավթառ:

Պզտի հարսը պարում ա, պըծում ա, ասում ա. — Մայրիկ, հացը թխել ես, բեգարել ես, արի քեզ լռղացնեմ:

Կեսուրն ասում ա. — Լողացրա, հաղս ջան:

Պզտի հարսը անային տկոորացնում ա, նստացնում ա տաշտի մեջ, սառը ջուրը ածում վրեն: Անան ասում ա. — Քա հարս, էսիկ պաղ ա, էսիկ պաղ ա:

Հարսը էփած ջուրը կածի:

— Էսիկ էլ կղաղե, էսիկ էլ կղաղե, — ասում ա կեսուրը:

— Չի դաղի, էսիկ լավ է, էսիկ լավ է, — ասում ա պզտի հարսը:

Տենում ա, որ կեսուրը արդեն ջրի մեջ թիւսցալ, հանում ա, դնում տեղը:

Պառավը հոգու հետ ա: Ըրիգունը տղեքը տուն են գալի: — Անա, ի՞նչ ա, անա, ի՞նչ ա:

— Չգիտեմ, չգիտեմ, պզտիկ իյարսը, պզտիկ իյարսը:

Ձեռը դռնից կգարգե, գլխին կգարգե: Տղեքից մեկը կասե. — Անան կասի՝ ոսկին հարսիս տվեք, աչքս վրեն ա, ոսկին հարսիս տվեք, պզտիկ հարսից կիտսա. բերել ա, էրեսը չի տեսե, ճակտի ոսկին էլ տվեք, բոյինքաշն էլ տվեք, էս որ ձեռը ճակտին կդնի ոսկին ա, էս որ դռնից կդնի բոյինքաշն է: Համա կեսուրը կասի՝ էս գլուխս մեռնի, որ հոգիս կերավ հարսը:

— Աի, անա ջան, աչքդ պզտիկ հարսի վրա մնաց, էնոը պզգիկ հարսից շատ կիտսեր:

Անան մեռնում ա, յոթ ախպերները չգիտեն: մեռնելու պայտճառը, իսկ հարսները գիտեն: Տղեքը ոսկիները, բոյինքաշն կտան հարսին: Տեքերկնիկները կասեն՝ ռեր, ոսկիները ռածնի:

— Չէ, չեմ տա, ես եմ արել, իմն ա:

Հենց որ տեքերկնիկները ասում են՝ մեր մարթերանցը կասենք, պզտի հարսը մեծ ոսկիները վեր կունի իրան, դրաղի պզտի ոսկիները կտա տեքերկնիկներին:

Հարսների հոգիները կազատվի, հին հաց էլ են ուտում, պաղ եաց էլ են ուտում, սառ հաց էլ են ուտում:

55. ՔՈՍԵՆ, ՔՈՌՆ ՈՒ ՔԱՉԱԼԸ

Մինչև սովետական կարգերի ստեղծումը Այգեհատում իրեք ախպեր էին ապրում: Ատեփանավանում երկու հատ բերգենի գյուղ կար, էդ գյուղերից մեկը՝ Կողեսի շելլիկը սկսեց քոչել Հունաստան, իրենց տները մեծ մասը կես գնով ծախեցին, գնացին: Այգեհատի իրեք ախպերն էլ տները առան, ախպրտինքից մեկը գնաց Կողեսում ապրեց: Ախպրտինքից մինը քաչալ էր, մինը՝ քոսա, մինն էլ՝ քոռ: Քոսեն գնաց Կոռես, քոռը գնաց Աղդվիի, քաչալը մնաց իրան հոր տեղը՝ Այգեհատում: Բաժանքի ժամանակը դրանք շատ կովեցին իրաբ հետ, ղըլմաղալ արին, անհամացան ու էղպես էլ

խոռով բաժանվեցին: Քոռի ու քաջալի հանդերը մոռիկ էին, սրանք իրար տենում էին, բարիվոր էին տալի: Մի օր էլ որ հանդիպեցին, քաջալն ասավ քոռին. «Ասում են էն անպիտան քոսեն շատ հարստացել ա, մի օր հլա, գնանք տենանք»: Մսլահաթ արին ու մի օր վե կացան, գնացին ախպորը տենալու: Տարիներ էր անց կացել, դե որ ախպրտինքը էկել էին, քոսեն սիրով ունդունեց, գրից արին, ասին, խոսացին ինչ ունեք, ինչ չունեք: Քոսեն ախպրտանցը տարավ ապրանքի աղալնին շանց տվուց. էն կովի աղալն ա, էս ոչխարի աղալն ա, էս գառան աղալն ա, էս սուբայի աղալն ա: Տեսան, որ քոսեն մենձ ապրուստի տեր ա դառել: Ջրիցի վախտը քոսի կնիկը բերուց ավուկ էփեց, էդ մոմենտին քոսի նոքարներից մինը հանդից էկավ մի ոչխարի լաջքը շլակած: Քոսեն հաբցուց, թե՛ էդ ի՞նչ ա պտահել, թե՛ քարը տվել ա լաջքը, զոռի հասցրի ըստի: Մտիկ արին, որ շատ մի քոք ոչխար ա, քոռն ու քաջալը իրար բզեցին, ասին՝ էդ էլ մեր բախտիցը, ըրիգունըս էդ ա միս կուտենք:

Քոսեն ենդար հաղուստացել էր, որ էրկու-իլեք ծալք օճորքին էր հասնում կոավաթների վրա դաբսված տեղաշորն ու ծունծն ու խալիչեն: Բայց էդ ըրիգունը առաջներին դրին ավելուկի սպասը, միսը պահեցին: Էրկուսին էլ մի տեղ գծեցին, ափսոսեցին, որ ամենքին մի տեղ գծեն, ըտենց էլ քուններուն տարավ ոչ, քոռն ու քաջալը իրար բզեցին. — Էս միսը ինչ արին, որդի պահեցին:

Քոռը ասավ. — Կացի վեկենամ, բալքի մի դայդ անեն:

Վե կացավ, գնաց ախպոր կնգանը կամաց թզեց, թե. — Այ կնիկ, այ կնիկ:

Թե. — Չը՞:

Թե. — Միսը որդի դրիր:

Նա էլ ասավ. — Թորումն եմ դրել:

Դե ցերեկը մամ ին էկել, բոլոր տեղերը տեհել, թորումն էլ գիդեին որդի ա:

Էկավ քաջալին ասավ. — Վե կաց, մսի տեղն իմացել եմ:

Վե կացան գնացին, միսը մեշոկումը դրած

էր, վե կալան ու էլան: Թե դռան չիկոցն էր. թե հլե քոսի սրտումն ահ կար, գարթնեց ու կնգանը բզեց:

Թե. — Այ կնիկ, այ կնիկ:

Թե. — Ի՞նչ ա:

— Միսը որդե՞ ես դրել:

Թե. — Քու աչքն էլ կարեմ, նոր չհարցրի՞ր, եմ ա ասի թորումն եմ դրել:

— Այ կնիկ, մնելն ա հարցնող ըլել, վայ ես քու հերն անիծեմ, — վե թռավ տեղիցը, տեհավ միսը տարել եմ: Եղեններուն վազեց: Չարևան գյուղի ըրանքումը մի սար կար, էդ սարումը պտի աշմիշ ըլեին. ընդի հասավ, որ գրից անելե զընըմ եմ:

Քոռն ասըմ ա. — Մինչի էս գաղուկը էրկուսս էլ թե գնանք, բեգարած կըլենք, մի՞նըս գնանք զաղուկումը ոտն անենք, նստենք, էն մի՞նն էլ վե կունենա ընդեանը կերթա:

Թե. — Չա, տհե անենք:

Քոսեն լսում ա, աղաք ա ընգնում, մի՞նը գաղուկը մտավ. քոսեն գաղուկիցը մի քիչ ցած նստեց: Միս տանողը հասավ քոսին թե. — Էս ո՞նց ա գաղուկումը չես նստել:

Թե. — Վախեցի գաղուկումը քամի ըլի, մեջքս սառչի, միսն ինձ տու, աղաք ընգի:

Միսը տվուց քոսին, աղաք ընգավ. Գնաց գաղուկը, որ էն մի ախպերն էլ ընդի նստած ա:

— Միսն ու՞ր ա:

— Այ տա, դու՞ չէիր էն ներքի նստածը: Վա՛յ ես տրա, քոսեն միսը ետ տարավ:

— Բա ի՞նչ անենք:

Քաջալն ասավ. — Կացի, բալքի մի դայդ էլ ես անեն:

Քաջալն էդ ֆողերով աղաք ընգավ. վազեց, վազեց, գնաց քոսի դուռը կտրեց ու մի էրկու շոր գլխին պտտորեց, կոները ծալեց ու ... ու ... ու ... մթամ լաց ա ըլըմ: Քոսեն միսը բերուց, հե գիդաց կնիկն ա լաց ըլողը. — Վախիլ մի, այ կնիկ, միսը բերի:

Կնիկը թե. — Միսը ջառ ու ջիանդամը, աղալի տավարը քշել, տարել եմ:

Միսը տվուց ախպորը, հենց գիդաց կնիկն ա, վազեց աղալնին մտիկ արավ, թամամ եմ:

էկա՛վ տու՛ն, տեհա՛վ դու՛նը փա՛կ: Քոսե՛ն դուս
ըլե՛լուց եղ՛ը, կնի՛կը թե. – Ջրվեթի ա էլե՛լ, թե
թիսկոցի՛ն ա դուս էկե՛լ, տու՛ն ա մտե՛լ ու դու՛նը
փակե՛լ:

– Այ կնի՛կ, այ կնի՛կ, ես քու հերն եմ
անիծե՛լ, դուսը մստե՛լ իր լաց ըլե՛լ, հմի էլ
ենդադա դայի՛մ քնե՛լ ես, դու՛նը ռա՞ց չես
անու՛մ:

Կնիկը վեր ա կենըմ. – Ա՛յ մարդ, ինչ լաց
ըլե՛լ, ինչ ես ասու՛մ:

Թե. – Բա միսը դու չրերի՞ր տու՛ն:

Թե. – Չէ, իարար չեմ:

Միսը էդ ախպերտի՛նքը տարա՛ն: Քոսե՛ն եղ
վագեց, վագեց, էկա՛վ, հասա՛վ Արդվիի գլուխը,
որ հրե էրկուսով միսը մըսլահաթ անելով տա-
նըմ եմ: Բայց էնդա դրչի մարդիկ եմ, ուզեի՛ն ոչ
որ մնի տանը ռաժանե՛ն, որ վայ թե էն տանը
էվե՛լ միս մնա: Գյուղի ներքևի կռանը մի հատ
վանք կար, որոշեցի՛ն, որ տանե՛ն էդ վանքումը
ռաժանե՛ն:

– Բա անկշեռք ի՞նչ անենք:

Աի՛նն ասա՛վ. – Դու գնա Փարսադանանց
կշեռքը ըի, ռաժանե՛նք, վեր ունենք, գնանք:

Փարսադանանք ու Դարեջանանք ամենա-
եարուստ մարդիկ էին: Մի՛նը գնաց Փարսադա-
նանց կշեռքը ըերի: Քոսե՛ն պատի տակին
տապ արած էր, մի քիչ կացա՛վ ու ներս մտա՛վ,
թե. – Փարսադանանք կշեռքը տվի՛ն ոչ, արի,
րալի դու գնաս Դարեջանանց կշեռքը ըերես:

Էն մի՛նն էլ գնաց Դարեջանանց կշեռքին,
քոսե՛ն իրա միսը վեկալա՛վ ու եղով էլա՛վ: Մի՛նը
Փարսադանանց կշեռքը ըերուց, մի՛նը Դարե-
ջանանց. ըերին որ միս չկա: Արդե՛ն ծեգե՛լ էր, էլ
քոսի եդնա գնալ հնարավոր չէր, թքեցի՛ն,
գնացի՛ն ամենքը իրա ռանին:

Էն օրվանից մի՛նչն էս վերջերն էլ, քանի
սաղ ի՛ն, դոանց ցեգերն էլ չէ՛ն իրար հետ
խոսու՛մ:

56. ԿՈՂԲԱՅԻ ՓԱՀԼԵՎԱՆԸ

Հի՛ն ժամանակ սովորություն կար ուրիշ
տեղերից մոտիկ գյուղերը փահլևան էին գա-

լիս և թե գյուղը դոանց փահլևան էր տալիս,
նրանց արժեքն է դա, թե չի տալի, պտի մի լուծ
գոմեշ տա, կամ մի լուծ գոմեշի արժեք:

Հըմի Կողբում Լենգզուստանից մի փահ-
լևան ա էկե՛լ, շեկլիկ, կարճ. կոլոտ տղա. իրեք
օր ա գյուղում պտիտ ա գալի. դոան փահլևան
չեն տալի, մեկ էլ գնում են ըեգի մոտ թե. «Բա
Միսկարանց Օհաննեսը Տանծուտում, տավա-
րի կշտին ա, նրանք էլ սարերիցը ըինա են
եկե՛լ», աշնան կողմն ա, պետք է գնան մենձ
մարդուն ըերեն, սա էլ իմիսուն տարեկան ա,
իրեք տեղ ծալված, եր որ ուղղվում ա, իրեք
մետրարոյ ա ունենում: Բեգը երկու երիտա-
սարդի իրեք հատ ձի ա տալի, ուղարկում ըի-
նեն, որ էդ պապաշին ըերեն փահլևանի եետ
կոխ ըոնի: Գնում են տղաները, գնում են,
տեսնում, որ Մրթադագա ըլուցի սրահումը մի
մե՛ծ կրակ ա արե՛լ, գերաններն իրար վրա
դոե՛լ, ինքը կամաց հաց ա ուտում: Հարսներն
էլ գնացե՛լ են, որ պապին պատիվ տան, աշնան
օր ա, դեղձ են տարե՛լ, հադող են տարե՛լ, մեկ էլ
մկրատն էլ են տարե՛լ, որ պապին պտի իու-
գեն, պապի վրա էնքան մազ ա դուս գալի,
գարունք, աշունք ող խուզում են, մի լավ ծաքի
թոկ ա դուս գալի: Պապը կաթնակոնչոլ ա
արե՛լ, կամաց պատառով ուտում ա, մի լավ
թոռնաթուխ հաց էլ էդ փետերի առաջին դոե՛լ
ա, կամաց տաքանում ա, մեկ շրջում ա էս կող-
մը, մեկ շրջում ա էն կողմը, տաքացընում ա,
որ կաթնակոնչոլից եգնը հըմե՛լ էդ հացը պտի
պանրով ուտի: Մի գուգում էլ լքցրած փետերի
արանքումը անձղակոթների մեջ գծած, ըերա-
նը ռաց, էն էլ չայ ա շինում, որ չայ պտի խմե՛:

Ջահելնին սպասում են, սպասում են, պա-
պըն իրանցով չի հետաքըքըվում, ասում են. –
Պապի, ըա ագեն ա դարգե՛լ, որ գանք քեգ տա-
նինք, գեղը փահլևան ա էկե՛լ, հետը դուս էկող
չկա, էկե՛լ ենք, որ քեգ տանինք:

Նա էլ համ հաց ա ուտում, համ դոանց պա-
տասխանում ա. – Տո թոլա լակոտներ,
գեղումը մի ջահե՛լ չկա՞ր, որ էկե՛լ եք ինձ
տանք:

Թույլ ասելու վախժ բերանից մի փշրուճք ա թռչում, էրեխանց համար էրկու պատառ դուս կգեր, էնքան մեծ էր: Վերջապես պապը հացը կերավ, հիմա էլ հարսները հաղոդ են բերել, հաղոդն ա բերանը քաշում, են կողմը գծում չանչը, ոնց որ ընդեդ ինչ որ մզարան ըլնի պապի բերանը նրանց հըմար, վերջացնելուց հետո ասում ա. — Նազլուխան, — էդ էլ իրա պառավն ա, — մի Մերջան գոմեշը քթի, մի թաս էլ կաթը խմեմ:

Մերջան գոմեշն էլ ներքեն ա, Նազլուխան բաբոն դուս ա գալի դարի գլխին կաղնում, ձեռը դնում ճակատին. — Պույ, պույ, պույ, այ Մերջան ջան, Մերջան...

Մերջանն էլ ներքևից Օա՛ա՛հ... գոռալով գալիս ա, Նազլուխան բաբոն տակն է մտնում, փշփշալե քթում, դուլեն լցնում, տալի պապին: Պապը խմում ա, էդ էլ վերջացրեց, հիմա էլ չայ ա խմում: Աղեսայից բերած շաքար խոժոռ գլխով, ստաքանն էլ պղնձից դուլչա ա, տա՛ք լցնում ա, որ սինց հուռթ ա անում, հուռթանոցի ձենիցը էդ բերած էրեխանց ձիանը խրտնում են ու փախչում:

— Ադա, դուք ձեռ բըռածնովը գնացեք, ես իմ հայվանովը կգամ, դուք գնացեք:

Էրեխեքը էտ ա ձիանը վերցնում են հետ գալի, ինքը կամաց գալի, գալիս ա տենըմ Ջադնաց կալըմը գուռնաչի Սարդիսը է՛, գուռնեն փչում ա «դաիբաման», ժողովուրդն էլ հավաքված, Ջադնաց Թուխին էլ ճիպուղ ձեռին. «Յեռու կաղնեցեք, մեյդան արեք, փահլեանն էկավ»: Էդ լեզզին էլ յնջըբամանի տալով դես ա թռչում, դեն ա թռչում, ուրախացել ա, իբր թե ծեր մարդ ա էկել, ձեռաց վեր դի գծել, մի լուծ գոմեշը տանիլ: Պապը գալիս ա, մեյդանըմը կաղնըմ, սկսում ա իբա թութունը չիբխին միջին տրամբովկա անելը, տըամբովկա ա անըմ, կամաց-կամաց տրամբովկա ա անըմ, փահլեանն էլ մին գալիս ա պապին կպչում, թե պատին կպած, թե պապին կպած, հե՛չ չի շարժվում, կամաց տրամբովկա ա անըմ, մեկ էլ. — Այ տա, են ըծդակոթը հլա մի ինձ եզ:

Ընծդակոթը տալիս ա իրան, պեծը դընըմ ա չիբխի վոա ու սին բթով սեխմում. Էդ մամենտին որ փահլեանը մեկ էլ որ մողանում ա պապին, թե՛ր գծում ա, վըզիցը սինց դուզ քաշում ա, ինքը որ ուղիղ կաղնում ա, փահլեանի ողները գեղնիցը կըտրվում ա, սկսում ա տեղում շաոժում անելը, շարժում անելը. նա էլ համ փստկացնում ա չիբուխը, համ էլ փահլեանի աչքերին մտիկ անըմ. որ շատ շարժում ա անում, ասում ա. — Աոնթի, մոնթի մի անել, չիբխիս պեծը վեր ես գծում, հարամզադա:

57. ԿՈՒԽԵՋԸ

Քրիստոսը մի անգամ ծպտված ման գալիս ա ըլում, գընում ա մի գեղում որ մթնում ա, մի տան դոնախ ա ընգնում: Ասում ա. — Ասելն ամոթ չըլլի, կթողա՞ք քշերը ձեր տանը մնամ:

Էդ մարդն էլ ասում ա. — Ղոնախն աստծունն ա, ինչ կա որ:

Էս մարդը որ ղոնախին տանում ա տուն, հա, կնիկը մի չար կնիկ ա ըլըմ, մարդի վոա ըսկսում ա խոսիլը, թե՛ էս ղոնախն էս որդի րերի, էս ինչ էր որ րերի: Որ շատ խոսում ա, մարթն ասըմ ա. — Այ կնիկ, ի՞նչ ես ուզում, մարթ ա էլի, հըմել էկել է, կտանեմ գոմումը կքնացնեմ, հը՛, էլ խոսիլ մի:

Էդ ա, մի կտոբ գարու հաց են տալի էդ մարդին, իըանց իսկական հացիցն էլ չեն տալի, մի չուլ են գծում մըսըրքըմը, ընդեքնացնում: Իրանք մի հատ նուբգար էրինջ են ունենում: Քշերվա վախտը էդ մարդն ասում ա. «Ես սրանց գլխին մի բան տիմ դնել»: Էդ էրինջին մինց անում ա, կուլինջ ա ըլում, փորը ցավում ա: Սոզին ոտները բուղի-բուղի ա անըմ, բղավում ա, ճղավում ա, գոռում ա, գոչում ա, էդ ձենին տանեցիք ճրագը վառըմ են, գալի տենուն ինչ ա պըտահել: Էդ մարդն ասըմ ա. — Սրա փորը ոնց որ կուլինջ էլած ըլի, գնացեք մի գերամաստի ճիպոտ բերեք, ես սրա աղոթքը գիդեմ, անց ա կացնում:

էդ մարդը գնում ա էդ գերամաստի ծիպոտը բերում, փորի տակովն էլ տալիս ա, աղոթքը մթամ թե ասում ա:

«Կնիկը չար,
Մարդը բարի,
Տեղը մտուք,
Հասը գարի»:

Օխտը հետ տհենց կա՛մաց ասում ա: Մոգին սղանում ա: Էս աղոթքը ըտենց էլ ժողովրդի մեջն ա ընկնում, մթամ թե՛ դա աղոթք ա:

58. ՄՈՒՏ ՄՍԵԼՈՒ ՕՐԸ

Բեժանանց Պետրոսը հունձ էր անում Մղարթից մի քիչ դեպի Ալավերդի, Օծունի հռդամասումը, կենդու մարդ էր, իրան հաց ու ջուրը վեր էր կալել, գնացել հունձ անելու: Մղարթի Ըռըսանց Սարգիսը ուտող-խմող մարդ էր, շատ շուլուխջի, գալիս ա դրա կողքովն անց ա կենում, րարի լիս ա տալի Պետրոսին, եղո գալիս ա Օծունով անց կենալիս տեղը Պետրոսի դռանը ձեն ա տալի. «Աղջի, աղջի, անընը տալիս ա»: Գիդի, նրանց տանը շատ ա խմել. դուս ա գալի. «Ին՞չ ա, քեռի»: Բա. «Պետրոսն ասեր տաս հատ մշակ եմ ճարել, շուտ արա, ճաշ հասցրու»: Է՛, Օծունից էլ հողամասը ահագին տարածություն ա, մի գյուղի վրով պետք ա անց կենան: Կնիկը ճաշ ա պատրաստըմ, հաց ա պատրաստըմ, իրանց իշուն բարձում ու հասցնում ա ընգի. գնում, որ մարդը հենա մենակ հունձ ա անըմ. «Այ մարդ, բա մշակըդ ու՛ր ա»: Թե՛ ի՞նչ մշակ: Թե՛ Բա Ըռըսանց Սարգիսն ասավ, որ սիե, սիե, տաս մշակ ա բռնել, շուտ արա հաց հասցրու:

Լավ դա իրանն արավ, մնաց մերը: Մի քիչ անց Այգեհատից մի մարդ գնում ա դռա Մղարթ, հարցնում ա. «Այ մարդ, բանից իաբա՞ր ես, թե՛ չէ»: Էդ մարդն ասում ա. «Չէ, ի՞նչ իաբար»: Թե. «Բա Ըռըսանց Սարգիսը ձիուը

վեր ա ընգել, Ալավերդի գնալիս տեղը, ջարդ ու փուրթ ա էլել. տարել են Ալավերդի. կարող ա յա սաղ ըլնի, հասնեք, յա չէ»: Էդ սաղ գեղը, թեթև էլ գեղ ա՛ էրկու-իրեք հարիր տուն, դուրս են դառնըմ, սաղ գեղովի բարեկամ. հարևան, գողալեն, ճչալեն, գալի Օծունով տալի պնց կենըմ: Ում հարցնում են, ասըմ են՝ Սարգիսը ձիով գնաց: Հասնըմ են Ալավերդի, հարցնում են, ասըմ են՝ գնաց դբա Մադան: Մադանը բերձենի գյուղ ա, զընըմ են ընդի հարցնըմ. ասըմ են՝ հրեդ ձին կապած, ինքն էլ պաղվալըմը քեփ ա անըմ: Գողալով զընըմ են, տենըմ են Սարգիսն ողջ-առողջ. փթաթվում են լաց ըլելեն: «Էս ինչ իաբար ա»: Թե բա ասըմ են. «Չիուց վեր ես ընգել, յա մեռած կեասնենք, յա սաղ, էս ի՞նչ բան ա»: Ինքը գգում ա իրան արածը, ասըմ ա. «Բան չկա, էդ իմ արածն ա»:

Եվ էսպես բաներից ծերքվա մարդիքը չէին նեղանում, իսկ եթե հմի մեկին իաբես, մի տաս մետրի վրա մի տեղ դարգես, դատի գործ բաց կանի: Էն հին ժողովուրդը, էն անգըագետ ժողովուրդը ավելի համերաշխ էր, քան ներկայիս երիտասարդությունը:

59.

Գյուղի միջով մի ջահել տղա գնալու վախտը հանդիպում ա մի մեծ կնոջ: Կինը գլուխը տմբտմբացնելով, րառերը հագիվ իրար կապելով հարցնում ա. – Տղա ջան, էդ ում տղեն ե՞ս:

– Խոջունց Մուքելի:

– Վի՛, քե մատաղ, նա էրկու տղա ուներ, մինը մեռած էր, մինը սաղ, դու ո՞րն ես:

– Մեռածն եմ, մեռածը, բաբո:

– Վի՛, ես էլ տեհա ռանգըդ դեղնած ա, քե մատաղ, եդ եփ ես էկել:

– Էրեկ էկել եմ, ըրիգունը զընում եմ:

– Էդ ինչ լավ ես արե, քե մատաղ, մերդ իմաներ ոչ: Ի՛ աղա, մեր Աթոյին, Մաթոյին տեհել չե՞ս դու, նրանց մերը մեռնիր է, էս միտլի վախտ ա նհանց իաբար չունեն:

– Տեհել եմ, տեհել, Աթոն վար աներ,
Մաթոն էլ ցանք աներ:

– Բա ո՞նց ին, քե մատադ:

– Լավ ին, լավ, մշակ մարդ ին, ոնց տին
էլիլ, հաց չունեին, ջուր չունեին, իսի՞ չեք հաց
ղըրգում:

– Եբ տիս գնալ, քեզ հետ ղըրգեմ, քե
մատադ:

– Ըրիգունը գնալ դիմ, ասին մի քիչ գինի
ղըրգի, հաց էլ, հավ էլ:

– Հա, էս ա գնամ բերեմ, քե մատադ, էս ա
գնամ, բերեմ:

Է գեղը խաբար ընգավ, որ են դույնիցը
մարդ ա էկել, հետ ա գնում, ով գնացած ունի,
խաբար եք ասում, բան եք ղըրգում, գնացեք,
տարեք: Պառավ կնանիքը սկսեցին հեղմեն
մեկը հավ բերում, մեկը գինի բերում, մեկը
հաց բերում, բերում են, տալի խոջունց Մու-
քելի տղին, նա էլ իրիգնադեմ վիր ա ունում,
զընում Ալեքսանի թալունը տղերանցով մի լավ
ուտում են, խմում, քեֆ անում, պըռավի հացն
էլ տանում տեղ հասցնում:

60.

Ձմռան կեսին գոմեշը գոմումը սոված
տոլնգում ա: Տերը մոլորված ասըմ ա. – Չո՛ո,
ցա՛վ, ի՞նչ տամ ուտես:

Գոմեշը թե. – Չոոն էլ քեզ, ցավն էլ: Երբ
ամառը փուշ ու ջախ հնձեցիր, դիգեցիր, որ ես
հըմի չկերա:

61.

Գյուղացին հանդիպեց քահանային և
ասաց. – Օրհնյա ի տեր:

Տերտերը թե. – Աստված օրշնի:

Գյուղացին. – Թե աստված պըտի օբշնի, էլ
դու ինչացու՞ ես:

62.

Մի տուն դոնախ ա գալի: Մեծ ողդին ասում
ա մորը. – Նանի նամը:

Մայրը պատասխանում ա. – Ջանի:

Մեկել ախպերն էլ ավելացնում ա. – Սագը:

(Զիզդամալցիների հայտնի ծածկախոսու-
թյան այս օրինակն ունի հետևյալ բովանդա-
կությունը: Մեծ որդին դիմելով մորը, ասում է՝
մայրիկ, երկու ճուտ մորթի: Մայրն ասում է՝
աչքիս վրա: Փոքր որդին ավելացնում է՝ օղի էլ
առ):

